


Robert
Landon

235

k-58

1 OCT 2009

Handwritten text in a cursive script, likely a letter or document. The text is written on aged, yellowed paper and is oriented vertically. The script is dense and difficult to decipher due to its cursive nature and the fading of the ink. The text appears to be a continuous passage, possibly a letter or a document, written in a historical or regional dialect. The words are closely spaced and often run together, making it challenging to identify specific terms. The overall appearance is that of an old, handwritten manuscript.



235
n-58

Վ Ա Ր Ք

Ս Ր Բ Ո Ց

ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱԻՍՔԵԱԼ

Տ. Հ. ՂՈՒԿԱՍՈՒՒ Վ. ԻՆՃԻՃԵԱՆ

Ի ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷ

ԶՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1861

26 APR 2013



30433-61

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Քրիստոնէութեան առջի տարիները եկեղեցին սաստիկ հալածանքի մեջ էր կռապաշտներու ձեռքէն . անտանը քրիստոնէայ ըսելը՝ իբր արիւն թափել ըսել էր Քրիստոսի համար : Երբոր մէկն ալ արիւն կը թափէր , մարտիրոս կ'ըլլար . մնացած քրիստոնէաները իբրև մէկ մեծ յաղթութիւն մը ըրած անանկ կ'ուրախանային , նշխարքներուն վրայ ժողովուելով աղօթք կ'ընէին , շնորհակալ կ'ըլլային Աստուծոյ , շնորհք կը խնդրէին որ իրենց բարեխօսութեամբը Աստուած զիրենք ալ արժանի ընէ մարտիրոս ըլլալու : Քանի որ ասանկ աչքովին կը տեսնէին անոնց քաշած տանջանքը՝ իրենց ալ սէր կու գար Աստուծոյ համար նահատակուիլ կամ նեղութիւն քաշել :


Ետքը երբոր հալածումը դադրեցաւ , քրիստոնէութիւնը ծաւալեցաւ , առջի եղած մարտիրոսներուն վարքը կը կարգային , տարեգարձին նշխարքներուն տեղը ժողովուելով պատարագ կ'ընէին , իրենց քաշած տանջանքները իրարու պատմելով գովասանք կը զուրցէին : Ասանկով թէ որ աչքով չէին տեսնէր իրենց առջիններուն պէս , բայց անկաճով ըսելով մարտիրոսներուն վարքը , տեսածի պէս կ'ըլլային և շատ կը շահուէին : Ետեւեւ անանկ եղաւ որ՝ սրբոց վարք կարգալը սովորութեան պէս եղաւ , իբր հարկաւոր գիւրք մը ժամու մեջ ամենեւուն առջին կը կարգային , ամմէնն ալ մտիկ զնելով իրենք ալ բարի օրինակ կ'առնէին : Ինչուան

անգամ մը քրիստոնեայ մը թուղթ գրեց մէկ սուրբ մարդու մը հարցընելով որ իրեն ցուցընէ ինչ ճամբով կրնայ հոգին շահիլ, սուրբ ըլլալ. ան ալ գրեց իրեն որ սրբոց վարքը կարգա . կարգալովդ , ըսաւ , աչքով տեսածի պէս կ'ըլլաս . կ'իմանաս որ անոնք ալ մեզի պէս մարդ էին , բայց ինչպէս կրցան հոգինին շահիլ . կը տեսնես որ անոնք ալ աս աշխարքիս մէջ կեցեր էին մէկը մէկ ճամբով , մէկայը ուրիշ ճամբով , բայց անանկ կեցան որ արքայութիւնը շահեցան . դուն ալ տեսնելով իրենցմէ օրինակ կ'առնես :

Ահա աս օգուտը գիտնալով բարեպաշտ անձ մը խնդրեց աս գիրքս դուրս հանել ապագրութեամբ , ուր գրուած են երևելի սրբոց վարքերը . ուզելով բարիք մը ընել մեր ազգին որ կարօտ էր ասանկ գրքի , աշխարհաբառ տպել տուաւ , որպէս զի ամմէնն ալ հասկընան , կարգալով շահին : Ասիկայ է հոգևոր գործք մը ողորմութեան , որ շատ աւելի հարկաւոր է և օգտակար քան մարմնաւոր գործք ողորմութեան : Ուզեց որ աս գիրքս յիշատակ մը ըլլայ Գուլումպաճեան Պետրոս պատանուոյն , որ իրեն ու ամմէնուն սիրելի զաւակ ըլլալով , իր ծաղիկ հասակին մէջ վախճանեցաւ : Ամմէնն ալ երբոր կարգան , երբոր շահին հոս գրած սուրբերուն վարքը լսելով , յիշեն աս հոգին ալ իրենց աղօթքին մէջ . խնդրեն սրբոց բարեխօսութիւնը որ հասնին թէ անոր հոգւոյն համար , և թէ իրեն համար , որ ասանկ բարի գործքի պատճառ եղաւ :

Հիմա ասչափ սրբոց վարքը դուրս ելաւ , ետքը ասոր հոգևոր պտուղը տեսնելով մնացած սուրբերուն վարքն ալ դուրս կը հանենք , թէ մեր եկեղեցւոյն տօնածները , և թէ լատինացւոց :

Ս Ր Բ Ո Ց



ՍՈՒՐԲՆ ԵՒՍՏԱՒԷՆՈՍ

Եւստաքէոս կամ Եւստաթէոս քրիստոնեայ չեղած՝ Պլակիդոս կամ Պլակիդաս կ'ըսուէր, որ մեր զրոյց մէջ Միլակիդոս կ'ըսուի. քաղքըցի էր Հռովմայի, բայց ծնած էր ըստ ոմանց Վամիրք կամ Վասպարովկիա. անոր համար կրնայ ըլլալ որ Եւկրնցիք աս սուրբին յատուկ ջերմեռանդութիւն ունին. իրեն անունով ալ վանք ունին, որովհետեւ Մին՝ Վասպարովկիայի մէջ կ'իյնայ: Եւ Պլակիդոս իրեն քաջութիւնք անուանի զօրավար էր եղած Հռովմ կայսեր քով, շատ հարստութիւն ունեցող. իրեն սեղանը 300 արծրթէ ամաններով կուգային կերակուրները. որչափ հարուստ, այնչափ ալ ուրիշներուն բարերարող: Իր ծառաները չորս տարի ծառայեցրնելէն ետեւ կ'ազատէր շատ պարզէներ տալով: Հայր եղած էր որբերուն, որբեվարիներուն. օգնող աղքատներուն, մտիթարութիւն բանտարկեալներուն, հասնող տանջանք քաշող

ներուն . աս աղէկութիւններուն համար
եղաւ որ Վուռնելիոսի պէս արժանի եղաւ
կռապաշտութենէ խալըսիլ , քրիստոնէու-
թեամբ լուսաւորուիլ աս զարմանալի կեր-
պով՝ որ հոս պատմենք :

() ր մը երբոր որսի (ավի) կ'երթար , մէկ
եղջերու (կէյիկ) մը տեսաւ ահաւոր , եղ-
ջիւրներուն (պույնուզներուն) մէջը լուսա-
ւոր խաչ մը , որ վազելով անտառին մէջէն
բարձր տեղ մը ելաւ . Պլակիդոսն ալ ասոր
ետեէն վազելով երբոր հասաւ՝ թուրը
վերցուց զարնելու . յանկարծ տեսաւ որ
եղջերուն մէկ անելանելի տեղ մը ելած՝ իր
եղջիւրներուն մէջէն ձայն մը կու գար ի-
րեն ահաւոր , ինչ կը հալածես զիս , ո՛վ
Պլակիդէ , կը կանչէր : Եւ ձայնը առնելով
վախէն գետինն ինկաւ , քիչ մը անանկ կե-
նալէն ետե ոտք ելաւ , կը նայէր ո՛վ է խո-
սողը , մարդ մը չի տեսաւ , բայց եթէ նոյն
լուսաւոր խաչը՝ որ եղջերուին գլուխն էր
տնկած : Վ՛վ ես որ կը խօսիս , ըսաւ Պլա-
կիդէն , յայտնի ըրէ ինձի : Մէյ մըն ալ
նայելով տեսաւ որ՝ խաչին վրայ մարդու ե-
րես մը կերեւար , անկէց կու գար իրեն ան
ձայնը ըսելով . միտք առ , ո՛վ Պլակիդէ , ես
եմ առաջին և վերջին , ես եմ Եստուած
որ մարդ եղայ՝ աշխարհք եկայ փրկելու
համար . ինձմով եղաւ ամմէն բան . և ո-
րովհետեւ ամմէն մարդու վրայ մէյմէկ բան
սահմանուած է քաշելու՝ որպէս զի անցա-
ւոր նեղութիւն քաշելով անանց հանգր-

տութիւնը գտնէ, քու վրայ ալ սահման
 նուաժ է որ ինչուան հիմա մեծութիւն
 վայելեցիր, ասկից ետքը զրկուիս մեծու
 թենէ, նեղութիւն քաշես, ետքը նորէն
 քեզ մեծցրնէ պիտի ան որ քու հետոյ կը
 խօսի. և որովհետեւ բարի վարք ունէիր՝
 քեզի կը թողում ընտրել, արդեօք հիմա
 կ'ուզես ան նեղութիւնը քաշել թէ ետքը:

Պակիդէ աս խօսքերէս վախնալով պատաս-
 խանեց. կ'աղաչեմ, տէր, թողնես որ եր-
 թամ իմ ընկերօջս պատմեմ, վաղը դամ
 պատասխան մը տամ: Չայն եկաւ իրեն.
 Թէ որ կ'ուզես վաղը հոս գալ, առաջ գնա
 քահանային ձեռքովը մկրտուէ քրիստո-
 նէից պէս, ետքը զիս հոս կրնաս տեսնել:

Պակիդէն ահով դողով լեռնէն վար
 իջնալով, Ժողովեց իրեն հետ եկող զինուոր-
 ները գնաց իր տունը, մէկի մը չի բացաւ
 բանը, միայն իր ընկերօջը՝ որ կ'ըսուէր Տա-
 սիանէ, ըստ ոմանց Տրայիանէ, որ լաւ ին
 պէս աղաղակեց. գիտեմ, խաչելեալը տե-
 սար՝ որ քրիստոնէները կը պաշտեն. ո՞վ որ
 դի Մատուծոյ, ողորմէ ինձի և իմ զաւկը-
 ներուս: Օ արմացաւ Պակիդէ թէ ինչ-
 պէս գիտցաւ իր կինը. կինն ալ պատմեց որ
 ես ալ տեսայ ան բանը. ան է Վրիստոս՝
 որ ան կերպարանքով քեզի երևցաւ. ա-
 նանկ է նէ աս գիշեր եկու գաղտուկ մկր-
 տուինք, ըսաւ, վաղը գնա ըսէ իրեն, թէ
 որ կ'ուզես՝ հիմա խրկէ մեզի նեղութիւն
 բանի որ ուժ կայ վրանիս քաշելու՝ քան թէ

մեր ծերութեան ատենը : Ասանկով գիշեր
ատեն դնացին քահանայէն կամ եպիսկո-
պոսէն մկրտութեան իրենք ու իրենց երկու
զաւակը , որ մկրտուելու ատենը ըսուեցան
Ագապիոս ու (Թ)էոպիստոս , Պլակիդոսն
ալ ան ատենը ըսուեցաւ Ալեստաքէոս , իր
կինն ալ ըսուեցաւ (Թ)էոպիստէ : Առտու
եղածին պէս Ալեստաքէոս իրեն հետ զի-
նուորներ առնելով իբր թէ որսի համար
կ'երթայ , լեռան մօտիկնալու ատենը զա-
նոնք ուրիշ դին խրկեց , ինքը մինակ մնա-
լով առջի տեսիլքը տեսաւ . հոն երեսի վը-
րայ իյնելով աղաղակեց . խոստովանիմ ,
տէր իմ , որ դու ես որդի Աստուծոյ կեն-
դանուոյ , կ'աղաչեմ ան նեղութիւնն որ ը-
սիր՝ առաջ հանդիպի մեզի և ոչ ծերու-
թեան ատենը : Չայն եկաւ իրեն . երանի
է ձեզի որ լուացուելով սրբուեցաք , իրեք
օրուան մէջ պիտոր ըլլայ ան ամէն բանն
որ ըսի . բայց նայեցէք որ մէկ ճշգոհանք
մը ձեր բերնէն չի հանէք , համբերութեք
քաշեցէք . նորէն ձեզ պիտոր մսիթարեմ
նաև աս աշխարքիս մէջ :

Ալեստաքէոս դեռ տունը չի հասած՝ մէկ
պլըշտրկուող ցաւով մը մեռան իր ծառա-
ներն ալ աղախիններն ալ , ու 70 ձի . վա-
ղուան օրը օգուն ավրուելովը կայծակնե-
րով ամմէն ոչխարները՝ կովերը հատան :
Մէկալն օրը երբոր Ալեստաքէոս իր կինն
ու երկու զաւակները պարտէզին մէջի եղած
հովանոցն էին , իրենց բարձր փառաւոր

պալատի նման տունը մէկէն փլաւ . բազմութիւն ներս վազեցին , մէջի եղածները ամմէնն ալ թալլեցին . ասոնք ինչ որ վրանին հագած էին՝ ան մնաց միայն իրենց : Ըն օրերը թագաւորը յաղթութիւն ընելուն համար Պարսից վրայ՝ մեծ ուրախութիւն կ'ըլլար քաղքին մէջ . կը փնտրուէին կը զարմանային Աւստաքէոսին ուշանալուն վրայ՝ թէ ինչո՞ւ չի գար չի գտնուիր ան ուրախութեան մէջ : Թէոպիստէ իր կիներ խրատ տուաւ Աւստաքէոսի . որովհետեւ ասանկ չքաւորութեան մէջ մնացինք , ըսաւ , խեղճ՝ ողորմելի եղանք , մեր ճանչուորներուն առջին աս ամօթը չի քաշելու համար , եկէ ամմէնքս մէկտեղ փախչինք երթանք հեռու աշխարհք : Ընանկով գիշեր ատեն անկէց Ագիպոս երթալ ուզեցին , քանի մը օր ցամաք ճամբայ ընելէն ետեւ ծովին քովը հասնելով նաւ մը մտան :

Վաւապետը բարբարոս չար մարդ մը ըլլալով , երբոր քիչ մը բացուեցան ցամաքէն , տեսնելով որ Թէոպիստէ խիստ գեղեցիկ կ'ին էր , Աւստաքէոսի վրան չարիք կը մըտածէր ընել , որպէս զի իրեն առնէ կնիկը . երբոր ցամաքը հասան , նաևու վարձքի տեղ իրեն կնիկն ուզեց : Արբոր Աւստաքէոս գէմ կեցաւ , քովը կեցողներուն աչք ըրաւ որ ծովը ձգեն : Աւստաքէոս վախնալէն երկու տղաքն առաւ լալով նաւէն դուրս ելաւ , Ըստուծոյ յանձնեց Թէոպիստէայ սրահ պանութիւնը . լալով ճամբայ ելաւ , սիրար

փղձկելով տղոցը վրան կը նայէր՝ հառաչելով կ'ըսէր. վախ զաւկըններ, ինչ փորձանքի եկանք, ինչ գէշ վիճակի մէջ ընկանք, մայրերնիդ գազանի ձեռք ընկաւ որ՝ օր մը անիկայ պիտոր կորսընցընէ : Ըստ ըսելով լաւով տրտմութեամբ քալելով հասաւ Բդաստիս ըսուած մէկ ջրի մը քով . ան ջրին մէջէն մէկէն անցընել երկու տղաքը վախնալով մեծ տղան Բգապիօսը (ծողուց, պզտի տղան) (Սէնպիստօսը կունակը շալկելով ջրին ասդին բերաւ . արտօրնօք գառնախնինի որ մէկալ տղան ալ բերէ, ջրին մէջ տեղը հասնելուն պէս՝ մէկ տղան առիւծը յափրշտակեց տարաւ, մէկալն ալ գայլը : Աւստաքէոս տղոց ձայնը ճուալը լսեց, տեսաւ որ ասդիէն անդիէն զաւկընները ողջ ողջ կը տանին գազանները, հոն ճղակտոր մնաց, մօրուքը մազերը փետտել սկսաւ, ինքն ալ ջրին մէջ իյնալու պէս եղաւ, բայց Բստուծոյ նախախնամութիւնը զինքը պահեց, ցամաքն ելաւ : Տղաքն ալ ասանկ պահեց առանց իրեն գիտնալու . առիւծն որ տղին մէկը տարաւ, երբոր բերանը առնելով ողջ անանկ ջրին մէջը լողալով կ'երթար, հովիւներէն ոմանք տեսնելով՝ վրայ հասան տղան ազատեցին . ասանկ ալ երկրագործներէն ոմանք գայլը տեսնելով վրայ հասան, մէկալ տղան ալ ողջ ազատեցին : Ըստ բանս մէկ գեղին՝ մէկ երկրին մէջն եղաւ . բայց զատ պահելով մեծցընելով, տղաքը իրօք զիրօք չէին ճանչնար (մէկ

աղբար են եղած : Իսկ Ալեստաքէոս ամմէն
բանէն , զաւերներէն , ընկերոջմէն զրկուած
մնալով կու լար կ'ողբար , յուսահատածի
պէս կ'երթար . վայ ինծի , կ'ըսէր , որ եր-
բեմն թագաւորի պէս էի , հիմա ամմէն
բանէն թափթրիած մնացի : Բայց սիրար
Աստուծմէ չի բաժնելով աղօթքի հետ
կ'ըլլար . տէր Աստուած , կ'ըսէր , թէ որ
քեզ հաճոյ է , մէկ հոգի մը վրաս մնաց ,
ան ալ առ քեզի : Ասանկ խօսքերով հասաւ
Աննտիսոն գեղ մը , հոն ասոր անոր կ'ա-
ղաչէր որ զինքը բանուորի մը պէս իրենց
ծառայութեան մէջն առնեն : Անանկով
մէկի մը քով մտնելով այգեպան եղաւ 13
տարի :

Գանք որ ան նաւապետն որ (ժ)էօպիստէ
կինը իր երկիրը՝ իր տունը տարաւ , Աս-
տուծոյ ողորմութեամբը ամենեւին չի դպաւ ,
որովհետեւ ան օրն որ նաւուն մէջը բռնեց
արգիլեց (ժ)էօպիստէն՝ հիւրնտնալով , իր
տունը հասածին պէս մեռաւ . (ժ)էօպիս-
տէն անոր ձեռքէն խալըսելով ան երկրին
մէջն անփորձ մնալով չնորհօքն Աստուծոյ ,
ուրիշներուն ծառայութի ընելով կ'ապրէր :
Աղաւ ատեն որ ան երկրին մարդիկները
ուր որ կը կենար (ժ)էօպիստէ՝ հռոմայեցւոց
երկիրներուն վրայ վաղեցին , շատ տե-
ղուանք առին : Արբոր հռոմայեցւոց թա-
գաւորը լսեց , շատ կը նեղէր , հառաչելով
կը յիշէր Ալեստաքէոսը որ իրեն կարրձու-
թեամբը ասանկիները շուտ մը կը զսպէր .

ուր արդեօք կը գտնուի, ըսաւ, զնացեք
փնտրուեցէք ինձի բերեք. ո՞վ որ գտնէ բե-
րէ, ԱՅ տարի ոռձիկ (էօլէֆէ) իրեն կա-
պել ու վարձ խոստացաւ, [Թող տուր ուրիշ
սրատիւնները: Մտգիս անդին մարդիկ վա-
զեցին գտնելու. անոնցմէ երկու հոգի Մս-
տուծոյ կարգաւորու [Թեամբը եկան հասան-
ան գեղը՝ ուր որ կը կենար Աւստաքէոս,
երկուքն ալ երբեմն Աւստաքէոսին ծառայ-
ու [Թեան մէջ եղածներէն էին:

Աւստաքէոս ասոնք տեսածին պէս հե-
ռուանց ձանձնալով, իր առջի մեծու [Թիւնը
միտքն ընկաւ, և հիմակուան խեղճու [Թիւ-
նը. ա՛խ տէր իմ, ըսաւ, ասոնք հիմա տե-
տայ, գտնէ անդիի աշխարհքն ալ ինձի ցը-
ցուր գիտցուր իմ զաւկրներս իմ ընկերս
ինչ եղան: Մն ատենը ձայն եկաւ երկրն-
քէն. Աւստաքէոս, զօրացիր, սիրտ առ,
մօտ ատեն պիտի տեսնես քուկին ընկերդ
ալ երկու զաւկրներդ ալ. շատ նեղեալնե-
րուն պիտոր օգնական ըլլաս, ես ալ քու
անուռնդ ամմէն տեղ պիտոր մեծցընեմ: Մս
լսելով՝ Աւստաքէոս սիրտ առաւ. ձամ-
բու վրայ կեցաւ ուսկից պիտոր անցնէին
ան երկու փնտառողները, որոնք բարե տա-
լով հարցուցին իրեն. արդեօք կը ձանձ-
նաս ըսին աս դիւերս Մսլակիդոս անուռնով
մէկ մը իր ընկերով երկու տղոցմով, զուր-
ցէ մեզի՝ շատ վարձք կու տանք քեզի:
Մս խօսքերս լսածին պէս Աւստաքէոսին
սիրտը [Թուտ ելաւ, չի կրցաւ սրատափան

տալ, քիչ մը կենալէն ետեւ ըսաւ . անանկ
մարդ հոս չեմ ճանչնար, ես ալ հոս օտար
եմ դրսէն եկած եմ, բայց դուք հիմա ե-
կէք ան տունն որ ես կը նստիմ, քիչ մը
հանդիստ առնէք : Վնաց իր տանտիրոջն
ըսաւ . իմ ճանչուորներս եկած են հեռու
ճամբէ երևելի մարդիկ, աղէկ կերակուր-
ներ հանէ իրենց, ինչ որ երթայ՝ վարձք
առնելուս ատենը ես կը վճարեմ : Ըն ալ
աղէկ հարկինք ասոնց ըրաւ . ինքը զինին
տալով, իսկ Ալեստաքէոս ջուրը կու տար :
Պուրս կ'ելլէր կու լար, աչուրները սրբե-
լով ներս կը մտնէր կը ծառայէր . ասանկ
դուրսներս ելլել մտնելնինի՝ որովհետեւ մէկ
խոց մը ունէր վզին վրայ պատերազմէն
մնացած, մէկը աս նոր եկողներէն Վնտիո-
քոս անուն՝ ճանչցաւ, լսելով վրան վազեց
պագաւ, մէկալ իրեն ընկերը Վկակիոս
զարմանալնինի ինչ կրնէ Վնտիոքոս, ան ալ
արթնցաւ ճանչցաւ նշանը, շուտ մը գրը-
կելով պագաւ . երբոր բանը երեան ելաւ,
ան տնեցիքն ալ լսելով վրայ եկան, անկից
ամմէն գեղացիքն ալ վրայ թափեցան զար-
մացան աս դիպուածին վրայ : Ար հարցը-
նէին ան երկուքը թէ ո՞ր են իր ընկերը իր
զաւկրները : Ալեստաքէոս առաջ գոցել ու-
զեց՝ իբր թէ ինքը չէ, ետքը թագաւորին
հրամանը լսելով՝ պատմեց որ անոնք մե-
ռան : Վրանհով աս երկուքը առին Ալեստա-
քէոսը, աղէկ լաթեր հազցնելով ճամբայ
ելան . որուն ետեւէն եկան գեղացիք, իմա-

նալով ինչ մեծ մարդ է եղեր, լալով ճամբայ դրին: Արբոր Աւստաբէոս հռոմ հասաւ, թագաւորին առջին ելաւ. հարցուց թագաւորը. ո՞ւր գացիր, Պլակիդէ, ըսաւ. ինչպէս մեզնէ աներևոյթ եղար: Ան ալ կարգաւ պատմեց իր գլուխն եկածները, որուն վրայ ամմէն մենծերը լացին. ետքը մխիթարելով իր զօրագլխութեան կամարը նորէն մէջքը կապեցին, վերոյիշեալ թշնամիներուն վրայ խրկեցին: Արբոր բանակը ճամբայ հանեց, տեսաւ Աւստաբէոս որ զօրքը ան պատերազմին բաւական չէր, հրամեց նորէն գիր հանել, նոր ընտրուած զօրք ժողվել ամմէն տեղէն ուսկից որ կ'անցնէր: Ժողովուներէն երկու հոգի եկան ան գեղը՝ ուր որ Աւստաբէոսին տղաքները կը նստէին. գեղացիք լսելով որ ասոնք զօրք կը փնտրուեն ստկով, աս երկու տղաքն որ դրսէն էին իրենց քովը մեծցած, ասոնց ծախեցին ծանր գին ուզելով, որովհետեւ ուժով աղուոր բարձրահասակ տղաքներ էին: Արբոր Աւստաբէոսին առջւեր բերին՝ իր անչափ զօրաց մէջը ասոնք գտաւ լման ուզածին պէս ընտրուած, խիստ սիրեց. մէկը իրեն զինակիր (սիլէհաար) ըրաւ, մէկալը իրեն սեղանին ու սենեկին վրայ դրաւ:


Արբոր ամմէն զօրքը ժողվեցան՝ գնաց պատերազմեցաւ, ան գաւառն որ առեր էին՝ ետ առաւ աղատեց. դիմացը ելլողները ջարդելով գետը անցաւ, Պարսպորընէ-

րուն ներսի երկիրները վազեց . ինչուան
կարգաւորութեամբն Մատուծոյ եկաւ հա-
տաւ ան գեղը՝ ուր էր իր կինը (Թէոպիստէ,
հոն իրեք օր հանգչել ուզեց . իր վրանը
(չատրրը) տնկելով մօտիկ ան պարտէզին՝
որ կը պահէր (Թէոպիստէ : Արբօր լսեց
(Թէոպիստէ որ հռոմայեցւոց բանակ եկաւ
հոն՝ խիստ ուրախացաւ , մտածելով որ՝ անոր
զօրագլխին հասկըցընէ իր հռոմայեցի ը-
լալը անոր ձեռքով կարելի է որ հռոմ գա-
նայ : Արկրորդ օրը երբօր հացէն ետեւ քուն
էր եղած Ալստաքէոս , երկու եղբարքը մօ-
տիկ պարտէզին մէջ ժուռ գալով ծառի մը
տակ նստած իրարու սրտմեղ սկսան իրենց
տղայութիւնը . (Թէոպիստէ իրենց մայրը
ան ատենը պատուհանը նստած գտնուե-
լով իր քաշածները մտածելով յիշելով՝
գաղտուկ մտիկ կը դնէր ինչ որ ասոնք կը
խօսէին . լսեց որ մեծ աղբարը Մքապիոս
կ'ըսէր պզտիկին . իմ միտքս ուրիշ բան չի
գար իմ տղայութեանս ատենէն , միայն
ասչափս կու գայ որ հայրս զօրագլուխ էր
հարուստ , ետքը աղբըացաւ , մայրս խիստ
դեղեցիկ էր , մէկ ալ պզտիկ աղբարս դե-
ղին մաղբերով էր . հայրս մեզ ամանի մը
մէջ դնելով անանկով նաւը բերաւ , մայրս
ալ հետերնիս եկաւ . երբօր նաւէն դուրս
ելանք , մայրս մեր հետը մէկտեղ չելաւ ,
չեմ գիտեր ինչ եղաւ . հայրս մեզ շարկե-
լով լալով կ'երթար ինչուան դետ մը հա-
սանք , զիս ասդին թողուց , մեկալ աղբարս

առաւ անդին տարաւ . երբոր կը դառնար՝
առիւծը զիս առաւ տարաւ , հոն եղող հո-
վիւնները վրայ հասան ազատեցին . հոն մեծ-
ցուցին որ դուն ալ գիտես . բայց մէկալ աղ-
բօրս համար՝ հօրս համար չիյտեմ որ ինչ
եղան : Այս լսածին պէս (Սէնտպիստոս՝ վա-
զելով Ագապիոսին ճիտը փաթթուեցաւ ,
դուն իմ աղբարս պիտոր ըլլաս , ըսաւ . ո-
րովհետեւ իմ հայրս ալ մայրս ալ աղբարս
ալ անոնք են որ դուն հիմա ըսիր . ես ալ
կը յիշեմ որ գետին մէկդին մնացի , հայրս
ալ աղբարս ալ չի տեսայ . քեզի պէս իս
ալ գաղան մը տարաւ . իս մեծցրնողները
կ'ըսէին որ քեզ գայլուն բերնէն ազատե-
ցինք , ծնողքդ չիյտենք ո՛ւր են : Արբոր
(Սէնտպիստէ իրենց մայրը աս խօսքերը կը
լսէր՝ սիրտը կը ճզմուէր կը կտրրտէր , ա-
ղէկտոր կը մնար . երբոր կը տեսնէր որ եր-
կու աղբար իրար կը գրկեն՝ մարելիք կու
գար վրան , չիյտէր որ ինչ ըսէ , ինչուան ի-
րիկուն լալու հետ եղաւ . չուզեց ճանչցը-
նել ինչուան որ զօրապետէն մէկ օգնու-
թիւն մը գտնէ ան օտարութենէն գուրս
ելլելու : Ասանկ ինչուան առտու ինչ և իցէ
գիմանալով , վաղուան օրը Ալատաքէոսին
առջէն ելաւ . ես հռոմայեցի եմ , ըսաւ ,
տէր իմ , կ'աղաչեմ , զիս ազատէ աս օտար
աշխարհէս , ուր գերիի պէս բարբարոսկան
ինկեր եմ , չիյտեմ ինչ ընեմ . իմ երկիրս
տար : Այս ըսելու ատենը սիրտը կ'եփէր ,
վիզը նայելով ճանչնալ կ'ուզէր թէ ո՛վ է :

Ատքը չի դիմանալով ըսաւ . կ'աղաչեմ,
 տէր իմ, քու վարքդ շիտակ առաջուցմէ
 պատմէ ինձի, Վրիստոսի զօրութեանը
 վրայ երդուրնցընելով, չըլլայ որ դուն ըլլաս
 կորսընցուցածս : Աւստաբէոս անանկ բար-
 բարոսի երկիր Վրիստոսի անունը լսածին
 պէս, զարմացաւ մնաց . ինչպէս Վրիստոսի
 անունը սորվեր է, ըսաւ, աս կնիկը . սկը-
 սաւ քիչ քիչ պատմել : Արբոր անիկայ կը
 պատմէր՝ (Թէոպիստէն ալ ետեւէն եղած
 դիպուածը կը պատմէր : Արբոր հասաւ
 պատմելու ինչպէս նաւապետը իր կինը
 յափշտակեց, (Թէոպիստէն իր բերնէն առ-
 նելով պատմեց տղոցը յափշտակուիլը գա-
 զաններէն : Աւստաբէոս ան ատենը խիստ
 զարմանալով վրան ըսաւ . Վրիստոսի զօ-
 րութեանը վրայ կ'երդուրնցընեմ, զուրցէ
 թէ ինչպէս դիտես իմ վրաս եղած դի-
 պուածները : Ինչ ատենը վազեց ոտքը ըն-
 կաւ ըսելով . ես եմ ան տառապետալ կինը,
 ես եմ (Թէոպիստէ որ մէկտեղ մկրտուե-
 ցանք . մի նեղիր, զօրութեամբ որդւոյն
 Աստուծոյ ան այլազգի նաւապետը չի կըր-
 ցաւ ինձի չարիք մը ընելու . հիմա զաւկը-
 ներուդ համար կը հարցընեմ, բան մը դի-
 տես անոնց վրայ՝ զուրցէ : Պատասխան տը-
 ւաւ Աւստաբէոս . քեզի ըսի որ գազաննե-
 րուն բերանն ընկան, քիչ մը առաջ դուն
 ալ դիտցար պատմեցիր, հիմա ինչու կը
 հարցընես, ինչ դիմնամ որ ինչ եղան :
 (Թէոպիստէ ան ատենը լսելով կանչեց . տէր

19. 433. 6
 27



իմ, սա երկու գեղեցիկ կտրիճներն որ քու քովդ են ու քու զինակիրդ են եղած՝ մեր զաւկրներն են . երեկ իրարու կը պատմէին իրենց պլուխն եկածը : Աւստաքէոս զարմանալէն օտք ելաւ , շուտ մը կանչեց ան երկուքը . երբոր պատմել տուաւ ինչ որ գիտէին , ինչ որ զուրցեր էին , ան չօրս հօգին ալ իրար ճանչնալով , իրարու պլլըւելով կը պատմէին գլխորնին եկածը , անչափ տարիէն ետեւ մէկզմէկ օղջ տեսնելով զմայլելէն չիյտէին որ ինչ ընեն՝ ինչ զուրցեն . ուրախանալէն ձեռքէ ձեռք բռնելով , մէկզմէկ գրկելով կու լային երկու ժամի չափ : Ասոնց ձայնը դուրս ելաւ , ամմէն զօրքք ժողվեցան աս նոր բանիս համար , ետքն ալ մեծ ուրախութիւն կատարեցին :

Ապառան օրը Աւստաքէոս ուժ առնելով շատ մեծ յաղթութիւն ըրաւ այլազգիներուն վրայ , մեծ փառքով հռոմ դարձաւ . բայց իրեն դառնալէն առաջ մեռած էր իր սիրելի թագաւորը , ուրիշ նոր թագաւոր նստեր էր որ հակառակ էր քրիստոնէնէրուն : Ասածին պէս որ Աւստաքէոս քրիստոնէայ եղեր է , իր ամմէն արդիւնքը բանի տեղ չի սեպելով՝ ատեան կանչեց զինքն ալ ընտանիքն ալ , շատ կը բռնադատէր որ դառնան կուռքերը պաշտեն . երբոր տեսաւ որ չէն դառնար , ամմէնն ալ առիւծներուն առջին ձգեց . բայց առիւծները մէկի մըն ալ չի դպչելով իրենց տեղը դացին , թագաւորը աւելի սրդողելով հրամ

մեց որ պղնձէ ցուլը սաստիկ տաքցընէն հան
ձգէն : Ըսիկայ պղնձէ շինած աման մըն էր
ցուլի (պուղայի) ձեով ուր տաքցընելով
մարտիրոսները կը ձգէին կ'երէին . երբոր
երանելիները աս կրակ կտրած ամանին
քոյն եկան՝ մէջը պիտոր իյնային , ծունկ
չոքած սկսան մեկտեղ աղօթք ընել , զիրենք
Ըստուծոյ նուիրել , որ Ըաբիլոնի փռանը
մէջ ձգած իրէք մանկունքին պէս զիրենք
ալ ընդունի : Տէր Ըստուած , ըսին , մեր
անունը յիշողներուն խնդիրքները կատա-
րէ . ամմէն քանի առատութիւն տուր . ջրի
վրայ ճամբորդներուն յաջողութիւն տուր .
որոնց զակրներն որ վտանգի մէջ իյնան՝
օգնութիւն հասիր . ծանր մեղքերու մէջ
եղողներուն մեղքերնին թեթևցուր . հի-
ւանդներուն առողջութիւն տուր . աս կրա-
կը դուն ցօղ փոխարկէ , մեր հոգին ընդու-
նէ , մեր մարմինը իրարմէ մի բաժներ :
Չայն մը եկաւ երկնքէն , ինչպէս որ ըսիք՝
անանկ ըլլայ : Արբոր ան կրակէ ամանին
մէջը ձգեցին , հոն ալ անոնք աղօթքի հետ
ըլլալով անանկ հոգինին աւանդեցին յամին
իրը 100 , ոմանք քիչ մը ետև կը դնեն 120
կամ 124 : Իրէք օրէն ետև տեսան որ մար-
միննին չէր երած ամենեւին , այլ ձիւնի պէս
ճերմակ մնացած , գլխըներնէն ալ մազ մը
չէր երած . քրիստոնեաները ժողվելով մէկ
տապանի մը մէջ դրին ամմէնն ալ , որոնց
վրայ ետքը ժամ ալ շինեցին :

Ը սուրբերուն վարքը մեծ քաջալերու .

Թիւն կու տայ անոնց որ նեղութեան մէջ են . դրսէն կը տեսնես որ կամ մարդիկ կամ բնական պատճառներն էին՝ որ իրենց վրայ աս նեղութիւնները բերին, բայց ներսէն յայտնի կը տեսնես որ Մտուած է եղեր . 'ի յաւիտենից սահմաներ է ինչպէս կու պաշտութեանէ դառնալին սուրբ հաւատքով լուսաւորուիլին, անանկ ալ աս կերպ նեղութիւններ քաշելին . որուն կամքին մէկը չի կրնար խառնուիլ, իր մտքին մտածմունքին ալ խելք մը չի կրնար հասնիլ :

Հիմա քու վրայ դարձուր մտածէ որ կրսես թէ, ինչ փորձանք կայ՝ իմ վրաս կու գայ, ինչ ցաւ կայ՝ իմ տանս մէջ կ'ըլլայ, չի դիմացուիր ըսելով կը սկսիս ճշգոհալ . անանկով տանջանքը կը քաշես, վարձքն ալ կը կորսընցընես . մանաւանդ վարձքին տեղը պատիժ կ'ընդունիս : Բայց թէ որ քեզի ալ յայտնէր զուրցէր Մտուած, թէ 'ի յաւիտենից սահմանուած է քու վրայ, ինչպէս քրիստոնէի զաւակ ըլլալդ, անանկ ալ աս խաչը քաշելդ՝ ոչ մարդիկ են ոչ դիպուածները քեզի աս խաչը բերողները, այլ Մտուած է որ ասանկ վաւեր է քու վրայ, աս որ դիտնայիր, չէիր անանկ ճշգոհար : Բնանկ է նէ աս վարքը կարդալէն քեզի աս պտուղը հանէ . իրաւ դիտցիր որ՝ ինչպէս Աշտարէոսի առաջուց զուրցէց Մտուած, ան ալ յայտնի Մտուածոյ ձեռքէն եկած խաչերը սիրով քաշեց, քեզի ալ սուրբ հա-

ւատքդ կը զուրցէ՝ թէ ամմէն բան որ վրայ
 կ'ըլլայ, Մտուծոյ կարգաւորութեամբը
 կ'ըլլայ, և ոչ մարդու ձեռքով. ինչ ալ որ
 Մտուծոյ կարգաւորութիւնը կ'ըլլայ, ամ-
 մէն բան աղէկ կ'ըլլայ, և ան է քու շահդ :
 Մտոր վրայ հիմա խելքդ չի հասնիր. բայց
 ետքը պիտոր իմանաս ինչ աղէկ է եղեր քե-
 ղի ան խաչը քաշել, որուն վրայ դուն հիմա
 կը ճշգոհաս. ինչպէս տղայ մը երբոր գլու-
 խը կը լուանան կը մաքրեն՝ կու լայ, խելքը
 չի հասնիր որչափ աղէկ բան է մաքրու-
 թիւնն որ առանց լուանալուն չըլլար :

ԵՕԹՆ ՄԱՆԿՈՒՆՔ ԵՓԵՍՈՍԻ

Եփեսոս քաղաքն որ հիմա Մ. յասուք
 կ'ըսուի, Վուշ ատասի ըսուած տեղն է, որ
 մօտիկ է Օ միւռնիոյ : Մտնք եօթը երի-
 տասարդ աս Նիփեսոս քաղքին մէջ մենծե-
 րու զաւկըներ էին. երբոր Վեկոս կայսրը
 հոն եկաւ, ասոնք եօթն ալ ինչպէս իրենց
 հարերն ալ ամմէն որ կայսեր առջև կը կե-
 նային, ոսկի կամար մէջքերնին կապած, և
 ուրիշ զինուորական զարդեր ալ հագած :
 Վեկոս կայսրը որ մը իր կուռքերուն տօն
 մը կատարել հրամայեց հանդիսով. անոր հա-
 մար մեծ ու պղտիկ հոն ժողովելով զո՛հ
 (զուրպան) մատուցին ուրախութիւն ըրին,
 հոն գտնուած քրիստոնեաներն ալ կը բռ-
 նադատէին իրենց հետ մէկտեղ զո՛հ ընե-

լու . անոնց մէջէն վախկտաները խօսքերնին մտիկ դրին , բայց քաջասիրտ քրիստոնեաները մտիկ չի դնելով շատ տանջանքներ քաշեցին , շատն ալ նահատակուեցան : Ասեօթը մանկունքը արդէն քրիստոնէից հետ ընտանութիւն մը ունէին , իրենք բարի ըլլալով՝ քրիստոնէից բարի վարքին ալ շատ հաւնած էին . հիմա ալ տեսնելով անոնց քաշած տանջանքները , համբերութիւնը , սրտերնին կը ցաւէր կը խշխշար վրանին , կը հարցընէին հաւատքը հասկընալու համար . անչափ ետեւէ ընկան որ՝ ճշմարտութիւնը ճանչնալով՝ եօթն ալ մէկտեղ ծածուկ մը կըրտուեցան . միշտ աղօթքի ու պաք պահելու հետ եղան որ Աստուած հաստատուն պահէ զիրենք ճշմարիտ հաւատքին մէջ :

Աղաւ օր մը որ կռապաշտները նորէն իրենց կուռքերուն տօնը պիտի տօնէին . ասոնք ան ատենը մէջերնէն քաշուելով եկեղեցին մտան , քուրձ (չուլ) հագնելով , գետինն իյնալով , գլխընին մօխիր ցանելով անանկ կու լային աղօթք կ'ընէին որ Աստուած ան մոլորեալները լուսաւորէ : Մանր իմացուեցաւ , Վեկոս կայսեր անկաճը հասաւ ասոնց քրիստոնեայ ըլլալը , որ շուտ մը բռնել տալով իր առջին բերել տուաւ . ասոնց հետ սաստկութեամբ խօսեցաւ որ թողնեն Վրիստոս , կուռքերուն զոհէն . ասոնք մէկ բերան խոստովանեցան որ պատրաստ ենք արիւննիս թափել , Վրիստոսի ճշմարիտ հաւատքը չի թողնել : Ան ա-

տենը կերայր փոխելով՝ Վեկոս՝ անուշութե-
նով շողոքորթելով խորաթել սկսաւ շատ
խոսամունքներ ընելով թէ, որ ձդեն քրիս-
տոնէութիւնը : Տեսնելով որ չի կրնար մը-
տուրնին փոխել, դատինին կտրել տուաւ որ
մեծ անարգանք կը սեպուէր, երեսնին զար-
նել, սկսաւ գաւազանով ալ ծեծել ինչպէս
որ ստահակներուն (եարամազներուն) կ'ը-
նէին : Մտանկով իրենց ծնողայր խնայելով
իրենց տները խրկեց, քանի մը օր հոն նըս-
տին որ, ըսաւ, կամ ամբնալէն կամ իրենց
ծնողքը ասոնց միտքը փոխեն. որովհետեւ
Վեկոս ալ ան օրերը հարկաւ որ գործքի մը
համար միջոցներ քաղքէն դուրս ելլել ու-
նորէն դառնալ :

Մտնիք թաղաւորին առջևէն դուրս ել-
լէնուն պէս՝ մտածեցին մէկ տեղ մը եր-
թալ պահուրտիլ, որ ծնողքներնուն պատ-
ճառովը չըլլայ թէ իրենց վտանգ մը հաս-
նի. ինչ ոսկի արծաթ որ ունէին հայրենա-
կան կամ զինուորուի սէն վատրկած՝
աղքատներուն բաժնեցին. քիչ մը բան ի-
րենց հարկաւ չըլլալու չափ հետերնին առ-
նելով մօտիկ մէկ լեռ մը գացին, հոն մէկ
քարայր (մաղարայ) մը գտնելով՝ անոր ներ-
սի դին պահուրտեցան. լալով աղօթք ընե-
լով որ Մտուած զիրենք պահէ, աւելի հո-
գինին քան թէ մարմիննին :

Մտ տեղս ատեն մը պահուրտելով, ի-
րենց մէջի պզտիկը՝ որ Մմիլքոս կ'ըսուէր,
ամմէն օր քաղաքը կը խրկէին աղքատի հա-

դուստով՝ որ իրենց հաց բերէ, հալածու-
մին բանն ալ հասկընայ: Ասիկայ օր մը քա-
ղաքը մտնելնինի, խմացաւ որ Վեկոս կայս-
րը դարձեր եկեր է. աչքով ալ տեսաւ որ
անոր հրամմելէն քրիստոնէաները կը տան
ջէին. որը կրակը կը ձգէին, որը թրով կը
զարնէին, գլխընին փայտի վրայ տնկած
քաղքին դրանը դրսի դին կը տնկէին, որը
կախուած կը քերթէին. լսեց ալ որ մար-
դիկ ելեր էին զիրենք փնտրուելու, իրենց
ծնողքներէն կ'ուզէին. ան ատենը հազիւ
քանի մը հաց առնելով արտորնօք քաղքէն
դուրս փախաւ գաղտուկ, եկաւ լեռը իր ըն-
կերներուն պատմեց: Անոնք լսելով ան հա-
ցը ուտելով աղօթքի հետ եղան ու Վս-
տուած հալածումը դադրեցընէ. ըսին Վս-
լիքոսի, առտուն նորէն կանուխ գնա քաղա-
քը, խմացիր ինչ որ կ'ըլլայ, հացն ալ շատ
կեկ բեր՝ որ քանի մը օր օգտէ: Աս ըսե-
լով Վստուծոյ յանձնեցին զիրենք, սկսան
բուն ըլլալ:

Վեկոս թաղաւորը լստ օր ասոնք փրն-
տրուելով, սկսաւ իրենց ծնողքնեղէլ, որ
զուրցեն՝ որ պահուրտեր են ասոնք. ա-
նոնք ալ գիտնալով լեռան մէջ պահուած
ըլլալնին, վախերնէն խմացուցին տեղը:
Եւ ուտ մը մարդ խրկեց Վեկոս, հրամեց
ան քարայրին բերանը ուր կեցեր էին՝ խո-
շոր քարերով գոցել, որ հոն անօթի շնչար-
գէլ մեռնին կորսուին: Արկու իշխան՝ վե-
րահացու էին եղած աս գործքիս՝ որ ծա-

ուծուկ քրիստոնէայ էին . ասոնք կապարեայ
(զուրշինէ) տախտակի մը վրայ դրեցին աս
եօթը մանկանց անունները , հարածանաց
ատենը , և թէ ինչպէս քրիստոնէութեան
համար անօթի մնալով հոս մեռան . աս
տախտակը ներսի դին քարերու մէջ դնե-
լով՝ դրսի դիէն գոցեցին , կարելի է որ ըսե-
լով՝ ատենօք ասոնց ոսկորները գտնելու ըլ-
լան նէ՝ ով եղածնին հասկրնան :

Տարիներ անցաւ կապաշտութեան ա-
տենը լմնցաւ , եկաւ հասաւ մեծին (Սէոզոս
կայսեր օրերը , որուն ատենը չորս դին տա-
րածուած էր քրիստոնէութիւնը , բայց նոր
նոր հերետիկոսութիւններ ելած էին . մէկ
հերետիկոսութիւն մըն ալ աս էր ելած որ՝
սադուկեցոց պէս կ'ուրանար յարութիւ-
նը , որուն վրայ (Սէոզոս թագաւորն ալ
ուրիշ բարեպաշտներ ալ շատ կը հոգային՝
չըլլայ որ աս մոլորութիւնը տարածուի :
Բայց Մատուծոյ խնամքը իր եկեղեցնայ
վրայ վարմանալի է , չիկարծած բանով ա-
նիկայ կը պաշտպանէ : Մն օրերը Ափեսոսի
իշխաններուն մէկին միտքը ընկաւ մէկ փա-
րսիս (աղըլ) մը շինել իր ոչխարներուն
համար , լման մօտիկ ան տեղին՝ ուր որ աս
եօթը մանկունքը գոցուած էին . շինելու
ատենը բանուորները վար առին քարայրին
բերանը դրած քարերը՝ որ իրենց շէնքին
բանեցրնէն . քարայրը բացուեցաւ , բայց
իրենք ներս չի մտան , ան իրիկունք վար-
ձան բանուորները իրենց տունն եկան :

Աստուծոյ ամենակարող զօրութիւնը առտուանց աս եօթը մանկունքը յարոյց իբր մէկ խորունկ քունէ մը . կարծեցին որ իրիկունը պառկեցան , առտուն քունէն ելան . վրայի լաթերնին ալ ամենեւին չէին փրտտած . կայսեր վախը սրտերնին մնացած ըլլալով՝ Վիլիքոսը խրկեցին որ երթայ Ափեսոս քաղքէն հաց բերէ , հալածման վրայ ալ իմանայ տեղեկութիւն բերէ . թէ որ Ղեկոս մեր ծնողքները բռնադատէ , մեզ անոնցմէ ուզէ ըսին՝ ան ատենը մենք ալ կ'երթանք մեռնելու . մեր պատճառով չըլլայ թէ ուրիշները վտանգի մէջ իյնան : Դուրս ելաւ Վիլիքոս տեսաւ որ քարեր դիզուած կան , վախ ընկաւ վրան , որովհետեւ չէր իմացած ոչ քարերով գոցելնին ոչ բանալնին . ասիկայ մէկ որոգայթ մըն է , ըսաւ , կռապաշտներուն . երեսը գոցելով սկըտաւ ճամբայ ելլել շատ զգուշանալով՝ չըլլայ որ կռապաշտները ճանչնան : Արբօր քաղքին մօտիկցաւ , կը նայէր որ արդեօք թագաւորին ծառաներէն մէկը կ'երևնայ , բայց մէկն ալ չի տեսնելով քաղքին դուռը հասաւ : Հոն տեսաւ շէնքերը բոլորովին փոխուած , իրեն տարակոյս մը եկաւ թէ արդեօք Ափեսոս է թէ չէ , նորէն նայելնին ի սաչ տեսաւ դռներուն ու պատերուն վրայ , վախնալով երկրպագութիւն ըրաւ . բայց միտքը սկսաւ բանիլ , աս ինչ է որ կը տեսնեմ ըսելով . քիչ մը առաջ գնաց , կողնակի ձայն լսեց , տեսաւ որ մարդիկ երեսնին խաչ կը

Հանեն քրիստոնէի պէս իրարու բարև կուտան, Յիսուսի անուան վրայ կ'երգու ըննան։ Մը ինչ է, ըսաւ, երեկ խաչին նշանն ու Յիսուսին անունը ծածուկ, այսօր յայտնի . աս ինչպէս կրնայ ըլլալ ըսելով՝ քաղքին մէջը սկսաւ ժուռ գալ . բայց ուր որ երթար քրիստոնէի նշաններ կը տեսներ կը լսէր՝ իրեն խելըռիլ մը եկաւ, արդեօք երանգ կը տեսնեմ կ'ըսէր . սիրտը կ'եփէր, չէր կրնար մէկ մտքի վրայ կենալ . երեկ հոս լեցուն էին, կ'ըսէր, կուսպաշտներ որ քրիստոնէները կը չարչարէին, այսօր համարձակ Վհն կը պաշտեն, անհաւատի շոշորդ մը չի կայ։

Չի դիմացաւ՝ մէկը բռնեց, աս քաղաքս արդեօք Վփեսոս քաղաքն է մի՛ հարցուց . ան ալ՝ հրամերես ըսաւ, բայց դուն ո՞ւր տեղացի ես, ըսաւ, որ չե՞ս կրնար ճանչնալ Վփեսոսը։ Վփիքոս պատասխան մը չի տալով, պաղած կը նայէր, կասկածի կ'երթար՝ չըլլայ թէ ասիկայ կուսպաշտներուն մէկ հնարքը ըլլայ՝ պահուրտած քրիստոնէաները դուրս հանելու համար, կամ թէ Վստուած արդեօք Վեկոս կայսեր սիրտը փոխեց որ թոյլ տուաւ քրիստոնէութիւնը համարձակ պաշտելու։

Մտանկ մտամտալով գնաց հաց ծախողին ստակ տուաւ որ հաց առնէ։ Մնիկայ ըստակը ձեռք առաւ, բայց կը նայէր պտրտցրնէր չէր կրնար ստակը ճանչնալ . ուրիշներուն ցցուց՝ անոնք ալ չի ճանչցան . հարցուցին Վփիքոսի, ուսկից ձեռքդ ընկաւ . աս

ստակը , հնուցմէ մնացած գանձ մի գտար :
Միլիքոս ալ աւելի շփոթելով՝ կռապաշտ-
ներուն ահը յիշելով կ'ազաչէր , ես կ'արտո-
րամ իմ բանիս պիտոր երթամ կ'ըսէր , ըս-
տակը առէք ինչ որ կը բերէ հացը տուէք ,
կամ թէ ստակը ինձի գարձուցէք՝ թող
տուէք որ երթամ : Մը խօսքերէս անոնք
ալ աւելի կտակած առնելով վրան՝ թող չէին
տար , կը ստիպէին ըսելու ուսկից ձեռքդ ըն-
կաւ աս ստակը : Մոր ձայնը շատնալով ամ-
մէն անցուոր հոն ժողովելով վրան թափե-
ցան , առին Միլիքոսը քաղքին մենծին տա-
րին՝ իբր մէկ կտակածաւոր մարդ մը : Մնալ
սկսաւ հարցնել՝ բան մը չի հասկըցաւ .
Միլիքոսը շփոթելէն զարմանալէն չէր գի-
տէր որ ինչ զուրցէ : Մնկից առին եպիսկո-
պոսին քովը տարին , տուած ստակն ալ ցը-
ցուցին . եպիսկոպոսը՝ ստրկին վրայ Ղեկոս
կայսեր անունը կարգալով հարցուց , ուսկից
գտեր ես աս ստակը , որդեակ՝ ըսաւ : Մի-
լիքոս պատասխան տուաւ . տեղէ մը չեմ
գտած , տէր իմ , ինչ որ երեկ մէկալնօր աս
քաղաքս կը բանեցընէր՝ ան ստակն է , որով
հետեւ ես ալ աս քաղքիս մէջ ծնած մեծ-
ցած եմ : Տեսաւ որ չէն հաւատար , իրեն
մէկ զխտածու մըն ալ չէլաւ , յայտնի զուր-
ցեց իրեն ով ըլլալը . հռութոսի կամսին
զաւակն եմ ըսաւ , որ քաղքիս մենծերէն
մէկն է , Ղեկոս կայսեր իշխաններէն է .
աս լաճնին պէս ամմէնն ալ մէկ բերան
սկսան ծիծաղիլ , խելըւած մարդ մը սեպե-

լով կամ մէկ խաբէբայ մը : Քաղքին մեծն
ալ որ հոն եկած էր՝ ասոր վախ տալ սկսաւ .
շտիկ շիտակ զուրցէ , ըսաւ , ուսկից ձեռքդ
ընկեր է աս ստակս , չէ նէ քեզ շատ տան .
ջանքով կը չարչարեմ : Միլիքոսի միտքը շիտ
թած , սիրտը վախի մէջ ընկած՝ կ'աղա-
չեմ , ըսաւ , պարոններ , դուք ալ ինծի շի-
տակը զուրցեցէք՝ աս քաղաքը Ափեսոսն է
թէ չէ . Վեկոս կայսրը հոս է թէ չէ : Մ
ըսելով չորս դին կը նայէր որ անչափ շա-
տուորու թեան մէջ մէկ ճանչուոր մը տես-
նէ , մէկը չի տեսաւ : Մնոնք ալ պատասխան
տուին . աս քաղաքն Ափեսոսն է , բայց աչ-
խարքիս վրայ չի կայ մէկ թագաւոր մը որ
Վեկոս անուն ունենայ , ուր մնաց աս քաղ-
քիս մէջ տեսնել . հոս իշխան կը նստի քրիս-
տոսասէր Թէոդոս թագաւորին դիացէն :
Չիյտեմ ինչ զուրցեմ , ըսաւ Միլիքոս . ես
երեկ հոս աս քաղքիս մէջ տեսայ Վեկոս ,
անոր իշխանները անոր ծառաները կ'իշխէին
աս քաղքիս վրայ : Մն ատենը ցած կեց ե-
պիսկոպոսն ու կանչեց . մարդ , դուն կամ
խենթ ես , ըսաւ , և կամ մեզ խաբել կ'ու-
զես , ուր է Վեկոս ըսած թագաւորն որ
դուն կը հարցընես , անիկայ հին ու կու-
պաշտ թագաւորներէն մէկն էր : Պատաս-
խանեց Միլիքոս . իրաւ կը զուրցեմ , ըսաւ ,
տէր իմ . երեկ Վեկոս աս քաղքին մէջն
էր , քրիստոնէաները կը չարչարէր . մենք
ալ քրիստոնէայ ըլլալով անոր ձեռքէն փա-
խանք . թէ որ չէք հաւատար , հետս ե-

կէք, ցցընեմ ձեզի իմ ընկերներս որ լե-
ռան մէջ դեռ պահուած կան :

Ըն ատենը դարձաւ եպիսկոպոսը քաղ-
քին մենծին ու ամմենուն ըսաւ . եղբար-
ներ . հոս մէկ տեսիլք մը կայ, մէկ ցուցանք
մը կայ : Ըս զուրյելով ելան ամմէնն ալ մէկ-
տեղ Վճիքոսին ետեէն գացին . երբոր քար-
այրին դուռը հասան , եպիսկոպոսը գտաւ
ան կապարեայ տախտակը , կարդալով վրայի
գրածը զարմացաւ մնաց . ամմենուն ալ ցը-
ցուց : Վանք որ ներսը պահուող մանկունքը
ասոնց ոտքին ձայնը առնելով՝ կարծեցին որ
Վեկոսին ծառաներն են որ կու գան զիրենք
բռնելու : Ըս մտքին վրայ ըլլալնինի , Վճի-
քոսը տեսան որ ամմենէն առաջ հոն մտաւ ,
պատմեց իրենց զարմանալի փոփոխու թիւնն
որ եղեր է աշխարհք , կռապաշտութենէ
քրիստոնէութիւն դարձեր է , ըսաւ . սիրտ
տուաւ իրենց ուրախ կենալու , պատմելով
ինչպէս ըստուած այսօր իր մենծութիւնը
ցցուց : Ետքը մտան զլիաւորները տեսան
աս մանկունքն որ երեսներէն մէյմէկ հրեշ-
տակ կըլմանէին , իբր լոյս կը ցոլար . ամմէն
մէկին ողջոյն տալով համբուրեցին ան կեն-
դանի նահատակները . անոնք ալ մէկիկ մէ-
կիկ պատմեցին իրենց գլխընին եկածը , ինչ
որ եղան իրենց օրերը :

Շուտ մը եպիսկոպոսը գրեց Թեոդոս
Թագաւորին , որ լսածին պէս ճամբայ ելաւ
Պօլիսէն Վիեննա եկաւ . իր հետն ալ մէկ-
տեղ բազմութի ժողովրդեան՝ աս նոր սուր-

բերուն յարու թիւնը տեսնելու : Արքայ Տան
մօտիկցաւ թագաւորը՝ եօթը մանկունքն
ալ թագաւորին դէմն ելան , որոնք տեսա-
ծին պէս զարմացաւ մնաց , իրենց լուսերես
կերպարանքնին մէյմէկ երկնային մարդիկ
կը ցըրնէր զիրենք թագաւորին աչքին , որ
ձիէն վար ինջնալով բարևեց ասոնք , մէկիկ
մէկիկ գրկելով արցունք թափելով համբու-
րեց : Ատքը ան քարայրին մէջը մտան ի-
րենց տեղերը նստելով պատմեցին թագա-
ւորին , օրհնեցին իր թագաւորութիւնը .
Աստուած մեզի անոր համար յարու թիւ առ-
նել տուաւ որ , ըսին , ձեր տրտմութիւնը
փարատէ , չի հաւատացողներուն խելքը խօ-
թէ , հասկընան ինչպէս որ մեզի յարու թիւ
առնել տուաւ , նոյն տէրը կրնայ ամմէն մեռ-
նողները ասանկ գերեզմանէն յարուցանել :
Այս ըսելով՝ եպիսկոպոսէն օրհնութիւն առին ,
անանկով գլխընին ծռելով մէկէն ամմէն-
նալ հողինին Աստուծոյ աւանդեցին :

Ամմէն քրիստոնեայք մեծ մխիթարութիւն
առին աս դիպուածին վրայ . ան չար ազան-
դաւաւորներն որ ելած էին եկեղեցնայ մէջ
Պաղեստինու գիւերը՝ մեռելոց յարու թիւնը
սուտ հանել կ'ուզէին , հիմա իմացան որ աս
դիպուածով յայտնի սրապանձեցուց Աճ ա-
նոնց սուտ վարդապետութիւնը : Համբե-
ցին տեսան որ իրենց մեռնելէն ետեւ՝ որ ի-
րենց քուն մը կ'երևնար , 140 տարի անցած
էր . ետքը Աստուած իբր մէկ օրուան մէջ
անանկ արթնցուց յարոյց ասոնք՝ յամի տն

389 . մեծին լծկողոս թագաւորին տասնըմէկերորդ տարին : լծագաւորն ու եպիսկոպոսը զարմացած մնացին Մատուծոյ նախախնամու թեանը վրայ . սկսան զՄատուած փառաւորել . թագաւորը հրամայեց եօթը տնտուկ շինել ոսկիով արծաթով զարդարել , որպէս զի հոն գնել տայ սրբոց մարմինը . բայց ան գիշերը սուրբերը երևնալով թագաւորին՝ ըսին որ Մատուած մեզ ոսկիէն արծըթէն հանել չի տուաւ՝ այլ հողէն , անոր համար ան գետնին մէջ ուսկից որ յարութիւն առինք՝ մեզ թաղէ , որ Քրիստոսի երկրորդ անգամ գալուն՝ ան հողէն յարութիւն առնենք : Աղուան օրը թագաւորին ապսպրելովը տեղը փորեցին , հոն դրին սուրբերը , ան քարայրն ալ եկեղեցի շինելով փառաւոր տօն կատարեցին . որոնց վրայ շատ հրաշքներ կը պատմուին . իրենց մարմինն ալ անապական մնացին հոն :

Սուրբն Աղուարդ Մնգղիոյ ուղղափառ թագաւորը՝ տասնըմէկերորդ դարուն մէջ Օատկին օրը հաղորդուելէն ետեւ երբոր սեղանին վրայ հաց կ'ուտէր իր մենծերուն հետ , միտքը երկնային բաներու վրայ պարտելով շատ այլայլութիւն կ'երևցընէր իր երեսը , երբեմն ուրախ , երբեմն տրտում ցցընելով . սեղանէն ելլելէն ետեւ երբոր առանձնացան՝ աղաչեցին իրեն պատճառը զուրցելու : Մն ալ հառաչելով մը ըսաւ . երբոր սեղանին վրայ էի , միտքս յափշտակուած տեսայ Ափեսոսի եօթը սուրբ ման

կունքը քարայրին մէջը իրենց լաթերովը պառկած . երբոր ես ուրախու թեամք անոնց վրայ կը նայէի, մէյմըն ալ տեսայ որ աջ դիէն դարձուցին զիրենք ձախ դին . ասիկայ նշան է, ըսաւ, մեծ փոփոխութեան որ աշխրբիս վրայ պիտոր ըլլայ, մեղաց համար 70 տարի շատ փորձանքներ պիտոր ըլլան . վասն զի սուրբ մանկունքը անչափ տարի ձախ դինին պառկած պիտոր մնան : Քովի լողները զարմացած մնացին, որովհետեւ չիյտէին ա մենեւին աս մանկանց պատմութիւնը . լեա գաւորը պատմեց անոնց վարքը՝ յարութիւն առնելը, ինչպէս որ վերը գրեցինք : Ըսոր վրայ Մեղղիացւոց մենծերը՝ եպիսկոպոսները որ ան ատենը ուղղափառութե մէջ էին, խիստ ուղեւով ստոյգը հասկընալ, դեսպաններ խրկեցին Պօլիս նստող թագաւորին, ան ալ աս դեսպաններուն հետ մէկտեղ եպիսկոպոսներ քահանաներ խրկեց Ալեքսոս, որ ըսածին պէս եօթն ալ տեսան որ ձախ թեւերնուն վրայ միակերպ պառկած էին : Ալ ինչպէս որ ըսաւ սուրբն Աղուարդ, ան տասնըմէկերորդ դարուն մէջը՝ մեծ փոփոխութիւն եկաւ աշխրբիս վրայ թէ՛ արեւմուտք թէ՛ արեւելք, ուր Մարապները՝ մանաւանդ սելճուգեան ըսուած թուրքերը շատ աւրեցին, աւելի մեր հայաստանը, հուղրիլայ ու Մլփասլանայ օրերը . ինչպէս որ Յովհաննէս Արղեան վարդապետն ալ հայաստանի մէջ գուշակեր էր : Մէկ կրօնաւոր մըն ալ հակներոս երկուտասաներորդ

դարուն մէջ երբոր ծանր հիւանդութենէ պառկած ըլլալով մօտիկ էր մեռնելու, եղբարներէն մէկը իրեն միտքը ձգեց եօթը մանկունքը բարեխօս բռնել աղօթք ընել. ասոնք, ըսաւ, հիւանդներուն հասնող սուրբեր են, անուշ քուն բերել կու տան: Այրբոր անանկ ըրաւ, ներսէն ձայն մը լսեց. հասարակ չէր կէտն զիս. երկինքն ալ տեսաւ բացուած՝ սուրբերուն մէջը ան եօթը սուրբ մանկունքը նստած. աս տեսիլքէն ետեւ զինքը գտաւ ողջ առողջ կատարեալ:

ԵՒԳԻՆԷ ԿՈՅՍ

Ասիկայ դուստր էր Փիլիպպոսի որ հռոմայ ազնուականներէն մէկն էր երկրորդ դարուն վերջերը. շատ խելացի աղջիկ. պզտիկուց կարգացող. վարքն ալ պարկէշտ: Ահաւատեն որ Կոմոգոս ըսուած հռոմայ կայսրը Ագիպտոս խրկեց իր հայրը, որ Փիլիպպոս կ'ըսուէր, կուսակալ ընելով զինքը Ագիպտոսի վրայ, որպէս զի Մըքսանգրիա երթալով զսպէ եգիպտացւոց ապստամբութիւնը, սրոնք սորուած էին ապստամբելու: Փիլիպպոս իր ամմէն ընտանեօքը թագաւորական զօրքովը հօն գալով՝ իրեն քաջութեամբը խելքովը բոլոր Ագիպտոս կայսեր տակը հնազանդեցուց: Ըս ըմնցընէն հանդարտելէն ետեւ Փիլիպպոս միտքը դրաւ իր աղջիկը Աւգինէ հօն կարգելու. ո.

րովհետև Աղեքսանդրիային շատ մենծերը
անդադար ուղեւու հետ էին իրենց աղոցը
առնել Ալզգինէ կոյսը իրեն գեղեցկութեն
ու խելացի վարմունքին համար : Աայց
չնորհքն Մտուծոյ աւետարանական լոյսը
ծագեր էր Ալզգինէայ կուսին սիրտը . իրեն
խելքովը հասկըցեր էր որ կուսապաշտներուն
հաւատքը սուտ է , գաղտուկ քրիստոնէից
հետ տեսնուելով քիչ մը տեղեկութիւն ալ
առած էր քրիստոնէական հաւատքին վը-
րայ . միշտ Մտուածաշունչը կը կարգար ,
սրբոց վարքը , աւելի սրբուհւոյն (Ս)եկղեայ
վարքը . ասոնք կարգալով սիրտը կը վառէր
ինքն ալ (Յիսուսին հետեւիլ . սաղմոսին ան
խօսքը միշտ բերանն առած կը զուրցէր :
Առաջ հեթանոսաց դեռ էն է Յեռապործոյ որ-
դոց ճարդհան . այլ քէր զերհինս արար : Սիայն
աս բանս իր ծնողքներուն բանալ իր միտքը
զուրցել կը վախնար , չըլլայ որ իր սպառնա-
ւովը չարիք մը հասնի քաղքին քրիստոնէ-
ներուն վըրայ :

()ր մը Փիլիպպոս խօսք բացաւ յորդո-
րեց իր աղջիկը Ալզգինէն Արկուիլոսի հետ
կարգուելու , որ հռոմայեցի էր աղնուական
տընէ , կուսակալի տղայ : Ալզգինէն պատաս-
խան տուաւ հօրը . փեսայ ըլլալու համար
տանը մենծութիւնը նայելու չէ , ըսաւ , այլ
իրեն մարդուն աղէկ ըլլալը նայելու է . անոր
համար մի արտորար , հայր իմ . առանց ըն-
տրելու , այլ սպասէ ինչուան որ աղէկ ու կա-
տարեալ մարդը գանես : Արքոր ուրիշ ար-

ժանաւոր մարդ մը կ'առաջարկէին իրեն
ծնողքը , Աւզինէն ուրիշ պատրուակներ
(մահանաներ) մէջ բերելով կը նայէր որ
խափանէ . խելուրնին չի հասաւ որ իրենց
աղջիկը քրիստոնէութիւն ճանչնալով զրեւ
էր միտքը որ աշխարհք չի մտնէ , այլ կու
սու թեամբ : Յիսուսի հարս ըլլայ , սիրտը կ'ե
փէր կը մտածէր մէկ ճամբայ մը գտնել իր
անէն դուրս ելլել , քրիստոնէայ ըլլալ : Աս
մտքով օր մը խնդրեց իր ծնողքներէն օր
թող տան մէկ ազարակ (չիֆտլիկ) մը եր
թալու իրեն երկու հաւատարիմ ներքինի
ներով որ կ'ըսուէին Արտաս ու Յակին
թոս : Արբոր ճամբայ ելան , Աւզինէ կոյսը
խելացի խօսքերով սկսաւ ցցնել ներքինինե
րուն՝ ինչպէս իրենց կուսպաշտութեան հա
ւատքը սուտ էր , քրիստոնէից հաւատքը
ճշմարիտ : Ինչուան հիմա , ըսաւ , ես ձեզի
տիկին կ'ըսուէի , ասկէց ետքը եկէք հաւա
սար եղբար ըլլանք , ճշմարտին Աստուծոյ
ծառայ ըլլանք . ես լսեր եմ մէկ սուրբ ե
պիսկոպոսի մը համար Հեզինոս անուն , ա
նոր ձեռքովը Աստուած շատ հրաշքներ՝ մեծ
մեծ գործքեր կ'ընէ , անոր երթանք մեզի
փրկու թեան ճամբան անիկայ կը ցցնէ :

Իսոյց որովհետեւ ուր որ կ'ուզէին չէր
կրնար կնկան հագուստով երթալ , մազերը
կտրեց , երիկ մարդու հագուստ մտաւ . ա
նանկով ներքինիի մը պէս ձեւանալով՝ իրեքը
մէկ տեղ ճամբայ ելլալով երբոր քաղքէն
դուրս քրիստոնէից կեցած տեղերը հասան ,

լսեցին անոնց զուրցած սաղմօսը որ բարձր
ձայնով կ'ըսէին, (Յեւանէն խորայեւէ յԱրհի-
րոսէ . ան սաղմօսին մէկ տունն ալ կըսէ ,
Աստուած մեր յերէինս եւ յերէրի զամենայն զոր
ինչ կ'ամէցաս եւ արար . հոռոյ հե՛լանոսաց ոսկե
էն , յեռագործոյ էն որդոց Տարդհան : Քիչ մը
առաջ երթալով տեսան Տեղինոս եպիսկոպոսը՝
բայց առանց ճանչնալու , որուն քովէն շատու
որ մէկտեղ երթալով կ'երգէին ան սաղմօսը
որ կը սկսի , Աստուծան եղբորոյ րեան .
որուն մէկ տունը կ'ըսէ , Աստուծոյ
դէպի նոցա 'ի ճանապարհ ուղիղ , զի երբեցէն 'ի
բազար Բնակումեան խորեանց : Աս խորհրդա-
ւոր սաղմօսները լսելով Ալգինէ կոյսը՝ ք-
սաւ իր ներքինիներուն . եղբարներ , շիտակ
է ճամբանիս , սիրտ առէք ինչպէս որ սաղ-
մօսը կը վկայէ , եկէք մենք ալ ասոնց հետ
խառնուելով երթանք ինչուան ուր որ եր-
թան : Արբոր մէջերնին մտան՝ հարցուցին ,
ով է ան ծերը որ իշու վրայ հեծած կ'եր-
թայ . անոնք ալ պատասխանեցին՝ աս է Տե-
ղինոս եպիսկոպոսը սուրբ եւ հրաշագործ ,
որ կախարդի մը հետ հակաճառելով կրակը
մտաւ , ողջ դուրս ելաւ : Ախտ ու բխտացան
Ալգինէ կոյսն ու ներքինիները թէ ինչպէս
Աստուած յաջողեց իրենց ուզածը . իրեն
հետ մտան իր գացած վանքը : Արբոր հանգ-
չեցաւ , մինակ քովը գացին , ոտքը իյնե-
լով հասկըցուցին որ կռապաշտներէն եկած
ենք , ճշմարիտ հաւատքը կ'ուզենք ընդու-
նիլ , դուն մեզի սորվեցուր քրիստոնէութիւնը :

Ես սուրբ Եպիսկոպոսը Մատուծոյ յայտնուածեամբք առաջուցմէ իմացած էր ասոնց վրայ, բայց չի գիտցողի պէս հարցընել սկըտաւ ուսկից էք, ինչ աղգէ, ինչ է անուն նիդ: Պատասխան տուաւ Լւգինէ կոյսը. հռոմայեցի ենք, մէկը աս եղբարներէն Պրոտոս կ'ըսուի, մէկալն ալ Յակինթոս, ես ալ Լւգինէոս կ'ըսուիմ: Մէկ անուն ունիս, ըսաւ Եպիսկոպոսը. Լւգինէոս քաջ կը թարգմանուի, դուն ալ քաջուածեամբ թողուցիր կուռքերը, որպէս զի Վրիստոսի ծառայ ըլլաս. շատ փորձանքներ պիտոր անցնին քու վրայէդ ինչպէս որ Մատուծ ինծիցցուց, զօրացիր, Մատուծ քեզի հետ է, չի թողուր քեզ քու երկու ընկերներդ ալ որ առաջ ծառայի անուն ունէին, հիմա Վրիստոսի բարեկամն եղան: Ետ բաներ խօսելով հետերնին աս սուրբը՝ մկրտեց ասոնք. ձեզի բնակարան աս աղքատ վանքն ըլլայ, ըսաւ. ուրիշ եղբարներուն հետ մէկտեղ հոս նստէք. ես հոս միայն տեսնուելու եկած եմ՝ չեմ նստիր: Վանքին մեծաւորին յանձնելով ասոնք՝ ինքն ելաւ գնաց:

Վանք Լւգինէայ ծնողքը տեսնելով որ չի դարձաւ, մարդ խրկեցին ետեւէն փնտրուել տուին ասդիս անդին, ուր որ կը կարծէին. բայց տեղ մը չի գտնելով, ուրիշ չի կարծած տեղերն ալ փնտրուել տուին. երբոր տեղ մը չի գտան՝ անատենը լաց ու ողբը առաւ զիրենք. ծնողքը իրենց անմաման

աղջիկը կու լային , եղբարներն իրենց քոյ-
րը , ծառաներն իրենց տիկինը . չէին գիտէր
որ Քրիստոս իրեն էր առեր անիկայ , աս
էր որ աւետարանին մէջ ըսեր էր . Մատ-
նէսի գոսար ' է Տօրէ : Մայց կուապաշտ քուր-
մերը իրենց կուապաշտութեամբը մտածե-
լով իրեն ծնողաց միտքը հաւանեցուցին ,
թէ կուռքերը Աւգինեայ գեղեցկու թեանն
ու իմաստութեանը խիստ հաւնելով իրենց
քովն առեր էին , այնչափ որ Փիլիպպոս ա-
նոր ոսկեղէն արձանը շինելով կուռքերուն
կարգը անցուց :

Իսկ Աւգինէ կոյսն որ Աւգինէոս ըսուե-
ցաւ , զինքը չիմացընելով ան հագուստովը՝
հոն կրօնաւոր եղաւ իրեն երկու ներքինի-
ներովը , առաքինութեան ու ճգնութեան
ետեւ ընկաւ , աղօթքի պաքի և ուրիշ բա-
րեպաշտական գործքերու խիստ սէր ունե-
ցաւ . խոնարհ հեզ ու կատարեալ համբե-
րող ըլլալով , ամմէնուն բարի օրինակ էր
եղած , ամմէնուն մէկ երկնային հրեշտակ
մը կ'երևնար իր բարի վարքովը : Մնանկ
որ երբոր իրեք տարիէն վանքին մեծաւորը
մեռաւ՝ եղբարները ասիկայ մտածեցին մե-
ծաւոր դնելու . իրեն պղտիկութիւնն ու
մատղաշ տարիքը արգելք մը չէր ըլլար ,
նայելով իրեն գերազանց առաքինութիւն
ներն որ շատ ծերերէն վեր էր :

Արբոր իրեն բացին բանը , շատ դէմ կե-
ցաւ կերպ կերպ պատճառներ բերելով . բայց
երբոր աւելի ստիպեցին , Աւգինէոս աւե-

տարանը բերել տալով ըսաւ . Մտուծոյ
ծառաներուն ամմէն գործքի մէջ պէտք է
Վրիստոս առաջնորդ ունենալ . տեսնենք
ինչ կ'ըսէ ձեր ուղած ընտրութեանը վրայ՝
ան բռնենք : Մը ըսելով քացաւ աւետարա-
նը , ան խօսքը ելաւ որ կ'ըսէ Վրիստոս .
Որ հասիցի 'ե քէնջ Ռեծ Լեհեւ , եղիցի Յեր պաշտօ-
նեայ . ե որ հասիցի 'ե քէնջ առաջին Լեհեւ , ե-
ղիցի Յեր ծառայ : Մն ատենն ըսաւ Սուգի-
նէոս . որովհետեւ Վրիստոսի խօսքին նայ-
ելով ձեր ընտրած մեծաւորութիւնը ծա-
ռայութիւն մըն է , ես ալ չեմ հրաժարիր
հնազանդ ըլլալու իբրև Մտուծոյ հրա-
մանին , քայց կ'ուզեմ զիս ամմենէն ետքինը
դնել : Մը գերազանց սրբուհին ինչպէս որ
բերնովն ըսաւ՝ անանկ ալ գործքով ըրաւ .
մեծաւոր ըլլալէն ետեւ ամմէն եղբարներէն
վար դրաւ զինքը . կրօնաւորութեան գործ-
քերը ընելու առջինն ինքը կ'ըլլար . ինչ ցած
ծառայութիւններ կար ինքը կ'ընէր , ինչուան
ջուր կրել , փայտ կտրել . իրեն բնակելու
տեղ զանապանին նստած տեղն ըրաւ , հան
կը նստէր . չուզէց անկէց վեր զինքը դնել .
ամմէն եղբարներուն հոգն ալ հագւոր ու
մարմնաւոր՝ կը լմնցընէր բան մը զանց չը-
նելով , գիշեր ցորեկ ալ աղօթքին կարգը կը
կատարէր : Մսանկ սքանչելի մարդ մը ըլ-
լալով՝ աւելի խոնարհութեան մէջ գերա-
զանցելով՝ բժշկութեւ շնորհք ալ ունեցաւ
Մտուծմէ . ինչուան սատանաները կը հա-
նէր , կոյրերը կը լուսաւորէր , անանկ որ ամ-

մէն Արգիստոսի մէջ անուէնն ելաւ՝ թէ Ալ-
գինէոս արբան ամմէն ցաւ կը բժշկէ . ա-
նոր համար ամմէն դիացէն բազմու թիւն կու
գային իրեն քով ողջու թիւ կը գտնէին : Ալ-
սեց աս ձայնս Սէլանա անուէնով կուապաշտ
տիկին մը՝ որ Աղեքսանդրիա կը նստէր , հա-
րուստ կնիկ՝ մեծ դատաւորի աղջիկ , որ շա-
տոնց ՚ի վեր գէշ ջերմի էր հանդիպած ,
ճար մը չէր գտած . Ալգինէոսի ոտքը գա-
լով վանքին դռնէն աղաչեց որ զինքն ալ
բժշկէ : Սուրբն ալ խաչին նշանը վրան հա-
նելով՝ եղով օծելով Վրիստոսի անուէնու
վը՝ բժշկեց կատարեալ . ան ալ շատ շնոր-
հակալութիւն ընելով գնաց իր կալուած-
ներն որ Աղեքսանդրիայէն դուրս էին , բայց
շատ հեռու չէին Ալգինէոսի վանքէն . հոն
կէց իրեք աման լեցուն ստակ իրեն պարգև
խրկեց : Ալգինէոս ետ խրկեց ըսելով , գա-
ցէք ըսէք ձեր տիկնոջը՝ որ հոս նստող Աս-
տուծոյ ծառաները կարօտ չեն ստրկի . ինչ
որ Աստուած կու տայ՝ հերիք կ'ըլլայ մեզի .
թէ որ կ'ուզէ աղէկ բանի մը բերել ան ըս-
տակը , թող աղքատներուն տայ : Աս բա-
նիս վրայ Սէլանա տրտմեցաւ ինքիրմէ ե-
կաւ սուրբին ոտքը իյնելով կ'աղաչէր որ ըն-
դունի , խօսք տուաւ ալ աւելի խրկելու .
բայց սուրբը բան մը չառաւ , խրատի խօս-
քեր խօսելով արձրկեց : Սատանան աս կրն-
կան ձեռքովն ուզեց հալածու մ' հանել սրբ-
բոյն վրայ . որ տեսնելով Ալգինէայ մաս-
ղաշ տարիքը՝ կարծելով թէ էրիկ մարդ էր ,

ասանկ խօսքերէն շահ հանելուն տեղը ,
ցանկութիւն ձգեց վրան , օրերով կը մըտ-
մտար ինչպէս իր ուզածն ընէ : Վրանի մը
օր կենալէն ետե իր կալուածներուն տունը՝
սուտմըտընէ հիւանդ ձեացուց զինքը ան-
կողնի մէջ պառկած . մարդ խրկեց Աւգի-
նէոսի աղաչելով որ քովը դայ : Արբոր սուր-
բը միամտութեամբ քովը գնաց , Սէլանան
իր չար միտքը բացաւ . սուրբը սկսաւ անի-
կայ յանդիմանել սաստել , բայց անիկայ ալ
աւելի սկսաւ համարձակութիւն ընել . ա-
նոր համար մերժելով մը քովէն դուրս ե-
լաւ ըսելով , իրաւ դուն Սէլանա ըսուեցար ,
որ սե կը թարգմանի , որովհետեւ զաւակ
սատանայի ես եղեր՝ դժօխոց որդի : Անոր
վրայ Սէլանա խիստ ամօթով մնալով՝ մը-
տածեց դատաւորին մատնելու . սրդողելով
ելաւ եկաւ Մղեքսանդրիա , Փիլիպպոսին
առջին ելաւ որ ան տեղին կուսակալն էր ,
չի գիտնալով որ Աւգինեայ հայրն էր . լա-
լով աղաղակելով սկսաւ ամբաստանել , թէ
քրիստոնէներէն մէկ արեղայ մը կերպով
մը տունս եկաւ չարութիւն ընելու համար ,
թէ որ ես աղաղակ չի վերցընէի՝ իմ աղա-
խիններս չի կանչէի , ձեռքէն չի կրնայի պի-
տոր խալըսիլ . ասանկով շատ գէշ զուրցեց
սուրբին վրայ ու իր կրօնաւորներուն վրայ :
Փիլիպպոս լսածին պէս զինուորներ խըր-
կեց , Աւգինէոսն ալ ամմէն կրօնաւորներն
ալ կապելով իր առջին բերել տուաւ . մեծ
չընկոյ ելաւ բոլոր քաղքին մէջ , կուսպաշտ-

ներն սկսան խրոխտալ քրիստոնէից վրայ :
Եւ գինէս երբոր ատեանն ելաւ կրօնաւո-
րական հագուստով, ըսաւ իրեն Փիլիպպոս .
իրաւ է ինչ որ կ'ըսէ քու վրայդ Մէլանան,
ձեր Քրիստոսն աս կը սորվեցընէ ձեզի ամ-
մէն չարութիւն ընել ինչուան մենծի տի-
կիններէն ալ չամբնալ : Սուրբը զինքը չի
ձանչցընելու համար գլուխը վար բռնելով
ցած ձայնով ըսաւ . տէրն մեր Հիսուս
Քրիստոս որուն ես կը ծառայեմ, սուրբ է
սրբոց, մեզի ալ սուրբ ըլլալ ապսպրեց հո-
գւով մարմնով . թէ որ Մէլանան ասոր դէ-
մը զուրցեց ձեզի, շուտ մը խօսքին մտիկ
դնել պէտք չէր ինչուան որ երկու դիացէն
ալ լսէք, անանկով շիտակ դատաստան կըտ-
րէք . թէ որ ես յանցաւոր ելլեմ, ինչպէս
կ'ուզես՝ պատժէ, ես չեմ վախնար . բայց
թէ որ իմ թշնամիս պարտաւոր ելլէ, աս
կ'աղաչեմ որ բան մը չընէք իրեն, վասն զի
մեր օրէնքը մեզի անոխակալ ըլլալ կ'ապրս-
պրեն, չար ընողներուն բարի ընել :

Փիլիպպոս զարմացաւ ասանկ խեղացի պա-
տասխան տալուն վրայ որ չէր կարծէր, բայց
չի հաւատալով իրեն խօսքին՝ աւելի Մէլա-
նային կը հաւատար, որ լիրբ երեսով կը պըն-
դէր իր ըսածը, իր աղախիններուն վրայ յոյ-
սը դնելով, սրոնց ապրսպրեր էր սուտ վը-
կայել . անոնք ալ իր խրատածին պէս ա-
տեանին մէջ կը կանչէին թէ հազիւ կրցանք
մեր տիկինը աս չար աբեղային ձեռքէն խա-
լըսցընել : Եւ խօսքէս ալ աւելի բռնկելով

Փիլիսոսոս՝ շատ գէշ զուրցել սկսաւ Ալգի-
նէոսին վրայ, կը սպառնար զինքը սպաննել,
իրեն ընկերներն ալ տանջել: Ըն առենը
սուրբը հառաչանք մը հանեց սրտէն ըսե-
լով. «ատեն կայ լուելու, ատեն կայ խօսելու .
Թէ որ լուռ կենամ, կը վախնամ քրիստո-
նէից սուրբ անուանը պատճառ չըլլամ, նա-
խատինք հասցընել չի տամ: Սիրար փրղձ-
կելով կանչեց . «տէր իմ, դուն ես իմ հայրս
Փիլիսոսոս . ես քու աղջիկդ եմ Ալգինէն,
որ կորսուած կը սեպէիր, բայց ես Վրիս-
տոսի սիրուն համար կուսուծիւնս պահե-
լու համար ամմէն բան ձգեցի, աս հրեշտա-
կային զգեստը հագայ . Ըսկտոն ու Սեր-
գիոս որ քովդ նստեր են իմ եղբարներս են,
ըսաւ . ո՞ր է հապա իմ մայրս Աղողիա . աս
երկու ներքիններն ալ որ իմ քովս կը տես-
նէք, Պրոտոսն ու Յակինթոսն են, որ ին-
ծի հետ ընկեր ըլլալով քրիստոնէայ եղան:

Ըս խօսքերս զուրցելնինի մէկէն ճանչ-
ցան երեսէն ու խօսուածքէն, հայրն ալ եղ-
բայրներն ալ վրան վազեցին, հոն ուրախու-
թենէ արցունք թափելով լաց մը փրցուցին
իրարու վրայ . շուտ մը մօրերնուն իմացու-
ցին որ երբոր եկաւ տեսաւ՝ ուրախանալէն
չյտէր Թէ ինչ ըսէ, լալով վրան ընկաւ
զրկեց: Ըն կուսակալին դուն որ Փիլիսո-
սոսին տունն էր՝ մեծ շջընկոց ելաւ, մեծ
ուրախութիւն, ամմէն տեղ ձայնը գնայ .
Վրիստոսի անունը փառաւորեցաւ, հակա-
ռակորդները ամօթով մնացին, ոմանք կուս-

պաշտներէն ճշմարիտ է ըսելով Ազգինեայ
Մատուածը, կը դառնային քրիստոնեայ կ'ըլ-
լային. իսկ քրիստոնեայք ըսելով գոհութիւն
կու տային Մատուծոյ ըսելով, ո՞վ է որպէս
տէր Մատուած մեր որ անյայտ բաները ե-
րևան կը հանէ: Եւ մը ոսկեթել աղու որ
հագուստներ բերել տուաւ Փիլիպպոս, բրա-
նադատելով հագուց Ազգինեայ իր աղջկա-
նը. երևելի բարձր տեղ մը նստեցուց, ամ-
մէնուն հասկըցընելով որ աս էր իմ սիրական
աղջիկս որ այնչափ ատեն օտարացեր էր ինձ-
մէ. ան օրը մեծ ուրախութեան օր եղաւ
քաղքին մէջ: Իսկ Սէլանան ամօթէն շի-
տէր ինչ զուրցէ, փախաւ մէկ տեղէն մէ-
կալ տեղ պահուեցաւ, բայց Մատուծոյ ար-
դարութիւնը պատժեց զինքը՝ կրակ ինջեցը-
նելով իր տանը վրայ, որ երեց մրկեց ամմէն
անտանեօք ամմէն ապրանքովը. անկից վախ-
նալով շատ մարդ կուպաշտներէն դարձան
քրիստոնեայ եղան: Մանկով սատանան
Սէլանան ձեռք առաւ որ հարածէ Ազգինե-
կոյսը և քրիստոնեաները. բայց Մատուած
անով իր սիրելի աղախինն ու ամմէն քրի-
ստոնեաները փառաւորեց:

Մսկից ետքը Ազգինէն դարձուց քրիստո-
նեայ ըրաւ իր հայրը մայրը ամմէն անով,
ինքն ալ մարապետի հագուստ հագաւ. ե-
տեէ եղաւ որ Ղէքսանդրիայի մէջ քրի-
ստոնեաները շատնան. Ազխատոսի դիերն ալ
շատ համարձակութիւն եղաւ քրիստոնե-
ներուն: Փիլիպպոս զրեց կայսեր որ շատ

օգուտ կ'ըլլայ թէ որ քրիստոնեաները խա-
ղաղութե մէջ պահենք, թողունք իրենց դա-
ւանանքնին համարձակ կատարելու . կայսրն
ալ որովհետեւ մեծ համարում ունէր Փի-
լիպպոսի վրայ, իրեն կամքին յանձներ էր
ամմէն բան : Բայց երբոր քրիստոնեաները
զօրացան Ազիպտոսի մէջ, երբոր աս կայսրը
մեռաւ, կռապաշտներուն մէջէն երևելինե-
րը չի կրնալով քաշել, հում գացին Փի-
լիպպոսի վրայ ամբաստանութիւն ըրին նոր
կայսեր առջին, որ ոմանք կ'ըսեն թէ Սեւե-
րոս ու Մատոնինոսն էր, և ոմանք Սողո-
սիանոս ու Վաղենոս . ան ատենն աս նոր
կայսրը խիստ յանդիմանութիւն գրեց իրեն :
Սեզնէ առջինը քեզ հաւատարիմ սեպելով,
կ'ըսէր, կուսակալութեան պատիւ տուաւ
քեզի, մանաւանդ թէ թագաւորի մը պէս
իշխան ըրաւ քեզ Ազիպտոսի վրայ, ան ալ
ինչուան քու մահդ պահեց վրադ, քեզ չի
փոխեց, մենք ալ նոյն պատուի մէջ քեզ
թողինք, մանաւանդ թէ եւելցընել մտուը-
նիս գրեր էինք . բայց հիմա հասկընալով որ
քու կին ունեցած հաւատքդ թողուցեր ես,
կուռքերուն ու թագաւորներուն դէմ բա-
ներ ալ կ'ընես, ասանկ կը հրամենք որ կամ
առջի կրօնքդ բռնես առջի պատիւն ալ վայե-
լես, կամ որ իշխանութենէդ վար իյնալով
ամմէն ապրանքներէն ալ զրկուիս :

Փիլիպպոս երբոր աս հրաման առաւ, քա-
նի մը օր զինքը հիւանդ ձեւացընելով գաղ-
տուկ ծախեց իր ամմէն ապրանքը, Ազիպ-

տոսի աղքատներուն բաժնեց . ինքն ալ իր
կամքովը հրաժարելով ունեցած իշխանու-
թենէն՝ իր տնովը քաշուեցաւ նստաւ քաղ-
քէն դուրս տեղ մը ուր շատ կային քրիստո-
նէներէն , թագաւորին ալ գրեց որ ուրիշ մը
դնեն իր տեղը : Փիլիպպոս որովհետեւ շատ
խելացի ու առաքինի մարդ էր , քրիստոնեա-
ները եպիսկոպոս դրին զինքը Ազիպտոսի
վրայ . այնչափ զօրաւոր եղաւ հաւատքով և
բարի գործքով որ հրաշքներ կ'ընէր հի-
ւանդներու վրայ : Ասկէց ետքը թագաւորը
մէկ զօրագլուխ մը խրկեց Աղեքսանդրիոյ
վրայ՝ ապսպրելով որ սպաննէ Փիլիպպոսը
մինակ , որպէս զի խռովութիւն մը չելլէ ժո-
ղովրդեան մէջ : Այ մարդը քանի մը հօգի
իր ծառաներէն քրիստոնէի ձեռով խրկեց .
ասոնք հասկընալով եկեղեցնայ մէջ գտան
Փիլիպպոսը որ աղօթքի հետ էր , հոն չա-
րաչար զարնելով վիրաւորեցին , որ իրեք օր
միայն դիմանալով աւանդեց հօգին . սուրբ
կոյսն Աւգինէ հօրը մարմինն առաւ թա-
ղեց ան տեղը՝ ուր որ Աղոգիա իր մայրը օ-
տարանոց էր շինած : Փիլիպպոս նահատա-
կուելէն ետեւ իրեն տրնեցիքը հանգիստ չի
գտան Ազիպտոսի մէջ օտար երկիր , քիչ
մը կենալէն ետեւ խորհուրդ ըրին ամմէնը
մէկտեղ հռոմ դարձան . առջի օրերը ան-
ձանաչի պէս կեցան . բայց որովհետեւ շատ
բարեկամներ ունէին հոն քաղքին մենծե-
րէն՝ ասոնք ձանձնալով շատ ընդունելու
թիւն ցցուցին իրենց , առանց քննելու ի-

րենց հաւատքը . ինչուան Սերգիոս ու Մայլե
տոն տղաքը թագաւորին իշխանութեան
մէջ խօթեցին : Իսկ սուրբ կոյսն Ալզգինէ
տանը մէջ մինաւորիկ նստած իր մօրն ու եր-
կու ներքինիներուն հետ կը փայլէր առաքի-
նութեամբ ու բարեպաշտական գործքերով .
բարի օրինակ էր եղած ամմէն Հռոմայու
աղջիկներուն , որոնցմէ շատը քրիստոնեայ
ըրաւ . ասոնց մէջ երևելի եղաւ Մասիլա
թագաւորին ազգականը : Մտիկայ լսելով
Ալզգինէայ վրայ , գիշերանց քօմն եկաւ ,
անկէց հասկընալով ճշմարիտ հաւատքը ու-
զէց անոր աշկերախլ , բայց վախնալէն աղա-
չեց որ իր երկու ներքինիները իբրև ծառայ
խրկէ իրեն , անոնցմէ աղէկ մը սորվի քրիս-
տոնէութիւնը : Ալզգինէն ալ երկուքն ալ
իբրև ընծայ բերող խրկեց իրեն , Մասիլան
իր քովը կեցուց ասոնք իբրև իրեն ծառայ ,
բայց մինաւորիկ եղած ատենը իբրև առա-
քեալ Քրիստոսի կը պատուէր , աւետարա-
նին խօսքերը կը սորվէր իրենցմէ , ինչուան
որ եպիսկոպոս մը գտնելով անկէց ալ աւե-
լի լուսաւորելով մկրտուեցաւ . աշխրբքէ
զգուելով ուխտ ըրաւ կուսութիւն պահե-
լով Քրիստոսի հետեւիլ , թէպէտ և նշա-
նած էր մէկ մենծի մը որ Պոմպէոս կը-
սուէր : Մկրտուելէն ետև երկու սուրբ կու-
սանքն ալ Ալզգինէ ու Մասիլա իրարու հետ
մէկ սէր մը կապեցին երկնային . Յիսուսի
սիրով լեցուած , շատ կը տեսնուէին , ուրիշ
բան չէին խօրաթեր , բայց եթէ Յիսուսին

նմանիլ, իրեն համար արիւննին թափել :
Բսանկ երբոր իրարու սիրտ կու տային քը-
րիստոնէական կատարելութիւնը վաստակե-
լու, որ մը սրբուհին Ալզգինէ երազին մէջ
տեսաւ Քասիլա կուսին նահատակուիլը .
Քասիլան ալ մէկ լուսաւոր մարդ մը տեսաւ,
որ իրեք պսակ կը դնէր Ալզգինեայ գլուխը՝
մէկը վանքին մէջի ըրած իրեն ճգնութեա-
նը համար, մէկալը Հռոմայու մէջ նահա-
տակուելուն համար, մէկալն ալ իր մաքուր
կուսութեանը համար . իրարու պատմելով
ինչ որ տեսան՝ ալ աւելի կ'ուրախանային,
Յիսուսի սիրովը կը վառուէին :

Իրենց նահատակուին ասանկ սկսաւ .
Քասիլային աղախիններէն մէկը գնաց Պոմ-
պէոսի հասկըցուց, որ Ալզգինէն իմ տիկնոջս
միտքը դարձուց, ալ չուզէր քեզի հետ կար-
գուիլ : Պոմպէոս լսածին պէս շփոթելով
շատ աշխատեցաւ Քասիլային միտք փոխե-
լու . տեսաւ որ չըլլար, ամբաստանեց թա-
գաւորին Ալզգինէի համար թէ ան է որ ամ
մէնն ալ կը յորդորէ կուռքերը թողնել ու
իրեն Բստուածն ընդունիլ, թող չի տար
կնկտոց կարգուիլ : Թագաւորը բարկանա-
լով հրաման տուաւ Պոմպէոսի դատաւորին
սպաննել Քասիլան թէ որ չի դառնայ :
Պոմպէոսը նորէն փորձեց Քասիլային միտքը
դարձնելու, պառաւներ՝ կախարդ կնիկներ
խրկելով . երբոր չեղաւ, գլուխը կտրել տը-
ւաւ : Վայսրը հրամեց որ՝ Ալզգինէն ալ ի-
րեն գործակիցներովը տանջէ . դատաւորն

ալ բռնել տուաւ Ալզինէ կոյսը, իրեն եր-
 կու ներքինիներովը կուտունը խրկեց որ
 զոհէն. սուրբերը հոն կուռքերուն երկրպա-
 դելու տեղը ազօթք որ ըրին, մէկէն ամմէն
 կուռքերն ընկան, փշուր փշուր եղան: Շուտ
 մը երկու ներքինիներուն գլուխը կտրեցին,
 որ Պաօտոս ու Յակինթոս կ'ըսուէին. Ալ-
 զինեայ կուսին ոտքն ալ մեծ քար մը կա-
 պելով Տիբերիս գետին մէջը ձգեցին, բայց
 նոյն ատենը կապերը քակուելով՝ քարը գե-
 տին մէջ գնաց, իսկ սուրբ կոյսը ջրին վրայ
 ելլելով քալել սկսաւ ինչուան եկաւ ելաւ
 ցամաքը: Տեսնողներէն ոմանք զարմանալով
 իրենց կուռքերն անարգեցին քրիստոնեայ
 եղան. գատաւորը հրամմեց բաղնիքին հնու-
 ցը ձգելու. երբոր հոն մտաւ Ալզինէ, ա-
 նանկ պաղեցաւ որ ալ չէին կրնար տաքցը-
 նել: Ալզինէ անկէց ալ որ ողջ ելաւ, ո-
 մանք կախարդ է կ'ըսէին, ոմանք ալ իրեն
 հաւատքը կը գովէին: Ղաատաւորին խիստ
 դժարը գալով՝ մութ բանտի մը մէջ դնել
 տուաւ որ հոն մնայ անօթի մեռնի. բայց
 Յիսուս մեծ լոյս ծածկելով երևցաւ Ալզի-
 նեայ, հոց մը բռնած ձեռքը ձիւնի պէս
 ճերմակ՝ ըսաւ. Ալզինէ, ա՛ռ աս կերա-
 կուրն իմ ձեռքէս, ես եմ քու փրկիչդ. ինչ
 պէս որ դուն բոլոր սրտովդ իս սիրեցիր, ես
 ալ քեզ սիրեցի. շատ որ չանցնիր, քեզ
 իմ թագաւորութեանս մէջ երկինքը պի-
 տոր առնեմ. աս ըսելով աներևոյթ եղաւ:
 Ալզինէն բանտին մէջը տաս տասնըհինգ

որ կենալէն ետե՛ դատաւորը դահիճ խրկեց
հոն գլուխը կտրել տուաւ : Քրիստոնեա-
ները աս անարատ ճգնաւոր նահատակին
մարմինն առին , հռոմայէն դուրս տեղ մը
թաղեցին , որ Ալգինեայ կալուածն էր .
շատ սուրբերուն նշխարներն ալ ինքը հոն
ժողովեր էր :

Ասանկ զաւկէն բաժնուելով իրեն մայրը
Աղոգիա՛ շատ հեղ կու գար գերեզմանին
վրայ կու լար , չէր կրնար մխիթարուիլ : Վի-
շեր մը երեցաւ իրեն սրբուհին Ալգինէ լու-
սազարդ կուսանքներով . ինչո՞ւ կու լաս , ը-
սաւ , մայր իմ Աղոգիա , ուրախանալուդ տե-
ղը ինչո՞ւ կու լաս իմ վրաս , որ Աստուած իս
իր սուրբերուն մէջն առեր է , հետս են միշտ
ինչպէս որ կը տեսնես . իմ հայրս ալ քահա-
նայապետներուն դասին մէջը դրեր է . ու-
րախ կեցիր , քեզ ալ պիտոր առնէ կիրակի
օրը . ապսպրէ իմ աղբարներուս որ սուրբ
խաչին հաւատքը շիտակ պահեն , անոնք ալ
արժանի ըլլան աս արքայութեանը համե-
լու : Ա՛յ ըսելէն ետե աներեւոյթ եղաւ սրբ-
բուհին Ալգինէ . բայց Աղոգիա հրեշտակ-
ներու ձայն մը կը լսէր երկրնքէն որ զԱ՛ճ
կ'օրհնէին . անանկով ուրախ սրտով արթըն-
նալով՝ փառք տուաւ Աստուծոյ , պատմեց աս
տեսիլքը իր տղոցը : Ալ ըսածին պէս իրաւ
կիրակի օրը պատարագի ատեն երբոր ջեր-
մեռանդութեամբ արցունք թափելով ա-
ղօթքի հետ էր Աղոգիա , աւանդեց իր հո-
գին . ասանկ ալ Ալգինեայ երկու աղբար-

ները Սերգիոս ու Մախտոն միշտ առաքինու-
թեամբ Մատուածսիրութեամբ իրենց օրը
անցընելով, սրբութեամբ մեռան: Մասն-
կով տուն մը ամբողջ՝ հայր մայր իրենց զաւ-
կընէրով արքայութիւնը ելան Նւզինեայ
սուրբ կուսին օրինակովը և աշխատելովը .
որոնց շնորհքը ամմէնուն տանը արժանի ը-
նէ Մատուած, բարի վարքով իրենց տանը
մէջ միշտ Մատուծոյ ծառայէն, որպէս զի
ետքն ալ մեռնելու ատենը ասանկ ուրախու-
թեամբ հոգինին աւանդելով արքայութե
արժանի ըլլան:

ՍՈՒՐԲՆ ԱՒՐԻԱՆՈՍ ԵՒ ԱՆԱՏՈՒԱ.

Ազրիանոս կռապաշտի զաւակ էր, բայց
իր կինը Մատուա քրիստոնեայ էր. ասոնք
Նիկոմիդիա քաղքէն էին Սաքսիմիանոս
կայսեր օրը, որ մեծ հալածում հանեց
քրիստոնէից՝ աւելի նիկոմիդացւոց վրայ .
շատ հեղ զոհ ընել կու տար կուռքերուն,
յայտնի կանչել կու տար որ ամմէնն ալ գան
զոհ ընեն, չեկողը մեռցնել կը սպառնար,
ամմէն տեղ ալ մարդիկ դրեր էր որ իմա-
նան՝ ուր որ քրիստոնեայ գտնելու ըլլան՝ ի-
րեն մատնեն: Սատաւորներուն իմաց տը-
ւին որ քանի մը հոգի քաղքէն դուրս քարե-
րու մէջ պահուրտած՝ գիշերները ձայնով
աղօթք կ'ընեն՝ քրիստոնեայ են. շուտ մը զի-
նուորներ խրկելով բռնեցին ասոնք Նիկո-

միզիա բերին ան ատենն որ կայսրն ալ կուա-
տունը կ'երթար զո՛հ ընելու համար . հոն
բռնողները աղաղակելով պատմեցին կայ-
սեր՝ թէ ամմէն տեղ պտրտելով ամմէնն ալ
ձեր հրամանին հնազանդ գտանք . ասոնք
մինակ գտանք որ քու հրամանդ չեն պահեր,
կուռքերը կ'անարգեն : Այսորը կանչեց ա-
սոնք իր քովը՝ հարցուց ո՛ւսկից ըլլալնին . ա-
սոնք պատասխան տուին որ աս տեղացի ենք,
բայց հաւատքով քրիստոնեայ : Այսորը ը-
սաւ . դուք չիյտէք որ ինչ պատիժ դրուած
է քրիստոնէներուն վրայ, կամ ինչ տան-
ջանքով մեռան ձեռք ընկած քրիստոնէնե-
րը : Ասոնք պատասխան տուին . հրամերես
իմացանք, ու ծիծաղեցանք անանկ հրամայո-
ղին անմտութեանը վրայ, աւելի սատա-
նային ներգործութեանը վրայ, որ կը գոր-
ծէ անոնց վրայ՝ որոնց դուն առաջնորդ ես
եղեր : Այսորը սրգողելով ըսաւ . այդչափ
յանդգնեցաք որ իս անմիտ կանչեցիք, ես
ալ ձեզ սաստիկ տանջանքով կորսընցընեմ
որ դուք ալ գիտնաք : Ասոր վրայ երգում
ընելով տանջանքին տեղը խրկել տուաւ,
ան օրն եկաւ ատեան նստաւ, երեսի վրայ
պառկեցընելով ասոնք ծեծել տուաւ . թող
գայ իրենց Վրիստոսը իմ ձեռքէս խալըսէ,
ըսաւ : Առջի ծեծողները յողնէլէն ետե՛ ու-
րիչներուն ծեծել տուաւ հաստը գաւազան
ներով . սուրբերը ծեծին տակը կ'ըսէին,
ինչ չարչարանք որ ունիս՝ եւեկցուր, քանի
որ կ'եւեկցընես՝ այնչափ կը շատցընես մեր

պսակը : Այսրը ըսաւ . ես հիմա ձեր գլուխը պիտոր վերցընեմ, դուք պսակի կը սպասէք . թող տուէք ատանկ խենթուեմն թխօսքերը , պարսպ տեղը ձեզ մի կորսընցընէք : Սուրբերն ըսին . դուն պիտոր կորսուիս , ո՛վ թշնամի ճշմարտութեան , որ Մատուծոյ ծառաները մէկ չարիք մը չընողները ասանկ անողորմ կը տանջուս : Այսրը աւելի բռնկելով հրամայեց քարերով զարնել իրենց բերանը : Սուրբերն ըսին . ո՛վ անօրէն , հրեշտակ Մատուծոյ քեզ ալ քու տունդ ալ զարնէ պիտոր , մեզ չարագործի պէս բռնելով ասանկ կը չարչարես կը զարնես . թէ որ քարերուն ասանկ զարնելու ըլլային՝ չէին դիմանար , թող տուր որ մարդու մարմին է , բայց ամմէնուն տէրը կը պահէ մեզ , մենք իրեն վրայ ենք դրեր յոյսերնիս :

Մոր վրայ տւելի բարկանալով կայսրը ըսաւ . ձեր լեզուն կտրել տամ որ՝ մարդիկ սորվին իրենց տէրերուն դէմ չի խօսել : Սուրբերը հարցուցին . իրաւցընէ կը սրդաղին անոնց վրայ որ իրենց տիրվրտոցը դէմ կը կենան : Այսրը ըսաւ . չէ թէ մինակ կը սրդողիմ , այլ նաև կը պատժեմ : Սուրբերն ըսին . թէ որ դուն չի հնազանդողները կը պատժես , հապա ինչպէս կը բռնադատես մեզ երկնաւոր թագաւորին հրամանը ոտքի տակ առնել , որ է տէր մեր Յիսուս Վրիստոս . ինչպէս կ'ուզես մասնակից ընել անպատժուն որ պատրաստուած է քեզի ու

բուկին հօրդ սատանայի : Մ^ն պատրաստ
տուած է՝ զուրցեցէք , ըսաւ կայսրը : Սուր
բերն ըսին . անանկ կրակ որ չի մարիր , ա
նանկ որդ որ չի մեռնիր : Իրաւ պիտոր ձեր
լեզուն կտրել տամ , ըսաւ կայսրը , ասով վեր
ցընեմ ձեր խենթութենդ խօսքերը : Սուր
բերն ըսին . անմիտ , թէ և մեր մարմնեղէն
լեզուն կտրես , մեր սիրտը կրնայ խօսիլ Մ^ս
տուծոյ հետ . մեր անպարտ արիւնն ալ կը
կանչէ կենդանի Մ^ստուծոյ առջին : Մ^ն ա
տենն ըսաւ կայսրը . ասոնց անունները մէ
կիկ մէկիկ գրեցէք , շղթան զարնելով մա
հապարտներուն բանտը տարէք , ամմէն
կերպ տանջանքը տուէք :

Մ^ս խօսքերս և գործքերս արթնցուցին ,
հոգւոյն սրբոյ շնորհքը կաթեցուցին Մ^ս
դրիանոսին սիրտը , որ զինուորական կարգի
մարդ մը ըլլալով , անոնց վերակացու էր ե
ղած . հոն էր , կը տեսներ մէկիկ մէկիկ մը
տիկ կը դնէր . տեսնելով աս սուրբերուն ա
սանկ հաստատուն կենալնին՝ ասչափ տան
ջանքի դիմանալնին՝ կը զարմանար . զուրս չե
լած քովերնին գնաց կամացուկ մը հարցուց
ձեր Մ^ստուծոյ անունին վրայ երգում ընել
կու տամ , ըսաւ , իրաւը զուրցեցէք ինձի ,
ինչ վարձ կը յուսաք առնելու որ ասչափ չար
չարանքներու կը համբերէք . ինձի կ'երե
նայ որ շատ մեծ բաներ պիտոր ըլլան՝ ինչ
պէս որ կը սրատմէր ինձի իմ կնիկս որ բրիտ
տոնեայ է , հիմա ալ ձեր գործքէն կը հաս
կընամ որ մեծ բան պիտոր ըլլայ : Սուրբերն

ըսին . մեր բերանը չի կրնար ան վարձքին
վրայ պատմել՝ որ Մատուած պիտոր տայ, քու-
կին անկաճդ ալ չի կրնար հասկընալ . մեր
գիրքը ասանկ կը գրէ , ան բանն որ աչք չի
կրնար տեսնել, անկաճը չի կրնար լսել, մար-
դու մտքէն չի կրնար անցնիլ, անիկայ Մ-
տուած իր սիրելիներուն պատրաստած է : Մ-
խօսքս լսածին պէս Մգրիանոս՝ վազեց գը-
րագիրներուն քով ըսաւ . կ'աղաչեմ, իմա-
նունս ալ ասոնց հետ մէկտեղ գրեցէք , ես
ալ քրիստոնեայ եմ : Արքոր կայսրը տեսաւ
Մգրիանոսն ասոնց մէջը խառնուած , կար-
ծեց որ անոնց վրայ ամբաստանելուն համար
կու գայ , որովհետեւ խիստ աղէկ կը ճանչ-
նար թէ ով է , ըսաւ գրագիրներուն . ինչ
որ պիտի զուրցէ հաւատարիմ Մգրիանօսը ,
անոնք ալ գիր անցուցէք : Վարձաւ գրա-
գիրներուն գլխաւորն ըսաւ . տէր իմ, անի-
կայ՝ ես ալ քրիստոնեայ եմ ըսելով՝ կ'աղաչե-
մեզի որ իր անունն ալ աս մահապարտներուն
հետ մէկտեղ գրենք : Ետ զարմացաւ
կայսրը , շատ բարկացաւ , երեսին գոյնը փո-
խուեցաւ . թողու թիւն խնդրէ ինձմէն , ը-
սաւ , ո՞վ Մգրիանոս , հիմա ամմէնուն առ-
ջին ըսէ որ՝ խելքիս մէկ բան մը եկաւ ան
ատենը , անկից անանկ զուրցեցի , անով ես
ալ քու անունդ մահապարտներուն մէջէն
հանեմ : Պատասխանեց Մգրիանոս . ես ա-
կէց ետքը Մտուածմէ պիտոր թողու թիւն
խնդրեմ իմ անարժան վարքիս համար որ
պղտիկուց ինչուան հիմա ունեցեր եմ :

Այսօրը սրդողելով երկաթը զարնել հրամ
մեց, սուրբերուն հետ մէկտեղ բանտը
տանել:

Ղգրիանոսի ծառաներէն մէկը վազեց իր
կնկանը պատմեց աս բաներս. իր կնիկն Ղ
նատուլա չի գիտնալով պատճառը՝ լալով աղա
ղակեց. ինչ եղաւ, ինչ բանի համար բան
տը մտաւ: յառան ըսաւ. քանի մը հոգի
տեսաւ որ Ղրիստոսի համար կը չարչա
րուէին, չէին ուզեր մեր կուռքերուն զոհե
լու, ինքիրմէ գնաց մէջերնին խառնուեցաւ
ես ալ ասոնց հետ մէկտեղ կը մեռնիմ ըսե
լով: Ղնատուլա ան ատենը խիստ ուրախա
նալով շուտ մը բանտը գնաց տեսնելու. եր
բոր ներս մտաւ՝ ընկաւ Ղգրիանոսին ոտքը,
երկաթները պագնելով ըսաւ. երնէկ քե
զի, տէր իմ Ղգրիանոս, գտար ան բանն որ
քու ծնողքդ քեզի չէին թողուցած ժա
ռանգելու. երնէկ քեզի որ հիմա անհոգ
կ'երթաս ան վերին աշխարհքը, քու առ
ջլէդ խրկելով ան հարստութիւնն որ հար
կաւոր ատենը պիտոր գտնես. զօրացիր,
տէր իմ, սիրտ առ, հարուստները պիտոր
աղքատնան, չքաւորները հարրստնան. եր
բոր ատեն չի մնար մէկէ մը փոխ ստակ առ
նելու, երբոր մէկը չի կրնար մէկալը խալը
սելու, ոչ ծառան իր տէրը, ոչ բարեկամն իր
բարեկամը, ամմէնն ալ իրենց բեռը պիտոր
շալկեն, դուն ան ատենը, տէր իմ, քու կինդ
քեզի հետ կ'առնես կ'երթաս, արդար դա
տաւորէն վարձքդ կ'առնես. միայն թէ ա

մաւր կեցիր քու կոչմանդ վրայ, թշնամիին
անուշ խօսքերը քեզ ջիւնդորցրնեն, աս աշ-
խարհքիս ոչինչ բաները քեզ չի խաբեն. միշտ
աս սուրբերուն վրայ նայէ, տէր իմ, որ քե-
զի հետ կապուած կեցեր են քովդ, ասոնց
արիւ թեանը նմանէ որ Վրիստոսի համար
պատրաստ կեցեր են մեռնելու. հողեղէն
մարդու սպառնալիքներէն տանջանքներէն
մի վախնար, քու Մատուածդ որ ճանչցար
քեզի հետ է, քեզ չի թողներ:

Մ խօսքերս լսելով Ղզրիանոս Մնատու-
լայի բերնէն, ուրախութեամբ լեցուելով
ըսաւ իրեն, հիմա դուն տունդ գնա. երբոր
մեզ դատաւորին առջև կանչեն, քեզի կ'ի-
մացրնեմ, ան ստենը կու գաս հոն կը գրու-
նուիս: Մնատուլա ելաւ ամիէն կապուածնե-
րուն քովը քալելով մէկիկ մէկիկ կապանք-
նին երկաթնին կը պագնէր, կ'աղաչէր որ
օգնական ըլլան Ղզրիանոսի, համբերութի-
սորվեցրնեն. կը վախնար որ կուսպաշաու թէ
նոր դարձած ըլլալով չըլլայ թէ միտքը գառ-
նայ: Մսիկայ, կ'ըսէր, ձեր քրտինքին պը-
տուղն է, դուք եզաք հոգեւոր ծնող, դուք
հոգ տարէք որ Վսի ըլլայ, Վսէն չի զա-
տուի: Ղորէն Ղզրիանոսին քովը կու գար որ
բանախններսի դին շղթան զարնուած էր, նո-
րէն սիրտ կու տար կը յիշեցրնէր չինայել-
ինչ որ մարմինը կը քաշէ, հապա ինչ որ պա-
տրասաւեր է Մատուած հոգւոյն համար՝ ան
մտածէ, կ'ըսէր: Մանկ քաջալերելով ու-
րախ սրտով իր սուկը դարձաւ աս քրիստո-

սասեր տիկինը : Վրանի մը օրէն ետեւ Վր
դրիանոս հասկընալով որ ատեանը պիտոր
ելէն , ըսաւ իր ընկերներուն . կ'ազաչեմ
թող տուէք ինձի որ երթամ ձեր աղախի
նը Վնատորա կանչեմ որ մեր վկայութեան
ատենը ներկայ գտնուի , ինչպէս որ իրեն
խօսք տուի : Վր ըսելով շատ ստակ տուաւ
բանտապաններուն , որոնց ճանչուորնին էր ,
սուրբերն ալ իրենց երաշխաւ որ թողնելով
գնաց . ճամբան երթալնինի մէկը իր ճան
չուորներէն տեսնելով , վազեց Վնատորա
կնկանը աւետիս տուաւ որ Վրիանոս խա
լըսեցաւ , մօտիկ է հիմա հոսկու գայ : Վր
ջի բերանը չի հաւատաց քրիստոսասէր կը
նիկը . երբոր մէկ ուրիշ մը անեցիներէն նոյն
բանը եկաւ պատմեց , ան ատենը կարծե
լով որ մարտիրոսութենէ փախչելով կու գայ
տակնու վրայ եղաւ , սկսաւ լալ . երբոր տե
սաւ որ կու գայ , վազեց տանը դուռը գո
ցեց , ներսէն կանչեց . թող մէկդի երթայ
ան մարդն որ Վրտուած թողուց , սուտ զուր
ցեց իրեն Վրտուծոյ , չեմ ուզեր խօսիլ ա
նոր հետ որ Վրտուած ուրացաւ , չեմ ուզեր
լսել անոր խօսքը որ իր արարիչը խաբեց .
նի թշուառական , ուլ քեզ խաբեց զատեց
աղուոր նաւահանգստէն . ինչպէս վախցար
դեռ թշնամին չի տեսած . վայ ինձի որ ար
ժանի չեղայ մարտիրոսի կին ըլլալու՝ հարա
ուրացողի : Վր արիւսկան խօսքերը լսելով
երանելին Վրիանոս մանկահասակ Վնա
տորայի բերնէն , որ ան ատենը տասու իրէք

ամիս չի կար իրեն հետ կարգուելէն , մէկ
դիէն կ'ուրախանար , մէկալ դիէն կ'արտո-
րար իր կեանքը լմնցընելու նահատակու-
թեամբ : Մահ , ըսաւ , դուռը , քու կարծա-
ծիդ պէս չէ . չէ թէ մարտիրոսութենէ փա-
խեր եկեր եմ , այլ քեզ ալ տանելու ինչպէս
որ խօսք դրեր էինք : Մասնկ ալ ըսելով՝
Մնատուան չէր կրնար հաւատալ ինչպէս
կրնայ ըլլալ որ ինքիրմէ ելլէ փայ զինքը կան-
չելու : Մգրիանոս նորէն ըսաւ . բաց ինծի ,
չըլլայ որ առանց տեսնուելու զատուինք .
ետքը քեզի ամմէն օր անվերջանալի խոց մը
ըլլայ . ես չեմ կրնար հոս ուշանալ , սուր-
բերը երաշխաւոր եմ ձգեր . թէ որ ատե-
նին չի հասնիմ , անոնք պիտոր քաշեն իմ
տանջանքս :

Մ լրածին պէս Մնատուա , շուտ մը դու-
ռը բացաւ . Մգրիանոս ողջոյն տալէն ետե՛-
կրանելի ես , տիկին քոյր իմ , ըսաւ , որ քու-
կին էրկանդ ասանկ օգուտ ըրիր . Մտուած
քեզ պսակէ մարտիրոսներուն պէս առանց
տանջանք քաշելու : Մ ըսելով իրեն հետն
առաւ տարաւ . ճամբան հարցուց որ ինչ-
պէս կարգաւորեցիր տանդ բանը , ինչ կտակ
ըրիր : Մնատուա սրտասխտան տուաւ . ան-
ցաւոր ժամանակաւոր բաները մի մտածեր ,
տէր իմ , որ ունայնութիւն են , քու միտքդ
չիմլմնցընեն . միայն մէկ բան մը հոգա ,
ինչ որ սկսար՝ ան նայէ որ կատարես , մու-
ցիր երկրաւոր բաները , խնդրէ երկնաւոր
անանց բարիքն որ պահուած են քեզի ու

քեզի հետ եղող սուրբերուն : Արբոր բան-
տը հասան , Անատոլա սուրբ նահատակնե-
րուն քոյն երթալով կը պագնէր իրենց կա-
պանքը . բայց տեսնելով իրենց ճգմուած
մարմինն որ տեղ տեղ լղըրճըկած հոտած
ըլալով որդնոտեր էին , սիրտը խշխըշաց ,
շուտ մը խրկեց իր աղախիններն ազնիւ կը-
տաւներէն բերել տուաւ , անոնցմով կը սըր-
բէր իրենց խոցերը . ձեռուրնին ոտուրնին կը
փաթթէր որ կապելէն ճղքըռտուեր էին :
Աթը օր ասանկ բանտի մէջ կենալով ամ-
մէն սրտովը կը ծառայէր սուրբերուն : Աթ-
թը օրէն ետե դահիճներն եկան սուրբե-
րը անդամալոյծ գտնելով մերկ ձիերու վրայ
դրին , մէկ շղթայով ամմէնն ալ կապելով
տարին . իսկ Ագրիանոս ոտքով կ'երթար ձե-
ռուրներն ետեը կապուած : Րոնաւորը
հրամմեց որ ամմէնը մէկէն իր առջև բե-
րեն , որ մէկմէկու տանջուիլը տեսնելով ,
վախնան իրենց հաւատքը ուրանան . բայց
բերողը հասկըցուց որ առջի տանջուողները
մարմիննին փտտած ոսկորնին կ'երենայ , հի-
մա անկար են տանջուելու և ոչ պատասխան
տալու , շուտ մը կը մեռնին . կ'ուզէք նէ քա-
նի մը օր կենալէն ետե անոնց տանջանք
տուէք , հիմա Ագրիանոս մինակ ողջ է՝ անի-
կայ տանջեցէք :

Րսանկով դահիճները Ագրիանոսը մեր-
կացուցին , կռնակը փայտ շալկած անանկ
ատեանը խօթեցին մահապարտի պէս . ի-
րեն ընկերները տեսնելով ըսին . Ագրիա-

նէ, Տիմա արժանի եղարքու խաչդ կոնակդ
շաղկերու Յիսուսին ետեւէն երթալու որ
քեզ իր քովը կը կանչէ, նայէ որ չի ծռիս .
ինչ որ աչքիդ կ'երևնայ՝ մի վախնար անոնց
մէ, ինչ որ կը յուսաս՝ անոնց վրայ նայէ,
աս ատենիս չարչարանքները արժանի չեն
ան փառքին որ մեզի պիտոր տայ Քրիստոս .
Անատոլան ալ քովը գալով ըսաւ . տէր իմ,
մինակ Աստուծոյ վրայ դարձուր աչքդ, մի
վախնար տանջանքներէն, տանջանքները
քիչ են ու ժամանակուոր, վարձքը հան-
գիտար մշտնջենաւոր . երբոր աշխրքիս զի-
նուորու թեան մէջ էիր՝ յիշէ որ ինչ տառա-
պանք կը քաշէիր մենծերէն օրուան մը թո-
շակի համար . հիմա որչափ ազէկ կ'ըլլայ
աս չարչարանքները քաշել յաւիտենական
Թագաւորութիւն ժառանգելու համար :

Թագաւորը տեսածին պէս Ագրիանոսը՝
ըսաւ . դեռ խելքդ գլուխդ չեկան, ան խեն
Թու թեան մէջն ես : Ագրիանոս ըսաւ . հի-
մա թողի ամմէն խեն թու թիւն, աս կը հո-
գամ որ հոգիս չի կորսուի : Թագաւորն ը-
սաւ . լսէ ինձի, զոհէ մեզի պէս մեր կուռ-
քերուն, թէ չէ՝ անանկ տանջանքներ պի-
տի քաշես որ լաւ չես : Ագրիանոս ըսաւ .
դուք թողէք ձեր խեն թու թիւնը, ինչուն մո-
լորեալ կեցեր էք անշունչ կուռքերուն քա-
րէրու փայտերու կը զոհէք . ինչուն թողեր
էք կենդանի Աստուածն որ աշխարհքս ըս-
տեզծեր է . ես չեմ երկրպագու թիւն ըներ
անոնց, ինչ որ կ'ուզես ըրէ : Թագաւորը

Ժեճէլ հրամանեց . Մատուցա լաճին պէս , վազեց պատմեց սուրբերուն թէ , Մգրիանոս սկսաւ տանջանք քաշել . սուրբերն ալ սկսան աղօթք ընելու . այնչափ երկան ատեն ժեճէցին որ՝ մարմինը կտոր կտոր գետինը կ'ընէր , արիւնն ալ գետի պէս կը վազէր : Սա գաւորն ըսաւ . գիտեմ , ան մոլորեցուցիչները քեզի սորվեցուցին աս խենթութիւնը : Մգրիանոս ըսաւ . անոնց ինչո՞ւ մոլորեցուցիչ կ'ըսես որ յաւիտենական կեանքը կ'առաջնորդեն , դուք էք մոլորեցուցիչ որ մարդ կը կորսնցընէք : Սագաւորը հրամեց նորէն բրածեծ ընել : Սուրբը ըսաւ . որչափ որ շատցընես իմ տանջանքս՝ այնչափ ալ վարձքը կը շատցընես : Մ խօսքերս ամ մէնն ալ կու գար կը պատմէր Մատուցա սուրբերուն :

Վարձեալ թագաւորն ըսաւ . Մգրիանոս , խնայէ քու ծաղիկ տարիքիդ , պարապ տեղը մի կորսնցընէր , ես աղուորութեանդ վերայ նայելով կը գթամ վրատ : Մգրիանոս պատասխան տուաւ . ես ալ ինծի խնայելով չեմ զոհեր : Սագաւորն ըսաւ . մեր կուռքերը պաշտէ որ քեզի թողութիւն կու տան , մենք ալ առջի մենծութեանդ կը հասցընենք քեզ , որովհետեւ դուն անհրաժեշտ ես հարուստի զաւակ , մէկալ ընկերներուց մի նայիր որ գեղացի մարդիկներ են , աղքատի զաւկներ : Մգրիանոս ըսաւ . գիտեմ որ իմ հօրս տանը անհուսութիւնը կը ճանչնաս . բայց թէ որ իմ ընկերներուս մենծութին

ալ ճանչնալու ըլլայիր, կ'աղաչէիր անոնց որ՝
քու կուռքերուդ գերութենէ քեզ խալը
սէին: Սաղաւորն աւելի սրդողելով հրա-
մեց որ չորս հոգի փորուն զարնեն. երբոր
այնչափ զարկին որ փորը բացուեցաւ, ա-
ղիքները գետինը կ'իյնէին՝ դադրեցուց տան-
ջելէն ըսելով. կը տեսնես ինչպէս կը խըղ-
ճամ վրադ, դուն չես իմանար իմ սէրս,
դոնէ հիմա կարդա կուռքերուն, ես բժիշկ
ներուն քեզ ըւրնացրնել տալով իմ պալա-
տիս մէջ կ'առնեմ: Սուրբ նահատակը ծի-
ծաղելով պատասխան տուաւ. որովհետեւ
խօսք տուիր իս բժշկելու, թող առաջուցմէ
ըսէիր ինձի կուռքերը ինչ պիտոր ընեն, ա-
նով հասկընայի որ մէկ զօրութիւն մը կայ
անոնց քովը: Սաղաւորն ըսաւ. կուռքերը
չեն խօսիր: Արբոր չեն խօսիր նէ, ըսաւ
սուրբը, ինչո՞ւ անոնց կը զոհես, մեզ ալ կը
բռնադատես զոհելու:

Ան ատենը ամօթ մը դալով թագաւորին
վրայ, ամմէնը մէկէն բանտը դնել տուաւ:
Սուրբերը անչափ ուժ չունէին որ՝ քաշկրո-
տելով տարին դահիճները: Արիասիրտ
Անատոլան տեսնելով Ագրիանոսին խեղճու-
թիւնը, վիզը իր ձեռքովը բռնելով կը քա-
ջալերէր ճամբան, երանի քեզի, ըսելով, որ
արժանի եղար սուրբերուն կարգը անցնիլ,
չարչարուիլ անոր համար որ՝ ինքն ալ քեզի
համար չարչարուեր է. քիչ մը ատենէն քո-
վը պիտոր երթաս, իրեն փառքը պիտի տես-
նես: Արբոր բանտը հասան, սուրբերն ամ

մէնը մէկտեղ բարև կու տային երանելի
Ղգրիանոսին . իսկ Մնատողան իր ձեռքովը
արիւնը կը սրբէր, մարմինն ալ եղով կ'օծէր :
Ղգրիանոս ըսաւ սուրբերուն . աղօթք ըրէք
ինձի համար որ Մտուած սատանայէն պա-
հէ զիս , խիստ մարմնօք կու գայ վրաս :
Սուրբերն ըսին . զօրացիր , եղբայր Ղգրիա-
նէ , առաջ մենք ալ քեզնէ կը վախնայինք
տկար մարդ ըլլալով , բայց հիմա որ մարդ-
կեղէն բնութեան վրայ ելար յաղթեցիր ,
քու համբերութիւն վախնալով սատանան՝
ալ չի համարձակիր քեզի դէմ ելլելու : Մ-
նատողայի հետ նաև ուրիշ բարեպաշտ կրն-
կտիք ալ կու գային բանտը սուրբերուն ծա-
ռայելու , վերքերնին սրբելու . երբոր լսեց
Թագաւորը բարկացաւ , ապսպրեց որ չի
Թողնեն կնկտոց մտնելու :

Մնատողան իմանալով իրեն մազերը կը-
տրեց , էրիկ մարդու հագուստ մտնելով ա-
նանկ կը մտնէր , սուրբերուն կը ծառայէր .
հասկընալով որ մօտիկ էր մահերնին , աղա-
չեց Ղգրիանոսի՝ զիտեմ , ըսաւ , որ Վրիա-
տոս քու խնդիրքդ կը կատարէ , խնդրէ կ'ա-
ղաչեմ ինչպէս որ աս անցաւ որ աշխրջիս մէջ
մէկտեղ ապրեցանք , անանկ ալ անդին մէկ-
տեղ վայելենք արքայութիւնը , որ քու մար-
տիրոսութեանդ ցործակից եղայ . գիտես ,
տէր իմ , աս քաղքիս անառակութիւնը , Թա-
գաւորին ամբարշտութիւնը , չըլլայ որ իս
սրբասէր ամուսինդ առնէ մէկ կուսպաշտի մը
տայ , քեզի կ'իյնայ իս պահելու . իմ պար-

կեչտու թեանս վարձքը մէկտեղ մեռնիլս ըլ-
լայ : Արիչ կնկտիք ալ Մնատողայէն բարի
օրինակ առնելով մաղերնին կարեցին , էրիկ
մարդու հագուստով կու դային սուրբերուն
կը ծառայէին : Երբօր աս ալ լսեց կայսրը ,
խիստ զարմացաւ , բայց բան մը չըսաւ , հաս-
կընալով որ սուրբերը ցաւուն չիղիմանալով
մօտիկ են մեռնելու . տանջանքով մեռնելու
համար՝ սալ դնել տուաւ ոտուրներնուն տա-
կը , անանկ երկըթով կտրրտել հրամեց ի-
րենց ոտուրները : Մնատողան աղաչեց դա-
հիճներուն որ առաջ Մգրիանոսէն սկսին ,
վախնալով չըլլայ որ ուրիշներուն վրայ տես-
նելով Մգրիանոս՝ իրեն մէկ վախ մը դայ :
Երբօր սալը դրին , Մնատողան անանկ վա-
ռուած էր Վրիստոսի սիրովն որ ինքիրմէ
բռնելով Մգրիանոսին ոտուրները սալին
վրայ դրաւ . երբօր դահիճները զարնելով
կօտրտեցին , Մնատողան դարձաւ ըսաւ Մ-
գրիանոսին . կ'աղաչեմ , ով ծառայ Վրիս-
տոսի , դուն քեզնէ ձեռուրներդ երկնցօր
որ կտրեն . որպէս զի աս բանիս մէջն ալ
նմանող ըլլաս սուրբերուն , որովհետեւ ա-
նոնք քեզնէ աւելի տանջուեցան : Մգրիանոս
ալ անանկ ըրաւ , բայց կտրածնին պէս ալ
հոգին աւանդեց : Մէկալ սուրբերուն վրայ
դային դահիճները , անոնք ինքիրեննին
կ'երկնցընէին ոտուրնին ըսելով , տէր Յի-
սուս , սու մեր հոգին : Յիսուսի հետ ասանկ
խօսելով ամմինն ալ նահատակուեցան յա-
մին 305 կամ 310 . օգոստոս 26 :

Սադաւորը հրամանեց որ սրբոց մարմինները կրակը ձգեն, չըլլայ որ գալիլեացիք՝ որ ըսել է քրիստոնէները՝ առնեն Մատուծոյ տեղ պաշտեն: Մն առենը Մնատողան գաղտուկ առաւ Մգրիանոսին մէկ ձեռքը պահեց երբոր կը տանէին մարմինները, ետունին երթալով արեան կաթիլները կը ժողվէր զինքը կ'օծէր. ուրիշ բարեպաշտ կնկախք ալ ազնիւ կտաւներ թաթխելով սրբոց արեան մէջ ծոցերնին կը պահէին. դահիճներուն լաթերն ալ որ սուրբերուն արեան մէջ թաթխուած էին՝ շատ օսկի տալով ծախու առին: Արբոր սուրբերուն մարմինները վառած փուռը կը ձգէին, ասոնք լալով կ'աղաչէին՝ աղօթք կ'ընէին սուրբերուն որ զիրենք ալ յիշեն. մանաւանդ Մնատողա հոգւոյն սրբոց շնորհքովը վառուած ասդիս անդին կը պօրտէր փռանքովերը. փափաքելով որ ինքն ալ ան փուռը խնելով սուրբերուն հետ մէկտեղ նահատակուի. ալ երանելի Մգրիանէ, կը կանչէր, իս մի թողուր աս ցաւալի աշխարհիս մէջ: Արբոր մարմիննին փուռը ձգեցին, յանկարծ երկինքը անանկ գոռած որ բաղքին մէջ ամէնն ալ վախցան, սաստիկ անձրե մը գալով փուռը մարեց, դահիճները վախէն փախան. ան առենը մօտիկ եղող քրիստոնէները՝ Մնատողան ալ ուրիշ կնկախք ալ մէկտեղ վաղեցին մարմիննին գողցան, որ ամենեւին ողջ մնացեր էին չէին երած և ոչ զլիւրնին մազը:

Մն ատենն երեցաւ Աստեբիոս անուն ազնուական մարդ մը Պօլիսէն եկած Նիկոմիդիա իր կնկնովը . ոտքն իյնելով Մնատոլայ և ուրիշ քրիստոնէներուն ըսաւ . մենք առաջ աս քաղքիս մօտիկ կը կենայինք , բայց ամբարշտու թիւնները տեսնելով ամմէն բաներնիս թողինք Պօլիս դացինք . հիմա տուէք մեզի սուրբերուն մարմինները որ տանինք հոն թաղենք ինչուան թագաւորին մահը , ետքը կատարեալ պատուով ընենք անոնց փոխադրութիւնը , ինչպէս է մեր սովորութիւնը . թէ որ հոս թաղելու ըլլաք , ան բռնաւորը նորէն հանել երել կու տայ : Մս խօսքս ամմէնուն ալ ընդունելի եղաւ . անանկով նաւը դրին Պօլիս խրկելու . բայց Մնատոլա վախնալով՝ չըլլայ թէ մարմինները մատնուելու որ ըլլայ՝ Մգրիանոսին ձեռքն ալ մէկտեղ մատնուի , որ իրեն մէկ հատիկ յոյսն էր , իր բարձին տակը պահէց ամմէնէն գաղտուկ :

Քանի մը օր անցնելէն ետե՛ նիկոմիդացի մէկ հազարապետ մը խնդրեց թագաւորէն որ Մնատոլան իրեն կին առնէ , անոր գեղեցիութեան ու հարստութեանը աչք տնկելով . ուրիշ կնիկներ ալ խրկեց աս բանիս համար իրեն հետ խօսելու : Մնատոլան ասոնց խօսքին հաւնիլ ցցուց , խաբելով ըսաւ . իս ուզողը որովհետեւ մեծ մարդ է , իրեք ամիս ինծի ատեն տուէք , որ պատրաստութիւն տեսնեմ : Մսանկով զանոնք ճամբեց , ինքը արտորաց Պօլիս փախչելու ուր

որ սրբոց մարմինները տարին : Աւր որ կը պահէր սրբոյն Մարիանոսին ձեռքը , հոն երեսի վրայ իյնալով աղօթք ըրաւ , որ Մի սրբոյն Մարիանոսի բարեխօսութիւնը զինքը խալցցրնէ կռապաշտի ընկերութիւն . աղօթք ընելէն տրտմութեամբ ու հոգ ընելէն ետեքուն մը եկաւ վրան : Ան ատենը սուրբերուն մէկը երենալով իրեն ըսաւ . մի վախնար , Անատոլա , մենք չենք մոռցած քու աշխատանքդ որ ըրիր մեր վրայ . Վրիստոսի առջեւ ելածնուս պէս աղաչեցինք որ դուն ալ մեր քովը դաս : Անատոլան ըսաւ . տէր իմ , Մարիանոսն ալ արդեօք Վրիստոսի առջեւ երեցաւ ձեզի հետ : Ան մեզնէ առաջ երեցաւ , ըսաւ . դուն հիմա նաւը մտիր մեր քովն եկէ . Աստուած քեզի ալ կ'ողորմի , մեզի հետ հանգչիս պիտի : Անատոլան ուրախութեամբ արթննալով՝ ամէն բան թողաւ , միայն Մարիանոսի ձեռքը հետն առնելով նաւակ մը մտաւ , որուն մէջ շատ քրիստոնէներ կային Սաքսիմիանոս թագաւորին ձեռքէն փախչողներ : Վմացաւ հազարապետը , թագաւորէն զօրք առնելով ուրիշ նաւ մը մտաւ ետեւէն հասնելու . բայց քիչ մը բացուելէն ետեւ խիստ դէմ հօլ մը ելլելով ետ դարձուց անոնք . ոմանք ալ խղզուեցան ալէկոծութենէն :

Հակառակորդ սատանան ուզեց խաբանել Անատոլեայ փախչելը , մէկ նաւապետի մը կերպարանքով նաւու մը մէջ նստած ուրիշներով՝ Անատոլեայ նաւուն հանդիպե-

ցաւ, հարցուց ուսկից կու գաք, ուր կ'երթաք: Եւստասիան տուին որ Վիկտորիայէն կու գանք Պօլիս կ'երթանք: Միտալ կ'երթաք, ըսաւ, աս սուտ նաւապետը, ասիկայ ձեր ուղած ձամբան չէ, ձախ դին դարձուցէք. ասոնք ալ շիտակ խօսք կարծելով, անդին դարձուցին նաւը: Եւ ատեն սուրբն Մարիանոս երևնալով իբր ան նաւուն մէջը կեցած, ձայն հանեց՝ մի հաւատար, ըսաւ, անոր. աղէկ կ'երթայիք առաջ, անանկ դացէք. աս ըսածին պէս՝ հալածեցաւ սատանան, Եւստասիան ելաւ տեսաւ որ սուրբն Մարիանոս կեցեր է, իրենց առջևէն կ'երթայ, ուրախանալէն կանչեց՝ ահա տերն իմ Մարիանոս. անկից ետքը շերեցաւ սուրբը: Եւստասիան յաջող հովով առտուանց հասան Պօլիս. երբոց սրբոց նըշխարքներուն տեղը հասան, Եւստասիան ցամաքն ելաւ, փափաքով համբուրեց սուրբ վիաններուն մարմինները, սրբոյն Մարիանոսի ձեռքն ալ հանեց քովէն հոն դրաւ, երկան ատեն աղօթքի հետ եղաւ. ետքը Սուսերիոսի տունը դալով բարեւեց քրիստոնեայ եղբարները, աղաչելով իրեն համար որ աղօթք ընեն՝ ինքն ալ սուրբերուն ետեւէն երթայ. ասոնք տեսնելով որ խիստ յոգնած էր, կ'աղաչէին որ քիչ մը քուն ըլլայ: Եւ ատեն սուրբն Մարիանոս տեսիլքի մէջ իրեն երևնալով ըսաւ. խաղաղութիւն ընդ քեզ, քոյր մարտիրոսաց, եկէ քու աշխատանքիդ վարձքն ան. և մէկէն իր հոգին

ուանդեց հօն: Քրիստոնեաները քովը դա-
 լով երբոր կ'ուզէին արթնցնել, տեսան որ
 վախճանած է՝ շատ ցուեցան. բայով աղօթ-
 քով ան ալ հօն թագեցին միաբան Աւսե-
 բիտին տունը, որ արդէն դմբեթաւ որ շէնք
 մըն էր մէկ վկայարանի մը պէս, աղօթքի
 տուն ըրին. շատ մարդիկ շատ կնիտիք ամ
 մէն ապրանքնին թողնելով հօն եկան բնա-
 կեցան, աղօթքով պաքով Աստուծոյ ծա-
 ռայելով: Աքրիանոսի վրայ շատ հրաշքներ
 կը պատմուին. յատուկ բարեխօս է ժան-
 տախտի հիւանդութեան. անոր բարեխօ-
 սութեամբը շատ մարդ ծանր հիւանդու-
 թենէ ըռնեցան, ջուրը խղզուողները ող-
 ջընցան, բարձր տեղէ վար իյնողները ողջ
 պահուեցան, տղաբերք եղողները վտանգէ
 խալըսեցան, անդամալոյճները բժշկուեցան:

ՍՈՒՐԲ ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՅՍ

Աօիկայ Սանատրուկ ըսուած Հայոց
 թագաւորին աղջիկն էր. երբոր թագեոս
 առաքեալն եօթանասունուերկու աշկերտ-
 ներէն մէկը եկաւ Հայաստան քարօղեցնք
 հաւաքը, ան ատենն ինչպէս մեր Աբգար
 թագաւորը անանկ ալ Սանատրուկ իր բեռ-
 որդին քրիստոնեայ եղաւ. բայց ետքը Հայ-
 ոց վրայ թագաւոր ըլլալու համար Սանա-
 տրուկ՝ ու բացաւ, նորէն կապալաշտ եղաւ
 արախէտե մենճերը ամմէնն ալ կապալաշտ:

էին , կռապաշտ թագաւոր կ'ուզէին : Թագէոս առաքեալը նորէն եկաւ Մատաղ գաւառը՝ Սանատրկոյ նստած տեղը քրիստոնէութիւն կը քարոզէր , բորոտները կը սրբէր , կաղերը կը քալցընէր , Յիսուսին անունով շատ հրաշքներ կ'ընէր , շատ կգապաշտներ ալ կը դառնային քրիստոնեայ կ'ըլլային իրեն ըրած հրաշքները տեսնելով , իրեն քաղցր քարոզութիւնը լսելով : Կսոր ձայնը երբոր հասաւ սուրբ Սանդուխտին անկաճը որ պզտիկ մատղաշ տարիքին մէջնէր , խիստ գեղեցիկ երեսով , խիստ խմաստուն խելքով , հօրմէն գաղտուկ գիշերանց եկաւ Թագէոս առաքելոյն քովը , փափաքով նստաւ իրեն քարոզութիւնը մտիկ դնելու : Ընտանը աւետարանին լոյսը իրեն սիրտը ծագեցաւ , հոգւոյն սրբոյ շնորհքով լուսաւորեցաւ , մէկիկ մէկիկ սուրբ խորհուրդները սորվեցաւ . Թագէոս առաքելոյն ոտքը իյնալով արցունք թափելով կը պագնէր , իրեն հոգւոյն հայր կանչելով անիկայ : Կսանկով շատ օր չիզատուեցաւ անկից . իր սիրտը անանկ վառուած էր Քրիստոսի սիրովոր չէր ուզէր բաժնուիլ Քրիստոսի աշակերտէն : Տեսնելով սուրբ առաքեալը Սանդուխտին ասանկ ջերմեռանդութիւր՝ Քրիստոսի սիրոյն հետ ասանկ միանալը՝ շուտ մը մկրտելու ատենը լուսեղէննշան մը երեցաւ սրբուհի Սանդուխտին վրայ , լուսոյն մէջէն ալ ձայն մը եկաւ . ուրախ լէր , ով դուստր եհարսն բարի երկնաւոր փեռային . ան լոյսը

տեսնելով, ձայնն ալ լսելով, շատ հոգի
դարձան քրիստոնեայ եղան :

Ի այց կռապաշտ քուրմերը կատգելով՝
վաղեցին իր հօրը Սանատրուկ Թադաւո-
րին պատմեցին : Սանատրուկ լսածին պէս
հրամեց Թադէոս առաքեալը կապել, իսկ
նոր հաւատացեալներէն որը սպաննել որը
ծեծել ու բանտի մէջ պահել, անոնց հետ
իր աղջիկն ալ սրբուհին Սանդուխտ : Այ-
բոր կը սպաննէին նորահաւատ քրիստոնեա-
ները, տեսան որ մեծ լոյս մը ինջաւ անոնց
վրայ. ան տեսնելով ոմանք դարձան քրիստո-
նեայ եղան . մէկալ կռապաշտներուն վրայ
վախ մը ընկաւ, շատն ալ կուրցան ճառագայ-
թէն, վախցան բռնելու սուրբ առաքեալը :
Ըն առենը Յիսուս երևնալով Թադէոս ա-
ռաքելոյն՝ շատ քաջալերութիւն տուաւ ի-
րեն : Տեսիլքը տեսնելէն ետեւ ան գիշերը
ինքիրմէ գնաց Թադէոս բանտը, բանտին
դռները ինքիրմէ բացուեցան . ներս մտնե-
լով Թադէոս ողջոյն տուաւ բանտին մէջ
բռնուած քրիստոնէներուն, սրբուհի Սան-
դուխտին քովն եկաւ . տեսնելով որ իրեն
ոսկի զարդերուն տեղը շղթայով էր կա-
պուած, պաղաւ կապանքներն ու ըսաւ . եր-
նէկ քեզի, դուստր երկնաւոր Թադաւորին :
Իսկ սրբուհին՝ առաքելոյն ոտքը պագնելով
կը ինզրէր որ նորէն քարոզէ Վրիստոսի
վրայ . իրեն մխիթարութիւն տայ անարատ
պահելու գինքը ան կռապաշտներուն մէջը :
Իերանը բացու սուրբ առաքեալը աս յոր-

գորանքը զուրցեց . մէյժը , ըսաւ , քու սրբա-
տիզ մէջը զիր Վրիստոս մէր տէրը , ալ մի-
վախնար , բոլոր սրտովդ անոր ապաւինէ . ա-
նիկայ քեզի օգնութիւն կանչէ , իսկոյն կը
հասնի զօրութիւն կու տայ , քու թշնամի-
ներդ կ'ամբնջցնէ . քու աչքիդ բան մը չե-
րենայ աս անցաւոր աշխարհքս՝ որ այսօր կայ
վաղը կը կորսուի . հաւատք , յոյս , սէր , աս
իրեք բանը քեզի զէնք առ . ինչ հնարքներ
որ բանեցընէ քեզի չար սատանան՝ չի կրնար
քեզ զրկել յաւիտենից ուրախութենէն , որ
սուրբերուն հետ պիտի վայելէս քու կին կա-
մաւոր նահատակութեամբդ , որ պիտի քա-
չէս Յիսուսի անուանը համար : Այ ըսելով
ապսպրեց աղօթքի հետ ըլլալ . ինքն ալ
թևերը տարածելով սկսաւ աղօթք ընել .
նվմիածին որդի Աստուծոյ , ըսաւ , որ մարդ-
կային ազգը փրկելու համար աշխարհք ե-
կար , նայէ երկրնքէն աս աղախնոյդ վրայ
Սանդուխտին , որ իրեն ծաղիկ տարեքը քե-
զի կը նուիրէ , դուն պահէ զօրացուր ասի-
կայ իր ընկերներովը , ամօթ ըրէ թշնամին
սատանայ :

Արքոր աղօթքը ընցուց՝ յանկարծ մէկ
գոռում մը եղաւ , բանտին տանիքը վեր ե-
լաւ , արևէն աւելի սրայծառ լոյս մը ծածկեց ,
լուսոյն մէջէն ալ ձայն մը եկաւ , որ կ'ըսէր .
զօրացիք , սիրտ առէք , ես պիտոր գամ ձեզ
առնեմ . իսկ դու , նվ Սանդուխտ , որ իմ
ետևէս եկար , երկրաւ որ պաախը ձգեցիր ,
իս հայր կոչեցիր , քեզի վերնագոյն լոյս պի-

տի տամ ուրիշներէն պայծառ : Ըս երկնա-
ւոր ձայնը առածնին պէս՝ ամմէնուն կա-
պանքը արձրկուեցան , մարմիննին ողջըն-
ցաւ , գոհանալով կ'ըսէին . ուրիշ բան չու-
նինք , տէր մեր , քու բարերարութեանդ
փոխարէնը հատուցանելու , բայց միայն մեր
կեանքը : Բանտապաններն աս հրաշքներն
ու բանտին դուռն ալ բացուած տեսնելով ,
Թաղէոս առաքելոյն ոտքը ընկան . մենք ալ
քու Ըստուծոյդ կը հաւատանք , ըսին , մեզ
ալ հաւատացեալներուն մէջ խառնէ : Ըս
ըսելով լալով Թողութիւն կը խնդրէին . ձեզ
չէ Թէ մեր կամքովը՝ այլ ակամայ Թագաւո-
րին խօսքին համար աս նեղութեանը մէջ
պահեցինք , կ'ըսէին . հիմա տեսնելով քու-
կին Ըստուծոյդ փառքը , մենք ալ կը խոս-
տովանինք որ ան է ճշմարիտ Ըստուած ա-
րարիչ երկնի և երկրի , ինչ որ ըլլայ չենք
բաժնուիր անկէց : Սուրբ առաքեալը տես-
նելով որ ճշմարիտ էր իրենց կոչումը , սիրտ
տուաւ , աղօթք ըրէք՝ ըսաւ . ինքն ալ մէկ
տեղ աղօթք ընելով մկրտեց անոնք 33 հոգի
բանտապաններն ու իրենց ընտանիքը : Սա-
տանան մարդու կերպարանքով հոն երևնա-
լով ըսաւ բանտապաններուն . ինչ պակաս
էր ձեզի որ Թողիք կուռքերը , գնացիք մէկ
հրեայի մը ետեւէն որ ձեզ կը խաբէ : Սուրբ
առաքեալը սնոր սաստելով՝ մէկ գթօխային
խանձող մը դարձաւ , սկսաւ տանջուիլ հրեշ-
տակներէն . աս տեսնելով նորահաւանները
աւելի հաստատուեցան սք հաւատքին մէջ :

Իսկ սատանան գնաց Թաղաւորը զրգռելու, որ առտուանց խորհուրդ ըրաւ իր ազնւեանը համար ինչ ընէ: Հայրական սիրտը չէր գիմանար անանկ աննման զաւակն սպաննելու՝ որ խիստ կը սիրէր, յիշելու ատենը կու լար. իր իշխաններէն մէկը խորհեց որ երթայ բանտէն հանէ իր առջև բերէ, ուրիշներն ալ խորհեց որ Սաղէոս առաքեալը գանեն բռնեն որ իր դուստրը ասանկ մտորցուց, չի գիտնալով որ անիկայ ինքիրմէ բանտը գացեր էր: Արբոր իշխանը բաղմուծեամբ բանտը եկաւ, դուռը բաց տեսնելով զարմացաւ. կը տեսնէր ներսը իր կարծածէն աւելի բաղմուծ իւն, անոնց բուրտիքն ալ լոյս սաստիկ, սուրբ առաքեալն ալ ոտքի վրայ կեցած կը քարոզէր. աս լուսոյն ահաւորութիւն իշխանն ալ իրեն հետ եկողներն ալ գետինն ընկան, աներեւոյթ տանջանօք կը չարչարուէին, ահուելի ձայներ կը լսէին: Սաղէոս առաքեալն հասկընալով անոնց փորձանքը, դուրս ելաւ տեսաւ որ գետինն ընկած կը Թապալտրկէին, ձեռքը վրանին դնելով Մատուծոյ անունը տալով ամմէնն ալ բժշկեց: Մտեսածին պէս իշխանը՝ հաւատաց, յիսուն մարդ ալ իր հետը. և որովհետեւ խիստ մեծ մարդ էր Թաղաւորական դրանը մէջ իբրև Թաղաւորին փոխանորդը ըլլալով, խիստ սրդողեցաւ Սանատրուկ, լսածին պէս՝ հրամանեց սրով ըսպաննել ամմէնն ալ. ան օրը 200 հոգին ահատակուեցան կրիկ մարդ կնիկ մարդ.

հոն տեղը ձայներ լսուեցան հրեշտակներու , որ երկնքէն վար իջնալով ողջոյն կու տային սուրբ նահատակներուն , անոնց վախէն ալ շատ անհաւատներ կորսուեցան . գիշեր ա տեն ալ լոյս մը երեցաւ սուրբ վկաներուն վրայ : Սրբուհին Սանդուխտ հօրմէն գալ տուկ հաւատարիմ ծառաներ խրկեց իր տունը , բարակ կտաւներ բերել տալով սուրբ մարմինները կը պատէր արցունքով համբուրելով . երնէկ ձեզի , կ'ըսէր , քուրեր , աղբարներ , դուք արժանի եղաք երկնաւոր ուրախութեան , զիս ալ յիշեցէք : Եւ ըսելով իր տանը մօտիկ թաղել տուաւ . նորէն բանտը գնաց , հոն սուրբ առաքեալը աղօթքի մէջ գտաւ՝ մէկ սքանչելի լուսոյ մը մէջ կեցած . վազեց ոտքն ընկաւ , շատ արցունք թափելով հառաչելով ըսաւ . իմ տէրս ու հայրս՝ որ իս մօլորեալս գտար , իս օրհնէ , ինձի համար ալ աղօթք ըրէ որ ես ալ հասնիմ իմ սուրբ ընկերներուս , ես ալ արժանի ըլլամ Վրիստոս տեսնելու : Եւ առաքեալը տեսնելով սրբուհւոյն արցունքն ու Վրիստոսի վրայ ունեցած սէրը՝ ըսաւ . երանի քեզի , դուստր երկնաւոր թագաւորին , քիչ մը համբերէ , շուտ մը կը տեսնես լոյսն Վրիստոս : Եւ անկ ալ սիրտ կու տար ուրիշ հաւատացեալներուն . հաց տուին իրեն , որ օրհնելով տուաւ սրբուհի Սանդուխտին ու իր ընկերներուն . ճաշակելէն ետեւ փառք տուին ամենասուրբ երրորդութեան ու խաչակնքելով քուն եղան : Եւ այց

առաքեալը աղօթքի հետ կ'ըլլար, Կոհա-
նալով Մատուծոյ որ իրեն քարոզութեամբը
անչափ հոգի վաստրկեցաւ . կ'աղաչէր որ
հաւատքնին ամուր պահելով արժանի ընէ
անոնք արքայութեան, մանաւանդ սրբուհի
Սանդուխտը յատուկ կը յանձնէր Մատու-
ծոյ համբերութիւն տալ, որ իրեն ծաղիկ
տարիքը՝ իրեն սուրբ կուսութիւնը՝ բոլորու-
վին Յիսուսի էր տուած, որպէս զի արժա-
նի ըլլայ մարտիրոսական պսակն առնելու
փոխանակ անցաւ որ պսակին որ իր հօրը
տանը մէջ ունէր :

Մ աղօթքը ընելու ատենը, Յիսուս ե-
րևնալով՝ խաղաղութի ընդ ձեզ, ըսաւ, սի-
րելիք իմ լսեցի, ո՛վ լծադէէ, քու աղօթքդ,
դուն Սանդուխտին ու մէկալ աշկերտնե-
րուդ հետ մէկտեղ պիտի նահատակուիս,
ո՛վ ալ որ ձեր յիշատակը կատարէ՝ ինչ որ
խնդրէ, խնդիրքնին պիտի կատարեմ: Լծա-
դէոս ըսաւ . տէր իմ և Մատուած իմ,
զիտեմ որ իս սիրեցիր, մի թողուր ա-
սոնք ալ՝ որ իմ խօսքովս քեզի հաւատա-
ցին . վերցուր կուսպաշտութեան խաւարը
աս աշխրջիս վրայէն . քեզի ժողովուրդը ը-
րէ որ միաբան քու աստուածութիւնդ փա-
ռաւորեն: Պատասխան տուաւ Վրիստոս .
աս խնդիրքդ ալ կը կատարեմ, քու առաքե-
լութեան տեղդ ալ ինձի ժողովուրդ պիտի
ընեմ, դուն ուրախ կեցիր՝ ըսելով վերացաւ:
Մն ատենը սուրբ առաքեալն արժընցուց իր
աշկերտներն ու սրբուհին Սանդուխտը, աս

ատեօիքը պատմելով ուրախացուց անոնք ,
մէկտեղ աղօթք ընել սկսաւ , ետքը սիրա
տուաւ . հիմա պիտոր առնէք , ըսաւ , լու
սեղէն պսակը : Տե՛սնելով որ սուրբն Սան
գուխտ կու լայ , կարծելով որ վախէն կու
լայ անոր ալ սիրաւ տուաւ : Բայց սրբուհին
Սանգուխտ Յիսուսին սիրովը վառուած ,
չնորհքով լեցուած պատասխան տուաւ .
չեմ վախնար տէր իմ և հայր , այլ ուրախ
եմ , միշտ կը փափաքիմ Վրիստոս տե՛սնե
լու , էրբ պիտոր ըլլայ որ անոր քովն եր
թամ , էրբ պիտոր ըլլայ որ միշտ անոր առ
ջին կենամ . փափաքս աս է , սիրտս խիտ
վառուած է ան երկնային լոյսը տե՛սնելու ,
անոր համար կու լամ : Ըստ խօսքիս վրայ
խիտա ուրախանալով առաքեալն ըսաւ , ե
րանի քեզի որ հիմա պիտի հասնիս անոր՝
որուն որ կը փափաքիս :

Ըստու եղածին պէս՝ իշխաններ սպասա
ւորներ բանտը եկան , Սաղէոս առաքեալն
ալ ուրիշ քրիստոնէաներն ալ թագաւորին
պաշտօր բերին կապած . միայն սրբուհի
Սանգուխտը չի կապած բերին , որ մտնելու
ատենը զարմանալի համարձակութիւն բարձր
ձայնով սկսաւ սիրտ տալ իր ընկերներուն
ըսելով՝ մի վախնաք , եղբարներ , երկրաւոր
թագաւորներէն՝ որոնց վախը սչինչ է , ո
րուն որ հաւատացիք՝ անոր վրայ ամուր կե
ցիք , խելու ընիզ մտու ընիզ անոր տուէք , ա
նիկայ ձեզի զօրութիւն կու տայ , ան է միայն
Ըստուած , անկէց ուրիշ Ըստուած չի կայ .

անիկայ ձեզ կը պահէ աշխրբիս խաբէութե-
նէ : Սազաւորը ներս կանչեց սրբուհին .
երբոր ներս մտաւ , քովս եկէ , ըսաւ , դուստր
իմ Սանդուխտ . բայց սրբուհին երեսն ալ
չինայեցաւ քովն ալ չի դնաց : Սազաւորն
ըսաւ . իս ուրացար , սրդեակ , ան մուրցը-
նողը սիրեցիր . իրաւ կ'ըսեմ քեզի , թէ որ
չի դառնաս քու մտքեզ , քեզ մեռցընելով
պիտի կորսնցընեմ : Ստասխան տուաւ սրը-
բուհին . ան որ դուն մուրցընող կ'ըսես ,
անիկայ իս շիտակ ճամբան բերաւ , հասկը-
ցուց ինծի ճշմարիտ Ղստուածն արարիչ երկ-
նի և երկրի , հայր և որդի և հոգին սուրբ .
ես հիմա կ'արտորամ անոր քովն երթալու
որ իմ տէրս է , լոյս է և կեանք ամմէնուն :
Սազաւորն ըսաւ . ո՞վ է ան որ Ղստուած
կը կոչես ու հայր : Սանդուխտ ըսաւ . ան է
ճշմարիտ Ղստուած , որ ոչընչէ ամմէն բան
ստեղծեց . բայց ձեր միտքը խաւարած է , որ
ձեր ստեղծողը մէկդի թողնելով կուռքերը
կը պաշտէք , որ չեն տեսներ չեն լսեր . սա-
տանաները մէջերնին են նստած , ձեր միտքն
ալ կուրցուցեր են , դժոխքի որդի են ըրեր ,
ուր պիտոր երթաք հետերնին տանջուիք :
Ղսխօսքերուս վրայ կատղելով թազաւորը ,
իր հայրական գութը մոռցաւ , ապտակ մը
զարնէլ տուաւ . կապեցէք քերթեցէք , ը-
սաւ , քերթած տեղերը կրակով երեցէք :
Կահիճները կապեցին սրբուհին , գործիք-
ները պատրաստեցին : Սէկը վազեց դնաց
աս բաներս պատմեց սրբոյն Սազէտի , որ

լալով աղօթք ընել սկսաւ, որպէս զի Յիսուս զօրութիւն տայ անոր :

Արքոր սրբուհին կապուած քերել պիտի սկսէին երկրթէ գործիքներով, երկինքը կանչեց ըսելով. տէր իմ Յիսուս, հասիր ինձի օգնութիւն, որ ամմէնքն ալ իմանան քու զօրութիւնդ. դուն ես իմ հայրս արարիչս, մի թողուր իս : Ան ատենը մէկ շարժ մը եկաւ, լոյս մը ծածեց, ձայն եկաւ վերէն՝ զօրացիր, դուստր իմ, ես քեզի հետ եմ. կապանքները մէկէն քահուեցան, լուսէն կայծակը զարնելով դահձապետը սպաննեց, շատ մարդ ալ իր հետը. թագաւորն ալ ամմէնն ալ ահուդողի մէջ ընկան : Արքուհին Սանդուխտ արձրկուած ըլլալով՝ եկաւ գտաւ ուր էր (Սաղէոս առաքեալը, ոտքը իյնելով, ըսաւ. տէր իմ և հայր, ահա Քրիստոս տէրն իմ իս արձրկեց, ամօթ ըրաւ սատանան : Վանք որ աս շարժմունքը անանկ վախցուց կռապաշտները՝ որ իշխան մը եկաւ թագաւորին դիացէն սուրբ առաքելոյն ոտքը իյնելով ըսաւ. մեղայ քեզ ու քու Աստուծոյն, ներէ, մեզի համար աղօթք ըրէ՝ սա պատիժը անցնի, ինչ որ դուն կ'ուզես՝ կ'ընենք. թագաւորը հրաման տուաւ որ արձրկուիք : (Սաղէոս առաքեալը լալով աղօթք ըրաւ պատիժը վերցընելու. մէյմըն ալ տեսան որ կապուած քրիստոնէներուն ամմէն կապանքը ինքիրմէ արձրկուեցան, շարժին զարհուրելի ձայնն ալ գաղրեցաւ : Իշխանը զարհուրեցաւ. առաքեալն իրեն

ըսաւ՝ մի վախնար , գնա պատմէ թագաւորին ինչ որ տեսար : Ըսիկայ եկաւ թագաւորին ըսաւ որ՝ ես թագակոսը տեսայ չէ թէ մարդ , այլ մարդէ վեր բան մը՝ չորս դին լուսի մէջ առնուած , աղօթք ըրածին պէս ամէն շարժումը դադրեցաւ : Բայց թագաւորը սատանայի հետեւելով ըսաւ . անիկայ մի կարծես որ դադրեցուց , մեր կուռքերը դադրեցուցին : Իշխանը աս խօսքիս վրայ դժուարելով վախնալով եկաւ թագակոս առաքելոյն քովը , հաւատքը ընդունելով իր ամէն տնովը մկրտուեցաւ , Սամուէլ անուն առնելով աշակերտ եղաւ սրբոյն : Ըս բանիս վրայ խիտ դժարն եկաւ թագաւորին , խիտ տրտմեցաւ , որովհետեւ խիտ երևելի մարդ էր խորհրդական թագաւորին , որուն նման չէր գտնուէր հայաստանի մէջ . սրբդողէլէն կրակ կտրած դամեր զարնել տուաւ ոտուրներուն անանկ նահատակեց ան իշխանը , անոր հետ ութը հոգի ալ նահատակուեցան . որոնց մարմինը գիշեր ատեն առին սուրբն թագակոս և սրբուհին Սանդուխտ խնկերով պատելով թաղեցին : Թագակոսի ըսաւ սրբուհին . երանի քեզի , տէր իմ և հայր , որ շատ մարդ արժանի ըրիր Վրիստոսի պսակին : Ընաքեալն ալ իրեն ըսաւ . քեզ ալ երանի որ արժանի եղար անոք թաղելու . ուրախ եղիր , դուն ալ շուտով պիտի հասնիս Վրիստոսի : Ըս սրբուհին իբր թէ մէկ առաքելու հիմնն էր եղած , ինքը Վրիստոսի սիրով վառուած ըլլալով

ուրիշներն ալ անոր սիրովը կը վառէր , ամ
մէնն ալ կը հոգար կը կերակրէր կը հագուե-
ցնէր , էրիկ մարդ կնիկ մարդ ամմէնն ալ
կը մխիթարուէին սիրտ կ'առնէին ասոր խօս-
քէն , որ Յիսուսին անունով հրաշքներ
ընելով շատ կռապաշտներ դարձուց : Ա-
նոնցմէ մէկն եղաւ Օ արմանդուխտ կնիկը՝
հարուստ ու ազնիւ տընէ , թագաւորին մօ-
տիկը , որ իրեն ամմէն անովը մկրտեց (Թա-
ղէոս առաքեալը 200 հոգի . ասոնցմէ միայն
Օ արմանդուխտը նահատակեց թագաւորը
զլուխը կտրելով . որուն վրայ հրաշքներ ե-
րենալով շատ մարդ քրիստոնեայ եղան :
Սանատրուկ աս բաներս լսելով կը մոմօար
Սանդուխտին վրայ , գիտնալով որ ան է ա-
ւելի քրիստոնէութիւնը ծաւալող ու դարձը
նող . իր հայրական գութը մէկգի թողնե-
լով՝ հրամեց որ վաղուան օրը սրով սպան-
նեն :

(Թաղէոս լսելով աս անօրէն հրամանը՝
բոլոր գիշերը աղօթքի հետ եղաւ սրբուհի
Սանդուխտին համար . առտուանց սրբու-
հին եկաւ առաքելոյն ոտքը իյնալով պագ-
նելով ըսաւ . տէր իմ , իրիկուան մտածելու
հետ էի , ինչ պիտոր ընէ ինձի լոյսն իմ
Քրիստոս , էրբ պիտոր իս քովն առնէ . ա-
նանկով քուն եղայ . մէյմըն ալ գիշերը
յանկարծ քունիս մէջը սաստիկ լոյս մը ծա-
թեց վրաս , լուսոյն մէջէն ալ մէկ լուսեղէն
մարդ մը կանչեց ինձի , ու Սանդուխտ , ե-
լիւ հագուէ իմ լուսեղէն զգեստս : Այս լալ

սկսայ, ահով խնտալով ըսի. տէր իմ, չեմ
արժանի. բայց անիկայ ինձի սաստելով հա-
գուեցուց, լուսեղէն պսակ ալ գլուխս դրաւ,
լուսաւոր զարդերով իս զարդարեց. երբոր
ես զարմացած կեցած էի, յանկարծ մէկ
վախնալու շարժում մը ըլլալով իս արթն-
ցուց. ես ալ փառաւորեցի զՔրիստոս որ
ասանկ տեսիլքի արժանի ըրաւ: Ասոնք լը-
սելով առաքեալը՝ հասկըցաւ որ ան օրը պի-
տոր նահատակուէր կոյսը, արցունք թափե-
լով մեկնեց տեսիլքը որ Քրիստոս էր իրեն
երևցողը, երևնալով հասկըցուց որ աս ծանր
մարմինը պիտոր թողնես, մարտիրոսութիւն
երկնաւոր լոյսը պիտոր հագուիս: Արբու-
հին լրածին պէս՝ սիրտը ուրախութենով
լեցուեցաւ, ուրախութենէն կու լար, առա-
քելոյն ոտքը իյնալով կ'ըսէր. երանիքեզ,
հայր իմ, որ իս նորէն ծնար, ճանապարհ
փրկութեան գեղ անմահութեան եղար,
խնդրէ՛ Քրիստոսէ իս շուտով իր քովս առ-
նէ: Առաքեալն ըսաւ. շուտով պիտոր հաս-
նիս ան լուսոյն սրուն անչափ կը փափաքիս:
Արբուհին ըսաւ. տէր իմ, երբոր մեռնելու
պիտոր ըլլամ, մօտիկ քովս կենաս, իս զօ-
րացընես: (Թաղէոս ձեռուրները վեր վեր-
ցընելով աղօթքի կեցաւ, սիրտ տալով օրհ-
նեց սրբուհի Սանգուխտը: Ան ատենը հա-
սան բարբարոս իշխանները զօրքով, սուրբ
կոյսը բռնելով տարին սպաննելու տեղը.
Իսկ սուրբ առաքեալը անհաւատներուն մէջ
աներևոյթ մտալով՝ անոնց մէջէն կ'երթար,

Մանդուխտին քովէն մօտիկ քալելով սիրտ
կու տար անօր . դահճապետը իր մարդիկ-
ներով վախ կը ձգէին սրբուհւոյն սիրտը .
որովհետեւ մեր կուռքերը թողիւր , քու
հայրդ մեծ թագաւորը քամահրեցիւր , կ'ը-
սէին , քու տիկնու թիւնդ ալ գետինը ձգե-
ցիւր , Կայիր քրիստոնէներու ծառայեղար
ու հայոց աշխրբիս նախատինք , անօր հա-
մար քեզ չարաչար պիտոր մեռցնենք : Ար-
քուհին երկինքը նայելով կ'աղաղակէր , տէր
Յիսուս , հասիր ինձի օգնութիւն , առ զիս
սրբերուդ մէջը խառնէ : Արքոր սպաննելու
տեղը հասան , թողէք քիչ մը , ըսաւ , որ
աղօթքի հետ ըլլամ . անոնք չիշխեցին դէմ
կենալ : Հոն աչուրները լեցուած երկինքը
նայելով արցունք թափելով աղօթք ըրաւ .
ետքը սուրբ առաքելոյն օրհնութիւնն առ-
նելով կեցաւ սպաննելու տեղը , ինքիւրմէ վի-
զը երկնցնելով ըսաւ . ըրէք հիմա ձեր հօ-
րը սատանային կամքը : Արքոր դահիճը
սուրը հանեց սրբուհին զարնելու համար ,
դահճապետը զարկաւ սպաննեց . մէկանոնք
կատղելով սուր առին ամմէնն ալ մէկէն վն-
դեցին կուսին վրայ , բայց անօր տեղը մէկ-
զմէկ զարնելով ջարդեցին . իսկ սրբուհին
աղօթքի հետ կ'ըլլար որ չի զրկուի մարտի-
րոսական պատկէն : Աղօթքին ատենը զօ-
րաց մէջէն մէկը երանելի կուսին սիրտը խօ-
թեց սուրը , գետի պէս արիւնը վազելով ,
անուշահոտութիւն բուրելով հոգին աւան-
դեց : Աղաւ սարժանք մեր ազգին , առա-

ջին վիայուհի բոլոր եկեղեցնայ մէջ, որ նա
հատակեցաւ յամի տեառն 48 կամ 50.
երկնքէն ձայներ լսուեցաւ որ զՂօտուած
կ'որհնէին. իր մարմնոյն վրայ ալ իրէք որ
իրէք գիշեր սիւն լուսոյ կ'երեւնար. աս տես-
նելով կռապաշտները, երկու հազար հոգիի
չափ դարձան քրիստոնեայ եղան, ան տե-
ղէն չէին ուզէր բաժնուիլ ինչուան որ սքն
Թաղէոս գիշեր ատեն հոն գալով անոնք
մկրտեց, սրբոյն Սանդուխտոյ մարմինն ալ
Թաղեց աներևոյթ ըրաւ, որ անհաւատնե-
րը անպատուութիւն մը չընեն, ինչուան որ
Ղօտուած ետքը յայտնեց:

Ըստ սրբուհիս եղաւ լման պարծանք հայ-
աստանեայց եկեղեցւոյ, առաջին առաքե-
լուհի մեր ազգին. մայր մեր հաւատոց:
Սուրբն Ղբգար եղաւ առաջին Թաղաւոր
քրիստոնեայ, իրեն Թողը սրբուհին Սան-
դուխտ եղաւ առաջին Թագուհի քրիստո-
նեայ, որ իր վարքովը և իր նահատակու-
թիւր զՔրիստոս կը քարոզէ. կռապաշտի
զաւակ ըլլալով՝ մէկ անգամ մըն էր միայն
որ լսեց Թաղէոս առաքելոյն բերնէն քարո-
զութիւնը. բայց ինչ լոյս հաւատոյ էր որ
ունեցաւ, ինչ սէր Քրիստոսի վրայ, ան
սէրն ալ սրահելու համար ինչ երկիւղածու-
թիւն էր որ ունեցաւ ինչուան ետքը. որ Թէ-
պէտ շատ հրաշքներ տեսաւ իր վրան, բայց
միշտ աղօթքի հետ էր որ Ղօտուած զինքը
պահէ:

ՍՐԲՈՒՀԻ ՇՈՒՇԱՆ

Ասոր անունը Վարդանուհի կի՞մ Վարդուհի էր, բայց խիստ գեղեցիկ լուսերեալ լլալուն համար Շուշան ըսուեցաւ. իրեն հայրը սուրբն Վարդան մամիկոնեան իշխանն էր որ նահատակուեցաւ : Ըս գեղեցիկ զաւակը Վազգէնայ հետ կարգեցին, որ Վրաց (կիւրճիներուն) իշխան էր ու թագաւոր ՍԺխիթայ : Շուշան որչափ որ աղուոր էր մարմնաւոր տեսքով, այնչափ ալ աղուոր էր իր սուրբ վարքովը, աստուած պաշտութեամբ առաքինութեամբ զարդարուած . բայց իր էրիկը Վազգէն չար մարդ էր : Երբոր սուրբն Վարդան նահատակուեցաւ, Վազգէն Պարսից թագաւորին առջին գնաց ուրացաւ քրիստոնէութիւնը, կրակապաշտ եղաւ ինչպէս որ էին ան ատենը Պարսիկք : Սուրբն Շուշան կատարեալ քրիստոնէայ ըլլալով լուսաւոր հաւատքով շատ տրտմեցաւ աս բանիս վրայ, սկսաւ խրատ տալ յանդիմանել, բայց չի կրնալով դարձնել՝ կտրեց իր ընկերութիւնը, ոչ կ'ուտէր ոչ կը նստէր հետը՝ սպասելով որ դարձի գայ . բայց Վազգէն աւելի չարանալով կը ջանար որ անոր ալ ուրանալ տայ քրիստոնէութիւնը . երբոր սրբուհի Շուշան կը մերժէր դէմ կը դնէր, Վազգէն սկսաւ չարչարել անհնարին ծեծելով, անօթի պահելով, նաև կապելով բանտը գնելով :

Մանկ վեց տարի չարչարելու հետեղաւ, անչափ որ՝ իրեն փափուկ մարմինը որդնուտեցաւ ան կապերէն զարնելնէրէն. չէր գիտէր Սաղգէն որ անոր սիրտը Վրիստոսի սիրովը լցուած ըլլալով, սիրով յանձն կ'առնէր մեռնիլը քան թէ Վրիստոս ուրանալը, ոչ երբէք կը ճշգոհար՝ այլ միշտ փառք կուտար Մտուծոյ. ալ չի դիմանալով Սաղգէն կատղելէն սկսաւ նախատել զինքն ալ իրեն հայրն ալ սուրբն Սարգան, աշխարհաւեր մարդու աղջիկ կանչելով զինքը: ()ը մըն ալ անանկ կատղեցաւ՝ որ միտքը մեռցընել ըլլալով լախտով (թօփուզով) վրան վաղելով զարկաւ. Սաղգէնին աղբարը վաղեց ձեռքէն փրցուց իր հարսը, ապահով տեղ մը դրաւ, բայց սրբուհին չի դիմանալով ան զարնուածքին՝ մահուան դուռը հասաւ եօթներորդ տարին. գիտնալով իր մեռնիլը՝ պատրաստութեան հետեղաւ, սուրբ խորհուրդները առաւ. իսկէք Վրիստոսի տալով որուն համար կը մեռնէր, աչքը երկինքը վերցընելով՝ Տէր Յիսուս, քու ձեռքդ հոգիս կ'աւանդեմ, ըսաւ. անանկ՝ բարի խոստովանութեամբ մեռաւ յամին 458, իբր 45 տարուան:

ՍՐԲՈՒՀԻ ՓԵՒՐՈՆԷ

Սիկայ երկու տարուան ըլլալով վանքի մը մէջ առաւ Սրբիանկ մարտապետը որուն սանն էր. և իր աղբօրն աղջիկն էր. տասնը-

ութը տարի ան վանքը կենալով, քսան տա-
րուան եղաւ երբորնա հատակուեցաւ. իրեն
քաղաքը կ'ըսուէր Ս՝ ծբին որ Սաբայ ալ կը
գրուի, Վիտղէտիանոս կայսեր ատենը որ
խիստ հալածող եղեր էր քրիստոնէից :
Նորինէ որ ան վանքին մեծաւորու հին էր,
ամմէն կերպով ջանք ըրաւ որ պղտիկուց
աղէկ կրթութե մէջ մեծցընէ իրեն Փեբ-
րոնէն. մանաւանդ երբոր իրեն մեծնալու
ատենը տեսաւ որ խիստ գեղեցիկ բարձրա-
հասակ աղջիկ մը եղաւ, որուն նման աղուոր
ու երկան չէր գտնուէր : Մտոր համար փոր-
ձութիւններէ պահուելու համար՝ մէկի մը
և ոչ կնիկ մարդու չէր ցցընէր իր երեսը .
իրեն ալ աւելի ճգնութիւն ընել կու տար .
ուրիշ մարապետներուն իրիկուընէ իրիկուն
կերակուր կու տար, Փեբրոնէայ ապսպրեր
էր երկու օրը ժում մը ուտել :

Փեբրոնէն ալ նոյն ջանքին վրայ ըլլալով՝
ինքիրմէ ճգնութիւր կ'եւելցընէր, հացն ալ
ջուրն ալ կուշտ չէր ուտէր. քնոյ ալ հան-
գըստութիւն չէր իտար, երբեմն ալ գետնի
վրայ կը պառկէր. իր գործքը եղան աղօթք
ու Մտուածաշունչ գիրքը կարդալ հասկը-
նալ. երբոր մէկ փորձութիւն մը կը բերէր
սատանան գիշերը՝ մէկէն կ'ելլէր աղօթքի
կը կենար, Մտուածաշունչը կարդալով մը-
խիթարութիւն կը գտնէր :

Մնանկով իր աղուորութեանը հետ աղէկ
ալ կարգացող ուսումնասէր խելացի աղջիկ
մը եղաւ. ամմէնն ալ վրան կը զարմանային,

աւելի Վրիոնա իր դաստիարակն ու մեծաւորութիւն. ինչուան իրեն ապսպրեց Մատուածաշունչ գիրքը կարգալ ուրիշ մարապետներուն առջին՝ աշխարհաբառ վրայէն զուրցել ուրբաթ օրերը, ինչպէս որ հին սովորութիւն էր ան վանքին մէջ: Այս որովհետեւ մենծերու կնիկներն ալ կը ժողվէին եկեղեցին Մատուածաշունչ գիրքը լսելու, Վրիոնա վարագոյր քաշել կու տար որ աշխարհական մէկ կնիկ մը չի տեսնէ Փեքրօնէն: Վայց Փեքրօնեայ աղուորութիւնը՝ իրեն աղէկ կենցաղավարութիւնը՝ աղէկ ընթերցմունքը՝ անանկ ձայն հանեց քաղքին մէջն որ Վրիա անուն մեծ տիկին մը ուզեց անիկայ տեսնելու:

Մտիկայ կուսապաշտ էր՝ բայց քրիստոնէութեան ծանօթ, մէկ մենծ եպարքոսի մը հետ կարգուած ըլլալով՝ վեց ամսէ ետեւ իր էրիկը մեռնելով որբեւարի մնացած էր. աստիկայ գնաց Վրիոնեայ աղաչեց Մատուծոյ անունին վրայ երգուրնցընելով, որ Փեքրօնեայ հետ զինքը տեսցընէ, իրեն վարդապետութիւնը լսեցընէ, ասանկով իս կրնաք շահիլ, ըսաւ, կուսապաշտութիւն ու աշխարհաունայնութենէ իսալցընել. որովհետեւ իմ ծնողքս իս նորէն կ'ուզեն երկրորդ անգամ կարգել տալ կուսապաշտի հետ, բայց ես չեմ ուզեր ասկէց ետքը մնալ ան տգիտութեան մէջ: Մը ըսելով Վրիոնեայ ոտքը կ'իյնար, կը լուանար արցունքով կ'աղաչէր: Պատասխանեց Վրիոնէ, երկու տարուան էր երբ օր

ես Փեբրոնէն ներս առի . հիմա 19 տա-
րուան է , դեռ մարդու երես չէ տեսած և
ոչ աշխարհական կնկան , և ոչ իր դայեկին
երեսը , թէպէտ դայեկը շատ հեղ լալով
ինձմէն խնդրեր է . հիմա քու հոգևոր շա-
հուդ համար քեզ հետը տեսցընեմ , բայց
պէտք է մեր մարապետի լաթը հագնիս :

Իրիոնէն ասիկայ տեսցընելէն ետև հրամ-
մեց Փեբրոնեայ Մատուածաշունչ գիրքը
կարդալու . Փեբրոնէն ասիկայ ուրիշ վանքէ
մը մարապետ կարծելով , երբոր սկսաւ հա-
մարձակ կարդալ՝ Արիային սիրտը անանկ
զղջումի մը եկաւ , անանկ շնորհքով լեցուե-
ցաւ , որ լսելէն չէր ձանձրանար , արցունքն
ալ աչքէն չէր կենար , ինչուան լուս երկուքն
ալ անքուն կեցան կարդալու հետ եղան :
Իրիոնէ առտուն հազիւ կրցաւ Արիային
հաւանեցընելու անկէց ելլել իր տունն եր-
թալ . Մատուծոյ շնորհքն անանկ շարժեց
Արիային սիրտն որ լալով ժամէն ելլելով
գնաց իր ծնողքներուն միտքը փոխեց քրիս-
տոնեայ ըլլալու : Փեբրոնէն ասոր արցունքը
զղջումը տեսնելով՝ հարցուց (Վ)ու մայիս մա-
րապետին որ Իրիոնեայ երկրորդն էր . եր-
բոր իմացաւ անոր աշխարհական ըլլալն ու
իր խաբուիլը՝ խիստ նեղացաւ , բայց հաս-
կընալով որ իր մեծաւորուհին էր անանկ ը-
նել տուած , լուս կեցաւ :

Մսկէց ետքը հիւանդուի մը եկաւ Փեբ-
րոնեայ վրայ . դեռ աղէկ մը չառողջացած
ձայն ելք . քաղքին մէջը , որ կուսարշա դա-

տաւորներ պիտի գան հոս քրիստոնեաները
տանջելու . շատ քրիստոնեաներ ինչուան
վանքի մէջ եղողները , նաև եպիսկոպոսը
փախան պահուեցան : Այս վանքին կուսանք-
ներն ալ որ 50 մը կային՝ ուղեցին փախչիլ ,
բայց Նրիոնէն չի թողաւ . վաղուան օրը
մէջերնէն Աթերիա անունով մէյմը՝ կար-
ծելով որ Փեբրոնէին հիւանդութեանը հա-
մար է՝ որ Նրիոնէն չի թողներ իրենց փախ-
չել , երկան խօսեցաւ հետը՝ պատճառներ
բերելով որ մէջերնին շատ նորահաս աղջիկ-
ներ կան , կրնան կամ փորձութեան մէջ
իյնալ , զօրաց ձեռքը իյնալ , կամ տանջան-
քին չի դիմանալով՝ հաւատքնին ուրանալ .
անոր համար աղէկը ան է որ , ըսաւ , Փե-
բրոնէն ալ հետերնիս առնելով փախչինք ,
ապրեցընէնք ան ալ՝ մեզ ամմէնքս ալ : Փեբ-
րոնէն լրաճին պէս՝ ըսաւ . ես Նրիստոսի
եմ հարսնացած , հոգիս իրեն ձեռքը յանձ-
նած , կենդանի է տէրն իմ , չեմ ելլեր աս
վանքէս , այլ հոս կը մեռնիմ հոս կը թա-
ղուիմ : Նրիոնէն պատասխան տուաւ Աթե-
րեայ . ամմէնքը թող իրենց բանը նային ,
իրենց գլխին ճարը տեսնեն , ինչպէս կ'ու-
ղեն անանկ ընեն : Այս խօսքին վրայ ամմէնքն
ալ լալով օղբով ելան գացին . Պրոկղա կոյսն
ալ ելաւ երթալու , որ Փեբրոնէայ հետ
մէկտեղ մեծցած էր , 25 տարուան աղջիկ :
Արբոր լալով Փեբրոնէի քովն եկաւ , ոտքն
ինկաւ ետքի բարևը տալու , Փեբրոնէն ձեռ-
քէն բռնեց աղաչեց որ ինքը չերթայ , մէկ-

տեղ ըլլանք չի բաժնու ինք, ըսաւ . ես դեռ
հիւանդ ըլլալով կրնամ մեռնիլ, հոս մնացիր
որ դուն իս գերեզմանը թաղես, ըսաւ . դի-
տեմ որ Վրիոնեայ դժար է, սիրար չի դի-
մանար իս թաղելու : Արօկղան խօսք տուաւ,
բայց իրիկուան գէմ վախը անանկ եւեղաւ
ամմէնուն սրտին մէջն որ ան ալ գնաց անե-
րեոյ թ եղաւ :

Ըն ատենը Վրիոնէ մեծաւորու հին տես-
նելով բոլոր վանքին պարպիլը՝ իրենց մինակ
մնալը, գետինն իյնալով կու լար Ըստուծոյ
առջին՝ աւելի Փեբրոնեայ համար . (Թու-
մայիս կոյսն ալ սիրտ կու տար անոր Ըստու-
ծոյ յանձնելու, որ ամմէն բանի կարող է,
կրնայ զօրութիւն տալ ապրեցընել : Գնաց
Վրիոնէ Փեբրոնեայ քովը, հոն ալ կու լար .
Փեբրոնէն լալուն պատճառը (Թումայիսին
կը հարցընէր . երբոր հասկըցաւ, պատաս-
խանեց . դուք աղօթք ըրէք, ըսաւ, Ըստու-
ծոյ, անիկայ կրնայ ինծի շնորհք համբերու-
թե տալու : (Թումայիս ըսաւ . ահա եկաւ .
ով որդեակ, նահատակուելուն ատենը . մեր
տարիքն անցած ըլլալով՝ ան բռնաւորները
գիտենք որ մեզ շուտով կը կորսնցընեն . բայց
դուն մնաողաչ տարիքիդ մէջն ըլլալով՝ քեզ
չատ պիտի տանջեն իրենց դին քաշելու,
նայէ չըլլայ որ միտքդ պղտորի . կուտութե-
նէն աւելի պատուական բան չի կայ . երկնա-
ւոր փեսայն Վրիստոս կեցած է մեծ վարձք
տալու, անմահութիւն պարգևելու, նայէ
որ անոր հասնիս՝ ան տեսնես :

Փեբրոնէն աս խօսքերէս աւելի սիրտ առնելով պատասխանեց. աղէկ կ'ընես որ ինձի սիրտ կու տաս. բայց թէ որ ես նահատակուելէն փախչել ուզէի, մէկաշնոնց հետ մէկտեղ կրնայի մէկ ապահով տեղ մը պահուրտիլ. մի վախնար, ես անոր կը փախաքիմ հասնելու որուն որ պղտիկութենէս իմ հողիս յանձներ եմ. ան կ'ուզեմ գտնել, անոր կարօտովը կ'եփիմ, միայն թէ ինքը իսարժանի ընէ իրեն համար արիւնս թափելու: Վրիոնէն ասոր խօսքին վրայ ուրախանալով, անանկով սկսաւ խրատ տալ. տէս որդեակ, ըսաւ, յիշէ ինչպէս քեզ պղտիկ տղայ երկու տարուան քովս առեր պահեր եմ, հիմա եկաւ ատենն որ իմ աշխատանքիս պտուղը պարապ չի հանես. յիշէ առջինահատակները որոնց քաջութեանը վրայ դուն ալ կը զմայլէիր, դուն ալ կը պատմէիր, ամ մէնքն ալ արք և կանայք և աղջկունք ինչպէս արիւթեամբ մարտիրոս եղան, յաղթութեան պսակը Վրիտոսէ առին: Մասնկ յորդորակներ խօսելով՝ աղօթք ընելով բոլոր ան գիշերը անցուցին: Աղուան օրը առտու եղածին պէս՝ խռովութիւնը լեցուեցաւ քաղքին մէջ. Սելինոս և Միւսիմաքոս Վիոկղեօիանոս կայսերմէն խորհուած՝ սկսան քրիստոնէաները բռնել կապել, բանտը դնել: Սելինոս լսեց Փեբրոնեայի վանքին համար, հոն ալ զօրք խորհեց, որ դուռը կոտրելով ներս մտան, Վրիոնան բռնեցին կ'ուզէին սպաննել: Փեբրո-

նէն տեսածին պէս՝ աղաչեց զինուորներուն որ առաջ զինքը սպաննեն, ետքը Տրիտնան, որպէս զի անոր մեռնիլը չի տեսնէ :

Բայց Վիսիմաքոսին մայրը քրիստոնեայ ըլլալով, խրատուած էր մօրմէն, չի չարչարել քրիստոնեաները, այլ մանաւանդ օգնել. անոր համար Վիսիմաքոս Պրիմոս կոմար վանքը խրկեց՝ որ իրեն քեռորդին ըլլալով իր զօրքին վրայ գլուխ էր դրած, որպէս զի երթայ օգնութիւն ընէ մարապետներուն : Պրիմոս երբոր եկաւ տեսաւ, զինուորները դուրս հանեց, Տրիտնայի աչպրսպրեց որ մէկալնանց պէս իրենք ալ փախչին : Եկաւ պատմեց Վիսիմաքոսի ամմէն բան. մէջինները ամմէնն ալ փախեր էին, ըսաւ, միայն երկու պառաւ մնացեր էին, մէյմըն ալ աղջիկ մը, բայց անանկ գեղեցիկ որ՝ անոր նմանը չեմ տեսած, տէր իմ, քանի որ ծներ եմ. ասիկայ լման քեզի արժան է կին առնելու, թէ որ յանձ չառնէ՝ ան ա տենը մեռցուր : Վիսիմաքոս պատասխան տուաւ. ես մօրմէս ապրսպրուած եմ քրիստոնեաները չի մեռցրնել, այլ սէր ցցրնել, անոր համար կ'աղաչեմ, ըսաւ, վանքէն դուրս հանէ անոնք, չըլլայ որ անողորմ Սելինոսին ձեռքն իյնան, որ իրեն հօրեղբայրն էր : Ըս բանս զինուորներէն մէկը լսելով Սելինոսին անկաճը հասուց, Սելինոս բարկանալով զօրք խրկեց վանքը որ չի փախչին, վաղուան օրն ալ իր սողին բերել տուաւ Փեբրոնէն, ձեռքը վիզը շղթայ ձգած :

Իրիոնան ու թուամայիս աղաչեցին զինուորներուն որ իրենք ալ մէկտեղ տանին . երբոր չի տարին, որովհետեւ հրամանը միայն Փեբրոնեայ համար էր, շատ յորդորեցին խրատ տուին Փեբրոնեայ որ քաջութեամբ դիմանայ, ինչ տանջանք որ տան կռապաշտները սիրով քաչէ : Փեբրոնէն հոգւով սրբբով լցուած՝ յուսամ Մատուծոյ որ, ըսաւ կը լսէք իմ նահատակութիւնս ու կ'ուրախանաք . աս ըսելով իրենց օրհնութիւն աղօթքը առնելով դուրս ելաւ . բայց թուամային սիրտը չի դիմացաւ . իրեն ետեւէն գնաց աշխարհական կնկան հագուստ հագնելով : Աերոյիշեալ Լըրիա տիկինն ալ լսելով որ իր սիրական Փեբրոնէն բռնուեր է՝ խելքը գլխէն գնաց . շատ արցունք թափելով՝ իր ծնողքէն հրաման առնելով գնաց որ աչքովը տեսնէ :

Երբոր Սելինոս ու Սիւսիմաքոս ատեան նստան դատաստան կտրելու, շատ բազմութիւն ժողովուեցան, տեսնելով անանկ ծանր շղթաները շնորհալի աղջկանը վրայ՝ ամմէնն ալ կու լային : Իրեն հարցրնէն ետեւ ով ես, ինչ ես, ետքը Սելինոս ըսաւ իրեն . Փեբրոնէ, կը տեսնե՞ս աս Սիւսիմաքոսը, թէպէտ Արոսիորայի աղջկանը նշանած է, բայց դուն խօսք տուր, քեզ իրեն հետ նըշանել կու տամ որ քեզի պէս գեղեցիկ մարդ է . աղքատութիւնդ մի հոգար, ես զաւակ չունենալէս՝ քեզ զաւակ կ'ընեմ, հայր կ'ըլլամ, իմ ամմէն ապրանքս քեզի կու տամ .

լսող կնիկները քեզի պիտոր երնէկ կարդան .
Վիոկղետիանոս կայսրն ալ խիստ պիտոր
ուրախանայ , շատ պարգևներ կու տայ . ար-
դէն խօսք տուեր էր Վիւսիմաքոսի կուսա-
կալ ընելու զինքը : Մի խօսքերը կ'ըսէր ան
կռապաշտը , չէր գիտէր որ ուր հոգին սուրբ
նստեր է , հոն ամմէն երկրաւոր մեծութի
ոչինչ ըսել է :

Պատասխան տուաւ սուրբ կոյսն Փե-
բրոնէ համարձակ . իմ հարսնիքս երկինքն
է , երկնային թագաւորութիւնը իմ ա-
պրանքս ու երկնաւոր թագաւորը իմ փե-
սաս է , պարապ տեղը մի յոգնիր . ոչ ա-
նանկ խոստմունքներով և ոչ վախցընելով
կրնաս իմ սիրտս փոխել : Մի խօսքին վրայ
խիստ բարկանալով Սելինոս՝ պատրուտել
տուաւ հագած լաթերը , բզբքտած զգեստ
մը վրան ձգել տուաւ . գոնէ ինքիրմէդ
ամէնաս , ըսաւ , ասանկ խայտառակուիլդ
տեսնելով , որովհետեւ չուզէցիր ան փառքն
որ ես խոստացայ : Փեբրոնէ պատասխան
տուաւ . ես չէ թէ միայն ասոր , այլ նաև
տանջանքներ քաշելու պատրաստ եմ : Սե-
լինոս բարկանալով՝ չորս դահիճներու
հրամմեց չորս դիացէն չորս ցցի վրայ կա-
պել , տակէն կրակ տալ , կողերուն ալ զար-
նել :

Մնանկ ծանր եղաւ աս տանջանքն որ եր-
կու դիացէն գետի պէս կը վազէր արիւնը ,
տեսնողներուն սիրտը չի դիմանալով կը
կանչէին որ խղճայ աս աղջկանը վրայ : Այր-

բոր տեսաւ Սելինոս որ սուրբ կուսին մար
մինը պատառ պատառ արիւն թաթախ գե-
տինը կ'իյնար, ապուրեց դահիճներուն
դադրիլ, ինքն ալ դահիճներն ալ մեռած
կարծելով կրակին վրայէն դուրս ձգեցին.
Հոն Թումայիսն ալ Արիան ալ բարձր ձայ-
նով կու լային: Փեբրոնէն Արիային ձայնը
առնելով՝ աղաչեց զինուորներուն ջուր զար-
նել երեսին որ մեռածի պէս ընկած էր. ու-
զեց հետը խօսիլ, բայց Սելինոս չի թողաւ.
իր առջին բերել տուաւ, տեսնելով որ ա-
մուր կեցած է իր մտքին վրայ, հրամանեց
կախել, երկրթով կողերը քերթել, կրակ
ալ մօտիկընել ինչուան որ ոսկորները ե-
րին: Այն անգամուն դահիճները առջինէն
աւելի տանջեցին սուրբն Փեբրոնէ, որ ա-
ջուրները վեր վերցուցած կ'ըսէր. հասիր,
տէր իմ, հասիր օգնէ ինձի: Այլ ըսելով
կեցաւ լռեց, շունչ չէր մնացեր վրան տան-
ջանքին սաստիութենէն, կրակին տաքու-
թենէն ինքն ալ կ'երուէր կը փոջորուէր:
Տեսնողներուն սիրտը չի դիմանալով որը փա-
խան, իրն ալ աղաղակելով դատաւորը կը
բռնադատէին տանջանքը վերջացրնելու:
Դատաւորը կրակը մէկդի առնել տուաւ,
բայց հանգիստ առնել չէր իտար. կախուած
տեղը նորէն կը հարցընէր: Տեսնելով որ
որբուհին ուժ չունի պատասխանելու, ին-
ջեցուց մէկ ցցի մը կապել տուաւ. աս պիղծ
թշուառականն, ըսաւ, ինձի չուզեց պա-
տասխան տալու, լեզուն կտրուի, թող ա-

նանկ կրակը ձգուի : Սուրբ կոյսը ինքիրմէ
հանեց լեզուն , աղաչեց որ շուտով կտրեն .
բայց հոն եղող ամէն բազմութիւնը մէկ
բերան երդուընցընել սկսան Սեւինոս դա-
տաւորն որ կտրել չի տայ . անգութ Սե-
ւինոսը լեզուին տեղը ահռաները հանել
հրամեց :

Արբոր ահռաները կը հանելին , արիւնը
գետի պէս կը վազէր բերնէն , մարմնուք ե-
կաւ սրբոյն վրայ . ան ատենը վերջացընել
հրամեց , դեղ ալ տուաւ արիւնը դադրե-
ցընելու , բայց նորէն կը ստիպէր կը բռնա-
դատէր Սեւինոս կուռքերը ընդունելու :
Սրբուհին սիրտը Աստուծոյ սիրով լցուած
ըլլալով , քանի մէկ կ'ուշացընէս , ըսաւ , իս
անդին խրկելու , շուտով հանէ իս աս ողոր-
մելի աշխրբէս՝ որ երթամ իմ սիրելի ստեղ-
ծողս տեսնեմ , որ իս կ'ուզէ : Աս գիտեմ ,
ըսաւ , Սեւինոս , դեռ մանկութեան ուժն ու
անամօթութիւնը վրայդ ունիս , կը դիմա-
նաս , բայց ես սրով ու կրակով պիտոր մա-
շեմ քու մարմինդ :

Արբոր սրբուհին սաստիկ տանջանքէն չի
կրցաւ ասկէց ետքը պատախան տալ , Սե-
ւինոս ալ աւելի սրդողելով հրամեց ծիծերը
կտրելու . երբոր սուրը բռնած կ'ուզէին կրտ-
րել , հոն եղող ամէն ժողովուրդը սրտեր-
նին չի դիմանալով սկսան աղաչել Սեւինոսը՝
որ ասանկ տղայ աղջկան աս տանջանքը չի
տայ . բայց թշուառականը մտիկ չըբաւ :

Արբոր կը կտրէին , սրբուհին դէպ'ի վեր

երկինքը նայելով կանչեց, տէր իմ Յիսուս, տես նայէ առ բռնու թեանս վրայ, թող տուր որ հոգիս քեզի աւանդեմ, քովդ գամ. աս ըսելով՝ ալ չի կրցաւ բերանը բանալու : Կտրելէն ետև Սելինոս հրամեց կրակ մօտիկցնել կուրծքին, անանկ որ կը խորվուէր . տեսնողներէն շատը չի կրնալով դիմանալ՝ մէկդի գացին, նզովեալ ըլլայ ըսելով Գիօկղեաիանոսն ալ իրեն կուռքերն ալ : Թուժայիս ու Արիա որովհետև հոն էին, աղջիկ մը խրկեցին վանքը պատմելու Քրիստոսայի ինչ որ քաշեց սրբուհին Փեբրոնէ իր հոգևոր զաւակը Քրիստոսի համար, աղաչելով որ բազկատարած Լստուծոյ աղաչէ շնորհք համբերու թեան խնդրէ դիմանալու ասանկ սոսկալի տանջանքներու : Լն ալ լսելով՝ մէկդիէն կու լար, ուր ես որդեակ իմ Փեբրոնէ՝ կ'ըսէր, մէկալ դիացէն ալ ուրախանալով իրեն համբերու թեանը վրայ, աղօթք կ'ընէր որ հոգին սուրբ զօրու թիւն տայ, աչքովը տեսնէ իր հոգևոր աղջկան նահատակուիլը, սուրբերուն մէջ անցնիլը :

Սելինոս դատաւորը հրամեց ցցին վրայ կապուելէն արձրկել . երբոր արձրկեցին՝ սրբուհին Փեբրոնէ անչափ ուժէ ընկած էր որ ալ չէր կրնար ոտքի վրայ կենալ . չի դիմանալէն գետինն ընկաւ : Քովի իշխանները սկսան մէջերնին փսփսալ Սելինոսին անգը թու թեանը վրայ . Արիա տիկինն ալ չի դիմանալով իր երեսին զուրցեց, ինչ անգը թու թիւն է որ կ'ընէս, առջի տանջանքնե-

րով չի կշտացանք տանջելու աս մատղաշ աղ-
ջիկը, ետքն ալ աւելի չարագործութեան
ձեռք զարկիր. չի յիշեցիր քուկին ծնանելդ,
կաթով մեծնալդ, ի՞նչպէս օտարացար մար-
դու բնութենէ, ի՞նչպէս չողորմեցար. բայց
ինչպէս որ դուն չի խղճացիր ասոր, անանկ
ալ երկնաւոր թագաւորը քեզի չի խղճայ
պիտոր: Ըստ խօսքերուն վրայ Սելինոսին սիր-
տը գութ շարժելուն տեղը՝ ալ աւելի խըս-
տանալով ուզեց որ Երիւան ալ բռնել տայ:
Երիւան ուրախացաւ ու աղաղակեց. Ըս-
տուած Փեբրոնայի, ըսաւ, իս ալ որ հե-
թանոս մըն եմ, Փեբրոնեայ հետ մէկտեղ
ընդունէ. բայց Սելինոսին քովիները թող
չի տուին. թէ որ Երիւան ալ խօսեցընել
տաս, ըսին, շատ մարդ քրիստոնեայ կ'ըլ-
լան, քաղաքը տակնուվրայ կըլլայ: Ընոր
համար ըսաւ իրեն Սելինոս, աւելի տան-
ջանք տալու պատճառ եղար:

Ըստ ըսելով կտրել հրամայեց Փեբրոնեայ
երկու ձեռքն ու մէկ ոտքը. բայց դահիճ-
ները չի կրնալով իրեն աջ ոտքը մէկ երկու
զարնելով կտրել, մեծ աղաղակ ելաւ տես-
նողներուն մէջ. երրորդ անգամ զարնելով
կտրեցին: Ընոր ցաւէն սրբուհւոյն մարմի-
նը բոլորովին դող ելաւ, մօտիկ էր հողին
աւանդելու, բայց կը ջանար որ մէկալ ոտքն
ալ երկնցընէ, նշանով կը հասկըցընէր դա-
հիճներուն որ ան ալ կտրեն. այնչափ էր
իրեն սէրը Վրիստոսի համար տանջանք
քաշելու:

Սեւինոս տեսնելով իրեն սէրը մեռնելու վրայ՝ գլուխը կը շարժէր կատղելէն . բարկանալով ապսպրեց դահճին մէկալ ոտքն ալ կտրել, անանկով ձեռքէ ոտքէ կտրուած մնաց երանելի կոյսն, Յիսուսի սիրոյն կենդանի պատարագ եղաւ : Սիւսիմաքոս կը յորդորէր Սեւինոսը հացի երթալ, ուտելու ատենն է ըսելով . անգուժ Սեւինոսը կը սպասէր՝ որ աչքովը տեսնէ հոգին աւանդելը . տեսնելով որ չի մեռնիր՝ հրամայեց գլուխը կտրել . զինուորները մազերէն բռնելով սուրը վզին վրայ դնելով ոչխարի պէս անանկ մորթեցին սուրբ Փեբրոնէ կոյսը :

Արքոր իշխանները գնացին հաց ուտելու, քրիստոնեաները ուզեցին մարմինը վերցընելու . բայց զինուորները զգուշութեամբ պահելով թող չի տուին, ինչպէս որ ապրսպրեր էր իրենց Սիւսիմաքոս՝ որ տրտմութենէն հաց չի կերաւ, ջուր չի խմեց . մէկ խուցի մը մէջ փոցուելով կու լար Փեբրոնեայ մահը : Սեւինոս աս բանս իմանալով, ինքն ալ կերակուր չի կերաւ, կատղելէն իր պալատին բակը կը քալէր . բայց քալելնինի մէկ մեծ նշան մը տեսաւ երկինքը, որուն վրայ զարմացած մնալով երկան ատեն խելքը կորսընցուց . խենթի պէս ասպիս անդին վազելով, գլուխը սեան մը զարկաւ սրտուեց . գետինն ընկած զարհուրելի ձայն կը հանէր, ինչուան որ թշուառականը հոգին փչեց :

Այ տեսնելով ժողովրդեան մէջ մեծ

չնկոց ելաւ . Վիսիմաքոս լսելով դուրս
վազեց , երբոր հասկըցաւ՝ գլուխը շարժե-
լով զարմացած մնալով՝ ըսաւ , մեծ է քրիս-
տոնէից Մատուածը՝ որ Փեբրոնեայ անմեղ
արեան վրէժն առաւ . հրամեց Սելինոսը
թաղել , Պոխմոս կոմսին ալ ապսպրեց ան-
փուտ փայտէ սնտուկ մը շինել , Փեբրոնեայ
մարմինը հոն դնելով իրեն վանքը տանել
թաղելու . ամէնուն ալ քարոզ կարդալ որ
քրիստոնէաները համարձակ զան անոր
թաղման , միայն իրեն մարմինէն ահուայ մըն
ալ չի վերցընեն :

Մնանկ ըրաւ Պոխմոս կոմսը , բազմու-
թեամբ զօրաց մարմինը վերցընել տուաւ .
իսկ կտրուած գլուխն ու ձեռու ըններն օտուը-
ները՝ իրեն զգեստին մէջը ժողվելով ինքը
տարաւ վանքը . ճամբան շատ բազմու թիւն
իրար զիրար հրելով կ'ուզէին մէկ կտոր մը
նշխարքներէն առնել , բայց զօրքը թուրեր
խաղցընելով վրանին՝ հազիւ կրցաւ մարմի-
նը ամբողջ վանքը խօթել . մարդ մը ներս
չի թողին , միայն Վուամայիսն ու Արիա տի-
կինը :

Արբոր Սրիոնա տեսաւ իրեն սիրելի օա-
նը ազնիւ Փեբրոնէն կտոր կտոր եղած ,
սաստիկ ցաւէն անշունչ մնաց . ետքը իրեն
քովը գալով սուրբ նշխարքներուն վրայ իյ-
նալով սկսաւ ողբալ . վայ ինձի , ըսաւ , որ-
դեակ իմ Փեբրոնէ , իս թողիր զատուեցար ,
հիմա ո՞վ պիտոր կարդայ Մատուածաշունչ
գիրքը : Մի ատենը վրայ հասան , փախած

կուսանքն ալ եկան , Փեքրոնեայ վրայ իյնալով կու լային . մէկդիէն իրեն երանի կու տային , մէկալ դիացէն իրենց վայ կու տային , անանկ ազնիւ սուրբէն բաժնուէնուն համար :

Երիան կ'աղաղակէր , թող տուր որ պագնեմ ան սուրբ ոտուըներն որ օձին գլուխը կոխեցին , պագնեմ ան խոցերն որ իմ խոցերս բժշկեցին : Երիոնան կը կանչէր , որ դեակ իմ Փեքրոնէ , եկաւ աղօթքի ատեննիս , ելիր դուն ալ մէկտեղ աղօթք ըրէ ինչպէս որ միշտ կ'ընէիր . աս ըսելով կու լային կ'ողբային իրենց սիրական քոյրը , կը լուանային սուրբ մարմինը՝ որ Յիսուսի սիրոյն համար արեան մէջ էր թաթխուած . կտորուանքը քովէքով դնելով պատեցին . ետքը վանքին դուռը բացին :

Ըն ատենը հոն լեցուեցան ամմէնը . տեսնելով աս սքանչելի նահատակը կը զարմանային , միայն իրենց զատուիլը կու լային . շատ կրօնաւորներ ալ հոն եկան , նաև եպիսկոպոսը , գիշերնիլոյս հսկում ընելով զԸստուած կը փառաւորէին : Ըն ատենը Ելուսիմաքոս իրեն կանչեց Պռիմոսն ու ըսաւ . ես կը թողում կուապաշտութիւնը , ամմէն ապրանքս ալ մեծութիւնս ալ , Երիստոսի միայն կը հաւատամ . ասանկ ալ ըսաւ Պռիմոս : Ընանկով երկուքն ալ վանքը եկան ժողովրդեան հետ խառնուեցան :

Երբոր առտու եղաւ , սրբոյն տապանը երևելի տեղ բերին դրին , ժողովուրդը եղ

ու խառնկ բերելով սրբոյն մարմնոյն վրայ ան-
չափ կը լեցընէին որ ծածկուեցաւ : Այս-
կոպտսը աղօթքները ընելէն ետե՛ կ'աղա-
չէր ժողովուրդը մէկդին քաշուիլ որ գոցեն
սնտուկը , աղօթարանին մէջ դնեն . բայց
ժողովուրդը մեծաձայն կը կանչէր որ բաց
մնայ տապանը . ինչ որ ըսաւ եպիսկոպոսը և
ուրիշ եկեղեցականները՝ ամենեւին մտիկ չը-
րին . բայց ետքը երբոր Մարիանան բարձր
տեղ մը ելլելով ըսաւ , կ'աղաչեմ թողէք
իմ զաւկիս որ սուրբ տեղը երթայ հանգչի ,
ան ատենը թողուցին : Առապաշտներէն շատ
մարդ հաւատացին ու մկրտուեցան . ինչպէս
որ մկրտուեցան նաև Սուրբ Գրիգորի մասնաբոսն ու Պառի-
մոս կոմսը . ու աշխարհք թողնելով դնացին
կրօնաւոր եղան . զինուորներէն ալ շատ հո-
գի մկրտուեցան . նաև Արիա տիկինը իրեն
ամմէն ընտանեօքը մկրտուելով աղաչեց
Մարիանայ որ սրբոյն Փեբրոնեայ տեղը զինքն
ընդունի . անանկով վանքը մտաւ , իրեն ոս-
կի մարգրտէ զարդերը տուաւ որ սրբոյն տա-
պանը զարդարեն :

Արբոր սրբոյն Փեբրոնեայ յիշատակին
օրը կու գար , կէս գիշերուն աղօթքի ատեն
ամմէն կուսանք կը տեսնէին որ սուրբն Փե-
բրոնէ իրեն տեղը կեցած եկեղեցնայ մէջ
իրենց հետ մէկտեղ աղօթք կ'ընէր . առջի
անդամուն երբոր տեսան , Մարիանա չի դի-
մանալով՝ ահա իմ օրդեակս Փեբրոնէ կան-
չելով՝ վազեց որ դրկէ , բայց անիկայ նոյն
ատենը աներևոյթ եղաւ , անոր համար ու

ըիչ անգամներուն երբոր կ'երևնար իր յիշատակին օրը, մէկը չէր համարձակէր ձայն հանել, այլ ուրախութենէն կու լային :

Ապիսկոպոսը փառաւոր տաճար մը շինեց սրբոյն Փեբրոնեայ անունով՝ որ վեց տարուան մէջ լմրնցաւ . ուրիշ եպիսկոպոսներ ալ կանչելով օրհնեց . ետև գացին իր վանքը աղաչեցին Վրիոնայ, որ թողու սուրբ մարմինը տանին զնեն ան եկեղեցնայ մէջ . բայց ինչ որ ըսին՝ ամմէն կուսանք դէմ կեցան . իսկ Վրիոնան ըսաւ . թէ որ ասանկէ սուրբ նահատակին կամքը, ես ո՞վ եմ որ արդիլեմ : Արիա տիկինը ասոր վրայ խիստ շփոթելով կու լար կ'ողբար կ'աղաչէր Վրիոնայ որ թող չի տայ . բայց Վրիոնա ըսաւ անոր . շատ մի ցաւ իր, թէ որ ինքը սուրբը կ'ուզէ՝ կ'երթայ, թէ որ չէ՝ չերթար : Աս իրաւ ըսածին պէս եղաւ . երբոր աղօթքը ընելէն ետև եպիսկոպոսները կ'ուզէին տապանը վերցընել, անանկ սաստիկ որոտման ձայն մը եկաւ գետնէն՝ որ ամմէնը գետինն ընկան : Աորէն ուզեցին վերցընելու, նորէն ան ձայները լսեցին, անանկ կ'երևնար սրբօրը գետինը պիտոր պատուէր : Ըն ատենը հասկընալով սրբոյն կամքը աղաչեցին Վրիոնայ՝ որ գոնէ իրեն կարուած նշխարքներէն մէկը տայ : Արբոր Վրիոնա սնտուկը բացաւ, արևու պէս ճառագայթ կը ցլար սրբոյն նշխարքներէն . երկնցաւ որ կարուած ձեռքը առնէ, իր ձեռքը բռնուեցաւ, աղաչելով սրբոյն հազիւ ձեռքը արձրկուեցաւ :

դուրս հանեց : Աորէն աղաչելով սրբոյն՝ ա-
կուային մէկն առաւ եպիսկոպոսին տուաւ .
անիկայ մեծ թափօրով տարին , նոր ժամուն
մէջը դրին , ուր շատ բժշկութիւն տեսան
ցաւագարներուն վրայ :

Ըստ ազնիւ սրբոյն Փեբրոնեայ կատարումն
եղաւ չորս հինգ տարի սուրբ հախիսի
մեանցմէ ետեւ . իրեն եկեղեցնայ շինութիւն
ալ կ'երևնայ որ՝ սուրբ Յակոբ Մծբնայ
հայրապետին շինուած էր : Երիտնա մեծա-
ւորուհին եկեղեցին շինելէն երկու տարի
ետեւ մեռաւ . անոր տեղը մեծաւորուհի ե-
ղաւ Առումայիս , որ տեղնիտեղը գրեց սրբ-
բուհւոյն վարքը , որ բարեխօս ու պաշտպան
է ամմէն քրիստոնէից իրեն բազմաչարչար
նահատակութեանը համար , որուն վարքը
միայն կարգալը կը բերէ ատելութիւն ու
գանել մը աշխրբիս մեծութեան ու փար-
թամութեան վրայ՝ որ են ունայնութիւն ,
կը բերէ սէր : Յիսուսի վրայ՝ որ է նոյն ինքն
ճշմարտութիւն :

Ընչ շնորհք էր Ըստուածային՝ որ պրզ-
տիկուց անանկ տեղ , անանկ պարագաներու
մէջ մեծցաւ՝ որ ամենեւին մեղքի մէջ չըն-
կաւ առիթ մը չունենալով . բայց ինքը իբր
մեղաւոր , իբրև ապաշխարող խիստ ճգնու-
թիւններու հետ եղաւ . ետքն ալ խիստ
տանջանքով արիւնը թափեց , իր վարքովը
յըցուց ինչ աղէկ բան է եղեր պղտիկուց չի
տեսցնել ուրիշներուն հետ :

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

Կեսարիոյ կողմերը ծնաւ, Ռարաշամու երկիրը մեծցաւ՝ որ է Պաղեստին, ուսկից էր իր մայրը. հոն հռոմայեցւոց զինուոր գրուեցաւ ան գունդին մէջ՝ որ անյաղթից գունդ կ'ըսուէր. իրեն գովելի վարքովը քաջութեամբը առաջ հազարապետ եղաւ, ետքը նաև կոմս, որ մեծ պատիւ էր: Ռայց ան ատենուան կայսրը 'Վիոկղետիանոս' հրաման հանեց ուր որ քրիստոնէայք գրտնուին, ամմէնուն ալ տանջանք տան՝ կռապաշտութիւնը ընդունել տան, ո՛վ որ չի դառնայ՝ չարաչար մեռցընեն:

Սուրբն Վէորգ որ բարեպաշտութեամբ առաքինութեամբ մեծցած քրիստոնէայ էր՝ աս հրամանը լսելով խիստ կ'եփէր սիրտը, կը բաղձար կամ կռապաշտները դարձընել, հալածումը դադրեցընել, կամ մարտիրոսանալ, Վքրիստոսի համար իր արիւնը թափել: Ըս մտքով ինքիրմէ կայսեր առջևն ելաւ, իր քրիստոնէութիւնը յայտնեց, կռապաշտութեան տգիտութիւնը հասկըցուց, ու քրիստոնէաները ջատագովելով՝ ըրած հալածումնին անիրաւ ըլլալը ցցուց: Մագնենտիոս՝ որ թագաւորին երկրորդն էր, զարմանալով մը ասոր երեսը նայեցաւ, հարցուց իրեն անունը, ինչ մարդ ըլլալը:

Պատասխան տուաւ սուրբը . ես քրիստո-
նեայ եմ, իմ անունս Վէորգ է, ըսաւ :

Իսկ Վիոկղէտիանոս կայսրը որ աղէկ կը
ճանչնար՝ ըսաւ . մենք դիտէինք որ խելացի
ու քաջ մարդ մըն էս , անոր համար մեզնէ
փառք պատիւ դտեր էս . անանկ է նէ հիմա
պէտքը չէ որ մեր հրամանը անարգես , այլ
զոհէ մեր կուռքերուն որ աւելի պատիւ
տեսնես : Պատասխան տուաւ սուրբը . Թա-
գաւոր , աղէկը ան կ'ըլլար որ դուն ինծի
լսէիր , ճշմարիտ Մատուծը ճանչնայիր .
քու իշխանութիւնդ ժամանակ մըն է , քու
խոստմունքդ չեն կրնար իս խախտել . քեզի
ըլլայ քու խոստմունքդ , էս Վրիստոս ու-
նիմ երկնաւոր Թագաւորը՝ որ ինծի փառք
ու յաղթութիւն կու տայ : Վիոկղէտիանոս
բարկանալով հրամեց կախել անիկայ , զար-
նելով աղլքները Թափել : Արբոր գեղար-
դով (մըզըախով) զարկին , արիւնը ցաթ-
կեց , բայց գեղարդը մամի պէս ծալուեցաւ :
Վիոկղէտիանոս աւելի բարկանալով բան-
տը դնել տուաւ , ոտքը շղթայ զարնել և
կուրծքին վրայ ալ անանկ մեծ քար մը
դնել տուաւ՝ որ չորս մարդ հազիւ կրցան
վերցընել :

Սուրբն Վէորգ աս տանջանքները քա-
շելու ատենը միշտ զոհանալու հետ կ'ըլլար,
փառք կու տար Մատուծոյ : Վիոկղէտիանոս
սատանային հնարքովը նոր անիւ մը շինել
տուաւ ամմէն դիպցէն սուրեր խօթած . սքը
տեսաւ , օգնութիւն խնդրեց Մատուծմէ .

երբոր մէջը ձգեցին, ամմէն մարմինը չարա-
չար կոտորատուեցաւ: Վիտիզէտիանոս տես-
նելով անանկ սեպեց որ մեռաւ, աղաղակեց.
տեսէք ամմէնքդ ալ՝ որ մեր կուռքերէն ու-
րիշ Մատուած չի կայ, ուր է Վէորգին Մա-
տուածը, ինչո՞ւ չեկաւ փրկելու իմ ձեռքէս:
Մը ըսելով ինքը գնաց հաց ուտելու. եր-
բոր 10 ժամ եղաւ, որոտման պէս ձայն ե-
կաւ երկնքէն. մի վախնար զօրացիր, ով
Վէորգ. շատ մարդ քու ձեռքովդ պիտի
դառնան, քրիստոնէայ ըլլան:

Մը ձայնը լսելով դահիճները փախան,
մեծ է Մատուածն քրիստոնէից ըսելով.
հրեշտակ Մատուծոյ իջնալով խալըսցուց
Վէորգն ալ տանջանքէն, իրէն մարմինը
ողջընցուց, սիրտ տուաւ ըսելով՝ ուրախ կե-
ցիր, կատարեալ պսակը խոստովանուած եան
սոր առնես:

Սուրբն Վէորգ ուրախանալով սաղմոս-
ներ ըսելով եկաւ դտաւ Վիտիզէտիանոս
կայսրը ու Սագնենտիոսը ան տեղն որ Մ-
պողոսի պատկերի առջին զոհ պիտի մատու-
ցանէին. տես, Թագաւոր, հասկըցիր ըսաւ,
դուն ան տանջանքը իս կորսնցընելու համար
պատրաստեցիր, բայց իմ Մատուածս իս
փրկեց. հասկըցիր որ մօլորեալ ես կուռքերու
զոհելով: Վիտիզէտիանոս նայելով՝ ով ես
դուն, ըսաւ: Ես եմ, ըսաւ, Վէորգը որ
իս ան տանջանքին մէջ մեռած սեպեցիր:
Շատ հեղ կը դառնար վրան կը նայէր
Թագաւորը՝ արդեօք ան է մի ըսելով:

Մագնէնտիոս շէր հաւատար, կ'ըսէր որ անոր նմանն է: Սուրբը նորէն ըսաւ. ես եմ Վէորգ ծառայ Քրիստոսի, հաւատացէք որ Քրիստոս մեռեալներն ալ կը յարուցանէ ով որ իրեն կը յուսայ:

Երբոր ասանկ ողջ առողջ տեսան երկու զօրապետները Մնատուիոս ու Պրոտուէոն, իրենց ամմէն ընտանեօքը դարձան քրիստոնէայ եղան ազազակելով՝ մեծ է քրիստոնէից Մատուածը: Թագաւորը լսածին պէս՝ հրամմեց քաղքէն դուրս տանել ամմէնն ալ անապատ տեղուանք, հոն սրով սպաննել: Բայց Մղէքսանդրիէ Թագուհին ալ լսելով հաւատաց, համարձակ զՔրիստոս կը խոստովանէր. Թագաւորը անոր վրայ խիստ բարկանալով՝ ողջ ողջ հրամմեց կրի (քիրէճի) փոսին մէջը ձգել Թաղել սուրբ Վէորգը. իրէք օրէն ետե հրամմեց անոր ոսկորները հանել ան կրին մէջէն կորսնցընել՝ որ մէկը չիմանայ. բայց երբոր կիրը դուրս հանեցին, ոսկորներուն տեղը սուրբը գտան ողջանդամ կեցած. ան ատենը ամմէն տեսնողները ազազակեցին՝ մեծ է Մատուածն քրիստոնէից. Թագուհին ալ հոն գալով նոյնպէս կ'ազազակէր. ան տեսնելով հանող զինուորներն ալ դարձան քրիստոնէա եղան:

Թագաւորը լսածին պէս՝ առջին բերել տուաւ հարցուց. ըսէ մեզի ով քեզ ողջնուցուց: Պատասխանեց սուրբն Վէորգ. Թէ որ կը լսէք չէք հաւատար, բայց զիտցիւ որ

Յիսուս Վրիստոս որդին Մատուծոյ իս կը
 պահէ ամմէն տանջանքէդ որ կու տաս ին-
 ծի : Թագաւորը հրամեց երկրթէ կօշիկ-
 ներ շինել՝ լեցուն սուրերով, տաքցընել,
 տաք տաք ոտքը հագցընել, անանկ քալցը-
 նել : Սուրբը չի կրնալով քալել՝ կ'ըսէր ին-
 քիրեն . քալէ, ով Վէորգ . աս ըսելով, ար-
 ցունք թափելով աղօթք կ'ընէր . տէր իմ
 Յիսուս, դուն տուր ինծի համբերութիւն
 ինչուան ետքը դիմանալու : Չայն եկաւ
 երկնքէն . Վէորգիէ, զօրացիր, ես քեզի
 հետ եմ . և մէկէն բժշկուեցաւ իր մար-
 մինը : Թագաւորը հրամեց ան օրը բանտը
 տանել :

Աղուան օրը առջին կանչելով ըսաւ .
 ինչուան երբ ասանկ կամապաշտ ըլլաս պի-
 տոր, տանջանք քաշես, ով Վէորգ . սատա-
 նաներուն ձեռքով կախարդութիւն ընելով
 մեզ խաբէլ կը կարծես . ասկէց ետքը խօս-
 քիս եկէ, զոհէ կուռքերուն : Սուրբը ը-
 սաւ . ես Մատուծոյ օգնութեամբը ձեր
 տուած տանջանքները քաշեցի, ողջ առողջ
 մնացի, ուրիշ տանջանքներ ալ քաշելու
 պատրաստ եմ . բայց դուք ինչ յոյս ու-
 նիք որ անշունչ կուռքերուն զոհ կ'ընէք
 որ ոչինչ են . ամբնցիք Մատուած ըսել ա-
 նոնց որ անառակութեամբ կեցեր են քիչ
 մը ասին աշխրքիս մէջ, հիմա ալ յաւի-
 տեան կը տանջուին անմարելի կրակին մէջն
 որ պատրաստուած է անոնց ու անոնք պաշ-
 տողներուն : Թագաւորը հրամեց բերնին

զարնել, որ սորվի, ըսաւ, մեր կուռքերը չի նախատել. ետքն ալ մարմինը ծեծել տուաւ : Արքոր երկան ատեն կը ծեծէին, թագաւորը կանչեց՝ ինչուան էրք չես մտիկ դներ, ով թշուառական, չես զոհեր մեր կուռքերուն որ փառք պատիւ ունենաս ողջ մնաս : Պատասխանեց սուրբը. ես ամմէն օր կենդանի Մատուծոյ պատարագ օրհնութեան կը մատուցանեմ, որ զիս ձեր ձեռքէն կը փրկէ, ու երկնաւոր փառաց արժանի պիտոր ընէ. երանի թէ դուք ինծի մտիկ դընէիք, ճշմարիտ Մատուծոյ երկրպագութիւն ընէիք :

Մէկ անուանի կախարդ մը կար, Վիովդէտիանոս անիկայ կանչեց որ Վէորդը վաստրկի, միտքը փոխել տայ. կախարդը եկաւ, երկու գաւաթ դեղ պատրաստեց, թէ որ առջինը խմէ՝ միտքը պիտոր փոխէ, ըսաւ, թագաւորին հնազանդի. իսկ թէ որ երկրորդը խմէ՝ մէկէն պիտոր մեռնի : Սուրբն Վէորդ երկուքն ալ խմեց : Իսուսին անունը տալով ու խաչակնքելով. բայց ոչ միտքը փոխեց, ոչ ալ մնաս մը քաշեց : Մը բանիս վրայ խիստ զարմանալով կախարդը՝ խօսք տուաւ քրիստոնեայ ըլլալու, թէ որ շատոնցմէ մեռած մը յարուցանէ. Մագնէն տիոսն ալ խօսք տուաւ : Արքոր սուրբն Վէորդ աղօթքով յարութի առնել տուաւ, տեսնողներուն բազմութիւնը ամմէնն ալ հաւատացին. բայց թագաւորը բարկանալով՝ կախարդն ալ ու յարութիւն առածն

ալ մեռցրնել տուաւ համարձակ Վրիստոս քարոզելնուն համար, սուրբն Վեորգն ալ նորէն բանտը դնել տուաւ. ուր ամմէն նոր հաւատացեալք կը մտնէին բանտապետին ստակ տալով, իրմէ քրիստոնէութիւն կը սորվէին. հիւանդներն ալ կու գային իրմէ բժշկութիւն կը գտնէին:

Վեղացի մը տեսնելով աս հրաշքները՝ ոտքն ընկաւ աղաչեց որ իրեն կուլը ողջընցրնէ, որ իյնելով մեռեր էր: Սուրբն ըսաւ իրեն. գնա ողջ կը գտնես կուլը. երբոր գեղացին գնաց ողջ տեսաւ, նորէն դարձաւ աղաղակելով՝ մեծ է Վեորգին Մտուածը, կ'ըսէր, ես ալ անոր կը հաւատամ: Ղաւ հիճները շուտ մը բռնելով ան գեղացին՝ թագաւորին առջև բերին. թագաւորը խօսեցրնել ալ չի տալով՝ հրամեց կտոր կտոր ընել անիկայ: Վեղացին աղօթք ընել սկըսաւ. տէր իմ, չի հասայ, ըսաւ, մկրտուիլ, իմ արիւնս մկրտութեան տեղ սեպէ, Մտուած սրտագէտ ամենայնի: Արկընքէն ձայն եկաւ իրեն, անանկ կը սեպեմ, ուրախութեամբ եկէ ինձի: Թագաւորին հակըցուցին որ բաղմութիւնը բանտը երթալով քրիստոնէութիւն կը սորվին Վեորգէն, որ հիւանդներ բժշկելով ամմէնը իրեն քուլը բերել կու տայ. թագաւորը հրամեց իր առջին բերել տանջելու մտքով, բայց Մագնենտիոս քովէն ըսաւ, քրիստոնէները դժուար կը մեռնին, շատ կը հակաճառին. անոնց հետ խստութեւն երթալ չըլլար, այլ

աւելի անուշ խօսելով պատիւ խոստանալով : Սուրբն Վեորդ ճամբան սաղմնս ըսելով կերթար, Մարտի 30 փետր Էնչ նայեաց, եւ Կեր յընկերել Էնչ Գուրա : Երբոր հասաւ Թագաւորն իրեն ըսաւ . Թէ որ ինծի լտելու ըլլաս, ու Վեորդ, կուռքերուն զոհես, շատ գանձ կու տամք քեզի, շատ պատիւ, Իմին երկրորդս կ'ընեմք քեզ, մեղքընալէս կը զուրցեմ, որ ապրիս ողջ մնաս, չէ Թէ ինծի մտիկ չի դնելով չարաչար մեռնիս : Սուրբն Վեորդ հեգնելով ըսաւ . հիմա աղէկ կը խօսիս, ինչո՞ւ առաջ չըսիր, այսչափ չարչարելէն ետեւ կը զուրցես : Թագաւորն ըսաւ . ինծի շնորհէ, կուռքերուն զոհէ, պատիւ կը գանես ինծմէ . սուրբն Վեորդ ըսաւ . որովհետեւ ինծի համար զղջացար, քու կամքդ կը կատարեմ, ո՞ր են կուռքերը՝ հոն երթանք : Թագաւորը խաբուելով ասոր խօսքէն՝ խիստ ուրախացաւ . ամմէն մենծերուն հրամմեց տաճարն երթալ . ամմէնուն հռչակեց Թէ գալիլիացոց խորհրդակից Վեորդը Մարտի 30 փետր կուռքին զոհ պիտի մատուցանէ . ամմէն կուռքապաշտները սկսան ուրախանալ, Մարտի 30 փետր գոյլէլ, Թագաւորին բարի մաղթել :

Երբոր ամմէնքը տաճարը մտան, հրամմեց Թագաւորը ամմէնուն ալ լուել . սուրբն Վեորդ մէջ տեղը կենալով Մարտի 30 փետր կերին վրայ նայելով ըսաւ . քեզի կ'ընեմ զուրցէ, գուն Մարտի 30 փետր եւ Թէ չէ, պէտք է զքեզ պաշտել Թէ չէ : Մն ատենը մէջի

եղած սատանան ճշարով ըսաւ . ես Մատուած չեմ, ինծի հետ եղողներն ալ Մատուած չեն . մի է ճշմարիտ Մատուած որ ամմէն բան ստեղծեց . որդի նորա Յիսուս Վրիստոս, և սուրբ Հոգին, մենք անոր հրեշտակներն էինք, ետքը Մատուծոյ դէմ ապստամբելով սատանայ եղանք : Սուրբն Վեորդ ըսաւ . թէ որ Մատուած չէք՝ հապա ինչո՞ւ մարդիկ կը խաբէք զձեզ պաշտելու տաք . հիմա ալ ի՞նչպէս կը համարձակիք հոս կը կենաք . որովհետեւ ես Մատուծոյ ծառայ ըլլալով՝ հոս կեցած եմ, իմ վրաս Վրիստոսի անունը կայ որ է ճշմարիտ որդին Մատուծոյ : Մը ըսելնինի, ձեռքով ալ վրանին խաչ կը հանէր . ան խաչին զօրութենէն մեծ գոռում գոչում մը ելաւ սատանաներու մէջ, լալու ճշարու ձայներ . տաճարին մէջի եղած ամմէն կուռքերը գետինն ընկան, ջարդուբուրդ եղան :

Մը տեսածնին պէս քուրմերը՝ ամմէնը մէկէն վրան վազեցին . սրբոյն երկու ձեռքէն բռնելով մէկբերան կը կանչէին . վերցուր, թագաւոր, աս կախարդս, որ իր կախարդութեամբը ամմէնն ալ մոլորցուց, Մատուածները կործանեց : Թագաւորը կատղելով ըսաւ . ո՞վ չար անօրէն, դուն չէիր որ խօսք տուիր Մպողոնին զոհելու, աս ի՞նչ ըրիր : Սուրբն ըսաւ . ո՞վ անմիտ, ես իմ զոհս ու պատարագս մատուցի ճշմարտին Մատուծոյ Յիսուսի Վրիստոսի, դուն գոնէ հիմա միտք առ իմացիր որ քու կին կուռ

քերդ ոչինչ են, ոչ իրենց և ոչ ուրիշներուն
 կրնան հասնիլ կամ օգնութիւն ընել. սա-
 տանայ են, ինծմէն ալ կը դողան կը կործա-
 նին՝ Վրիստոսի ծառայ ըլլալու համար :
 Թագաւորին միտքը չի բացուեցաւ . բայց
 Թագուհոյն սիրտը շնորհք Վստուծոյ ին-
 ջաւ, որ աս բանս լսածին պէս վազեց Թա-
 գաւորին քովն եկաւ ըսելով. ով Վստուած
 Վէորդայ, քաւէ զիս մեղաւորս մի յիշեր
 իմ անգիտութեան գործքս, այլ տես իմ
 կատարեալ գարձս, ինծ ալ մասն և բաժին
 տուր քրիստոնէից հետ : Վսանկ ալ շատ
 բազմութիւն դարձան քրիստոնէայ եղան
 ան ատենը : Վսբաներս տեսնելով Վիսկղե-
 տիանոս Թագաւորը՝ տակնուվրայ եղաւ .
 հրամայեց Վղեքսանդրէ Թագուհին ալ սք
 Վէորդն ալ մէկէն գլխընին կտրել : Արբոր
 զինուորները ասոնք բռնելով քաղքէն դուրս
 կը տանէին, Վղեքսանդրէ Թագուհին աչքը
 երկինքը վերցընելով՝ աղօթք ընելով կ'եր-
 Թար, բայց տեղ մըն ալ նստելով՝ հոն խա-
 ղաղութեամբ հոգին աւանդեց :

Արբոր զինուորները սուրբ Վէորդը տա-
 րին նահատակելու տեղը՝ ձեռուրները վեր
 վերցընելով կեցաւ աղօթքի. Տէր Վստուած,
 ըսաւ, պղտիկութենէս վեր քեզի եմ ապա-
 ւիներ, քեզնէ կը խնդրեմ, քու սուրբերուդ
 մէջն առ իմ հոգիս . իսկ աս կռապաշտնե-
 րուն Թողութիւն տուր ինչ որ ինծի ըրին,
 անոնց ճանչցուր քուկին անունդ ու լուսա-
 ւորէ . իսկ քեզ ճանչցողներուն քու սուրբ

երկիւղդ տպաւորէ . սուրբերուն յիշատակն
ընողներուն , բարեխօս բռնողներուն՝ քու
սէրդ վառէ սրտերնուն մէջը , որ իրենք ալ
հաւատքով , վարքով սուրբերուն նմանելով ,
անոնց հետ մէկտեղ արքայութեան արժա-
նի ըլլան : Այս աղօթքը լմննալէն ետև ծունկ
չոքելով վիզը երկրնցուց . թագաւորին հրա-
մանը կատարեցէք , ըսաւ . անանկով գլու-
խը կտրեցին յամին 303 . ապրիլի 24 . զատ-
կին ուրբաթ օրը :

Արքայն Վէորգայ հրաշքները խիստ շատ
են , բայց անոնցմէ երկուքը միայն պատ-
մենք որ խիստ երևելի են : Վրիստոսի
Թուականին իբր 800 . Ադիպատոսի դիերը
գեղի մը մէջ սուրբ Վէորգայ մեծ ժամ
մը կար հնուցմէ շինած . այլազգիներուն
ամիրան հոն խրկեց իր եղբօրորդին բանի
մը համար . աս ալ իր բաներն ու տասուեր-
կու ուղտ ան ժամը ինջեցուց իբր մէկ խան
մը : Վահանաները շատ ազաչեցին որ աս
բանը չընէ , մտիկ չըրաւ . բայց երբոր ուղ-
տերը ժամը խօթեցին՝ մէկէնիմէկ ամէնն
ալ սատկեցան : Ասոր վրայ խիստ վախ ըն-
կաւ սիրտը . սատկածները դուրս հանել
տուաւ , ինքը ժամը մտաւ տեսնելու քրիս-
տոնէից պաշտամունքը : Արբոր պատարա-
զին ատենը կեցած էր , սրբոյն հրաշքովը
իր հողոյն աչքը լուսաւորեցաւ , տեսաւ որ
քահանան պղտիկ տղայ մը ձեռքը բռնած
գառի պէս մօրթեց , արիւնը սկիհին մէջը
թափեց . հաղորդութեան ատենն ալ տե-

սաւ որ՝ ան մօրթուած տղին մնէն ու արու-
նէն կը բաժնէր հաղորդութիւններուն, բերան-
նին կը դնէր. պատարազը լմննալէն ետե
մաս բաժնել սկսան ժողովրդեան, աս իշ-
խանին ալ տուին: Իշխանը բարկանալով մը
ըսաւ քահանային. դուն ուրիշներուն տղին
մնէն կու տաս որ մօրթեցիր. դուն ալ ժո-
ղովուրդն ալ անոր միսն ու արունը ճաշա-
կեցիք. արունը դեռ կ'երևնայ շրթունքիդ
վրայ: Քահանան ահով դողով ըսաւ. ես
մեղաւոր մարդ մըն եմ, չեմ արժանի ա-
նանկ յայտնի տեսնել աս սուրբ խորհուրդս
ինչպէս որ դուն տեսեր ես. անանկ է նէ
դուն մեծ մարդ մը եղած պիտոր ըլլաս, ը-
սաւ: Ըստ տեսիլքէն խօսակցութենէն այ-
լազգի իշխանը քրիստոնեայ եղաւ: Անա
լեռան եպիսկոպոսէն մկրտուեցաւ. հօն
կրօնաւոր եղաւ իրեք տարի կեցաւ. ետքը
ամիրային քովը գալով, իրեն սուրբ հաւատ-
քը յայտնելով՝ նահատակուեցաւ:

Մէկալ հրաշքը պատմենք: Աւ ծովին
քով Ղմաստրիս քաղքին մօտը սուրբ Վէսր-
գայ մեծաշէն ժամ մը կար, ուր շատ կ'եր-
թար Սեոն անունով մէկ բարեպաշտ մը ի-
րեն կնիկովը որ Սեօփանէ կ'ըսուէր. եր-
բոր ասոնց մանչ զաւակ եղաւ՝ ան եկեղե-
ցին մկրտել տալով՝ տղին անունը Վէսրգ
դրին: Եղաւ ատեն որ՝ Պուլլարները ծեծ
բացին կայսեր վրայ. Սեոն զինուորական
կարգէ ըլլալով՝ պէտք էր ծեծի երթալ.
բայց ինքը ծերացած ըլլալով՝ իրեն տեղը

աս մէկ հատիկ զաւակը Վէորգը հարկ ե-
 ղաւ խրկելու . շատ աղաչանք ըրին ծնողքը
 սուրբ Վէորգայ ժամուն մէջ որ սուրբը ողջ
 առողջ իրենց զաւակը դարձնէ : Պատե-
 րազմը եղաւ յամին 917. ուր ասոնց Վէորգ
 տղան գերի ընկաւ Պուլղարներուն իշխանի
 մը ձեռք , որ իրեն կտրիճ բնուածքը խիստ
 սիրելի ծառայ եղաւ . հետեւեալ տարին
 սուրբ Վէորգայ նախատօնակին օրը՝ ծնող-
 քը որ միշտ կու լային , ան օրն ալ աւելի
 լացին իրենց ազգականաց հետ մէկտեղ , կը
 գանգատէին սրբոյն թէ ինչո՞ւ խնդիրքնին չի
 կատարեց , իրենց ձեռքը չի դարձուց զաւ-
 կընին : Ասոնք հոս կու լային , Վէորգ տը-
 ղանին ալ իր տեղը կու լար կ'ողբար սուրբ
 Վէորգայ առջին , միտքը բերելով որ՝ ան
 օրը ծնողքը իր տօնը կը տօնէին , իսկ ինքը
 անհաւատներուն ձեռքը հեռու երկիր ա-
 նանկ մնացած էր . ստանկ լալով ձեռքը եր-
 կընցուց որ՝ կրակին վրայէն վերցընէ տիրո-
 ջը խմելիքը տաք տաք իրեն տանի . մէյմն
 ալ տեսաւ որ յանկարծ վեր երկինքն ելաւ ,
 ամանը ձեռքը բռնած իր հօրը տունը գըտ-
 նուեցաւ : Արբոր ծնողքն ասանկ մէկէն
 տեսան իրենց տանը մէջ կորսուած զաւակ-
 նին՝ ուրախանալէն գետինը ընկան , չիյ-
 տէին ինչ ընեն . գրկելով պագնելով կը
 հարցընէին , ինչպէս հոս եկար , մենք քեզ
 մեռած կը կարծէինք : Տղան ալ սկսաւ պատ-
 մել . աս ամանը ձեռքս բռնած կը տանէի ,
 ըսաւ , որ տիրոջս հասցընեմ , մէյմըն ալ զի-

նուորի պէս մարդ մը տեսայ ձի հեծած արևէն աւելի լուսաւոր , առաւ իս յափըշտակեց լուսոյ մէջ , չիյտեմ ո՛ւր կ'երթայի . միայն ձիու քալուածքի ձայն մը կ'առնէի . մէյմըն ալ տեսնեմ որ հօս եմ : Ասոնք ամ մէնն ալ դուրս ելան , ետևէն վազեցին որ ան ձիաւոր մարդը գտնեն , մէկը հօն չի գտնելով՝ աղէկ հասկըցան որ ան ձիաւոր մարդը սուրբ Վէորգն է եղեր՝ երազահաս նահատակը , որ ամմէնուն կը հասնի , ամէն տեղ իր զօրութիւնը կը ցցընէ , ուր տեղ որ զինքը բարեխօս կը կանչեն : Աորէն տուն դարձան , տղին ձեռքի բռնած խմելիքը տեսան անանկ տաք էր՝ որ կրակին վրայէն նոր հանած կ'երևնար . աս նշանն ալ տեսնելով՝ ալ աւելի հասկըցան սրբոյն զօրութիւնը . ան քիչ բանը ամմէնուն ալ բաժնեցին . որչափ բազմութիւն որ հօն եկեր էին՝ դրացիներ , ազգականներ , ամէնն ալ խմեցին անկից . ետքը սուրբ Վէորգայ եկեղեցին երթալով , շնորհակալութե՛ն աղօթք ըրին :

ՍՈՒՐԲ ԿՂԵՄԷՍ ՀՌՈՄԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ

Ասիկայ հռոմայեցի էր կռապաշտի զաւակ , թագաւորական տնէ ինչպէս որ կը կարծուի . ոմանք կ'ըսեն որ արևելք գնաց Րատնաբաս առաքեալը տեսաւ . ետքը Պետրոս առաքելոյն քոյն երթալով՝ անոր աշակերտն եղաւ , անոր հետ մէկտեղ հռոմ

եկաւ : Իսկ ուրիշները կ'ըսեն թէ երբոր Պետրոս առաքեալը Հռոմ եկաւ, Աղեմէս ծովուն ալէկոծութենէ խալըսած ըլլալով՝ Սուրբ Պետրոս առաքեալը գտաւ, քրիստոնէութիւն ձանձնալով՝ աշակերտ եղաւ Պետրոսի, ու զօրաւոր քարոզիչ աւետարանի : Խօսքով ու գրով յաջող մարդ ըլլալով՝ գրագիր եղաւ . առաքեալներուն կանոնները գրեց, և ուրիշ գրուածներ . մանաւանդ Պետրոս ու Պօղոս առաքեալներուն շատ մեծ օգնական եղաւ . սրբոյն Պետրոսի ձեռքովը քահանայ ու եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, ետքը Հռոմայ աթոռը քահանայապետ նստաւ . շատ շինութիւն ըրաւ Հռոմ ու բոլոր արեւմուտք : Ըն ատենը սաստիկ հալածում ըլլալով՝ շատ քրիստոնէայ կը նահատակուէին Հռոմայու մէջ . անոր համար Հռոմայու եօթը տեղը գրագիր դրաւ, ապսպրեց որ ամմէն մէկը իր գին եղած մարտիրոսներուն վարքը չարչարանքը գրէ . ինքն ալ շատ շրեաներ ու կռապաշտներ կը դարձնէր, ինչուան որ ինքն ալ բռնուեցաւ կռապաշտներէն :

Ըսոնք առաջ ծեծեցին զինքը, ետքը կախելով անանկ քերեցին մարմինը երկրթներով որ ինչուան ոսկորները հասուցին . տեսնելով որ ամուր կեցած էր քրիստոնէութեան մէջ, Գոմետիանոս կայսեր հրամանովը նաւ մը դնելով՝ ինչուան Քերսոն քշեցին : Հոն հինգ տարի, ըստ ոմանց՝ քըշուած կենալէն ետեւ, նաւուն երկաթը վի-

զը կապելով ծովը ձգեցին . բայց Մատուծոյ կարգաւորու թեամբը մարմինը անանկ տեղ ընկաւ ծովուն մէջ՝ ուր քար մը կամարաձև կեցած ըլլալով մարմինին վրայ՝ ամբողջ մը նաց , ամմէն գազան ձկներէն պահուեցաւ : Սուրբը եպիսկոպոսին երևնալով հրամմեց որ իր մարմնոյն վրայ տապան շինէ . երբոր եպիսկոպոսը հասկըցընել ուզեց տեղին դը ժուարութիւնը ծովու տակ ըլլալուն համար , դուն ըսաւ՝ ամմէն քահանաներդ առ , ծովին քովը գնա , կը տեսնես հոն Մատուծոյ փառքը : Մնանկ ըրաւ եպիսկոպոսը . երբոր ծովին քովն եկաւ , ծովին՝ ջուրը ինքիրմէ քաշուեցաւ . ինչուան ան քարը ցամաք եղաւ : Եպիսկոպոսը իրեն քահանաներովը համարձակ քալելով քովն եկաւ . տեսաւ որ մարմինը անարատ մնացեր է , յատուկ տապանի մը մէջ դրաւ՝ սրբոյն ըսածին պէս : Երբոր իրենք ետ դարձան , ջուրն ալ իրենց ետեէն իր տեղը կը դառնար : Բայց ծովէն դուրս ելլելէն ետե , ան ատենը ցաւեցան ամմէնն ալ որ ինչպէս իր սուրբ նշխարքէն բան մը չառին հետերնին . բայց սուրբն Աղեմէս գիշերը երևնալով ոմանց ըսաւ . չեմ ուզեր որ մարմինս անկէց վերցընէք , բայց աս շնորհքը կ'ընեմ ձեզի որ ամմէն տարի իմ նահատակութեանս օրը՝ եօթն օր ծովը քաշուած մնայ . հոն եկէք տեսէք քալելով : Մսածին պէս եղաւ , ամմէն տարի ան մեծ ծովը հոն տեղս կը քաշուէր . քերսոնացիք խընձա .

դընձ հոն կը վազէին , սրբոյն տապանին քու-
վը՝ ցամբած ծովին մէջը ուխտերնին կը կա-
տարէին , շատ հրաշքներ կը տեսնէին :

Տարի մըն ալ բարեպաշտ մարդ մը իր
կնկովը աս ուխտս ընելով՝ իրենց մէկ տղո-
վը եկան տապանին քովը , հրաշքերը տե-
սան . իրենց աղօթքնին լմնցընելէն ետեւ ետ
դարձան ցամաքն ելան , ջուրն ալ ուրիշ տա-
րուան պէս նորէն դարձաւ գոցեց : Մայց
գոցելէն ետեւ նայեցան որ տղան հետերնին
չէ , փնտրուել սկսան՝ անչափ բազմութեան
մէջ խառնուած կարծելով . երբոր չի գտան՝
ճարերնին հատաւ , հասկըցան որ ծովուն
մէջը մնացեր էր . սկսան լալ ողբալ , ուրիշ
ներն ալ իրենց հետ կը լացընէին . անկից
ետքը ամմէն շաբաթ օրերը նշխար , գինի
ու եղ կու տային եկեղեցին , իրեն հոգին
պատարագի մէջ յիշելու համար , ինչուան
որ տարեդարձն եկաւ : Տարեդարձին երբոր
ծովն իր սովորութեամբը բացուեցաւ , ի-
րենք առաջ վազեցին որ կարելի է մեռեալ
մարմինը գտնեն . մէյմըն ալ սրբոյն տապա-
նին քովն եկածնին պէս՝ տեսան որ իրենց
զաւակը ողջ առողջ կեցեր է , աշխարհ ի-
րենց եղաւ : Ար հարցընէին իրեն թէ ինչ
պէս ողջ մնացիր . տղան մէկ ձեռքով տա-
պանը կը բռնէր կը ցըցընէր կ'ըսէր որ՝ ասի-
կայ իս պահեց ու կերակրեց . աս կամարին
մէջը ջուր չի մտաւ կ'ըսէր . չորս գիտ լոյս
էր . ամմէն շաբաթ օրերը մէկ մարդ մը
քովս կու գար , նշխար գինի ու եղ կու տար

ինծի . անոնք ուտելով ինչուան մէկալ շա-
բաթ ոչ կ'անօթենայի ոչ կը ծարուէի :

Ըստ լսելով տեսնելով ամմէնն ալ հասկը-
ցան որ՝ սուրբն Աղեմէս պահէր է . ծնողաց
տուած բաները՝ իրենց զաւկին է տուեր .
ամմէնն ալ փառք տուին Մատուծոյ . իսկ
հերձուածողները պապանծեցան , որ ան ա-
տենը ելեր կը քարոզէին՝ թէ մեռնելէն
ետե տուած պատարագն ու ողորմութիւնը
օգուտ մը չընէր : Ապիսկոպոսն աս բաները
տեսնելով՝ ան օրէն սկսաւ սրբոյն տապանին
վրայ կանթեղ վառել , անկից ետե ծովուն
մէջէն դուրս ելել . բայց ինչ հրաշք , որ
երբոր տարեգարձին հոն կու գային , ան
կանթեղը վառած կը գտնէին : Առող տուր
իրեն ըրած ուրիշ հրաշքները :

ՍՈՒՐԲ ՅՈՂԱՆ ՈՍԿԵՒԵՐԱՆ

Հայրը կ'ըսուէր Սեկունդոս , որ զօրա-
վարութեան պատիւ ունէր կայսեր գուռը .
մայրը Մնթուսա կ'ըսուէր , որ ծաղիկ ըսել
է . երկուքն ալ ազնուական էին Մնտիոք
քաղքին մէջ , որ հիմա Մնթաքեա կ'ըսուի .
ան ատենը խիստ մեծ քաղաք էր , մէջը
600 հազար մարդ կար : Սուրբն Յոհան
դեռ պզտիկ եղած ատենը հայրը մեռաւ ,
բայց մայրը թէպէտ և որբեվարի՝ աղէկ հո-
գաց իր զաւկրները : Յոհաննէս բնական
խելացի ըլլալով՝ կարդալու մէջ շատ ա-

աաջ գնաց . Ճարտասանութիւնը | իբանոսի քով անանկ աղէկ սորվեցաւ որ' | իբանոս անիկայ որոշեց դասատու ըլլալ իր մեռնելէն ետե . երբոր ուսումն ալ լմնցաւ՝ իրեն շինած գովասանքի ճառը դուրս հանեց կայսերներուն վրայ , անանկ գերազանց ճարտասանութիւն մը որ' | իբանոս վրան զարմացաւ : Իսկ փիլիսոփայութիւնը սորվեցաւ Լ'նդրագաթայ փիլիսոփային քով :

Իրեն խիստ բարեկամ ունեցաւ Մարսեղ մէյմը ու Լազարիոս պոնտային . ասոնցմէ օրինակ առնելով Յոհաննէս՝ իրեն սէր մը եկաւ անոնց պէս կրօնաւոր ըլլալու . մանաւանդ երբոր հասկըցաւ որ աշխարհիս ըզբաղմունքը արգելք կ'ըլլան թէ մարմնաւոր և թէ հոգեւոր ուսման՝ որուն վրայ խիստ սէր ունէր : Մարսեղ խիստ կը յորդորէր զինքը կրօնաւոր ըլլալու , իրեն հետ մէկ տեղ վանքի մը մէջ կենալու . բայց իրեն մայրը թող չէր տար , աղաչելով որ իր որբեվարութեան մէջ մինակ չի թողնէ զինքը . անոր համար Յոհաննէս տունը կեցաւ : Բայց ինչ կրթութիւն որ վանքի մէջ պիտոր ընէր՝ հոն սկսաւ ընել . ամենեւին սուտ չի խօսել , անէծք մը բերնէն չի հանել , ոչ ինքը երդուրննալ և ոչ ուրիշի երդում ընել տալ , ոչ երբէք ծաղրաբանութեան խօսք մը բերնէն հանել , այլ մանաւանդ լուծեամբ կը կենար . թէ որ մէկի մը հետ խօսել պէտք ըլլար՝ հոգեւոր բան կը խօսէր , աշխարհային խօսքերը գոցել կը

նայեր . աշխարհ ու աշխարհային մենծու-
թիւնը իր առջին իբրև երազ մը ոչինչ մըն
էր սեպուած . ինքը ասանկ էր միտքը դրած ,
ուրիշներուն ալ ասանկ կը քարոզէր . ա-
զօթքի ու կարդալու հետ կ'ըլլար , պաք կը
պահէր , արթուն կենալու համար գետնի
վրայ կը պառկէր : Իրեն մայրը թող կու-
տար աս ամմէն բանն ընելու , վախնալէն՝
որ չըլլայ թէ զինքը թողնէ վանք երթայ :

Ետքը երբոր բոլորովին թողաւ աշ-
խարհք Յոհաննէս ու վանքը գնաց , աւելի
կըթեց զինքը կատարելութեան հասնելու .
որ մը անանկ ձայն մը լսեց որ՝ կամ զինքը
կամ Մասիլիոս իր սիրականն ու հոգևոր
ընկերը՝ Եպիսկոպոս պիտոր ընտրէին : Ըս-
տայնը Մասիլիոս լսելով՝ եկաւ Յոհաննու
պատմեց , խորհուրդ տուաւ , թէ որ փախ-
չելու գենաս ըսաւ՝ երկուքնիս մէկտեղ փախ-
չինք , իսկ թէ որ Եպիսկոպոս ընելու ըլլան՝
երկուքնիս ալ մէկտեղ յանձն առնենք ,
միայն թէ իրարմէ չի զատուինք : Բայց
Յոհաննէս զինքը անարժան սեպելով Եպի-
սկոպոս ըլլալու՝ միտքը դրաւ Մասիլիոսը Ե-
պիսկոպոս ընել տալ , անոր համար խօսքը
գոցել տուաւ . հիմակու հիմա մեզ փնտր-
ուող չի կայ ըսաւ , ասոր վրայ չի մտածենք .
Ըս ըսելէն ետև ինքը փախաւ սրահուեցաւ .
փնտրուողները տեսնելով որ Յոհաննէսը չի
կայ՝ Մասիլիոսը կամ Մարսեղը բռնեցին
Եպիսկոպոս ձեռնադրեցին : Ետքը երբոր
իմացաւ Մասիլիոս իրեն ըրածը՝ դժուարիւ

մը ցցուց . բայց Յոհաննէս անանկ շահեցաւ անոր սիրտը , որ առջինէն շատ աւելի սիրով կապուեցաւ հետը :

Ըն առեհները մայրը վախճանած ըլլալով Յոհաննէս Ընտիոքայ անապատը քաշուեցաւ . չորս տարի Իսիքիոս ճգնաւորին հետեւելով շատ ճգնութիւններ ըրաւ . մէկ քարայրի մը մէջ երկու տարի քաշուած կեցաւ . պառկելը ամենեւին վերջացուց , իսկ քնանալը խիստ քիչցուց . անով մարմինը կէս մէջքէն վար մեռածի մը պէս էր եղած . ինքը միայն հոգևոր աստուածային բաները մտածելով կը զմայլէր : Տեսիլք կը տեսնէր որ Պետրոս առաքեալը բալլիքներ կուտար իրեն ձեռքը , նշան իրեն քահանայու եպիսկոպոս ըլլալուն : Յոհաննէս աւետարանիչն ալ գիրք մը կուտար ձեռքը , նշան սուրբ գրոց մեկնիչ ըլլալու . հրաշքներ կ'ընէր , հիւանդներ կը բժշկէր : Արքոր Ա աղէս արիոսեան կայսրը նստաւ , հրաման հանեց որ ամմէն կրօնաւորներ իրենց տեղէն դուրս ելլեն , զինուոր ըլլան . Յոհաննէս ասոր ըրածին վրայ ամենեւին չի հաւնելով՝ մէկի մը խորհրդով կրօնաւորութեան վրայ գովասանք գրեց զարմանալի :

Բայց իր խիստ ճգնութէն հիւրնտնալով Յոհաննէս՝ պէտք եղաւ քաղաքն ինջնալու . հոն տեսնելով զինքը սուրբն Սեւիտոս Ընտիոքայ եպիսկոպոսը՝ ողջըննալէն ետեւ սարկաւագ ձեւնադրեց : Սեւիտոս վախճանելէն ետեւ որովհետեւ Ընտիոքայ

աթոռը շատ խռովութիւն քաշեց, ամանք Պաւլինոսը նստեցընել ուզելով անոր տեղը՝ ամանք Փլաբիանոսը, Յոհաննէս նորէն քաշուեցաւ՝ ինչուան որ Փլաբիանոսը նրատուցին աթոռը, որուն յարեցաւ Յոհաննէս : Փլաբիանոսն ալ խիստ սիրելով Յոհաննէսը՝ քահանայ ձեռնադրեց. մանաւանդ որ հրեշտակ Մատուծոյ երևնալով ապրսպրեր էր իրեն որ քահանայ ձեռնադրէ : Յոհաննու ալ երևնալով՝ պատուիրեր էր որ դէմ չի դնէ : Ձեռնադրուելու ատենը հոգին սուրբ աղանակերպ երեցաւ անոր զլիտուն վրայ : Քահանայ ըլլալէն ետև անանկ մէկ քարոզութիւն մը սկսաւ հոգևոր ճարտասանութեամբ՝ որ ամմէնն ալ Ոսկեբերան անուն դրին . ամմէնուն անաչառ կը քարոզէր ապաշխարութիւն, եղբայրսիրութիւն, մանաւանդ ողորմածութիւն. ամենեւին չիյտէր երեսպաշտութիւնընել . ինչ որ բերնով կը քարոզէր՝ վարքովն ալ նոյնը կը սորվեցընէր . որը կը խրատէր, որը կը յանդիմանէր, որը կը մխիթարէր, աղքատներուն կը հասնէր, հերիտիկոսներուն դէմ կը հակաձառէր :

Մանկ տասուերկու տարի բարի պտուղընելէն ետև Մնտիոք քաղքին մէջ, Պօլսոյ պատրիարք ուզեցին ընել, թէ ժողովուրդը և թէ Մրկադէոս կայսրը, որ հրաման խրկեց ան տեղի մենծին Մտերիոս կոմսին՝ շուտ մը Պօլիս խրկել Յոհաննէսը : Մն ալ բանը չի մացընելով Յոհաննէս

սին , վարպետութեամբ մը քաղքէն դուրս
տեղ մը կանչեց զինքը , իբր թէ գաղտուկ
բան մը ունի իրեն հարցընելու . հոն եկա-
ծին պէս Յոհաննէս՝ թագաւորական մար-
դիկներուն յանձնեց , որ առին Պօլիս տարին
ինչպէս որ ապրսպրեր էր իրեն Մրկադէոս
կայսրը : Արբոր եպիսկոպոսաց ժողովը զին-
քը եպիսկոպոս ձեռնադրեցին , պատրիարգ
դրին Պօլսոյ վրայ , ալ աւելի եռանդեամբ
սկսաւ քարոզել , քաղքին մէջ եղած ան-
կարգութիւններն ու հերետիկոսութիւնը
վերցընել :

Միջի տարին հիւանդութիւն քաշեց . ը-
ւորտնալէն ետեւ աւելի ջանք ունեցաւ աշ-
խատելու : Ազելով առաջ եկեղեցականքը
շտկելու , բարի օրինակ տալու համար՝ իրենց
վրայ սկսաւ կանոններ դնել . մէկի մը սե-
ղան չէր երթար , մէկն ալ իր սեղանը չէր
առնէր , այլ մինակ կ'ուտէր . ամմէն օրուան
իր կերակուրը իբրև ողորմութիւն կ'առնէր
Աղումպիադա ըսուած որբեվարի կնկանէ մը ,
որ խիստ աղքատասէր սուրբ կնիկ մըն էր .
չատ հեղ ալ կը մոռնար ինչուան իրիկուն
բան մը բերանը չէր դնէր : Ինչ որ եկեղե-
ցիէն իրեն բաժին պիտի գար՝ ամենեւին
բան մը չէր առնէր , այլ ամմէնն ալ եկե-
ղեցնայ՝ ու աղքատաց կը բաժնէր . իր ա-
ռաջնորդարանին ծախքն ալ կտրելով՝ աղ-
քատներուն ու հիւանդներուն կը բաժնէր .
և ան ստրկով հիւանդանոց շինել տուաւ :

Ակեղեցնայ մէջ հոգևոր երգերը կար-

գաւորեց . և որովհետև արիոսեանք մուլար
բաներով տեղէ տեղ քալելով երգեր կը
նէին , Սսկեբերան սահմանեց անոնց դէմ
արծըթէ խաչերով , մոմերով թափօրի պէս
քալելով երգ ընել . պատարագամատոյցն
ալ կարգաւորեց : Մէկ արիոսեան մը դար-
ձաւ , իր կնիկն ալ դարձուց . բայց աս կնիկը
ակամայ դարձած ըլլալով՝ իր էրիկը խաբե-
լու համար , երբոր ժամ գնաց հաղորդու-
թիւն առնելու՝ չի ճաշակեց , այլ բերնէն
հանելով պահեց . տուն դառնալէն ետև
փորձելու համար ծամել ուզեց , բայց շուտ
մը բերնին մէջը քար կտրեցաւ . ասկից խիստ
վախնալով կնիկը , եկաւ Սսկեբերանին ոտ-
քը իյնալով պատմեց , անոր խրատելովը
ճշմարիտ ուղղափառ եղաւ . ան քարն ալ
յիշատակի համար պահուեցաւ :

Մնդեղջ մեղաւորները անաչսռ կը յան-
դիմանէր՝ թէ և զինքը բամբասէին . իսկ
զղջացող մեղաւորները ամմէնն ալ սիրով
կ'ընդունէր . նեղեալները կը մխիթարէր ,
կարօտները կը հոգար , ամմէնուն վրայ ա-
նանկ մէկ հոգ մը կը տանէր որ ամմէնուն
սիրտը կը վաստըկէր , մօտիկին ալ հեռուին
ալ : Ուր որ հերետիկոս կային քաղքին մէջ՝
կամ դուրս տեղ , հոն քահանաներ , եպիս-
կոպոսներ խրկելով կը դարձընէր . նաև օ-
տար ազգաց մէջ լեզուազէտ քահանաներ
խրկեց դարձընելու : Մնտիօբայ մէջ եղած
հին խռովութիւնն ալ շտկեց . Այփեօտսի ե-
պիսկոպոսին վրայ ամբաստանութիւն լսե-

լով՝ անձամբ գնաց հոն, ան տեղին և ուրիշ տեղերուն անկարգութիւնները ուսկից որ կ'անցնէր՝ ամմէնն ալ շտկեց: Ընչամի ծանր գործքերու հետ ըլլալով՝ ատեն ալ կը գտնէր քարոզներ կը գրէր, Եստուածաշունչին վրայ մեկնութիւն կը շինէր: Կը պատմեն որ երբոր Պօղոսի թղթոց մեկնութիւնը կը գրէր, տեսնուեցաւ որ նոյն Պօղոս առաքեալը քովը կեցած անկաճ՝ նիվար տուն կու տար իրեն, Սկեբերանն ալ կը գրէր:

Դանք որ սատանան որովհետև ամմէն սուրբերուն դէմ հակառակութիւն մը կը հանէ. աս տիեզերալոյս վարդապետին վրայ ալ մեծ հակառակութիւն հանեց. ամմէնէն գէշն ան եղաւ որ՝ Եւդոքսիա թագուհին ալ արուեցաւ Սկեբերանին հետ, որ Երկադէոս կայսեր կնիկն էր. որուն առջի գըլխաւոր պատճառն աս եղաւ: Թագուհին որբեվարի կնկան մը այգին բռնութեամբ առեր էր. կնիկը Սկեբերանին իյնելով՝ ան ալ առաջ խրատեց թագուհին, ետքը յանդիմանեց: Կալլիստոպէ անունով ուրիշ մէկ կնկան ալ ասանկ բան մը անցեր էր թագուհւոյն հետ: Երկրորդ հակառակութիւնը փրթաւ Եղեքսանդրիոյ պատրիարգէն որ կ'ըսուէր Թէոփիլոս. ասիկայ թէպէտ մեծ անուն ունեցող մարդ մըն էր, բայց առաջուցմէ չէր ուզէր որ Սկեբերան Պօլսոյ պատրիարգ ըլլայ, այլ իրեն սիրելի քահանան Իսիդորոսը կ'ուզէր պատրիարգ նստեցնել. հիմա ալ անանկ բան մը հան-

դիպեցաւ որ՝ իրեն ներսի հակառակու թիւնը գործքով ցցուց . հանդիպածը աս է :

Թէոփիլոսը հակառակու թիւն մը ունեցաւ սկիտացի կրօնաւորներուն հետ . անոնք եկան Սսկեբերանին ընկան . Սսկեբերան ուզէին ինի որ ասոնք Թէոփիլոսին հետ հաշտեցնէ , Թէոփիլոս ալ աւելի աւրուեցաւ Սսկեբերանին հետ . ան ատենը քանի թըշնամի որ կային Սսկեբերանին դէմ՝ ամմէնն ալ Թէոփիլոսին հետ մէկ եղան . գրեցին իրեն՝ ուրիշներուն ալ որ Պօլիս գան , մտուը նին ան էր որ՝ ժողով ընել տան , ժողովով ձգեն Սսկեբերանը իր աթուէն՝ որ զօրաւոր կ'ըլլայ . աս պատճառով Թէոփիլոսը և ուրիշ եպիսկոպոսներ , նաև սուրբն Ապիփան Պօլիս եկան :

Ազդոքսիա թագուհին ասոնց առջև կը գանգատէր Սսկեբերանին վրայ , թէ չի դադրիր քարոզին մէջը միշտ իս վար կը զարնէ . ընդհանրապէս կնկտոց ըրած անկարգութեանը վրայ կը խօսի , բայց միտքը իս նախատել է : Այնչափ ըրաւ թագուհին որ՝ իր էրիկն ալ Արկադէոս կայսրը իրեն դարձուց . ան ալ սկսաւ ետևէ իյնալ որ Սսկեբերան աթուէն հանեն : Սուրբն Ապիփան չուզէիով աս բանիս մէջ խառնուիլ , արտօրցաւ Արարոս իր աթուը դառնալու : Արովհետև Սսկեբերանին անանկ հասկըցուցեր էին որ սուրբն Ապիփանն ալ մէկալնոնց պէս քեզ ձգել ու քշել վճուեց : Վրեց իրեն .
|| Ավ սբանչելիդ Ապիփանն , աթուդ չի հաս

նիս պիտոր ॥ : Ապիփանն ալ ոսկեբերանին
գրեց . ॥ Ով երանեալ ճգնաւոր Քրիստոսի ,
ինչպէս որ ես չի հասնիմ պիտոր իմ աթոռս ,
դուն ալ չի հասնիս պիտոր քշուելու տեղդ ॥ :
Ըս երկուքին խօսքն ալ մարգարէութիւն
էին , չէ թէ անէծք . երկուքն ալ Ըստուծմէ
իմանալով մէկմէկու գրեցին , անոր համար
երկուքին խօսքն ալ իրաւ ելաւ :

Ոսկեբերան չի դժուարելով իր ձգուելուն
վրայ՝ կ'ըսէր իր բարեկամ եղող եպիսկո-
պոսներուն . աղօթք ըրէք , եղբարք , իմ
վրաս . ատենս հասած է , կարծեմ որ թող-
նեմ պիտոր աս ողորմելի կեանքս . ես գի-
տեմ սատանային որոգայթն է ասիկայ . ի-
րեն դէմ շատ բան զուրցելուս չի կրցաւ դի-
մանալ : Ապիսկոպոսները արցունք թափե-
լով կը պագնէին իրեն սուրբ գլուխը . կու-
լային ու կ'ըսէին՝ ինչպէս պիտի զրկուինք
իրեն գեղեցիկ քարոզութենէն . պատաս-
խան կու տար Ոսկեբերան . ոչ ինծմէն սկը-
սաւ քարոզութիւնը , և ոչ իմ վրաս պիտի
դադրի . Սուլէսի տեղը Յեսու յաջոր-
դեց , Պօղոսին տեղը Տիմոթէոս , ես մար-
գարէներէն առաքեալներէն աւելի լաւ չեմ .
ձեզի չեմ մի ըսեր որ աս աշխարհքս մէկ
առուտուր մըն է , կը գնենք կը ծախենք ,
ետքը կ'ելլենք կ'երթանք :

Ըսանկ երբոր աթոռէն ձգեցին քշեցին
սուրբը՝ ժողովուրդը շատ աղաղակ վերցուց .
շարժ մըն ալ եղաւ որ թագուհւոյն վրայ
վախ ընկաւ , սիրտն ալ փոխուեցաւ . շատ

աղաչեց Մարկադէոս կայսեր, որ երկրորդ օրը
դարձնել հրամանեց Սսկեբերանը: Ղառ-
նայէն ետև չորրորդ օրը իր ժամը մտածին
պէս Սսկեբերան՝ սկսաւ անանկ սքանչելի
քարոզութիւն ընել, որ ամմէնն ալ կը զար-
մացնէր իր անյիշաչարութեանը վրայ, իր
սիրոյն վրայ՝ որ ժողովրդեան հետ ունէր, իր
համակերպութեանը վրայ՝ որ ամմէն բանի
մէջ գոհութիւն կու տար Մատուծոյ: Ղայց
երկու ամիս անցնելէն ետև նորէն հակառա-
կութիւն մը սկսաւ ալ աւելի մեծ. պատ-
ճառն եղաւ թագուհւոյն արձանը՝ որ Մայ
սօֆեային դիմացը տնկեր էր, ուր որ կու-
պաշտական խաղեր ալ կ'ըլլային: Սսկեբե-
րան կը խրատէր որ ան արձանը անկէց վեր-
ցնէ. անկէց խիստ տակնուվրայ կ'ըլլար
թագուհին: Այլ որովհետև իր քարոզնե-
րուն մէջը անաչառ կը խօսէր անկարգու-
թեանց դէմ, Աղոքսիա թագուհին ա-
նանկ կ'առնէր որ՝ իբր թէ ան խօսքերով
զինքը կ'անարգէ. ինչպէս ան քարոզը որուն
սկսուածքն է Ղարջեալ Ներվրեաս Տուգ-
նեալ յանդգնի, շիտակ թագուհւոյն վրայ կը
նայի: Մարկադէոս կայսրը մարդիկ խրկեց
որ Սսկեբերանը ժամէն դուրս ելլէ. անի-
կայ ըսաւ. Աս Մատուծու առեր էմ, չէմ կրնար
Լողնել. հասցա լի եր կ'ողլես, իս բանոս-Լեամե
դուրս հանէ. ան արեւը իս չէն կրնար մեղադրել:
Ատքը քանի մը հոգի եկան, զգուշութեամբ
ժամէն հանելով առաջնորդարանը տարին:
Օստիկին ճրագալուցին օրը ժողովուրդը

խիստ աղաչեց սրբոյն որ ժամը գայ . երբոր մտնելու եղաւ , թագաւորին զօրքն եկան , ժողովուրդը ցիրուցան ըրին . մէկն ալ բռնեցին հոն՝ որ դիւահար ձեւանալով պահած սուր ունէր սուրբը սպաննելու համար . աս բանս երբոր լսեց Սսկեբերան՝ եպիսկոպոս մը խրկելով աղաչեց որ ազատեն ան մարդը : Եւ անկ ալ Ալլաիդիոս քահանային ծառան բռնեցին , որ թուրը ձեռքը բռնած երբոր կը վազէր Սսկեբերանը զարնելու՝ անիկայ չի կրնալով՝ քանի մը հոգի ժողովըրդէն սպաններ էր :

Հոգեգալստէն ետև թագաւորին դիպէն զրագիր մը եկաւ ըսաւ Սսկեբերանին . չորս եպիսկոպոսներ ըսին որ՝ հիմա աս քաղքէս ելլես դուրս երթաս , թէ որ մեղք մը կայ աս բանիս մէջը՝ մեր վրայ ըլլայ ան մեղքը : Եւ ըսելով մէկէն նաւակի մը մէջ դրին , Աիկիա տարին սուրբը : Ղամբան ջերմ քաշելուն համար՝ քանի մը որ Աեսարիա նստաւ , ետքը աւազակներէն վախ քաշեց . ասանկ եօթանասուն որ ճամբայ ընելով՝ Ասկիսոն քաղաքը հասաւ որ փոքր հայոց մէջն էր , ուր որ ապրսպրուած էր քշելու : Եւ այց զարմանալին ան եղաւ որ՝ Պօլիսէն ելած օրը յանկարծ իր հայրապետական նստած աթուէն կրակ ելաւ ժամը երեց . անկէց սինդիտոսին պալատը անցնելով կրակը՝ իրեք ժամու մէջ մօխիւր դարձուց . ան տարին ալ սեպտեմբերին վերջի օրը խիստ խոշոր կարկուտ իջաւ Պօլիս .

չորրորդ օրը Աւդոքսիա թագուհին մեռաւ :
Այս բաներս տեսնելով պօլսեցիք՝ վրանին
մէկ սարսափ մը եկաւ . ասոր դէմ Սոկերէ-
րան իր հալածեալ տեղը շատ փառաւորու-
թիւն գտաւ Ասկիսոնի մէջ եղողներէն : Այս-
բոր ձմեռը վրայ եկաւ՝ հիւրնացաւ . բայց
զարնան ատենը ողջընցածին պէս՝ իրեն
թշնամիները որպէս զի հանգիստ չի թո-
ղուն , անկից հանել տուին , Արաբիսոնը
սուած բերդը քշել տուին . տաննէնինի՝ շի-
տակ չէին տաներ , այլ ասդիս անդին լեռ-
ներու վրայ , անտառներու մէջ քայլընէլով
կը տանէին . անոր համար նորէն դարձաւ
իր հիւանդութիւնը : Թշնամիները լսելով
որ՝ հօն ալ շատ քարոզութիւն ու հրաշք-
ներ ընելով՝ շատ փառք պատիւ կը գտնէր
սուրբը , անկէց ալ հանել տուին , Աւ ծո-
վին քովը քշել հրամեցին : Տանող զինուոր-
ները անդադար կ'արտօրոցընէին ճամբայը
նելու . իր երեսին ալ յայտնի կ'ըսէին , թէ
որ ճամբան մեռնելու ըլլաս՝ մեզի շատ ըս-
տակ առնելու պատճառ կ'ըլլաս . որովհետեւ
դունէն մեզի անանկ խոստացուած է : Այս ը-
սելով ասդիս անդին անկոխ տեղուանք կը
քայլընէին կը պտըտցընէին իրէք ամիս , որ-
պէս զի մեռնի :

Արբոր խեղճ հայրապետը Այոմանա քաղ-
քէն դուրս քիչ մը հեռացաւ՝ տեղ մը ին-
ջաւ ուր որ սուրբ Մասիլիսկոսի եկեղեցի
կար : Այն գիշերը սուրբ Մասիլիսկոս ե-
րևնալով Սոկերէրանին , ըսաւ . զօրացիր ,

Եղբայր Յոհաննէս , վաղը մէկտեղ պիտոր
 ըլլանք : Ըստ տեսիլքէն զօրանալով՝ վաղուան
 օրը աղաչեց Սսկեբերան զինուորներուն՝ որ
 ինչուան հինգերորդ ժամը հոն կենան . բայց
 անոնք մտիկ չի դնելով՝ առին տարին սուր-
 բը . քիչ մը առաջ երթալէն ետե տեսան
 որ կը մեռնի , նորէն սրբոյն Ղասիլիսկոսի
 ժամը դարձուցին ինչպէս որ ինքն ուզեր էր :
 Սուրբն Սսկեբերան այնչափ էր միացեալ
 Ըստուծոյ հետ , այնչափ համարձակութիւն
 ունէր Ըստուծոյ հետ , անանկ ալ խրղճ-
 մտանքի մաքրութիւն , որ ան մեռնելու օրը
 իրեն մեծ ուրախութեան օր սեպեց . հանեց
 վրայէն իրեն հագած հին լաթերը հոն ե-
 ղողներուն տուաւ , ինքը նոր լաթեր հա-
 գաւ , ինչուան ոտքի ամանը փոխեց . անան-
 կով սուրբ հաղորդութիւնն առաւ , վերջին
 աղօթքն ընելով՝ Փառք քեզ Ըստուծոյ , փառք
 քեզ , յաղափս ամենայնի փառք քեզ , ուրախու-
 թեամբ հոգին աւանդեց յամին 407 : Այր-
 բոր իրեն մեռնելը լսեց Ասկիսոն քաղքին
 եպիսկոպոսը , կը փափագէր որ տեսնէ ինչ
 փառքի է հասեր արքայութեան մէջ : ()ը
 մը տեսիլք տեսաւ որ՝ շատ հայրապետներ ,
 վարդապետներ արքայութեան մէջ մէկտեղ
 նստեր են . աչուրները կը ստորացրնէր կը
 փնտրուէր որ մէջերնին Սսկեբերանը գտնէ .
 մէյմըն ալ ձայն մը լսեց հրեշտակէն . թէ
 որ սուրբն Յոհաննէս կը փնտրուես , ըսաւ ,
 ապաշխարութեան վարդապետը , անիկայ
 մէկը չի կրնար տեսնել . անիկայ հոն է՝ ուր
 որ Ըստուծոյ աթոռն է :

Գանք որ Սսկեբերանին մարմինը՝ փոքրն
 (Թէոդոս , որ Մարկագեայ կայսեր տղան է ,
 Կոմանայէն Պօլիս բերել տուաւ յամին
 438 . անչափ քաղմու թիւն ժողովրդեան առ-
 ջլեն ելաւ որ Իւսքիւտարէն ինչուան Սերայ
 պուռնին՝ ծովը ցամաք էր դարձած նաւակ-
 ներու շատութենէն : Երբոր քաղաքը բե-
 րին , (Թէոդոս գլուխը տապանակին վրայ
 դնելով ուր էր սրբոյն մարմինը , շատ աղա-
 չանք ըրաւ թողութիւն տալ իր ծնողացը
 մեղքին՝ որ իրեն դէմ ըրեր էին : Նիմա իր
 մարմինը Եւրոպա տարուած է . երկու մա-
 տը որով կը գրէր՝ Ս ենետիկ է , ուր անանկ
 ամբողջ անապական պահուած կը տես-
 նենք , որ գիտես թէ ողջ է , գիր կը գրէ :

Ես սուրբին հրաշքները թէ քանի շատ
 են , աղէկ գիտեն պօլսեցիք , որ միշտ կը
 տեսնեն , միշտ բարեխօս է , քաղքին ալ
 պաշտպան սուրբն է :

ՍՐԲՈՒՀԻՆ ՎԱՌՎԱՌԷ

Աս փառաւոր կոյսը Նելիուպօլիս քաղ-
 քէն էր , որ Պափլագոնիա գաւառին մէջն
 էր . մէկ հատիկ դուստր ազնուական ու հա-
 րուստ մարդու՝ որուն անունն էր Գիոսկո-
 րոս . ինքը կռապաշտ , բայց իր զաւակը
 Ս առվառէ ծածուկ քրիստոնեայ , խելացի
 աղջիկ , գեղեցիկ երեսով : Արուն հայրը
 խիստ ըլլալով՝ բարձր աշտարակի մը մէջ

նստեցուցեր էր, որ մարդ մը չի տեսնէ ինչուան որ կարգուելու տարիքը գայ. պատճառն որ՝ իրեն աղուորութեան ձայնը ամէն տեղ դուրս ելած ըլլալով, շատ մենծեր կ'ուզէին իրենց հարս առնել. բայց կոյսը իր հաւատքին հետ Քրիստոսի սէրը վառած ունենալով իր սրտին մէջը, Քրիստոսի կը ցանկար հարս ըլլալ, պարկեշտ վարքով իր հաւատքն ու կուսութիւնը պահել:

Մաքսիմիանոս կայսրը երբոր հալածում հանեց ամէն տեղ դատաւորներ խրկելով՝ որ քրիստոնեաները տանջեն ջնջեն, աս քաղաքն եկաւ Մարկիանոս դատաւորը խիստ չար մարդ, որուն գործակից եղաւ Վիոսկորոս Սաուլաուեայ հայրը՝ խիստ չար կռապաշտ: Եսիկայ որ մը աշտարակն ելաւ իր աղջիկը տեսնելու, ըսաւ իրեն. դուստր իմ, քեզի համար հարսնիքի պատրաստութիւն կը տեսնեմ. մէկ մենծի մը քեզ հարս պիտոր տամ. դուն ի՞նչ կը մտածես, ըսէ համարձակ: Այսը լսածին պէս՝ շփոթեցաւ, հառաչելով ըսաւ. իս մի՞ զըրկեր, հայր իմ, աս առանձնութիւն: Հայրը զարմանալով մը դուրս ելաւ, գնաց բաղնիքին շէնքը տեսնելու, որ շինել կու տար մօտիկ ան աշտարակին. բանուորներուն ապսպրեց որ արտորնօք բանին, ինքն ելաւ հեռու տեղ մը գնաց: ()ր մը Սաուլաուէն աշտարակէն վար ինջնալով գնաց բաղնիքին շէնքը տեսնելու. տեսաւ որ երկու

պատուհան բացեր էին մէկ դիէն , հրամ-
մեց որ մէկ երրորդ պատուհան մըն ալ բա-
նան . արևելք նայող աւազանին վրայ ալ
իրեն ձեռքովը խաչի նշան ըրաւ . ետքը մը-
տաւ իր հօրը պալատը՝ կուռքերուն երեսին
թքաւ . ասոնց նման պիտոր ըլլան , ըսաւ ,
շինողներն ալ , պաշտողներն ալ : Ատեն ան-
ցաւ հայրը դրսէն եկաւ . երբոր տեսաւ որ
իր աղջիկը իրեք շինել տուեր էր պատու-
հանները՝ հարցուց իրեն պատճառը : Առ-
վառէն պատասխանեց . իրաւ է , ես հրա-
մեցի շինել . պատճառն աս է որ՝ ամմէն
մարդ որ աշխարհ կու գայ՝ իրեք լուսով կը
լուսաւորուի . իսկ երկուքը կատարեալ եր-
րորդու թիւնը մէջ չի բերեր , անոր համար
իրեք պատուհան շինել տուի յանուն հօր
և որդւոյ և հոգւոյն սրբոյ : Պատասխանեց
հայրը . խենթեցա՞ր , որդեակ , ինչ եղար .
չեմ հասկընար ինչ կը խօսիս . յայտնի զուր-
ցէ որ հասկընամ : Առվառէն յայտնեց
իրեն քրիստոնեայ ըլլալը . խաչին նշանն ալ
որ աւազանին վրան ըրեր էր զօրութեամբն
Աստուծոյ՝ իրեն ցցուց :

Երբոր ասոնք լսեց հայրը՝ խենթի պէս
կատողեցաւ , թուրը քաշեց վրան վազեց որ
սպաննէ , բայց Առվառէն Աստուծոյ ա-
զաղակելով՝ բաղնիքին դիմացի լեռը երկու
բացուելով՝ անմտաւ լեռան մէկալ դին ան-
ցաւ : Հայրը հրաշքին զօրութիւնը չի հաս-
կընալով՝ սովորական շարժ մը սեպելով՝ լե-
ռան վրայ ելաւ . հոն երկու հովիւ տեսնե-

լով հարցուց իր աղջկանը համար հովուին մէկը ձեռքովը ցցուց ուր տեղն որ էր . հայրը գնաց գտաւ , զարնելով՝ մազերէն բռնելով՝ քաշկըռտելով տուն բերաւ , մութ խուցի մը մէջ խօթելով դուռը գոցեց , անօթի անանկ թողուց . ետքը գնաց Սարկիանոս դատաւորին հասկըցուց . քանի մը օրէն ան խցէն հանելով՝ դատաւորին առջին բերաւ , երդուընցընելով որ անողորմ տանջանքով ըսպաննէ :

Դատաւորը տեսնելով Սառվառեայ գեղեցկութիւնն ու պարկեշտութիւնը՝ ըսաւ . ով ազնուական դուստր իմ , դուն իմաստուն խելացի աղջիկ մը կ'երևնաս , շատ խօսել քեզի պէտքը չէ . կը հարցընեմ ո՞րը կ'ուզես , թագաւորին կամքը ընել՝ կուռքերուն զօհել՝ անանկով աշխրբիս փառքը վայելել կ'ուզես թէ չարաչար տանջանքով մահապարտի պէս մեռնիլ , գեղեցկութիւց մաշել . ես քեզի ամօթ կը սեպեմ որ կենդանի Մատուածներերը թողեր ես , մէկ գալիլիացիի մը ետեւէ կ'երթաս , որ հրեաները բռնեցին սպաննեցին . ան Քրիստոսն որ զինքը չի կրցաւ խալըսցընել , քեզ ինչպէս պիտոր ապրեցընէ : Պատասխանեց Քրիստոսի աղախինը . ես պատրաստ եմ ինքը-զինքս պատարագ մատուցանել փրկչին մերոյ Վնի , որ երկինք և երկիր ըրաւ , մարդ եղաւ , իր կամքովը մեռաւ , որպէս զի խորտակէ մահու իշխանին զօրութիւնը իրեն զօրքովը , որ դուք տգիտութեամբ Մատուած կը դա-

ւանիք . իսկ ան որ իրեն յարուժեամբը
յաւիտենական կեանք մեզի շնորհեց՝ դուք
անիկայ կը հայհոյէք . ես ան կեանքին ան
արքայութեան կը ցանկամ որ չանցնիր . դուք
կուռքերը պաշտելով որ մարդու ձեռագործ
են՝ կորսուիք պիտոր դժօնքին մէջը երէք :
Ըս խօսքերուն վրայ դատաւորը բարկանա-
լով՝ հրամմեց կապել , անխնայ ծեծել , ետ-
քը մազեղէն կտաւով շփել իրեն խոցերը , ա-
սով իրեն մարմինը վերէնիվար արիւնլուայ
եղաւ . ետքը հրամմեց բանտը ինջեցնել ,
ոտուրները շղթայ զարնել : Ըն գիշերը Վժ
պայծառ լուսով իրեն երևնալով՝ սիրտ տը-
ւաւ . մի վախնար , ով աղախին իմ , ըսաւ ,
դատաւորին խօսքերէն . քու վկայութիւնդ
ուրախութիւն է հրեշտակաց ու մարդկան .
ես ալ քեզի հետ եմ փրկելու ամմէն տան-
ջանքէն : Ըս ըսելով՝ իրեն խոցերն ալ ող-
ջընցընելով՝ երկինքը վերացաւ : Առվա-
ռէն ալ սիրտ առնելով խիստ ուրախ մնաց :
Ահա աստուածապաշտ կնիկ մը կար Յու-
լիա անունով . ասիկայ տեսնելով Առվա-
ռեայ քաջաճները՝ ու ետքը անանկ բոլորո-
վին ողջըննալը , փառաւորել սկսաւ զՎժ-
տուած . ինքն ալ ետեւէ ընկաւ որ՝ անոր հետ
մէկտեղ նահատակուի . անոր համար վառ-
վառէն առջևը բերել տուաւ՝ աս Յուլիան
ալ մէկտեղ եկաւ : Արքոր տեսաւ դատա-
ւորը Առվառէն բոլորովին ողջընցած՝ ինքն
ալ ուրախ զուարթ առջին կեցած՝ տեսար
ըսաւ մեր Վժտուածները ինչպէս քու վրատ

հոգ ունին ինչպէս քեզ շուտ մը բժշկեցին :
Պատասխան տուաւ կոյսը . ո՛վ դատաւոր ,
քուկին կուռքերդ կոյր են ու համր . մար-
դու ցաւ չեն տեսներ , չեն իմանար . մէկի
մըն ալ չեն կրնար դեղ ընել . թէ որ դուն
ճշմարտութեան հետեւիր՝ ես քեզի կը
ցցընէի ով է իս ողջընցնողը . ես Քրիստոս
ունիմ ինձի ճշմարիտ բժիշկ որ է Մս-
տուած , տէր և փրկիչ աշխարհի . դուն ա-
նիկայ չես կրնար տեսնել , ինչու որ՝ աչուը-
ներդ խաւարած են : Մս խօսքիս վրայ դա-
տաւորը անանկ կատղեցաւ որ՝ հրամմեց սըր-
բուհին կախել , կուշտերը երկըթով քեր-
թել , ներքեր կրակ դնել , գլուխն ալ կա-
պար գնտակներով ծեծել : Արբոր աս տե-
սաւ Յուլիա՝ ողորմուկ ձանով կու լար . դա-
տաւորը հասկընալով որ՝ ատ կնիկն ալ
քրիստոնեայ է՝ անոր համար կու լայ Ս առ-
վառէին վրայ , աւելի սկսաւ տանջել . փո-
րուն տակն ալ հրամմեց կրակ վառել : Ս առ-
վառէն անանկ տանջանքի մէջ աղօթք կ'ը-
նէր որ՝ Մստուած իրեն օգնական ըլլայ .
չըլլայ թէ տանջանքէն վախնայ , այլ զինքը
զօրացընէ որ՝ համարձակ քարողէ ճշմարիտ
հաւատքը :

Տեսնելով դատաւորն որ՝ երանելի կոյսը
աս տանջանքին ալ կը դիմանայ , հրամմեց
ծիծերը կտրելու . երբոր դահիճները կը
կտրէին՝ կոյսը երկինքը նայելով սաղմոս կ'ը-
սէր . Տէր Յեսուս , մի դարհոցաներ զերեսս չո-
յինէն . զհոգիդ չո սուրբ մի հաներ յինէն . Կուր

ինչ յնժոռութեան շրջութեան, և հոգւով զօրո-
ւութեան քո հասարակեալսն: Այս զուրցեւնինի մէկ
ուժ մը կ'իմանար Հոգւոյն սրբոյ շնորհքովը,
կտրըճութեամբ կը տանէր անտանելիցաւը:
Այս տանջանքը տուին նաև Յուլիայի:

Երբոր չի կրցաւ դատաւորը երկուքին
միտքն ալ դարձնել զատել տուաւ մէկմէ-
կէ. Յուլիան հրամմեց բանտը դնել, իսկ
Սաուլառէն քաղքին մէջը դուրսը մերկ
ժուռ ածցրնել. բայց կոյսը ջերմեռանդ ա-
ղօթք ընելով խնդրեց Աստուծմէ զինքը
ծածկել: Այն ատենը Վրիստոս երեցաւ ի-
րեն փառօք, հրեշտակներն ալ լուսեղէն
լաթերով անիկայ ծածկեցին: Այսանկ քալ-
ցրնելով բերին ինչուան Վելասիս գեղը.
ուր դատաւորը եկած ըլլալով նորէն կը
հարցընէր. տեսաւ որ միտքը չի փոխեր,
հրամմեց սրով գլուխը կտրել, անոր հետ
մէկտեղ նաև Յուլիան: Վիստոսի Սա-
վառեայ հայրը՝ որ հոն նստած խորհրդա-
կից էր եղած դատաւորին, ուզեց որ ինքն
ըլլայ իր աղջկանը դահիճ, անոր համար
ինքը հանեց լեռը զինուորներով: Հոն սըր-
բուհի կոյսը յօժարութեամբ երթալով ա-
ղօթք կ'ընէր, կը խնդրէր որ Աստուած ի-
րեն զօրութիւն տայ նահատակուելու. իր
նշխարքներուն շնորհք տայ, սլ որ հաւատ-
քով իրեն յիշատակը կատարէ՝ խնդիրքնին
կատարէ, ամմէն նեղութենէ փրկէ, մա-
նաւանդ ծաղկի հիւանդութենէ, տարա-
ժամ մահուանէ. մեղքերնուն ալ թողու-

Թիւն տայ : Չայն մը եկաւ երկնքէն . եկէ՛ ,
ո՛վ վկայդ , ո՛վ ձգնազգեաց նահատակ . եկէ՛
հանգչէ իմին արքայութեանս մէջ դուն ալ ,
Յուլիա կոյսն ալ մէկտեղ :

Ըր ըլլալուն պէս՝ ցաթկեց իր անգութ
հայրը՝ Թուրը ձեռքն առաւ , իր ձեռքովն
իր զաւկին գլուխը կտրեց . մէկ զինուոր մըն
ալ Յուլիային գլուխը կտրեց յամին իբր
300 . դեկտեմբեր 4 : Բայց երբոր ժողո-
վուրդը լեռնէն կ'իջնար , մէկ կրակ մը ըն-
կաւ երեց դատաւորն ալ Վիոսկորոսն ալ ,
որ Վ առվառեայ հայրն էր : Վ աղէնտիանոս
մէյմը աս սուրբերուն նշխարքները առաւ ,
խիստ պատուով Թաղեց Վելասիս գեղին
մէջը :

Վ առվառեայ գերեզմանն ու հայրենի
տունը մեծ ուխտատեղի եղաւ . ուր սրբուհ-
ւոյն ձեռք դպուցած տեղը աւազանին վրայ
կ'երևնային , և շատ հրաշքներ կ'ըլլային :
Ընոր համար սուրբ Յոհան դամասկացին
կ'ըսէ , Թէ սրբուհւոյն Վ առվառեայ նըշ-
խարքներէն իբրև մէկ աղբիւրէ մը բժշ-
կութիւն կը բխան . ո՛վ որ վրան մէկ խոց մը
մէկ ուռէցք մը ունենայ՝ հոն երթալով կը
բժշկուի . հեռու տեղ եղողներն ալ Թէ որ
հաւատքով աղօթք ընեն աս սրբուհւոյն՝
իրեն տօնը կատարեն , ժանտախտէ ալ կը
բժշկուին , ամմէն փորձանքներէ կը խալը-
սին , ամմէն ձախորդութեան մէջ գեղ և օգ-
նութիւն կը գտնեն , սատանային փորձու-
թիւններէ կ'ազատին : Ը առ հրաշքներ

ալ կը պատմուին երբոր իրեն նշխարքները
ասդիս անդին փռուեցան, եկեղեցիներ շի-
նուեցան. յատկապէս բարեխօս բռնուեցաւ
Ժողկի հիւանդութեան համար և վարդ-
ախտի. սաշտպան կրակէ, կայծակէ ու
ժանտախտէ պահուելու. մանաւանդ յան-
կարծակի մահուանէ : Ս'էկը լսելով թէ
ովոր ջերմեռանդ կ'ըլլայ սրբուհւոյն Ս առ-
վառեայ՝ առանց խոստովանութեան և հա-
ղորդութեան չի մեռնիր, ամմէն օր յատուկ
աղօթք կ'ընէր աս բանիս համար. ատեն անց-
նելէն ետե եղաւ որ՝ ասոր տունը կրակ ըն-
կաւ յամին 1448 . ինքն ալ երուիլ սկսաւ .
ան ատենը ամէն սրտովը աղօթք ըրաւ սրբ-
բուհւոյն Ս առվառեայ, որ չի թողնէ զին-
քը մեռնիլ հոն առանց սուրբ խորհուրդնե-
րը առնելու : Ս'եյմըն ալ տեսաւ որ՝ սրբ-
բուհին Ս առվառէ հոն երևնալով՝ կրակը
մէկդի ըրաւ, զինքը խալըսցուց կիսամեռ՝
ըսելով իրեն . ինչուան առտու ատեն առի-
քեզի համար որ սուրբ խորհուրդները առ-
նես : Ս'ս մարդուն թէպէտ ամմէն դին սե-
ցած մրկած էին կրակէն, բայց աչուրներն
ու լեզուն ողջ մնացեր էին, անանկով կըր-
ցաւ կրկին ընդհանրական խոստովանութի
ընել, սուրբ խորհուրդները փափագով կա-
տարել. առտու եղածին պէս՝ անանկ հօ-
գին աւանդեց սրբուհւոյն ըսածին պէս :
Ս'երիշ երկու հոգի ալ Ս առվառեայ հրաշ-
քովը մեռնելէն խալըսեցան, որպէս զի նք
խորհուրդները առնելու արժանի ըլլան,
ինչպէս որ հաւատքով խնդրեր էին :

ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆՆԷՍ

Կաւսար աղքատացեալ .

Ասոր հայրը Լատրոպիոս կ'ըսուէր , որ Պօլիս Լ'ըկադէոս կայսեր քով ստրատելատ էր , այսինքն զօրապետ . իր մայրը կ'ըսուէր թէ հողորա . երկուքն ալ բարեպաշտ երկիւղած Ղ'ստուծոյ : Իրեք զաւակ ունէին , երկուքը թագաւորին քով զինուորական կարգի մէջ դրուած էին , սինկղիտոս եղեր էին . իսկ պղտիկն Յոհաննէսը՝ քովերնին պահելով կարգալու տուեր էին , առաջ Ղ'ստուածաշունչը սորվելու , ետքը ճարտասանութիւն ու փիլիսոփայութիւն . աղէկ խրատներով բարի օրինակով խիստ կը հոգային որ բարի զաւակ ըլլայ : Ինչպէս որ իրաւ Յոհաննէսն ալ խելացի ու բարի ըլլալով՝ մէկ ընտիր զաւակ մը եղաւ . ծնողաց անչափ սէրը չաւրեց զինքը , չի հպարտացաւ , շփացած չի մեծցաւ , այլ որչափ որ ծնողքը զինքն աւելի կը սիրէին , անչափ ալ ինքը բարի ըլլալու սէր ձգեր էր . անանկով եղաւ ընթերցասէր ու ջերմեռանդ աղօթասէր . գիշեր ցօրեկ չէր դադրէր աղօթելէն :

Երբոր տասներու թը տարուան էր՝ օր մը դպրատուն երթալնինի՝ ճամբան տեսաւ մէկ կրօնաւոր մը անհանգստից վանքէն .

ասիկայ իրեն մէկ հրեշտակի մը պէս երև-
ցաւ . հողում սրբով լեցուելով գնաց քովը
հարցուց ով և ուսկից ըլլալը : Ան ալ պատ-
մեց իրենց վանքին կարգը՝ ինչպէս դաս դաս
բաժնուած գիշեր ցորեկ սրբութեան առ-
ջին փոխնիփոխ աղօթքի հետ կ'ըլլային ան-
դադար , անոր համար անհանգստից վանք
կ'ըսուէին . հիմա ես ուխտ եմ ըրեր , ըսաւ ,
Արուսաղէմ պիտոր երթամ . ետքը դառ-
նալու ըլլամ նէ՛ նորէն ան վանքը կ'եր-
թամ : Աս խօսքերուն վրայ Յոհաննէսին
սիրտը լեցուելով՝ երգուընցուց ան կրօնա-
ւորն որ երբոր Արուսաղէմէն դառնալու
ըլլայ՝ զինքն ալ մէկտեղ ան վանքը տանի :
Անք իրեք եղբարք ենք , ըսաւ , բայց
հայրս մայրս իս ամմէնէն աւելի կը սիրեն .
հիմա եղբարներուս պէս իս կ'ուզեն թագա-
ւորին քով սինկղիտոս ընել , ետքն ալ աշ-
խարհք խօթել կարգել . բայց ես միշտ ժամը
երթալով , աստուածաշունչը լսելով՝ հաս-
կըցեր եմ որ աշխրբիս ամմէն բանը ոչինչ
է , միայն աշխարհքս քամահրեն ու ձեզինը-
ման կենան է՝ որ յաւիտենական կեանք կը
վաստըկցընէ : Արօնաւորը ասոր զուրցուած-
քին վրայ զարմանալով՝ աղէկ ճանչցեր ես
ճամարտութիւնը , որդեակ ըսաւ . աս մտքին
վրայ ամուր կեցիր . ես խօսք կու տամ որ
դառնալէս ետև քեզ գամ առնեմ :

Յոհաննէսին սիրտը հանգչելով՝ գնաց
իր ծնողքներէն աւետարան մը խնդրեց ,
որ աղուոր գրերով , ոսկի զարդերով գրել

տուին, կայն ալ մարգրտէ բանուածքնե-
րով ազնիւ քարերով կապել տուին, մէջն
ալ իրենց ու Յոհաննէսին պատկերքը քա-
շել տուին, Յոհաննէս աս աւետարանը միշտ
քովը կը պահէր, անդադար կը կարդար,
կարդալով կը լուսաւորուէր, իրեն զուր-
ցածները գործքով ընել կը ջանար. աչքն
ալ միշտ ճամբան էր, կը սպասէր որ երբ կու
գայ ան կրօնաւորը :

Արբոր կրօնաւորը դարձաւ ու գտաւ Յո-
հաննէսը, աշխարհք իրեն եղաւ. բայց գիտ-
նալով որ ծնողքը լսելու ըլլան՝ թող պիտոր
չի տան, աղաչեց կրօնաւորին որ մարդ մը
չիմացած գաղտուկ ճամբայ ելլենք, ըսաւ,
չըլլայ որ մէկը իմանալով երթայ ծնողացս
իմացընէ : Ընանկով երկուքը մէկէն ծով-
եզրը եկան նաւ մը բռնելու որ անհանգրս-
տից վանքը տանի զիրենք. բայց նաւը որով-
հետեւ բեռ առնելու նաւ էր՝ սպասէր պի-
տոր ինչուան որ բեռով լեցընէ : Յոհան-
նէս հարցուց նաւուն վարձքը՝ հասկըցաւ որ
հարիւր դուռուշ կ'ուզէ, գնաց իր ծնողքէն
մէկ պատճառով մը հարիւր դուռուշն առաւ,
իբր թէ իր աշակերտակիցներուն հարկինք
մը պիտոր ընէ, ինչպէս որ մէկալնոնք միշտ
ըրած էին իրեն : Հայրը ստակը տուաւ,
բայց հետն ալ ծառաներ գրաւ, չըլլայ որ
տղայ ըլլալով պարապ տեղը խարձէ : Յո-
հաննէս ճամբան մէյմէկ պատճառ գտնե-
լով՝ ծառաները մէկիկ մէկիկ հեռացուց
իրմէ. անանկով եկաւ նաւուն վարձքը սր-

լաւ . նաւր մէկէն ճամբայ ելաւ . յաջող
հովալ գտնելով շուտով մը հասան :

Արօնաւորը գնաց մեծաւորին քով տեղ-
նիտեղը պատմեց ինչ որ հանդիպեցաւ . մե-
ծաւորը ասոր ջերմեռանդու թեանը վրայ ու-
րախացաւ , բայց վրան նայելով տեսաւ որ
մէկ փափուկ մեծցած տղայ մըն է , դուն
դեռ տղայ ես , ըսաւ , որդեակ , իսկ վանքին
ճգնու թիւնը խիստ . ով որ հոս կ'ուզէ կրօ-
նաւորիլ , քառսուն օր վանքը պիտի կենայ
մեր ճգնու թիւնն իմանալու համար , ետքը
կը հագնի մեր հագուստը , որ մազէ հիւ-
սուած կասպայ մըն էր . մէջքը կաշիէ գօտի ,
ոտքը չարրիս : Աղաչեմ , ըսաւ Յոհաննէս ,
հիմա ինձի հագցընէս , հայր սուրբ , աս
հագուստը՝ որ հրեշտակի ձեռունի . մազերս
ալ կտրես : Ա՛եծաւորը տեսնելով ասոր սէ-
րը յօժարու թիւնը , ժողվեց ամմէն կրօնա-
ւորները , մազերը կտրեց , ու ան հաստ հա-
գուստը հագուց իրեն . վրան օրհնու թիւն
կարգալով՝ յանձնեց Աստուծոյ շնորհացը :
Յոհաննէս ան կարգին մէջ մտածին պէս՝ ե-
ւելօք ճգնու թեան տուաւ զինքը . գիշերնի-
լուս հսկումընելով , լալով , սաղմոս ըսելով
կ'անցընէր . գետնի վրայ կը պառկէր , անօ-
թի կը կենար , հնազանդու թեան՝ եղբայր-
սիրու թեան գործքերն ալ անպակաս կ'ընէր
ամմէն սիրով , մտքովն ալ միշտ աստուա-
ծային բաները մտածելու հետ կ'ըլլար . ա-
նանկով աշխրթիս ամմէն մենծու թիւնը պա-
տիւր քամահրելով ոչինչ կը սեպէր : Ա՛ե-

Ծաւորը վրան նայելով կը զարմանար . կրօնաւորներն ալ օրինակ առնելով իրմէ՝ բարի նախանձ կը շարժէին :

Մտանկ անցուց հոն վեց տարի . վանքին ամմէն կերպը կանոնը սորվեցաւ , թէ ինչպէս պէտք է Մ. Յ ծառայել ճգնութեամբ : Բայց մեծաւորը օր մը իրեն խրատ տուաւ քիչցընել իր ճգնութիւնը . չափէն աւելի ըրած բանը տկարութիւն կը բերէ , որդեակ , ըսաւ . ամմէն օրուան աղօթքն ալ կը խափանէ անկար ըլլալով ընելու , շատ լալն ալ աչքիդ լոյսը կը խաւարցընէ : Բայց երանելին անանկ վառուած էր : Յիսուսին սիրովն օր ետեւէ ետեւ կ'եւելցընէր իր ճգնութիւնը՝ խիստ պաք բռնելով , միայն շաբաթ օրն ու կիրակի ուտելով , ան ալ քիչ մը աղ ու հաց , քիչ մըն ալ ջուր . իրեն յատուկ կերակուրն եղած էր սուրբ մարմին ու արիւնն : Յիսուսի :

Սատանան ասոր վրայ խիստ նախանձելով սկսաւ պատերազմիլ փորձութիւն ձգելով , մանաւանդ ծնողքը տեսնելու մէկ գութ մը մէկ կարօտութիւն մը ձգեց սիրտն օր , գիշեր ցորեկ կը հալէր կը մաշէր . ինչուան անանկ եղաւ օր , անշունչ պատկեր մը դարձաւ երանելին : Մեծաւորը նորէն խրատ տալ սկսաւ . որդեակ , ըսաւ , Մտուած անչափ ճգնութիւն կը պահանջէ մարդէն , որչափ օր կրնայ տանել : Յոհաննէս պատասխան տուաւ . հայր սուրբ , ճգնութիւնները չեն օր իս կը մաշեն , այլ իմ մեղքերս օր

խիստ շատ են . սատանան իմ սիրտս անանկ
կարօտութիւն կը բերէ ծնողքս ու ընտա-
նիքս տեսնելու , որ չեմ կրնար դիմանալ .
բայց կը յուսամ յ'ձ որ ձեր աղօթքովը
հոն ալ երթալովս իր գլուխը կը ճգմեմ : Մ-
սաւ իրեն մեծաւորը . ես քեզի չէի ըսեր ,
որդեակ , որ մեր ճգնութիւնը ծանր է , չես
կրնար դուն անիկայ քաշել , հիմա ինչ կ'ու-
զես որ ընենք : Յոհաննէս ըսաւ . աղօթք
ըրէք ձեր միաբաններովը , իս խրկեցէք :
Արբոր կրօնաւորները լսեցին Յոհաննէսին
երթալը՝ ամէնքն ալ լալ սկսան , անանկ
լալով աղօթքով ճամբայ դրին :

Յոհաննէս քիչ մը առաջ երթալով՝ ետ
դարձաւ , վանքին վրայ նայելով սիրտը ե-
լաւ , լալ սկսաւ իր բաժնուելուն վրայ .
ծունկ չոքելով ըսաւ . ողջոյն ձեզ սուրբ ժո-
ղով կրօնաւորաց , բնակարան հրեշտակաց ,
որ իս աղէկ կրթեցիք . յուսամ որ ձեր ա-
ղօթքովը իմ հօրս տանը մէջն ալ կը կո-
խեմ սատանային գլուխը : Մսանկ լալով
սաղմոսելով երթալնինի՝ աղքատ մը տե-
սաւ քռջրտած լաթերով , իր լաթերն անոր
հագուց , անոր պատրուտած լաթերն ինքը
հագաւ : Արբոր իր քաղաքը իր տունը հա-
սաւ՝ լալով աղաչեց Մտուծոյ չի թողնել
զինքը , շնորհք տալ որ կատարեալ յաղթէ
սատանայի , իր ողջութեան ատենն ալ զին-
քը յայտնել չի տայ : Մսանկ աղօթք ընե-
լով՝ պառկեցաւ իր տանը դրանն առջին :

Արբոր լուսացաւ առտու եղաւ , գուռը

բացուեցաւ , դռնապանը ասանկ աղքատ մը տեսնելով պառկած , քշպեց ըսելով . ել գնա ասկից . տէրս քեզ հոս չի տեսնէ , խիստ պիտոր սրդողի : Յոհաննէսն ըսաւ . մէյմը վեր Մատուծոյ նայէ , ինծի ողորմէ , ես մէկ օտար մարդ մըն եմ անանկ աղքատ , թող տուր որ աս ճամբուն մէկ ծայրը նստիմ . երբոր քու տէրդ ելլելու մտնելու ըլլայ՝ առաջ եկէ իմացուր որ ասկից հեռանամ . ես մէկի մը ծանրութիւն՝ քեզի ալ ձանձրութիւն չեմ ըլլար , դուն ալ Մատուծմէ վարձքդ կ'առնես : Ղռնապանը ասոր խօսքին վրայ խղճալով թող տուաւ :

Երբոր ծնողքը դռնէն դուրս ելան՝ երանելոյն աչուրները լեցուեցան , իր կարօտը առնելով շատ լացաւ . լալով նորէն աղօթք ըրաւ որ Մատուած զինքը չի թողնէ , զօրութիւն տայ ինչուան իր մահը հոն համբերելու : Մասնկ տարի մը համբերելէն ետե՛ս Եւտրոպիոս իր հայրը տեսնելով՝ կը զարմանամ , ըսաւ , աս աղքատը ինչպէս կը համբերէ ձմեռուան ցրտուն , մեր տունն ալ չի մտներ ամենեւին . հրամմեց իր ծառաներուն , մէկ խուց մը շինել տուաւ . թող հոն նստի , ըսաւ , կարող է Մատուած ասոր համար մեզի ողորմիլ . իր սեղանէն ալ կերակուրներ կը խրկէր , բայց Յոհաննէս ան ամմէն կերակուրը աղքատներուն կը բաժնէր ծածուկ , ինքը չորցած հաց ջուրը թըրջելով կ'ուտէր իրիկուրնէ իրիկուն :

() ր մըն ալ մայրը դուրս ելաւ . ասիկայ

տեսածին պէս՝ մէկ վայրենի շնչաւոր մը ե-
րեցաւ իրեն . այնչափ փոխուած էր երեսը
անօթու թենէն ու ճգնու թենէն՝ որ զար-
մանք եկաւ վրան : Առէք , ըսաւ ծառանե-
րուն , քաշեցէք տարէք սրվիկայ , աչքս չի
տեսնէ . թէ որ աս հոս կենայ , ես չեմ կըր-
նար անցնիլ : Ե ուտ մը քաշեցին տարին ,
հեռու տեղ մը ձգեցին . բայց անիկայ նորէն
կը դառնար հոն կու գար . դռնապանները
կ'ըսէին իրեն . մարդ , գնա ասկից հեռացիր ,
մեր տիկինը քեզ չի կրնար աչքովը տեսնել .
բայց Յոհաննէս շատ աղաչեց իրենց որ ո-
ղորմին , առջինին պէս պզտիկ խուց մը շի-
նեն . Աստուած ալ ձեզ կ'օրհնէ , ըսաւ . ա-
նոր համար իրենք ալ անանկ ըրին :

Յոհաննէս ասանկ իրեք տարի ճնշելով
իր մարմինը սաստիկ ճգնու թեամբ , դար-
ձաւ եղաւ մէկ անշունչ պատկեր մը : Իրեք
տարիէն ետե տեսնելով Քրիստոս իր ծա-
ռային մեծ ճգնու թիւնը՝ հրեշտակ խրկեց ,
որ ըսաւ իրեն տեսիլքի մէջ . բարի և հա-
ւատարիմ ծառայ Յոհաննէս , ողջոյն քե-
զի . Աստուած որ սիրեցիր բոլոր սրտովդ ,
իրեք օրէն պիտի լմննայ քու քաշածներդ ,
գաս վարձքդ պիտոր առնես , ճգնաւորնե-
րուն դասը պիտի նստիս : Ան ատենը Յո-
հաննէս ձեռուրները վեր վերցընելով գո-
հու թիւն տուաւ Աստուծոյ . աղաչեց որ իր
ճնողացն ալ ողորմի , անոնց մեղքին թողու-
թիւն տայ : Աղօթքէն ետե իր հօրը մա-
տակարարը կանչեց ապրսպրեց տիկինին ը-

սելու . ան խեղճ աղքատն որ քու դռնէդ կը
հալածէիր , մէկդի քաշել կը հրամմէիր ,
հիմա կ'աղաչէ որ՝ ինծմէն չի գանիս , հա-
պա արժանի սեպես քովս գալու . հարկա-
ւոր բան մը ունիմ քեզի զուրցելու :

Արքոր աս խօսքերս լեց մայրը՝ ըսաւ .
ինչ պիտոր ըլլայ ան աղքատին ըսելիքը ին-
ծի . ես չեմ կրնար գիմանալ անոր դարշա-
հոտութեանը , չեմ կրնար տեսնել անոր աղ-
տոտութիւնը . գնաց Աւտրոսպիոսին պատ-
մեց , ան ալ զուրցեց . գնա մի գանիր աղ-
քատներէն . Մտուած աղքատները ըն-
տրեր է իրեն համար : Մի խօսքս լսելով չու-
զեց քովն երթալ : Յոհաննէս հասկընալով
որ՝ չուզեր մայրը իրեն գալու , նորէն ուրիշ
ծառայ մը խրկեց իրեն ըսելու . ես իրեք օ-
րէն պիտի մեռնիմ . թէ որ չի գաս իս չի
տեսնես , ետքը շատ ցաւ պիտի քաշես , շատ
մեղքընալէդ դուն քեզի վայ պիտի տաս ,
բայց չի կրնաս պիտոր քեզ մխիթարել . յա-
ւիտեան սրտէդ պիտի չելլէ ան խոցը :

Մի խօսքերէս վախնալով մայրը՝ գնաց ին-
չուան ան տեղն ուր որ կը կենար Յոհան-
նէս . դրանը քով կենալով հրամմեց իր ծա-
ռաններուն որ քովը բերեն . միշտ սրտին
մէջը պտրտցընելով ան խօսքը՝ թէ որ չի գաս՝
յաւիտեան պիտի ցաւիս չի մխիթարուիս ,
ինչ պիտոր ըլլայ ատ խօսքը ըսելով կը մըտ-
մտար : Յոհաննէս տեսնելով իր մայրը՝ ը-
սաւ . Մտուած ամենաբարին հարիւրապա-
տիկ քեզ հատուցում ընէ՝ հոս ալ անդիու-

աշխարհքն ալ, որովհետեւ աղէկ ընդունելու թիւն ըրիք . իմ վրաս կատարեցիք աւետարանին խօսքը՝ թէ ինչ որ կ'ընէք մէկ պղտիկի մը՝ ինծի ըրած կ'ըլլաք . բայց ես աղքատս մէկ օրհնութեաննշան մը չունիմ որ ձեզի տամ . միայն թէ, տիկին, երդուընցիր դուն ինծի որ՝ ինչ որ քեզի պիտոր ըսեմ ընես : Ըն ալ երդուընցաւ, ինչ որ ըսես՝ ամմէնն ալ կ'ընեմ Ըստուծոյ համար, ու մեր զաւկին համար, որ գնաց՝ բայց ինչ եղաւ չիյտենք : Ըս յիշենինի կու լար կը հեկեկար : Յօհաննէս ըսաւ . տիկին, մտիկ դիր ինծի ինչ որ ես կ'ըսեմ քեզի . աս մաղեղէն կապայովս որ հագեր եմ, իս թաղես . ուրիշ ազնիւ կապայ ինծի չի հագցընես, ուրիշ տեղ ալ չի թաղես, հապա աս պղտիկ խցին մէջը՝ ուր որ կը նստէի : Ըս խօսքերուն վրայ շատ զարմանք կու գար տիկնոջը . ինչ պիտոր ըլլայ, կ'ըսէր, որ աս աղքատը իբր տնէն մէկը անանկ կը խօրաթէ հետս, չէ թէ օտարի պէս : Ըս մտմտալնինի՝ Յօհաննէս իրեն աւետարանը հանեց ձեռքը տուաւ ըսելով . աս ըլլայ քեզի ու քու տիրոջդ բաժին հոս՝ ու անդիւ աշխարհքը : Սայրը ձեռքն առնելով աւետարանը՝ ասդիս անդին կը պտըտցընէր, զարմանալով կ'ըսէր . ինչպէս կը լմանի ան աւետարանին որ մեր զաւկին համար շինել տուինք : Ըս ըսելով՝ ներս վազեց իր ընկերոջը ցցուց . ան ալ տեսածին պէս ըսաւ . ստոյգ մեր զաւկին աւետարանն էր, երթանք հարցը .

նենք ուսկից ձեռքն ընկած է . անանկ է նէ
գիտէ ուր ըլլալը : Արախանալէն երկուքը
մէկտեղ վազեցին , աղքատ կարծուածին
քովն եկան , արցունք թափելով ըսին . Աս-
տուծոյ ահաւոր անուանը վրայ քեզ կ'եր-
դուրնցընենք իրաւը զուրցէ , աս աւետարա-
նը ուսկից ընկաւ քու ձեռքդ :

Ան ատենը Յոհաննէսին սիրտը ճղմա-
տելով՝ ծնողացը վրայ գուժը շարժելով՝ ան-
չի կրցաւ դիմանալ . հառաչանք հանելով
ըսաւ . ասիկայ ան աւետարանն է՝ ուսկից
որ ճշմարտութեան ճամբան սորվեցայ . ամ-
մէն բան թողի , Քրիստոսի խաչը շալկե-
լով իր ետեւէն գացի , որպէս զի արժանի
ըլլամ իրեն . աս կրօնաւորական զգեստս
հագայ իմ ու ձեր փրկութեանը համար :
Ինչուան հոս մտիկ կ'ընէին ծնողքը , կը
նայէին ուր պիտի լմնցընէր խօսքը : Ատքը
ըսաւ Յոհաննէս . երբոր Աստուած կատա-
րեց իմ սրտիս խնդիրքը ինչպէս որ իս կը
տեսնէք ետքի աղքատութեան մէջ , վախ-
ճանս ալ հասած ըլլալով՝ հիմա յայտնեմ
ձեզի ինչ ըլլալս . ես եմ Յոհաննէս ձեր
զաւակը . աս ալ ան աւետարանն է որ դուք
ինձի տուեր էիք : Աս խօսքին վրայ ծնող-
քը զարմանքէն պաղած կեցան , փնտուել-
սկսան ան նշաններն որ ունէր իրենց զա-
ւակը . մէյմըն ալ տեսածնին պէս ճանչ-
ցան . մէկէն լաց փրցընելով ձայն ձգելով
ճիտը փաթթուեցան . ողորմուկ խօսքերով
իրենց կսկիծը պատմելով կու լային կ'ող-
բային առտուրնէ ինչուան կէս օր :

Ըստ բանս լսելով բոլոր Պօլիս քաղաքը
թունտ ելաւ . ամմէն ժողովուրդ հոն վա-
զեց տեսնելու , բայց Յոհաննէս ան ատե-
նը հողեվարքութեան մէջն էր , որ պայծառ
երեսով՝ երկինքը նայելով Յիսուսին հետ
կը խօրաթ էր . մէյմըն ալ՝ տէր Յիսուս , ըն-
կալ զհողի իմ ըսելով՝ իր հողին աւանդեց
քսանութը տարուան :

Ո՛վ կրնայ պատմել ան ողբն որ ծնողքն
ու իրեն եղբարները , ազգականները , բոլոր
քաղաքն ալ ըրին . մայրը կսկրծէն խելը
ուածի պէս ըլլալով , մոռցաւ իր զաւկին պա-
տուէրքը . հանեց մազեղէն լաթերը՝ ոսկե-
թել ծանր զգեստ հագուց , բայց մէկէն ձե-
ուուրները քաշուեցան . ան ատենը հայրը
յիշելով ըսաւ , մեր զաւկին ուզածը կատա-
րենք ինչպէս որ ինքն ըսաւ . բայց մի բար-
կանար սուրբդ Մատուծոյ : Ըստ ըսելով՝ հա-
նեցին վրայէն ազնիւ զգեստները՝ իրեն պա-
տրուած հին լաթերը հագուցին . մէկէն
հոն անուշահոտութիւն մը բուրեց իրեն
սուրբ մարմինէն , որ իրեն խուցն ալ բոլոր
քաղաքն ալ անուշ հոտով լեցուց . սաստիկ
լոյս ծագեց սուրբ մարմնոյն վրայ , մայրն ալ
բժշկուեցաւ :

Ըստ բաներս լսելով թագաւորն ու պատ-
րիարզը՝ թաղելու եկան . տեսնելով վրայի
լոյսը՝ փառք տուին Մատուծոյ , հոն իր խցին
մէջը թաղեցին : Թաղելէն ետեւ սրբոյն
ծնողքը ժամ շինեցին գերեզմանին վրայ ,
ուր սրբոյն բարեխօսութեամբը շատ բժրչ-

կութիւն ըրաւ Մատուած : Իրենց ունեցածն ալ աղքատաց բաժնելով, կրօնաւոր եղան . ինչուան իրենց մահը ան տեղը կենալով, սուրբ նշխարքներուն ծառայելով, բարի ճգնութեամբ վախճանեցան : Մասնկով առաջ իրենք բարի կրթութիւն տուին Յոհաննէսին, ետքը իրենց զաւակն ալ իրեն օրինակովը, բարի վարքովը աւելի ազէկ կրթութիւն տուաւ . բոլորովին Վրիստոսի նմանիլ սորվեցուց :

ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍ

Ս սուրբ հայրապետին վարքը բոլոր հրաշք է . որ ծնաւ Միւռիա քաղաքը Օմիւռնիայի մօտիկ : Հօրն անունը Եպիփան էր, մօրը՝ Վանիս . որ իրենց ծերութեատենն ունեցան աս օրհնեալ զաւակը : Երբոր եօթը օրուան եղաւ՝ տեսան որ իր օրօրոցին մէջը ոտքի վրայ կեցաւ աս տղան երկու ժամի չափ . չորեքշաբթի և ուրբաթ օրերը մէկ անգամ միայն մօրմէն կաթ ծծել սկսաւ : Մտնք լսելով իր քեռին՝ Վիկոզայոս անուն՝ որ Միւռիոյ եպիսկոպոս էր, սուրբ ու ընտրեալ մարդ, փառք կու տար Մատուածոյ . որովհետեւ իրեն ցցուցեր էր Մատուած ինչ երևելի մարդ պիտոր ըլլար աս տղան . երանի, կ'ըսէր, ան ժողովրդեան՝ որ ասանկ հովիւ պիտոր ունենայ : Երբոր հինգ տարուան եղաւ՝ ազէկ վարպետի մը տուին .

որ մը վարպետ երթալնինի մէկ խեղճ կնիկ
մը տեսաւ ոտուրները բռնուած . աս տղին
սիրտը չի դիմացաւ , վրան խաչ մը հանե-
լով ըռնտցուց :

Արբոր մենծցաւ , տեսնելով ծնողքը ա-
սոր վրայ շնորհքը՝ Աստուծոյ նուիրեցին ,
եկեղեցնայ տունն իր քեռինն խորհրդովը .
հոն սրբութեամբ հրեշտակի մը պէս մենծ-
նալով՝ տասնըւինը տարուան քահանայ ձեռ-
նադրուեցաւ սրբոյն Սիոնի եկեղեցին որ ի-
րեն քեռին շինել տուեր էր : Չեռնադրուե-
լէն ետեւ աս նորընծայ քահանան՝ Աիկո-
ղայոս ալ աւելի առաքինութեան ետեւէ ըն-
կաւ . ծնողքը վախճանելէն ետեւ շատ ժա-
ռանգութիւն ընկաւ իրեն , բայց ամմէն ու-
նեցածը աղքատներուն կը բաժնէր գաղ-
տուկ . մէկ մարդու մըն ալ բաժնեց՝ որ շատ
արդիւնաւոր եղաւ : Ասիկայ հարուստ մարդ
մըն էր , ետքը անանկ աղքատ էր եղած .
իրէք աղջիկ ունէր չքաւորութենէն չէր
կրնար կարգել . աս բանս իմանալով սուրբն
Աիկողայոս , գիշերանց գնաց ծածուկ պա-
տուհանէն անչափ ոսկի ձգեց , որչափ որ
պէտք էր իր առջինեկ աղջիկը կարգելու .
առտուն մարդը տեսնելով անչափ ոսկին իր
տանը մէջ ձգած , շատ զարմացաւ . Աստու-
ծոյ պարգէն է ըսելով՝ առջինեկ աղջիկը
կարգեց : Սուրբը լսելով որ՝ իր տուած ո-
ղորմութիւնը իր մտքին հասաւ , գիշերանց
մէյմըն ալ ձգեց այնչափ ոսկի . մարդը ա-
նով երկրորդ աղջիկն ալ կարգեց : Արբոր

սուրբը երրորդ անգամ ալ ձգեց անչափ ու-
կի երրորդ աղջրկանը համար, մարդը իմա-
ցաւ, արտորնօք ետեւէն վազելով հասաւ
ոտքը ինկաւ. հոգւոյս ալ մարմնոյս ալ դուն
եղար փրկիչ, ըսելով, շնորհակալ եղաւ.
բայց սուրբը ապրսպրեց որ մէկի մը չի զուր-
ցէ ինչուան իր մահը :

Տեղ մը նոճի (սէլվի) ծառ մը կարքառ-
սուն կանգուն երկան, իրեք կանգուն լայն.
սատանաները մէջը բնակած՝ քովի գեղացի-
ները կը վախցընէին, կռապաշտութիւն ը-
նել կու տային. աս ծառը կտրել տուաւ
սուրբը, տախտակ կտրել տալով՝ սուրբ Սիո-
նի ժամը տանել տուաւ : Ահռան մը վրայ
աղբիւր բղխեցուց. մէկ զարհուրելի դիւա-
հար մը ըռընացուց, որ շղթաներով կա-
պուած էր :

Տեսնելով որ ասանկ հրաշքներէն փառք
կու գայ իրեն, փախչելու համար Արուսա-
ղէմ ուխտի գնաց. նաւուն մէջը յայտնի
տեսաւ որ՝ սատանան ձեռքը թուր բռնած՝
նաւուն չորս դին պտրտելով կը վախցընէր.
սուրբը գուշակելով ըսաւ ճամբորդներուն
որ փոթորիկ պիտոր ելլէ, աղօթք ընել ա-
պրսպրեց : Արբոր իրիկուան աղօթքն ըրին,
յանկարծ անանկ փոթորիկ մը ալէկոծու-
թիւն մը եղաւ որ կայմին (տիրէկին) դլու-
խը տնկած խաչը վար ձգեց, նաւը ընկղմելու
մօտիկ եղաւ. ամմէնն ալ լալով սրբոյն
ոտքն ընկան. սուրբը աղօթքի կենալով փո-
թորիկը դադրեցուց, բայց սատանան չի դա-

դրեցաւ նեղութիւն տալէն . երբոր մէկը վեր կ'ելլէր խաչն իր տեղը տնկելու՝ ինչպէս որ ապսպրեր էր սուրբը, վար ձգեց ան մարդը մեռաւ . բայց երբոր սուրբը քովն եկաւ, աղօթք ըրածին պէս՝ մարդը ոտքի վրայ կեցաւ :

Արբոր նաւը Աղեքսանդրիա հասաւ՝ նաւավարները աս հրաշքները պատմեցին ամմէնուն . անկից ո՞վ որ ինչ հիւանդ ունէր, սրբոյն առջև կը բերէր, սուրբն ալ ամմէնը կը բժշկէր . մէջերնէն մէկ կոյր մըն ալ բժշկեց ժամուն կանթեղին ձէթովը օծելով : Քանի մը օր Ագիպտոսին դիէրը քալելէն ետև Արուսազէմ գնաց սուրբ տեղերը տեսաւ : Արբոր կը մտմտար հոն անապատը քաշուիլ՝ հրեշտակ Աստուծոյ իրեն երևնալով՝ հրամմեց իր քաղաքը դառնալ, եկեղեցին չի թողնել . անոր համար նորէն նաւ մտաւ, նորէն խալըսցուց նաւը ալէկոծութենէ . անանկով դարձաւ Սիւռիա իր քաղաքը, աղօթարան մը շինեց . ապրսպրեց որ բանուորներուն կերակուր տան : Արբոր իրեն ըսին որ՝ մէկ հաց մը միայն ունինք, ձեռքն առաւ ան հացը, օրհնելով մանրեց . ութսունուիրեք հոգի կերան ան հացէն, ամմէնն ալ կշտացան . իրեք զամբիւղ ալ հաց եւելցաւ իննը սեղանի վրայէն : Արբոր Սիւռիա քաղաքը ժամտախտ եղաւ, ետքը սով, սուրբը ամմէնուն կը հասնէր կը հոգար ինչ կարօտութի որ ունենային :

Այլաւ ատեն որ՝ իրեն քեռին՝ Արկողայոս
Եպիսկոպոսը մեռաւ , ասիկայ նստուցին իր
տեղը՝ որ առաջ տեսիլքով յայտնուած էր
իրեն ասանկ . Վրիստոս ու Մատուածա-
ծին երեցան իրեն , մէկը աւետարան տը-
լաւ , մէկալը շուրջառ . քիչ մը անցաւ՝ Ե-
պիսկոպոսներուն ժողովը զինքը Եպիսկոպոս
ձեռնադրեցին Սիւրբա քաղքին վրայ , որ
Օմիւռին ալ կ'ըսուի : Ան ատենը սկսաւ
սուրբը իր հօտը հովուել , լուսաւոր վարդա-
պետութեամբ քարոզել : Արկողէտիանո-
սին հալածման ատենը համարձակ կը քա-
րոզէր քրիստոնէութիւնը . անոր համար շատ
վիշտ ու հալածանք քաշեց . բանտը մտաւ ,
քշուեցաւ , ինչուան որ Արտանդիանոս Թա-
գաւորը նստելով՝ իր տեղը դարձաւ անոր
հրամանովը՝ կռապաշտութե քաները վեր-
ցուց : Արտեմիս կուռքին կռատունն որ կար
Սիւրբա՝ հիմանց քակեց , ինչուան սատա-
նաներու ձայներ լուեցան , որ կու լային
կողբային իրենց քշուելուն վրայ : Արիո-
սեան ու սաբէլեան հերետիկոսութեանց
դէմ ճշմարտութիւնը սորվեցուց , որ ան
ատենը սկսեր էին ծաւալիլ :

Արբոր Արկիոյ ժողովն եղաւ Արիոսին
դէմ , հոն ժողուող հայրապետներէն մէկն
ալաս սուրբ Արկողայոսն էր . ժողովէն դառ-
նալէն ետեւ արթուն կեցաւ իր ժողովուրդը
պահելու ան հերետիկոսութենէ . միան-
գամայն իր ճգնութիւններն ալ չէր ձգէր .
աղօթքի պաքի հետ կ'ըլլար . մէկ անգամ

միայն կը ճաշակէր օրը . իր ամմէն հոգը աղ-
քատներու վրայ էր : Տարի մը սաստիկ սով
եղաւ . աս սուրբը զօրութեամբն Մատուծոյ
մէկ նաւապետի մը երեցաւ որ՝ Սիկիլիա
կղզիէն ցորեն առած Սպանիա կ'երթար .
ձեռքը իրեք զուռուշ դնելով՝ առ աս գրաւս
(փէյ) ըսաւ , ցորենը բեր Սիւռիա քաղա-
քը : Նաւապետը առաջ երազ կարծեց ,
ետքը զուռուշները ձեռքը տեսնելով՝ զար-
մացաւ , նաւը դարձուց . երբոր Սիւռիա
հասաւ , հոն ծախելով ցորենը շատ աւելի
շահեցաւ , քաղաքն ալ սովէն խալըսեցաւ :

()ը մը երբոր սուրբ Նիկողայոս հեռու
քաղաք մը գացեր էր , մարդ եկաւ իրեն
հասկըցուց որ Սիւռիա քաղքին մենծը
կաշառք առնելով՝ իրեք անմեղ մարդիկ
մեռնել վճռեց : Սուրբը հրաշքով հոն հա-
սաւ ան ատենն որ գետինը չօքեցուցած գըլ-
խընին պիտոր կտրէին . դահճին ձեռքէն
թուրը քաշեց առաւ , իրեք հոգին ալ խա-
լըսցուց . մենծին քովն ալ դնաց վախ ձգեց
թագաւորին ամբաստանելու :

Մի գիպուածս լսեցին իրեք մենծեր Սիւ-
ռիային մօտիկ ըլլալով , որոնց վրայ նախան-
ձողները թագաւորի երկրորդին կաշառք կե-
րուցին պիտի սպաննէին . ասոնք լալով սուրբ
Նիկողայոս կը կանչէին . հասիր , սուրբդ
Մատուծոյ , կ'ըսէին , ինչպէս որ ան իրեքին
հասար : Նիկողայոս ան գիշերն երեցաւ
թագաւորին որ մեծն Վոստանդիանոս էր ,
հրամեց ազատելու անոնք որ զրպարտուած

էին : Վսուն ո՞վ ես , ըսաւ թագաւորը , որ
ասանկ իս կը վախցընես . կամ ի՞նչպէս աս
ատեն մտար իմ խուցս : Այս Վիկողայոսն
եմ , ըսաւ : Լ՛նկէց աներեւոյթ ըլլալով՝ թա-
գաւորի երկրորդին քովը գնաց վախցուց
կաշառք առնելուն ու զրպարտելուն համար :

Լ՛ստուն թագաւորը իր տեսիլքը երկրոր-
դին պատմեց , ան ալ թագաւորին պատ-
մեց : Իր առջին բերել տուաւ թագաւորն
ան իրեքը . արդեօք կախարդութեամբ քովս
բերել տուիք , ըսաւ , Վիկողայոսը : Լ՛նոնք
ալ ըսին . նոր կախարդութիւն չիյտենք ,
հապա բարեխօս կանչեցինք մեզի : Թագա-
ւորը զիրենք ազատեց ու շատ պարգևներ
տուաւ որ Վիկողայոսին եկեղեցնայ ըն-
ծայեն . իրեն ալ ըսեն՝ ինչ որ ապրսպրեցիր
ըրի , իս յիշէ աղօթքիդ մէջը :

Լ՛սանկ բարեգործութեամբ ու հրաշքներ
րով անցընելով միշտ իր կեանքը սուրբ Վի-
կողայոս հիւրնտոցաւ : Մեռնելու մօտիկ դի-
ւահար կնիկ մըն ալ բժշկեց : Տեսաւ որ
հրեշտակ Լ՛ստուծոյ եկեր էր հոգին տանե-
լու , խաչակնքելով իրեն մարմինը : Ի՛ չեղ
Տէր յոսանաց սաղմոսն ըսաւ՝ անանկով հոգին
աւանդեց գրեթէ Աոստանդիանոսի վերջի
տարին : Իր մեռնելէն ետեւ անհատնում
են հրաշքները որ կ'ընէ ամմէնուն վրայ ,
ով որ հաւատքով բարեխօս կը կանչէ :

ՍՐԲՈՒՀԻ ԹԵԿՂ

Աս կոյսը Վկոնիոն կամ Վ ծնեա քաղ-
քէն էր. իրեն մայրը որբեվարի էր մնացած,
որ շատ հարուստ կնիկ էր, բայց կռապաշտ.
Թեկղ ալ նշանած էր մէկ իշխանի մը՝ որ
Թեմերոս կ'ըսուէր: Արբոր Պօղոս առա-
քեալ ան քաղաքը գալով՝ Ուեսիփորայ
տունն ինջաւ, շատ բազմութիւն թափե-
ցան հոն իրեն քարոզութիւնը լսելու. Թեկ-
ղի տունն ալ մօտիկ ըլլալով՝ պատուհանն
եկաւ լսելու առաքելոյն խօսքերը, որ իբրև
մէկ երկնային կրակ մը հոգւոյն սրբոյ՝ ա-
նանկ կ'ելէր բերնէն, լսողներուն սիրտը կը
վառէր:

Ասեցէք ինծի, ժողովուրդ, կ'ըսէր, որ
եկեր էք բան լսելու ինծի պէս օտար մար-
դէ. իրաւ նոր բան ունիմ ձեզի ըսելու,
բայց աստուածային բան, որ սորվեցայ Մ-
տուծմէ, ան որ մարդու կերպարանք առնե-
լով՝ եկաւ երկնային քաղաքավարութիւն
մեզի սորվեցուց: Արանի անոնց որ սուրբ
է սրտերնին, անոնք Մտուած պիտի տես-
նեն: Արանի անոնց որ իրենց մարմինը սրը-
բութեամբ պահեցին, անոնք Մտուծոյ
տաճար պիտոր ըսուին: Արանի անոնց որ
իրենք զիրենք ճնշեցին Մտուծոյ համար,
աշխարհք քամահրեցին, անոնց հետ Մ-
տուած պիտի խօսի: Արանի անոնց որ սրը-

տերնուն մէջ Մատուծոյ վախն ունին, անանկները հրեշտակ Մատուծոյ պիտոր ըսուին: Արանի անոնց որ մկրտութեան մաքրութիւնը կը պահեն, անոնք Հօր Մատուծոյ և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ քովը պիտոնստին: Արանի կուսանաց հոգիներուն ու մարմիններուն, անոնք հաճոյ պիտոր ըլլան Մատուծոյ, իրենց սրբութեան վարձքն ալ պիտոր առնեն:

Մտաստուածային խօսքերն որ Պօղոս առաքեալ կը խօսէր, եղան լման մէկ երկնային կրակ մը որ ընկաւ (Թեկղի սրտին մէջը, բոլոր սրտով վառեցաւ, իբրև բարի երկիր մը աւետարանական սերմը ընդունեցաւ. իրեք օր ան պատուհանէն չի զատուեցաւ, որովհետև առաքեալը գիշեր ցորեկ հոն քարոզելու հետ էր: (Թեկղի մայրը շատ հեղ ու զեց անկէց հեռացընել որ չիլէ, բայց չի կրցաւ. ան ատենը ճարը հատնելով իրեն նշանածը (Թեմերոսը կանչել տուաւ, ըսաւ. գիտցիր որ աս նորեկ մարդը Պօղոս՝ ամբողջ Վիոնիոն քաղաքնիս կ'աւրէ կը պղտորէ. շատ էրիկ մարդ անոր աշակերտեցան. ամմէնուն կը սորվեցընէ կուռքերը թողնել, մէկ Մտուած մը պաշտել, կուսութեամբ կենալ. ինչուան մեր (Թեկղ ալ անոր խօսքին զմայլած՝ քանի օր է որ աչքը չի դարձընէր՝ ան տանը վրայէն՝ ուր որ կը խօսի աս մարդս:

(Թեմերոս խրատ տալ սկսաւ (Թեկղի ասդին գալ պատուհանէն որ մտիկ չընէ ա-

նոր խօսքերը , բայց անիկայ և ոչ պատաս-
խան տալու արժանի սեպեց . որովհետև
Հոգին սուրբ արթնցուցեր էր իր միտքը ,
առաքելոյն ըսածներուն ուժը կը մտմտար :
Եւ որ վրայ Թեմերոս կատղելով դուրս ե-
լաւ Պօղոս առաքելոյն տունը մտնողներուն
ստակ խոստացաւ . իրեն հասկըցընեն զուր-
ցեն ինչ մարդ է ասիկայ , ինչ կը սորվեցը-
նէ : Դեմաս ու Հերմոգինէս որ դարբին
(չիլինկիր) էին , Պօղոս առաքելալէն օտա-
րանալով Թշնամի էին եղած , մատնեցին
Թեմերոսի՝ Թէ աս մարդը քրիստոնէից
գլխաւորներուն մէկն է . կտրիճները աղ-
ջիկներէն կը զատէ , աղջիկներն ալ կտրիճ-
ներէն . կ'ըսէ որ՝ յարու թիւն չէք կրնար առ-
նել , ինչուան որ դուք ձեզ սուրբ չի պահէք :
Թեմերոս շատ մարդ գլուխը ժողովելով՝ առ-
տուանց կանուխ մտաւ բազմութեամբ Ս-
նեսիփորայ տունը , բռնեց Պօղոս առաքեա-
լը դատաւորին առջին բերաւ ըսելով . աս
մարդը չի թողուր աղջիկներուն կարգուիլ :
Դատաւորն ըսաւ Պօղոսի . ինչ է որ կը
սորվեցընես : Եւ աքեալն ըսաւ . ես կը սոր-
վեցընեմ մէկ Եստուած ճշմարիտ , որ ուրիշ
բան չուզեր , բայց միայն սրբութիւն ու
փրկութիւն մարդկան . անիկայ խրկեց իս
աշխարհիս քարոզելու՝ որպէս զի մարդիկ փրկ-
ուին , մեղաց ցանկութենէ ազատուին ,
ճշմարտութեան սէր ունենան , որ կը սոր-
վեցընէ էրիկ մարդու կնիկ մարդու՝ ինչ որ
արժան է ընել սպարկեշտութեամբ ու հնա-

զանդու թեամբ : Վատաւորը հրամմեց կապել բանտը դնել՝ ինչուան որ աղէկ մը լսէ իմանայ :

Թեկղ անչափ էր վառուած Պօղոս առաքելոյն խօսքերը լսելու որ իր ապրուճանները իրենց տանը դռնասլանին տուաւ , անանկ դուրս ելաւ , բանտապետին ալ ուրիշ ոսկի զարդերը տալով՝ բանտը մտաւ , առաքելոյն քովը նստելով՝ անոր խօսքերը լսել սկսաւ . զմայլելէն՝ անոր կապանքներն ու երկաթները կը պագնէր : Ասեցին աս բանս Թեկղի ու Թեմերոսին ընտանիքը՝ պատմեցին դատաւորին , նորէն Պօղոսը առջևը տարին . իսկ Թեկղը բանտին մէջ մնալով կու լար , արցունքովը կը թրջէր առաքելոյն նստած տեղը : Վատաւորը Թեկղն ալ բերել տալով ըսաւ . ինչո՞ւ համար նշանածիդ հետ չես կարգուիր : Թեկղ ամենևին պատասխան մը չի տալով՝ միշտ առաքելոյն վր կը նայէր : Հոն եղող բազմութիւնը մէկ բերան աղաղակ վերուցին առաքելոյն ու Թեկղի համար . կորսնցուցէք աս կախարդները : Թեկղի մայրն ալ կը կանչէր իր աղջկանը համար . կորսնցուցէք աս խենթս , որ ամմէն կանայք տեսնելով վախնան , ատ չար վարդապետութիւնը չի սորուին :

Վատաւորը ծեծել հրամմեց Պօղոս առաքեալը , քաղքէն դուրս հանել . իսկ Թեկղին խրատել սկսաւ որ թողնէ Վրիստոսն ու Պօղոսը , մօրն ու իր նշանածին մտիկ դնէ : Վրանի մը օրէն ետև երբոր չի կրցաւ

միտքը դարձնել ոչ յորդորելով, ոչ սպառնալով, վճիռ հանեց որ կրակը ձգեն երեն: Արքոր բազմութի ժողովրդեան ժողվուեր էին ան տեսիլքը տեսնելու՝ (Թեկղ կը նայէր կը փնտրուէր որ Պօղոս առաքեալը տեսնէ: Բայց անոր տեղը տեսաւ Վրիստոս իրեն դիմացը նստած լուսեղէն փառօք: ան տեսնելով սիրտը լեցուեցաւ ուրախութեմ, ուժ առաւ: Երբոր զմայլելով վրան կը նայէր՝ մէյմըն ալ տեսաւ որ երկինքն ելաւ: Բայց ինքը մէկ զօրութիւն մը իմացաւ, մէկ սէր մը եկաւ Վրիստոսի համար մեռնելու: Առապաշտներն ամմէնն ալ ինչուան կնիկներ, աղջիկներ փայտ բերելու հետ եղան որ (Թեկղը երեն: Երբոր զինուորներն ուզեցին բռնել որ կրակին տեղը տանին, ինք իրմէ գնաց (Թեկղ ուրախ երեւով փայտերուն վրայ ելաւ: Արակը տալու ատենը՝ դատաւորին սիրտը չի դիմանալով սկսաւ լալ ու զարմանալ (Թեկղի զօրութեմը վրայ: Բայց կոյսը կրակին մէջը ձեռուրները խաչանման բացած աղօթքի հետ եղաւ: մէյմըն ալ տեսան որ ամպ մը հովանի եղաւ վրան, երկինք գետին սկսան գոռալ, կարկուտ ու անձրև գալ: ամմէն ժողովուրդ վախի մէջ ընկաւ, կրակը մարեցաւ, (Թեկղի մէկ մազն ալ չերեցաւ: ողջ անարատ դուրս ելլելով Պօղոս առաքեալը փնտրուել սկսաւ:

Պօղոս առաքեալն ան ատենը Սնեսիփորայ ընտանեացը հետ քաղքէն դուրս քարայրի մը մէջ պահուրտած կեցեր էր: ուր

բան մը չունենալով ոչ հաց և ոչ ստակ , իր վերարկուն հանեց տուաւ տղի մը , որ անոր գնովը իրենց ուտելու հաց բերէ , (ձեկ զի վրայ ալ իմանայ որ ինչ եղաւ : Տղան երբոր ետ կը դառնար՝ գտաւ կոյսն ու զարմանալով մը հարցուց , ո՞ւր կ'երթաս , ինչպէս կրակէն խալըսեցար : (ձեկը ըսաւ . Պօղոս առաքեալը գտնելու կ'երթամ : Տղան հետն առաւ (ձեկը , վեց եօթն օր է որ , ըսաւ , քեզի համար կու լայ , պաք կը պահէ , աղօթք կ'ընէ Մատուծոյ : Երբոր մօտիկցաւ (ձեկը , կը լսէր Պօղոս առաքելոյն ձայնը՝ որ ծունկ չօքած անանկ աղօթք կ'ընէր , որպէս զի կրակը մարի ու (ձեկը ապրի . աս լսելով (ձեկը գոհութիւն տուաւ Մատուծոյ . հետը տեսնուելէն ետև Պօղոս՝ Մնեսիփորոսը իրեն տունը խրկեց , իսկ (ձեկը առաւ Մնտիօք գնաց :

Հոն տեղը Մղեքսանդրոս մէյմը որ թագաւորի պէս մարդ էր , տեսնելով (ձեկը , խիստ հաւնելով աղաչեց Պօղոսի իբրև իրեն հօրը՝ որ իրեն կին առնէ : Մը ըսելով երբոր իրեն մօտիկնալ ուզեց , (ձեկը հրելով Մղեքսանդրոսի կապան պատուեց , զըլխին պսակակերպ զլխարկն ալ գետինը ձգեց : Մղեքսանդրոս ասանկ անարգուելով՝ սէրը ատելու թիւն փոխեց . գնաց դատաւորէն հրաման հանել տուաւ որ գազաններուն առջևը ձգեն կոյսը , ան օրը բանտի տեղ հարուստ տիկնոջ մը տուն գնել տուաւ որ Տրիփոնա կ'ըսուէր . աս կռապաշտ տիկի-

նը սիրով իր տունն առաւ թփեկը իր աղջկանը յիշատակ որ մեռեր էր :

Արբոր առտուն թփեկը կը տանէին գազաններուն առջև կերակուր ձգելու , Տրիփոնա ալ մէկտեղ կ'երթար լալով կ'ըսէր . աղջիկս գերեզմանը խրկեցի , հիմա ալ քեզ գազաններուն կերակուր կը խրկեմ , քու Ատուածդ քեզի օգնական ըլլայ : թփեկ ալ աղօթք ըրաւ Տրիփոնեայ համար , բարի հատուցում մաղթեց Ատուծմէ , որ իրեն վրայ անանկ գութ ցցուց , ու սրբութեամբ պահեց իր տանը մէջ : Հոն տեղը առիւծ մը թողին թփեկի վրայ՝ որ բազկատարած աղօթքի էր կեցած . առիւծը տեսածին պէս՝ ոտքն ընկաւ լզել սկսաւ : Ատքը արջ մը թողին . առիւծը իբրև կուսին պահապան՝ արջը բռնեց պատուեց : Անձ (ղափլան) թողին և ուրիշ առիւծներ . բայց առջի առիւծը մէկի մը թող չի տուաւ մօտիկնալ : Անկէց առին մէկ լիճ մը ձգեցին որ լեցուն էր թունաւոր գազաններով : թփեկ կարծելով որ իր վերջը հասած է՝ ըսաւ . տէր իմ Յիսուս , ահա այսօր աս ջրիս մէջն իմ արիւնսովս կը մկրտուիմ : Արբոր ամմէնը կը կարծէին որ պիտի մեռնի , մէկ ահաւոր լոյս մը տեսան որ սուրբ կոյսը մէջ առաւ . լճին գազանները սատկեցան , կոյսը դուրս ելաւ բոլորովին լոյս կտրած : Հոն եղող կռասրաշտ կանայք՝ ասիկայ երկնային մարդ մը կարծելով իրենց կուռքերէն մէկը՝ սկսան անուշ խնկերով պաշտել : Բայց քիչ մը անցնելէն

եաւ Մղէքսանդրոս իր սիրտը աւելի խստացրնելով՝ ուրիշ տանջանք տալ հրամմեց . բայց Մստուած հոն ալ ողջ պահեց . միայն թէ Տրիփոնայ սիրտը չի դիմանալով՝ յանկարծ կանչելով մը ընկաւ մեռելի մը պէս . աս Տրիփոնա տիկինը կայսեր տնէն ըլլալով՝ Մղէքսանդրոս խիստ վախցաւ որ՝ իրեն փորձանք մը չի հասնի կայսերմէն , դատաւորին աղաչեց որ ազատ թողնէ թօեկը :

Դատաւորը կանչեց թօեկը հարցուց՝ ո՞վ ես դուն , ի՞նչպէս եղաւ որ գազանները քեզի չի դպան : թօեկը ըսաւ . ես Վրիստոսի աղախին եմ . ո՞վ որ անոր կը հաւատայ՝ կ'ապրի չի մեռնիր . ո՞վ որ չի հաւատար՝ ան կը մեռնի յաւիտեան : Մն ատենը դատաւորը քարոզ կարգալ տուաւ ժողովրդեան՝ որ թօեկը Մստուածը զինքը արձրկեց , ձեզի տուաւ : Հոն եղող ամմէն կանայքն սկըսան աղաղակ վերցրնել . մեծ է թօեկը Մստուածը , մէկ հատիկ է՝ որ գազաններէն խալըսցուց : Տրիփոնան հոն ուրախութեմ գրկելով ըսաւ թօեկին . հիմա կը հաւատամ որ ողջ է իմ աղջիկս . եկէ իմ տունս , իմ ամմէն ունեցածս քեզի կը թողնեմ : թօեկը ասոր տունն երթալով՝ ութը օր սորվեցուց Մստուածոյ պատու իրանքները , Տրիփոնան ու աղախիններէն շատը հաւատքի բերաւ :

Ատքը թօեկը ելաւ գնաց իր վարդապետը Պողոս առաքեալը գտնելու , որ գտաւ Սեռոք կամ Սիւռիս քաղաքը . սլատմեց ինչ բաներ որ անցան : թօեկը երբոր լսեց թէ

իր նշանածը (Ս)եմերոս մեռեր է, Պօղոս առաքելոյն հարցընելով դարձաւ եկաւ Իկոնիոն իր քաղաքը, որ աւետարանը քարոզէ խօսքով ու օրինակով: Բռաջ եկաւ Սնեսիփորայ տունը, ուր որ ինքը հաւատքը սորվեր էր. շնորհակալութեան աղօթք ըրաւ Բստուծոյ: Ետքը իր տունը գալով՝ ողջ գլտաւ իր մայրը, շատ յորդորեց ճշմարիտ հաւատքի բերելու. թէ որ հաւատաս, ըսաւ, մէկ Բստուած՝ որ երկինքը կը նստի, ան ատենը կ'ապրիս. իսկ թէ որ ոսկի ու արծաթ ուզես որ կը հալին կը մաշին, ահա տուած է քեզի: Բսանկ ալ իր ընտանեացը կը քարոզէր:

Բայց պտուղ մը չի տեսնելով՝ թողուց իր տունն ու քաղաքը, Սելևկիա գնաց որ Իսավրիա գաւառին մէջն է. հոն շատ պրտուղ ըրաւ, շատ մարդ դարձուց քարոզութիւն ու հրաշքներով. առաջ Սիւրսի լեռը քարայրի մը մէջ կեցաւ ուր աղբիւր կը բխէր. կիրակիէ կիրակի միայն դուրս կ'ելլէր խոտ կը ժողվէր ուտելու համար. իսկ բոլոր շաբաթը անօթի կ'անցընէր. հոն եկող կռապաշտները անձային խօսքերով կը դարձընէր: Բնկէց անցաւ գնաց Վալամիոն լեռը, հոն ալ շատ մարդ քրիստոնեայ ըրաւ, շատ հիւանդներ բժշկեց, սատանաներ հալածեց. Բրիստոսի անունով: Սելևկիայի բժիշկները տեսնելով որ իրենց վատակը կը դադրի, քանի մը անառակ մարդեր գինովընէլով՝ (Ս)եկզի բովը խրկե-

ցին : Ան ատենը աղօթքի վաղեց սուրբ
կոյսը , որ Աստուած փրկէ աս անօրէններ
րուն ձեռքէն . շուտ մը երկրնքէն ձայն ե-
կաւ , ես քեզի հետ եմ , մի վախնար : Չայ-
նը լսածին պէս՝ առջևի կեցած քարը եր-
կու ճղքուեցաւ քացուեցաւ , զինքը մէջն
առաւ . անանկ որ՝ անյայտ եղաւ սրբուհին .
միայն վերարկուին մէկ ծայրը դուրս մնաց :
Աս տեսածնին պէս՝ վախ մը առաւ սրտեր-
նին . եկան քաղաքը պատմեցին :

Ասանկով եղաւ սրբուհւոյն (Թեկղի վախ-
ճանը իննսուն տարուան . տասներու թը տա-
րուան էր երբոր աշակերտեցաւ Պօղոս ա-
ռաքելոյն . եօթանասունուերկու տարի ալ
հալածանքի ու ճգնութեան մէջ անցուց :
Սանդուխտ կուսէն ետև ասիկայ եղաւ առ-
ջի նախավկայուհի որ տանջանք քաշեց
Վրիստոսի վկայութեանը համար , առա-
քելուհի եղաւ հեթանոսաց : Իր վախճա-
նած տեղը եկեղեցի շինուեցաւ , ուսկից
չատ հրաշքներ եղած են , մանաւանդ աչքի
ցաւի , գողցած բաներ գտնելու . անոր հա-
մար Հակոբ ք . թագաւոր Արագոնայի որ
Սպանիայի մէջն է՝ մեր () շին թագաւո-
րէն ուզեց սրբուհւոյն (Թեկղի մասունքը .
որովհետև ան ատենը մեր հայու թագա-
ւորները կ'իշխէին Իսպանիայի վրայ . () շին
հայու թագաւորն ալ սրբոյն (Թեկղի աջ
թևը խրկեց :

Երբոր Սպանիա հասաւ աս մասունքը՝
անանկ մեծ թափօրով առին տարին , որ

միայն եկեղեցականք 7354 հոգի էին թափօրին մէջը . մասունքին մէկ դիէն Սպանիայի թագաւորը կ'երթար , մէկալ դիէն թագաւորին տղան , անանկով բերին յամին 1323 Մրագոնայ քաղքին մայր եկեղեցին դրին , որ թեկզի անունով շինուած էր . հոն ալ շատ հրաշքներ տեսան աս սրբուհւոյն բարեխօսութեամբը :

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲ

Մծբնայ հայրապետ

Իրեն հայրը կ'ըսուէր Տիրան , որ Հեփթաղ ազգին թագաւորն էր կ'ըսեն . մայրը կ'ըսուէր Կոստրովուհի , որ Մնակայ քոյրն էր . ասանկով մեր Վրիգոր լուսաւորչին հօրքրոջը տղան կ'ըլլայ սուրբ Յակոբ , անոր պէս ալ կ'եսարիա փախած , ուր քրիստոնէութեան ու բարեպաշտութե մէջ մեծցաւ . իրեն հետ Սակդէն անունով քոյր մը ունէր իրմէ մեծ : Յակոբ երբոր քիչ մը մեծցաւ՝ քոյրը բռնադատեց զինքը Վարսից երկիրը տանել տուաւ հոն կարգուեցաւ . բայց Յակոբ չուզելով մնալ հոն իրեն ազգականներուն մէջ , քիչ մը կենալէն ետեւելաւ անկից Սիջագետք եկաւ . Սծբին քաղքին դիէրը զալով՝ անապատի մէջ նըս-

տաւ բարձր լեռներու վրայ . Մարուզէ ճգնաւորին քով կրօնաւոր եղաւ :

Մնաւր զիշեր ցորեկ բաց տեղ կը կենար միշտ , ձմեռը միայն քարայրի մէջ կը մըտնէր . հագածը մազեղէն էր , կերածը ինչ որ կը գտնէր ան լեռներուն վրայ ինքիրեն բուսած խոտեր , ան ալ կուշտ չէր ուտէր . իսկ եփած կերակուր բնաւ չէր առնէր բերանը . բոսիկ ոտքով կը քալէր : Մարմինը ասանկ կը ճնշէր , իսկ իր հոգին իբր մէկ հայլի մէջ Մստուծոյ փառքը տեսնելով Պօղոս առաքելոյն ըսածին պէս՝ կը նայէր որ ան սրատկերին նմանցընէ զինքը . անոր համար իր կեանքը իբր թէ մէկ հանապազօրդեան աղօթք մըն էր առ Մստուած , զիշեր ցորեկ չէր դադրէր սաղմոս ըսելէն . ասանկով Մստուած միշտ իր աչքին առջևն ունենալով . աղօթքով շարունակ Մստուծոյ հետ խօրաթելով , մէկ յատուկ ընտանութիւն մը ունեցաւ Մստուծոյ հետ զարմանալի . անոր համար ինչ որ ուզէր , Մստուած ալ շուտ մը կը կատարէր իր խնդիրքը :

Իսկ սատահանները բազմութիւն պատրաստուած զինքը փորձելու , բայց մէկ վայրկեան մըն ալ պարապ չէին գտնէր աղօթելէն , որ Մստուծմէ հեռու մնալով իրենք՝ քովը գային փորձութիւն բերէին : Արով հետեւ աս բանն մէկ մասնաւոր կերպով մը յատուկ էր եղած աս սուրբիս՝ որ երկրիս վրայ ըլլալով իբր թէ չէր , այլ երկինքը սերօթէից հետ մէկտեղ եղած՝ միտքը ամե-

նեին մէկ վայրկեան մըն ալ չէր բաժնէր
Մտուծոյ տեսութենէ : Մտուած ալ տես-
նելով իրեն ասանկ ճգնութիւնները , որ ի-
րեն ամենեւին չէր խնայէր , ոչ ցուրտը կը
նայէր , ոչ տաքը , ամպով մը հովանի կ'ը-
լար , ներքին մխիթարութեամբ ալ սիրտը
կը մխիթարէր : Բայց որովհետեւ սուրբ Յա-
կոբ իր միտքը Մտուծոյ էր տուած , հոգ-
ւոյն աչքը սրատես ըլլալով՝ միշտ աս կ'ըսէր
իր աղօթքին մէջը . ինչ զարմանալի է որ՝
Մտուած անանկ ամենակարող , ոչընչէ ամ-
մէն բան առաջ բերող , մեր մեղաւորաց սի-
րոյն համար մարմնանայ , չարչարուի , նա-
խատուի , ամմէն աշխարհ կերակրողը անօ-
թի մնայ , ովկիանոս ծովն ստեղծողը լեղի
քացախ խմէ , ետքն ալ մեռնի . ես ինչպէս
չի չարչարուիմ . անանկ է նէ , տէր իմ , կ'ը-
սէր , մի խնայէր ինձի , ամպով հովանի
մ'ըլլար . թող տուր որ ես ալ չարչարուիմ .
ես չի խնայեմ պիտոր ինձի ինչուան որ մեռ-
նիմ . հացով ջրով չի կշտանամ :

Մասնկ երկան աղօթք ընեն ինի՝ երեցաւ
իրեն Մտուած հրեշտակներով , մխիթա-
րեց ըսելով որ՝ քու ամմէն խնդիրքներդ կա-
տարեմ պիտոր , սիրելի որդեակ իմ . աս ը-
սելով՝ վերանալու ատենը երկու հրեշտակ
իրեն քովը թողուց մխիթարող պահապան .
որոնք ետքը աչքով տեսաւ մեծն Աստան-
դիանոս : Սերանալէն ետե՛ սուրբ Յակոբ
լս սկսաւ իր կարօտէն թէ ինչպէս բաժ-
նուեցաւ . տէր իմ Յիսուս , օգնէ ինձի ,

կ'ըսէր. սատանան լսեց քու տուած մխիթա-
րութիւնդ, ետեւս պիտոր իյնայ. ես կը
զարհուրիմ անոր որոգայթներէն, ո՞վ պիտոր
օգնէ ինծի. ես կը նայիմ որ իս տաճարը
նեմ Մատուծոյ, անիկայ աւազակի պէս իս
կ'ուզէ կողոպտել, ինչպէս որ ըրաւ Մա-
մը. քու սուրբ հոգիդ մի հաներ ինծմէն,
տէր իմ, ինչուան որ քեզի գամ. տուր ինծի
զօրութիւն քու անուանդ համար:

Պահապան կեցած հրեշտակը կը զօրա-
ցընէր զինքը չի վախնալ սատանայէն, որ
լսելով սուրբ Յակոբ՝ գոհութիւն կու տար
Մատուծոյ. բայց քանի որ վարքը կը շտկէր,
և Մատուծոյ ճամբուն մէջ առաջ կ'երթար,
այնչափ ալ սրտին մէջը երկիւղն Մատուծոյ
կ'եւեղցընէր. գիտէր որ յանձնապատան
ըլլալը կորուստ է հոգւոյն, անոր համար
միշտ Մատուծոյ օգնութեանը կը սպասէր:
Քանի ալ որ երկիւղած եղաւ սուրբ Յա-
կոբ, այնչափ ալ Մատուած շնորհքներով
զինքը զարգարեց. հոգի մարգարէութեան
ունեցաւ, պատգամատու եղաւ ազգաց,
կռապաշտները դարձուց. երբոր նահատա-
կելու կը տանէին քրիստոնէաները՝ համար-
ձակութեամբ հետերնին կ'երթար կը քա-
ջալերէր. քանի հեղ որ կռապաշտները ու-
զեցին անիկայ բռնել մեռցընել, Մատուած
անանկ պահեց որ չէին կրնար մօտիկնալ:

()ը մը լեռնէն վար ինջնալով՝ ուզեց որ
սուրբ Սարուգէին հետ տեսնուի, որ
Սճբնայ վանքը մէկ քարայրի մը մէջ կը

Ճգնէր . Սաթիթ մայ գետը հասնելով հարցուց այգեգործներուն , աս ջրին անցնելու տեղն ո՞ւր էր : Լ'նոնք տեսնելով իր խեղճ աղքատ հագուստը ծաղը ընելով մը ըսին . դուն մէկ ճգնաւոր մարդ մըն ես , ջրին վըրայէն քալելով անցիր : Լ'ն ատենը սուրբ Յակոբն ալ իր վերարկուն ջրին վրայ փռելով իբր մէկ նաւակով մը ասդիս անցաւ . բայց վերարկուն թօթուելնինի ցամաքին վրայ շուտ մը տասուերկու արմաւենի ծառեր բուսան . այգեգործներուն քովն երթալով բարև տուաւ , ինչ է ձեռուրնիդ եղածը՝ հարցուց : Լ'նոնք նորէն ծաղը ընելու համար՝ փուշ է ըսին : Լ'նանկ է նէ , ըսաւ սուրբը , թող անանկ փուշ մնայ : Լ'ս ըսածին պէս՝ ամմէն որթ (ասմաները) փուշ դարձան , միայն տերև կու տային :

Ղամբայ ընելով սուրբը՝ առաջ մէկ ճրգնաւորի մը քով եկաւ որ իրեն պէս Յակոբ կ'ըսուէր . քառսուն օր անոր քովը կեցաւ , ետքը եկաւ սրբոյն Սարուգէի քով . անիկայ պատմեց իրեն որ՝ ան երկիրներուն ժողովուրդը թէպէտ քրիստոնեայ եղած էին՝ բայց մէջերնին դեռ անհաւատութեան շողորդ կար . ոմանք սուրբ գիրքը ծաղը կ'ընէին , մանաւանդ ջրհեղեղին՝ Արայ տապանին պատմութիւնը սուտ կը հանէին , որ խաչին օրինակն էր . ուր տեղ ըլլալն ալ չի գիտցուիր կ'ըսէին : Լ'ս լսելով սուրբ Յակոբ յանձն առաւ աս բանիս համար ձամբայ ընել , Արայ տապանին մէկ կտորը բե-

րել ցցընել . բայց որովհետև իր ամմէն բա-
նը հրեշտակաց առաջնորդութեամբ կ'ըլ-
լար , քուն եղած ատենը հրեշտակ Մատու-
ծոյ ան տապանին մէկ կտոր տախտակը բե-
րաւ քովը դրաւ : Սուրբը գոհութիւն տա-
լով Մատուծոյ առաւ ան կտորը ճամբայ ե-
լաւ . երբոր Մարտամետ գեղը մօտեցաւ ,
ջրի մը վրայ տեսաւ որ լաթ լուացող աղջիկ-
ները իրմէ ամնչնալ մը չի ցցուցին , ոմանք
ալ ծաղը ըրին . սուրբը անէծք տուաւ , շուտ
մը աղբիւրը ցամքեցաւ , իրենց մազերն ալ
ձերմըկցաւ : Մտեսնելով հոն եղողները
ամմէնքը ոտքն ընկան թողութիւն ու զեցին .
սուրբը խաչակնքելով աղբիւրը նորէն վաղ-
ցուց . բայց մազերնին անանկ ձերմըկցած
թողաւ :

Ս'ծբին եկաւ սրբոյն Սարուգէին ձեռ-
քը տուաւ տապանին տախտակը՝ որուն
վրայ շատ ուրախացաւ . շատ ալ հրաշքներ
եղան ան տախտակով՝ որ խաչի ձեով շի-
նուած էր . հրաշքներէն մէկն ալ աս եղաւ
որ՝ Շապուհ Սարսից թագաւորը Ս'ծբին
քաղքին վրայ եկաւ , շատ զօրքով պաշա-
րեց , մօտիկ էր առնելու . մէջիններուն ճա-
րը հատաւ , եկան բազմութիւն սրբոյն ոտքն
ընկան աղաչելով : Սուրբը ան խաչաձե տա-
պանին կտորը ձեռքն առնելով՝ քաղքին պա-
տին վրայ ելաւ , անանկ աղօթքի կեցաւ .
հեռուանց Շապուհ թագաւորին անանկ
երեցաւ որ՝ թագաւոր մը պատին վրայ
կեցեր է , քոյն ալ տասուերիւ հաղար ձիա-

ւոր զօրք շարուեր են . ան ատենը սրգողե-
լով ուզեց սպաննել ան մարդն որ իրեն ը-
սեր էր [Թէ Մ] ծբնայ մէջ զօրք չի կայ : Ըս-
տեսիւքէն զատ սրբոյն աղօթքովն Ըստուած
Պարսից բանակին վրայ խրկեց շանաճանճ
ու պիծակ , որ անչափ բազմութեամբ [Թա-
փեցան՝ որ ձիերնին կատղելով փախան ,
զօրքն ալ [Թագաւորն ալ հաղիւ իրենց եր-
կիրը կրցան հասնիլ :

Ընչ հրաշք որ կ'ընէր սուրբ Յակօբ՝
խրատի համար կ'ընէր , չէ [Թէ մնաս տալու .
ատեն մը Պարսից երկիրը քալելով դատա-
ւոր մը տեսաւ որ անիրաւ դատաստան կը
կտրէր . ասիկայ խրատել ուզելով՝ զինքը չի
պատժեց , այլ իր դիմացը քար մը կար՝ ան
քարը մէկ խօսքով փշուր փշուր ըրաւ . ան-
կէց վախնալով դատաւորը՝ շիտակ դատաս-
տան կտրել սկսաւ :

Ըս ատեններս Մ ծբնայ եպիսկոպոսը
վախճանած ըլլալով՝ քահանայից մէջ վէճ՝
էր ընկած որ ո՞վ ընտրեն անոր տեղը . սրբոյն
Մարուգէի գացին հարցընելու . Մարու-
գէն անոնց սուրբ Յակօբ ցցուց . Յակօբն
ալ երբոր Մարուգէին քովն եկաւ , իրեք օր
առաջ մարգարէանալով իրեն զուրցեց .
հրեշտակ ԸՅ ալ Ընտիրօքայ պատրիար-
գին երևնալով՝ ապսպրեց անիկայ ընտրելու :
Ընանկով եօթը տարի սարկաւագութեան
մէջ՝ քանի մը տարի ալ քահանայութեան
մէջ կենալէն ետեւ՝ ակամայ յանձն առաւ
սուրբ Յակօբ , Մ ծբնայ վրայ եպիսկոպոս

ձեռնադրուեցաւ . որովհետեւ Հոգին սուրբ
իրեն յայտներ էր , դէմ դնել կը վախնար :
Եպիսկոպոս ըլլալէն ետեւ՝ իր առջի հրաշքն
եղաւ Սարուգէի հետ մէկտեղ հինգ տա-
րուան անդամալոյծ մը ոտքի վրայ հանել :
Բայց անկէց ետեւ իր ըրածները գրեթէ
ամմէնն ալ մէյմէկ հրաշք էին , որոնցմէ քա-
նի մը երևելիներէն հոս պատմենք :

Սուրբ Յակոբ երբոր օր մը ճամբէն
կ'անցնէր , երկու աղքատ խօսք դրին զինքը
խաբելու որ ողորմութիւն առնեն . մէկը
սուտ մեռել ձեացաւ , մէկն ալ ողորմութի
խնդրեց իրմէ՝ ան մեռելը թաղելու համար ,
որ իր ընկերն էր՝ կ'ըսէր : Սուրբ Յակոբ
սուտ մեռելին վրայ ձեռքը դնելով անցաւ
գնաց իր ճամբան . երթալէն ետեւ ընկերը
կ'արթնցրնէր աս սուտ մեռելն ըսելով , ա-
ղէկ ձեացուցիր , աղէկ խաբեցինք ողորմու-
թիւն առինք , հերիք է , ելիր . բայց մէյմըն
ալ տեսաւ որ ան սուտ մեռելը իրաւ մեռեր
է : Ըն ատենը վազեց սրբոյն ետեւէն , լա-
լով իր ըրածը խոստովանելով աղաչեց որ
չի պատժէ . սուրբ Յակոբ ետ դարձաւ , ա-
ղօթք ընելով նորէն մեռելը ողջնցուց :

Երբոր սուրբ Յակոբ Արկիոյ Ժողովն ե-
կաւ Արիօսը դատապարտելու համար , Աս-
տանդիանոս թագաւորն իրեն արգենի կեր-
պարանքը տեսնելով վախ մը եկաւ իրեն .
երկու դիէզ , ըսաւ , երկու լուսաւոր հրեշ-
տակ կը տեսնեմ որ քեզի կը սպասաւորեն :
Սուրբ Յակոբ ալ իրեն սպատախանեց . ես

ալ մէկ արեգակնակերպ մարդ մը կը տեսնեմ, ըսաւ, քովդ որ ամմէն առտու թաղը գլուխդ կը դնէ: Արիոս որովհետեւ տասր տարի մը անցնելէն ետեւ նորէն ան առտենը Պօլիս էր եկեր, նորէն կ'ուզէր եկեղեցին մտնել, անկից մեծ տրտմութիւն մը պատած էր ամմէն ուղղափառներուն վրայ. աս բանիս համար սուրբ Յակօբ խրատ տուաւ Աղէքսանդրոսի՝ որ Պօլսի հայրապետ էր՝ եօթն որ պաք պահել, աղօթքի կենալ, ինքն ալ մէկտեղ աղօթք կ'ընէր. մէյմըն ալ Աստուծոյ զօրութիւնը յայտնի երևցաւ, ուղղափառները խալըսեց ան հողէն: Արիոս երբոր ան կիրակին եկեղեցին կու գար իրեններովը մէկտեղ ճամբան դուրս ելլելը բռնեց. Այս սօֆիային դիերը տեղ մը մտաւ որ ինչուան հիմա կը ցցընեն. բայց Աստուծոյ պատու հասը վրան հասնելով, կարիքը հողալնինի իրեն գարշութեանը հետ փորն ալ պատուցաւ, աղիքները դուրս թափեցան. անան կով գարշելի մարդը գարշելի տեղը սատկեցաւ:

Մէկ հարուստ մարդ մը կար Սճբին քաղաքը, որ Մարկիոնեան էր, չէր ուզեր դառնալ. թէպէտ իրեն եղբայրը քրիստոնեայ էր, ան քաղքին վրան ալ քաղաքապետ էր եղած: Աս մարդս լսելով որ սուրբ Յակօբ վերոյիշեալ անդամալոյծը ողջընցուցեր էր, եկաւ իր տղին համար ալ աղաչեց որ անոր պէս անդամալոյծ էր. խոս-

տանալով որ՝ ըռննտցածին պէս՝ Մարկիոնեան աղանդը ձգէ : Սուրբ Յակոբ և սուրբն Մարուգէ երկայն աղօթք ընելէն ետև՝ անդամալոյծ տղան որ ութը տարուան էր՝ մկրտեցին, մկրտուածին պէս ալ ըռննտցաւ . ան ատենը հայրը մայրը որ Մարկիոնեան էին՝ իրենց հետ ալ 3100 հոգի դարձան մկրտուեցան :

Ըսանկ անպակաս բժշկութիւն կ'ընէր սուրբ Յակոբ, աւելի ժանտախտով բռնուածներուն վրայ . բժշկուողները անչափ շատ եղան որ ժանտախտին անունը Յակոբեան ցաւ ըսին ան ատենը : Եանտախտէն բժշկեց նաև վերոյգրեալ անդամալոյծ տղան, որ ժանտախտէն պառկեցաւ ան ատենը՝ որ ատեն որ նոր դարձած ծնողքը Մարուգէին վանքը կ'ուզէին երթալ : Հայրը երթալէն ետ չի կեցաւ . հիւանդ տղան ձիու վրայ դնելով հետն առաւ տարաւ, բայց վանքին մօտիկնալինի՝ տղան մեռաւ : Մարուգէ տեսաւ, կանչեց սուրբ Յակոբը, իրեն յանձնեց մեռած տղան . սուրբ Յակոբ առաւ մեռելը խորանին առջին տարածելով երկան աղօթք ըրաւ վրան, ինչուան արցունք եկաւ աչքէն, ան արցունքովը հողը թրջելով՝ տղին վզին վրայ դրաւ, Յիսուսին անունը տալով . ան ատենը մեռած տղան յարութիւն առաւ :

Ըս հրաշքները տեսնելով օրէ օր անհաւատները կը դառնային քրիստոնեայ կ'ըլլային . անչափ շատցան որ՝ եկեղեցնայ մէջ

էին սղմէր, անոր համար նոր եկեղեցի մը շինեց սուրբ Յակոբ հրեշտակին առաջնորդութեամբ ան տեղը՝ ուր որ առաջ կուտուն էր եղած :

Սանաճիհը իշխան մը կար հայաստան . ասիկայ հայոց թագաւորը խրկեց Ռակուր իշխանին վրայ, որ երթայ անոր ապստամբութիւնը զսպէ . աս պատճառով Սանաճիհը Սժբնայ դիւերը գալով՝ շատ մարդ գերի տարաւ, որոնց մէջն էին նաև ութը սարկաւագ սրբոյն Յակոբայ : Ըս լսելով սուրբը՝ եկաւ իրեն աղաչեց որ գերիները թողնէ . երբոր մտիկ չըրաւ՝ հայոց թագաւորին գնաց աղաչելու . Սանաճիհը ասկէց ալ աւելի սրգողելով՝ ութը սարկաւագն ալ ծովը ձգել տուաւ : Ըն ատենը սուրբ Յակոբ դարձաւ մէկ լեռան մը վրայ ելաւ՝ ուսկից կ'երևնար Սանաճիհին երկիրը՝ որ Սշտունեաց երկիր կ'ըսուէր Սանայ ծովուն քովը . անէճք տուաւ իրեն ալ իրեն երկրին ալ : Ընոր վրայ Սանաճիհը ջարաչար ցաւ ուխտակեցաւ . երկիրն անբերեղաւ, անձրևը կտրեցաւ, ծովը դուրս պոռթկալով կոխեց աւրեց :

Ըս բանիս վրայ տարի մը անցնելէն ետև՝ սուրբ Յակոբ տեսաւ որ հրեշտակ Ստուծոյ զինքը երկինքը կը հրաւիրէր, ան գիշերը ամմէնուն հսկում ընել տուաւ . արևելլելու ատենը պատարագ զուրցեց . հոգին սուրբ տեսնելով՝ աղաչեց որ խաղաղութիւն անցնի սատանաներուն մէջէն : Ետդովուր

դր տեսան որ երեսները լուսաւորուեր են՝
 իմացան իրեն մեռնիլը , լալով ոտքն ընկան
 օրհնութիւնը կը խնդրէին . ան ալ աղէկ
 խրատներ տալով իրենց՝ ծունկ չոքեցաւ ա-
 մենասուրբ երրորդութիւնը խոստովանելով՝
 հոգին աւանդեց յամին 347 : Մարմնոյն
 վրայ լոյս մը ինջաւ , անուշահոտութիւն մը
 բուրեց . իրեն նշխարքէն ալ շատ հրաշքներ
 եղան : Մանուսէլին ժառանգը տեսնե-
 լով որ՝ իրեք տարի անցաւ իր երկիրը անանկ
 աւրուած կեցեր էր , սրբոյն անէծքին հա-
 մար բան մը չէր բերէր , ինչուան մարդ , ա-
 նասուն ալ չէին ծնանէր , սրբոյն գերեզ-
 մանն եկաւ , երեսը՝ ծնկուրները գետինը
 քսելով քառսուն օր անանկ կ'աղաչէր .
 ետքը իրեն նշխարքէն առնելով երբոր տա-
 րաւ իր երկիրը , վրան եկեղեցի շինեց , ամ-
 մէն բան շտկուեցաւ : Մայց իրեն սուրբ
 մարմինը ետքը Սժբին քաղքէն հանելով
 Տիգրանակերտ տարին :

Արիշ շատ հրաշքներ ալ եղան աս սրբ-
 բոյն բարեխօսութեամբը . որովհետեւ մեծ
 համարձակութիւն ունի Մատուծոյ առջին ,
 ով որ ինչ ուզէ հաւատքով խնդիրքը կը
 կատարուի : Մէկ գիրք մըն ալ շինած ու-
 նի քարոզներու , որ Օգոն կ'ըսուի :

Ս ՈՒՐ Բ Թ Է Ո Դ Ո Ր Ո Ս

Կոչեցեալ

Տ Ի Ի Ռ Ո Ս

Ամասիա քաղքին մօտ ծնաւ, որ մօտիկ էր երկրորդ Հայոց Ա էրիս քաղքին: Ղաւտղայ էր կաթնկեր՝ երբոր մայրը մեռաւ. իր հայրը որ բարեպաշտ քրիստոնեայ էր՝ խաշած ցորեն կերցընելով մեծցուց ասիկայ. անոր համար երբոր ինքն ալ մեծցաւ՝ նոյն ցորենի հատիկ ուտելու սովորութիւնը պահեց, ուրիշ բան չուզէց ուտելու: Եղաւ բարի առաքինի կտրիճ մը, որուն շնորհալի տեսիլքը տեսնելով՝ հոն եղած կայսեր զօրքը իրենց գունդին մէջն առին, որ մարմարական պոնտացուց գունդ կ'ըսուէր. իրեն Պիւռոն (Ղաիոս) անուն դրին, իբր նորեկ զինուոր: Վիչ մը ատենէն իրեն կտրճութիւնը տեսնելով՝ մեծցընելու զեցին զինքը. բայց թէսդորոս որ Ղստուածապարզե կը թարգմանի՝ յանձն չառաւ ըսելով, ես երկնաւոր թագաւորին Վսի տեառն իմոյ զինուոր եմ որդւոյն Ղստուծոյ: Ղսանկ յայտնի խոստովանելովը իր քրիստոնէութիւնը՝ անոնց աչքէն ընկաւ որ կռապաշտ էին. բայց իրեն կամքին թողուցին, յուսալով որ ետքը դառնայ. ոմանք ալ գիտնալով իրեն հաստատուն միտքը՝ չարիք ընել կը նայէին. իսկ ծածուկ քրիստոնեաները

ան զօրաց մէջը խիստ սէր կապեցին ի վրան :

(Թ) Կողորոս օր մը ձի հեծած ճամբայ ելաւ . տաք ատեն ըլլալով՝ Աւքայիտա գեղին քովն ինջաւ , հոն կանանչներուն վրայ հանդէտցաւ . աս տեղս մէկ որբեվարի կընկան մըն էր Աւսեբիա անունով՝ հարուստ ու քրիստոնէայ . տեսածին պէս կանչեց որ հոն չի նստի . մօտիկ տեղ մեծ վիշապ մը կայ , ըսաւ , որ աս ատեններս հոս կու գայ . իմ տունս եկէ հանդէ , ինչուան որ տաքը իջնայ : (Թ) Կողորոս պատասխան տուաւ . ես աներևոյթ վիշապէն ալ չեմ վախնար , ըսաւ , ո՛ր մնաց երևելի վիշապէն . [Թող տուր գայ , ես անիկայ (Յիսուսին անունովը կը սպաննեմ : Աւսեբիա լսածին պէս (Յիսուսին անունը՝ ճանչցաւ իրեն քրիստոնէայ ըլլալը , ուրախութենէն քովը գնաց , աղաչել սկսաւ ան տեղէն ելլել իր տունը գալ : Մայց աս ըսելու ատենը վիշապն ալ եկաւ . Աւսեբիա իր շէյլուն (Փշալուն) ձայնը առածին պէս՝ վախէն փախաւ . վիշապն ալ եկաւ ձիուն վրայ յարձըկեցաւ : Մն ատենը սուրբ (Թ) Կողորոս զինքը խաչակընքելով զարկաւ նիզակով (մզրախով) վիշապին գլուխը սպաննեց , ետքը գնաց պատմեց զինուորներուն . սիրտ տալով իրենց որ ամուր կենան քրիստոնէութեան վրայ . յայտնի ցցընեն քրիստոնէութիւնը ինչպէս որ ինքը խօսքով , վարքով ու ջերմեռանդ աղօթքով միշտ կը ցցընէր :

Ըն առեաները մեծ հալածում հանեց
Մաքսիմիանոս Վաղերոս՝ որ Թագաւոր
նստեր էր յամին 304, ամմէն տեղի դա-
տաւորներուն հրաման խրկեց որ՝ քրիստո-
նէաները զոհեալ ուտեն . ո՛վ որ չուտէ՝ ա-
նողորմ դատաստան ընեն վրան : Ըմասիայի
ղին եկաւ մէկ իշխան մը Վրինկաս անուն .
լսելով որ Թէոդորոս յայտնի քրիստոնէայ
է, իր առջին բերելով կը բռնադատէր որ
զոհէ կուռքերուն . անիկայ համարձակ խօ-
սելով՝ ձեր կուռքերը Վստուած չեն՝ սատա-
նայ են, ըսաւ, անոր համար ես զինուորա-
կան զարդս ալ հանեցի, որ ձեր անհաւատ-
ներուն մասնակից չըլլամ . ճշմարիտ Վս-
տուած մեր Վրիստոսն է, որդին Վստու-
ծոյ, որ իմ տէրս է և Թագաւորս, ես ալ
անոր զօրականն եմ . չեմ դադրիր աս դա-
ւանանքէն ինչուան որ լեզուս ալ կտրես :

Վրինկաս ու ամմէնն ալ զարմացան ա-
սանկ համարձակ խօսելուն վրայ . մէջեր-
նէն մէկ մենծ մը Պոսիդոնիոս ծաղր ընելով
ըսաւ . անանկ է նէ քու Վստուածդ որդի
ունի : Հրամեր ես, ըսաւ Թէոդորոս, որ-
դի Վստուածային, որդի ճշմարտութեան
բանն Վստուած . բայց դուք ինչպէս չէք
ամրջնար, որ մէկ բազմածին կնիկ մը Վս-
տուած կը խոստովանիք, տասուերկու Վս-
տուածներու մայր եղաւ կ'ըսէք, մէկէն
ծնանելով խողի ձագերու նման : Վս լսելով
կռապաշտները կ'ամրջնային . Վրինկասն ալ
տեսնելով որ չեն կրնար իրեն վրայ ելլել,

քանի մը որ թողնել հրամանեց որ ինքիրմէ
 խրատուելով շտկուի . միտքը դրաւ ուրիշ
 քրիստոնէները չարչարելու : Թէոդորոս
 արձրիուեցաւ , բայց ուրիշ քրիստոնէներուն
 վրայ հոգ կը տանէր չըլլայ թէ չի կրնալով
 դիմանալ՝ դառնան . անոր համար միշտ սիրտ
 տալու հետ էր անոնց . և որովհետեւ շատ
 հոգի կու գային քովը իր խրատները լսե-
 լու , ամմէնն ալ բռնեցին բանտը դրին :
 Թէոդորոս տեսնելով որ ուրիշ քրիստոնէա-
 ները բանտի մէջ են , ինքը ազատ , ուրիշ
 բան մը մտածեց : Ըմասիա քաղքին մէջ
 մէկ մեծ կռատուն մը կար Սէայի կուռքին
 որ և Սիւբեղէ կ'ըսուէր՝ աստուածներու
 մայր . աս կռատունը բռնկցուց մէկ հովոտ
 գիշեր մը . ինքն ալ քովը կեցաւ յայտնի :
 Ըմմէնն ալ հոն վազելով բռնեցին Թէոդո-
 րոսը , որ համարձակ կը խոստովանէր , կը
 ծիծաղէր իրենց սուտ աստուածին վրայ ,
 Պոբղիոս դատաւորին առջևը բերին : Այր-
 բոր դատաւորը հարցուց ինչո՞ւ ըրիր . Թէո-
 դորոս աս երուիլը առիթ առնելով քարո-
 ղեց իրենց աստուածին ստուծիւնը , ու ի-
 րենց երուիլը յաւիտենական կրակին մէջ :
 Դատաւորը ծեծել հրամանեց . Թէոդորոս
 պատասխան տուաւ . ինչ տանջանք տաս՝
 ժամանակաւոր են , ես չեմ վախնար . իմ
 թագաւորս Յիսուս Քրիստոս աչքիս առ-
 ջին է , իս կը փրկէ . դուն կոյր ես հոգւոյդ
 աչքովը , չես կրնար տեսնել :

Ըս լսածին պէս դատաւորը՝ բարկանա-

լէն հրամմեց աչքին առջևէն դուրս հա-
նել, մուտ խաւար բանտի մը մէջ գնել,
ու մարդ չի մտցընել, որ հոն անօթի ծարաւ
մեռնի : Բայց սուրբը մխիթարեալ կը նըս-
տէր, հրեշտակ Մատուծոյ զինքը կը կերա-
կրէր . ան գիշերն ալ Յիսուս երևնալով ը-
սաւ . ես քեզի հետ եմ, ո՛վ Սէոգորէ .
մարդէ կերակուր մի առնէր . քեզի հաց
հրեշտակաց պատրաստուած է երկինքը :
Սուրբը գոհանալ սկսաւ Մատուծոյ, սաղմոս
ըսելով օրհնել . հոն եկան հրեշտակներու
բազմութիւն, իրենք ալ մէկտեղ ձայնակից
եղան սաղմոսերգութեան : Մտ ձայները լը-
սելով բանտապանը՝ վազեց տեսաւ որ դըռ-
ները գոց են, բայց ներսը լուսաւորուած,
ճերմակ հագած մարդիկ բազմութեամբ
լցուած՝ Սէոգորոսի հետ մէկտեղ սաղմոս
կ'ըսեն . վախնալէն վազեց դատաւորին
պատմեց : Երբոր դատաւորն ալ եկաւ ըսա-
ծին պէս տեսաւ, կարծեց որ քրիստոնեա-
ները գաղտուկ եկեր մտեր են, չորս դին
զինուորներ կեցուց, անանկ բանալ տուաւ
բանտին դուռը, որ դուրս ելալնինի թռնէ
անոնք : Մէյմըն ալ մտան տեսան որ մարդ
չի կայ, միայն ծառայն Մատուծոյ շղթան
զարկած . ասկէց շատ վախ մտաւ սրտերնին .
Դատաւորը հրամմեց հաց ու ջուր տալ ա-
նոր, բայց սուրբ Սէոգորոս բան մը չառաւ .
խմողորմած Մծս իս կը կերակրէ, ըսաւ :

Բիչ մը անցնելէն ետեւ նորէն իր առջին
բերել տուաւ դատաւորը . շատ բան խոստա-

ցաւ ինչուան քրմապետ ընելու զինքը, թէ որ կուռքերուն զոհէ : Սուրբը աչուրները վեր վերցընելով խաչ հանեց երեսն ըսաւ . քանի որ կեանք ունիմ՝ գիտցիր որ ես չեմ ուրանար : Յիսուսին անունը . ձեր քրմապետին ու ձեր թագաւորին վրայ կու լամ, որ մեծ բան կը սեպեն պիղծ տեղերն երթալ, հաւ մորթել, անասուններուն աղիքները բռնել, արիւնլուայ ձեռուրներով նստիլ, զոհերուն եղերովը պլշտըկուիլ : Արբոր աս խօսքերս կը լսէին կուսպաշտները, ակուսին կը կրճտէին . դատաւորն ալ հրամանեց զլսիվայր կախել փշերով ծեծել . ետքն ալ երկրթներով անանկ քերեցին որ՝ մտերը կտոր կտոր վար կ'իյնային : Իսկ քաջ նահատակը իբր թէ ուրիշի մարմին ըլլար՝ անանկ զուարթ կեցեր էր, միշտ Յիսուսին անունը կու տար : Դատաւորը կ'ըսէր . չե՞ս ամբնար որ յոյսդ դրեր ես Վրիստոսի մեռած մարդու մը վրայ : Սուրբն ըսաւ . աս գեղեցիկ ամօթը ինձի ըլլայ ու ամմէնուն՝ որ Վճի անունը կու տան . ես իրեն հետ եմ, ու յաւիտեան հետը պիտոր ըլլամ :

Ըն ատեն դատաւորը յուսահատելով իրմէ, կրակը ձգել հրամանեց՝ իրենց կուստունը երելուն համար : Սուրբը իր երեսն ու բովանդակ մարմինը խաչակնքելով աղօթքի կեցաւ . զինքը ողջակէզ մատուցանելով իր արարչին, խնդրեց զօրութի իրեն ու մէկալ բռնուողներուն համար : Աէոնիկոս անունով մէկ սիրելի ընկեր մը ու

նէր, ան ալ իրեն կանչեց. աս աշխարքիս
մէջ իրար չի թողինք, ըսաւ, անդին ալ ի-
րար չի թողնենք: Արքոր կրակին մէջ ձգե-
ցին զինքը, փառք տալով Աստուծոյ իր հո-
գին աւանդեց յամին 305. փետրվ. 17.
Հոն եղող քրիստոնեաները տեսան որ լուսոյ
մը պէս վեր կ'ելլէր երկինքը:

Հոն եկաւ եւ քայտացի բարեպաշտ կնի-
կը, և շատ ստակ տալով մարմինն առաւ,
Աւքայիտա գեղն իր տունը տարաւ. ան
տունը եղաւ երևելի ուխտատեղի, ինչուան
եկեղեցի շինուեցաւ Հոն սրբոյն հրաշքնե-
րուն համար, ուր ամմէն ցաւագար կը բժը-
կուէր. ով որ ինչնեղութիւն ունենար՝ երբ-
որ հաւատքով սրբոյն (Թ)էոդորոսի կ'ապա-
ւինէր, օգնութիւն կը գտնէր իրմէ: Քա-
նի մը տարիէն ետեւ Հոն բերին նաև մէկալ
(Թ)էոդորոսին մարմինը, որ Ստրատելատ կ'ը-
սուի. որուն վրայ վարը գրենք:

Արքոր Չմշկիկ կայսրը յամին 971, Սկիւ-
թացւոց դէմ պիտոր պատերազմէր, ան օ-
րը սրբոյն (Թ)էոդորոսի տօնն ըլլալով՝ իրեն
օգնութիւն կանչեց սուրբը. տեսաւ մէկը
ճերմակ ձի հեծած որ թշնամիներուն վրայ
վազելով տակնուվրայ բրաւ. անկէց կայսրն
ալ սիրտ առնելով՝ մեծ յաղթութիւն ը-
րաւ: Աս յաղթութիւնը բարեպաշտ կին
մրն ալ Պօլսոյ մէջ օր մը առաջ զուրցեր էր,
թէ՛ սբ Աստուածածին կ'ըսէր զօրականի
մը. ով (Թ)էոդորէ, կայսրը վտանգի մէջ է,
շուտով հասիր օգնէ իրեն: Կայսրը աս յաղ-

Թու թիւնը ընելէն ետև՝ Լուքայիտա եղած
եկեղեցին քակեց, նոր մեծաշէն եկեղեցի
մը շինել տուաւ. ան քաղաքն ալ սրբոյն ա-
նունովը (Թէոդորուպօլիս կոչեց):

Ս Ո Ւ Ր Բ Թ Է Ո Ւ Ո Ր Ո Ս

Ստրատելատ

Ասիկայ ալ մէկալ (Թէոդորոսին պէս
Լուքայիտա գեղէն էր, անոր քեռորդին.
քրիստոնեայ բարեպաշտ ծնողաց զաւակ.
աստուածաբաշտութեամբ, իմաստութեամբ
կրթութեամբ՝ կտրիճ շնորհալի տեսիլք ալ ու-
նենալով՝ խիստ երևելի եղաւ զինուորու-
թեան մէջ. իրեն ըրած քաջագործութեան-
ցը համար մեծ պատիւ զօրավարութեան
առաւ, որ Ստրատելատ կ'ըսուի: Իրեն բնա-
կութիւնն եղաւ Վապագովկիայի մէջ Տե-
րակլիա քաղաքը. որ և Պոնտոսի Մարակլիա
կ'ըսուի. անկէց սուրբ (Թէոդորոսն ալ Մարակլացի
ըսուեցաւ: Տին տեղս իրեն աղէկ
վարմունքովը ամմէնուն սիրելի էր եղած,
կռապաշտներէն ալ շատ հոգի քրիստոնեայ
ըրած, մանաւանդ իր տակի եղած զինուոր-
ներէն: Ըս ատեններս յամին իբրև 319
(Վաղերիոս)՝ աքսիմիանոս կայսրը՝ իրեն հին
բարեկամն որ Վիկիանէս կ'ըսուէր՝ կեսօր
ըրաւ. աս Վիկիանէս՝ Վիկոմիդիա կը նըս-

տէր . անկէց ամմէն տեղ հրաման խրկեց որ
քրիստոնէութիւնը վերցընեն , կուռքերուն
զոհել տան : Ան ատենը ոմանք մատնեցին
իրեն (Սէոգորոսը՝ թէ ինքը քրիստոնեայ
է , զուրիշներն ալ քրիստոնեայ կ'ընէ : Այ-
կիանէս վարպետութեամբ մը ուզելով աս
մարդս ձեռք ձգել՝ որ խիստ երևելի էր ,
թուղթ մը գրեց իրեն . կամ դուն քովս գաս ,
ըսաւ , որ փառաւորութեամբ կուռքերուն
տօնը կատարենք , կամ ես քեզի գամ , որ
խիստ կը փափագիմ քեզ տեսնելու : (Սէո-
գորոս իսկոյն իմացաւ) իկիանէսին չար միտ-
քը , գոհանալ սկսաւ Աստուծոյ . որովհետեւ
միշտ կը բաղձար Վրիստոսի համար արիւն
թափել . թուղթը բերողներուն պատիւ ը-
նելով ըսաւ որ՝ Այկիանէսն ինքը թող հոս
գայ կուռքերը մէկտեղ բերելով , հոս ը-
նենք կուռքերուն տօնը :

Այկիանէս երբոր եկաւ Արակլիա քա-
ղաքը իրեն զօրաց բազմութեամբը , ան դի-
շերը տեսաւ (Սէոգորոս որ՝ իր տանը տանի-
քը բացուեցաւ , կրակ կը թափէր վրան ,
ձայն կու դար երկնքէն . զօրացիր , ո՛վ (Սէո-
գորէ , ես քեզի հետ եմ : Սուրբը արթնցաւ
ըսաւ քովիններուն . Աստուծոյ կամքն աս է
որ՝ ես հոս արիւնս թափեմ Վրիստոսի հա-
մար : Այս ըսելով գոհանալով Աստուծոյ՝ ա-
ղէկ լաթերը հագաւ , Այկիանէսին առջևն
ելլելով իր փառաւոր տունը բերաւ : Այկիա-
նէս սիրով տեսնուելով՝ ահա , ըսաւ , ինչպէս
որ գրեր էիր , եկայ քեզ տեսնելու , կուռքե-

րուն մէջէն ազնիւներն ալ հետս բերի որ
զոհ մատուցանենք : Սէփօրոս խնդրեց որ
իրեն տայ անոնք . առաջ ես , ըսաւ , առան-
ձին զոհ մատուցանեմ , ետքը դուրսը ժողո-
վուրդը զոհէ : Վիկիանէս երբոր հաւատա-
լով տուաւ իրեն , անիկայ ամմէն կուռքն
ալ ոսկեղէն արծրթեղէն կտոր կտոր փշրե-
լով աղքատայ բաժնեց :

Մը բանս երրորդ օրը լսեց Վիկիանէս ,
զարմանալէն հաւատալը չէր գար . հարցուց
Սէփօրոսի , ան ալ իրաւն ըսաւ , ինչ որ
ըրի՝ արդար ըրի , թէ որ աս կուռքերը ի-
րենց չիկրցան օգնել , քեզի ի՞նչպէս պիտոր
օգնեն . աս ըսելով յանդիմանեց իրեն կու-
րութիւնը , իր աստուածներուն ստութիւ-
նը . ճշմարիտ Մտուծոյ փառքը , արքայու-
թիւնը՝ որ քրիստոնէայ եղողներուն պա-
տրաստեր է : Վիկիանէս խիստ բարկանա-
լէն հրամմեց մերկացընել , ոտուրները ձե-
ռուրները կապել անանկ ծեծել . այնչափ ա-
նողորմ ծեծեցին որ մարմինը բզիկ բզիկ ե-
ղաւ . արիւնը գետի մը պէս կը վազէր . անկէց
ետքը հրամմեց կախել , երկրթով քերել ,
կրակով իրեն խոցերը երել . սուրբը իբր թէ
բան չէր իմանար՝ անանկ կը համբերէր աս
տանջանքներուն :

Վիկիանէս կատղելով իր աչքէն հեռա-
ցընելու համար բանտը դնել հրամմեց . քա-
նի մը օրէն առջևը բերել տալով՝ երբոր չի-
կրցաւ միտքը դարձընել , խաչ հանել հրամ-
մեց , նետ (օխ) նետելով սպաննել . բայց

երանելոյն սիրտը անանկ վառուած էր Քրիստոսի սիրովն որ ուրախութեամբ կը քաշէր : Ամէն տեսնողները կու լային . սրբոյն գրագիրն ալ որ հոն կեցած ամմէն բանը կը գրէր , չի դիմանալէն թուղթը ձգեց , գնաց իրեն ոտքն ընկաւ լալով . սուրբը կամաց ձայնով ըսաւ իրեն . մի լար , մի ձգեր թուղթդ . քիչ մըն ալ կեցիր որ իմ վախճանս ալ գրես : Այ զուրցելով աչուրներն երկինքը վերցուց . ինչո՞ւ համար իս թողուցիր , տէր իմ , ըսաւ , քու անուանոց համար է որ նետ զարնելէն աչուրներս դուրս ընկան , մարմինս կրակէն հալեցաւ , մատուրներս կտոր կտոր ընկան . բոլոր դէմքս փոխուած , մարդու կերպարանքէն դուրս ելած , քու սիրոյդ համար կը համբերեմ . դուն ինչո՞ւ համար իս կը թողուս . առ հոգիս կ'աղաչեմ , քու քովդ հանգեցուր : Աչափ ըսելով լռեց , ալ չի կրցաւ խօսիլ մարմինը տկարացած ըլլալով , կուրծքն ալ ձգմուած :

Ի կիիանէս մեռած սեպելով զինքը՝ հրամ մեց պահապան դնել քովը , որ գիշեր ցորեկ նային , չըլլայ թէ քրիստոնէաները խաչին վրայէն հանեն տանին մարմինը : Այց հրեշտակ Ատուծոյ առջի գիշերն եկաւ խաչէն վար ինջեցուց , իրեն մարմինն ալ ողջընցուց . զօրացիր , ըսաւ , Քրիստոս քեզ չի թողներ . ուրախ կեցիր , հիմա կ'երթաս Յիսուսին քով՝ արքայութեան պսակը կ'առնես : Ատու եղածին պէս՝ Ի կիիանէս իր

մենծերէն երկու հոգի խրկեց որ մարմինը հանեն իր առջին բերեն, ինքն առնէ կապարէ սնտուկի մէջ դնելով անանկ ծովը ձգէ որ՝ քրիստոնեայք չառնեն չի պատուեն : Բոնք հեռուանց գալով տեսնելով որ խաչին վրայ բան մը չի կայ, վազելով քովն եկան տեսան որ՝ սուրբ (Թ)էոդորոս խաչին տակը նստած ողջ առողջ զուարթ երեսով կը պատմէր հոն եղող ժողովրդեան Բստուծոյ ըրած հրաշքները իր վրայ :

Բն ատենը երկուքն ալ որ կ'ըսուէին Բն տիոքոս ու Պատրիկիոս՝ կանչելով ըսին . մեծ է քրիստոնէից Բստուածը, անկէց ուրիշ Բստուած չի կայ . իրենց զինուորներովը գացին սրբոյն ոտքն ընկան, մենք ալ քրիստոնեայ ենք, ըսին, աղաչէ զԲստուած որ մեզ ալ իր ողորմութեանը արժանի ընէ : Իկիանէս աս բաներս լսելով՝ Կեստոն իշխանին հրամանեց որ 300 զինուորներով երթայ ամմէնն ալ կոտորէ : Բոնք հոն գալով Բստուծոյ ըրած հրաշքները տեսնելով՝ իրենք ալ քրիստոնեայ եղան : Բն ատենը ամմէն բազմութիւնը մէկ ձայնով աղաղակել սկսան, մեծ է քրիստոնէից Բստուածը, եկէք երթանք Իկիանէսը քարկոծենք, մեր թագաւորը ան Բստուածն է՝ որ (Թ)էոդորոս կը պաշտէ :

Բստուովութիւնը բոլոր քաղքըցոց մէջ մտնելով՝ շատ անկարգութի եղաւ . Իէան դրոս մէյմըն ալ սրբոյն վրայ վազեց որ մեռցնէ, Կեստոն իշխանը սուրբը թալըսեց,

Եւանդրոսը սպաննեց : Ըստ խռովութիւնները տեսնելով սուրբ (Թէոդորոս՝ մէջերնին մըտաւ խաղաղացուց ըսելով, քրիստոնէից ասանկ խռովութիւն ընել չի վայելէր, այլ սիրով վարուիլ :

Սնացած քրիստոնէից բազմութիւնը առին սուրբը քաղաք տարին . բանտին մէջ եղող քրիստոնէաները երբոր տեսան՝ կանչեցին . ողորմէ մեզի, ծառայ Ըստուծոյ : Թողովուրդը վազեց որ բանտին դուռը կտարէ, սուրբը չի թողաւ . ինքը խաչակնքելով վրան՝ դռները բացուեցան, կապերնին քակուեցան, ուրիշ շատ հրաշք եղան անօրը : Իկիանէս տեսնելով որ ամմէնն ալ քրիստոնէայ կ'ըլլան, չորս դին ջուր կտրեցաւ . երևելի զինուորներէն քանի մը բանտը խրկեց որ գաղտուկ գլուխը կտրեն : Ընանկով կատարեցաւ սուրբ (Թէոդորոս յամին 315 . կամ 320 . օգոստոսի 26 . իրեն մարմինը ինչպէս որ առաջուց ապրսպրեր էր՝ Ըրակլիա քաղքէն առին Եւքայիտա գեղը բերին, մէկալ սուրբ (Թէոդորոսին քովը դրին, որ իր քեռին էր : Շատ հրաշքներ եղան ու կ'ըլլան ով որ հաւատքով կարդայ սրբոյն անունը . անոր համար Սենետիկեցւոց՝ չնուցմէ պաշտպան եղաւ աս սուրբ (Թէոդորոսը :

ՍՐԲՈՒՀԻ ԵՒՊՐԱՔՍԷ

Պօլիս ծնաւ ասիկայ յամին իբր 380 . որ երկրորդ տարին էր մեծին (Ս)էոզոս կայսեր . հայրը կ'ըսուէր Մատիգոնոս , ազգական էր կայսեր ու երևելի ատենակալ՝ որ սինկղիտոս կ'ըսուի , խիստ խելացի ու բարեպաշտ մարդ . մայրը կ'ըսուէր Ալպրաքսիա , թագաւորական տնէ , խիստ հոգւոր տիկին ու ողորմած , սիրելի կայսեր ու թագուհւոյն :

Արբոր երկու տարի իրէք ամիս անցաւ իրենց կարգուելէն ետև , առջինէկ զաւակ մը եղաւ , որ է աս երանելի աղջիկը . որուն հայրը Մատիգոնոս իր տիկնոջ անունը վրան դնելով՝ Ալպրաքսիա կոչեց , ըսելով իրեն . ահա Մատուած մեզի աղջիկ զաւակ մը տրւաւ , որ քու յիշատակիդ համար քու անունդ վրան դրի , մեզի ալ հերիք ժառանգ պիտոր ըլլայ . ասկից ետքը յիշելով աշխրբիս անցաւոր ունայնութիւնը՝ իրարմէ հրաժարելով՝ խելուրնիս մտուրնիս միայն Մատուած պաշտելու տանք , աղքատները հոգանք , ինչ պէս որ կ'ըսէ սուրբ գիրքը . Աշխարհս անցանէ , Բայց որ առնէ զհամս Մատուածոյ՝ միայ յատեան :

Հոս չիյտենք որ քանի տարի պիտոր ապրինք . որչափ ալ աւելի ապրինք՝ ու թուուն տարին պիտոր հասնինք , անկից աւելի

կեանքը ցաւօք է ու հեծու թեամբ, ինչպէս
որ կ'ըսէ սուրբ գիրքը. ետքն ալ վերջապէս
մեռնինք երթանք պիտի. հիմա որչափ ա-
ղէկ կ'ըլլայ որ անգիի կեանքը մտմտալով՝
ան կեանքին համար պատրաստուինք որ յա-
ւիտեան պիտի քշէ: Աս խօսքս լսածին պէս
իրեն կինը՝ ձեռու ընէրը վեր վերցընելով
անանկ փառք տուաւ Աստուծոյ, որովհետեւ
իր բաղձանքն ալ ան էր. միշտ աղօթք կ'ը-
նէր Աստուծոյ, որ իր էրկանը սիրտը տպաւո-
րէ աշխրբիս ունայնութիւնը, միտքը փոխէ:

Անտիգոնոս իր կնկանը կամքը հասկընա-
լով գոհութի տուաւ Աստուծոյ. շատ բան
բաժնելով աղքատներու, ժամերու, վան-
քերու, անարատութեամբ ապրեցաւ. բայց
ասոր վրայ տարի մը միայն ապրելով՝ մե-
ռաւ: Անկից ետեւ Աւարաքսիա իր կինն
առաւ իրեն աղջիկը տարաւ թագաւորին ու
թագուհւոյն առջին, իրենց յանձնեց. յի-
շելով Անտիգոնոսին հաւատարիմ ծա-
ռայութիւնը՝ մի մոռնաք, ըսաւ, աս որքս.
անոնք ալ լալով մխիթարեցին կնիկը:
Քիչ մը անցնելէն ետեւ առաջարկեցին որ՝
իրեն աղջիկը տան մէկ մենծ զօրապետի մը
տղին. Աւարաքսիա տիկինն ալ հաւնեցաւ
աս բանիս. երբոր ատենը գալու ըլլայ նէ,
ըսաւ, աս պսակն ընենք. որովհետեւ ան ա-
տենը դեռ հինգ տարուան էր Աւարաքսիա
իրեն աղջիկը:

Բայց աս բանէս ետեւ՝ սինկղիտոսներէն
մէկն ալ զինքն ուզեց կին առնել, թագու-

հին միջնորդ բունելով աս բանիս. Ապրաք-
սիա տիկինն որ իր էրիկը Մնտիգոնոս մեռ-
նելէն ետև միտքը դրեր էր աշխրքէս հրա-
ժարիլ, աս խօսքս լսածին սէս՝ խիստ շփո-
թեցաւ, ցաւեցաւ. իր միտքը թագուհւոյն
բանալէն ետև՝ միտքը դրաւ Պօլիսէն ալ
հեռանալ. իրեն ապրանքները աղքատնե-
րու, վանքերու բաժնելով, առաւ իրեն Ալ-
պրաքսիա աղջիկը՝ որ եօթը տարուան էր
ան ատենը՝ գաղտուկ Ագիպտոս գնաց: Հոն
որովհետև շատ գեղեր, ագարակներ ունէր՝
անանկ ցցընելով որ ան երկիրները տեսնե-
լու համար եկեր է, կանչեց իր գործակալ-
ները, համար ուզեց. բայց ինքը վերին
Սեբայիդն ելաւ, հոն եղած վանքերը պը-
տրտելով շատ բան բաժնեց անոնց:

Հոն մէկ վանք մը տեսաւ, հարիւր եր-
սուն կուսանք մէջը. զարմանալի առաքինու-
թեամբ գիշեր ցորեկ աղօթքի հետ կ'ըլ-
լային. գետնի վրայ խոտեղէն կամ մազե-
ղէն մը փութելով, անանկ քիչ մը քուն կ'ըլ-
լային. հագած զգեստնին ալ անանկ մազե-
ղէն էր. օրը ժուժ մը կ'ուտէին իրիկուրնէ
իրիկուն. միայն կիրակի ու շաբաթ օրերը
երրորդ ժամու ատեն հաց կ'ուտէին, ոսպ,
բանջար ու պտուղ, որ լուր օրերը չէին ու-
տեր. իսկ միս ու գինի անունն ալ չէին ու-
զեր լսել. մէկէ մը ստակ չէին առներ, այլ
իրենց ձեռագործովը կ'ապրէին. բաղնիք
մտնել լուացուիլ ամենեւին չէին ըներ: Ըմ-
մէնուն ջանքն ալ ան էր որ առաքինու թք

մէկզմէկ գերազանցեն , պաք բռնելու , ա-
ղօթք ընելու , աշխատելու , հնազանդելու ,
խոնարհութիւն ընելու , առանց կեղծաւո-
թեան ամմէն աշխարհային բաներէն հրա-
ժարելով : Թէ որ մէկը հիւընտնալու ըլ-
լար՝ դեղի , բժշկի չէին իյնար , այլ Մատու-
ծոյ կամացը կը յանձնէին , Մատուծմէ
բժշկութիւն կը խնդրէին . մէկը դուրս չէր
ելլէր , այլ միշտ վանքին մէջը կը կենային :

Աւարաքսէ տիկինը աս վանքը գնաց
խունկ ու մոմեղէն տանելով , ուրիշ պար-
գեններ ալ իրենց տալու . բայց Թէոդուլի
սարկաւագուհին կամ որ նոյն է մեծաւո-
րուհին բան մը չառաւ , հասկըցընելով որ՝
հոս եղած կուսանքներն ամմէնն ալ աշ-
խարհ ձգեր են , երկնային բարիքներու կը
սպասեն . բայց քեզ չի տրտմեցընելու հա-
մար՝ խունկն ու մոմը առնենք եկեղեցնայ
համար : Քիչ մը խօսելէն պատմելէն ետե՛
Թէոդուլին հարցուց Աւարաքսիա աղջկա-
նը . կը սիրե՞ս , որդեակ , զՔրիստոս ու
աս քուրերը՝ որ զիրենք Քրիստոսի են
տուեր : Պատասխանեց Աւարաքսէ աղջի-
կը . հրամեր ես , խիտ կը սիրեմ , ըսաւ ,
կ'ուզեմ ձեզի հետ մէկտեղ ըլլալ , մէկտեղ
Քրիստոս օրհնել : Թէոդուլին ալ ըսաւ .
բայց ի՞նչ պիտոր ընես քու նշանածդ : Աւ-
արաքսէ պատասխանեց . ես Քրիստոս թա-
գաւորը չեմ փոխեր երկրաւորիս հետ ,
որ այսօր է , վաղը կը կորսուի : Թէ որ ա-
նանկ է , ըսաւ Թէոդուլին , մեզի հետ է

դիր : Աւարաքսէն սլատասխանեց . իրաւ
կ'ըսեմ, թէ որ մօրս դէմ չէ նէ, չեմ բաժ-
նուիր ասկից :

Աւարաքսէայ մայրն որ աս խօսքերս կը
լսէր, լալով դոհուածիւն կու տար Աստու-
ծոյ, ասանկ աստուածասիրութիւն տես-
նելով իր ութը տարուան զաւկին վրայ . ետ-
քը ոտք ելաւ որ երթայ, Աւարաքսիա աղ-
ջիկը չուզեց երթալու : Թէոդուլի յորդորեց
որ երթայ . դուն դեռ տղայ ես, ըսաւ,
մօրդ կարօտ ես, չես կրնար աս վանքին
խստութիւնը քաշել : Տեսաւ որ միտքը չի
փոխուիր՝ ըսաւ . որդեակ, մէկը չի կրնար
հոս կենալ, ինչուան որ իր սէրը Վրխատու-
սի չիտայ, երկնաւոր փեսային խաչը չի քա-
շէ : Աւարաքսէն ըսաւ . ո՞ր է Վրխատու-
սը : Թէոդուլին մօրը հետ մէկտեղ ժամը
տարաւ, Վրխատուսի խաչելութիւնը ցը-
ցուց . աղջիկը տեսածին պէս՝ պազաւ . ես
ալ Վրխատուսի կ'երթամ, ըսաւ, մէյմըն ալ
իրմէ չեմ բաժնուիր : Թէոդուլին ան ատե-
նը ըսաւ մօրը . գիտցիր, տիկին, որ Աստու-
ծոյ շնորհքը կ'երևնայ աս աղջըկանը վրայ .
թող տուր, Աստուծոյ ընծայէ . անոր փո-
խարէնը Վրխատուսէ պիտոր առնես :

Մայրը չի կրնալով չէ ըսել, աղօթք ընե-
լով Աստուծոյ ընծայեց, Թէոդուլեայ յանձ-
նեց . ան ալ աղօթք ընելով առաւ, իրենց
վանքին լաթերը հագուց . մայրը գնաց,
բայց իր սիրտը միտքը հոն ըլլալով՝ ամէն իր
ասլրանքները աղքատաց ու վանքերու բաժ-

նեց . ինքն ալ ան վանքը մտաւ ուր որ մնաց
իր աղջիկը : Տես Մատուծոյ բանն որ՝ քանի
մը որ անցնելէն ետեւ (Թէոդուլի մեծաւո-
րուհին տեսիլք տեսաւ . Մնտիգոնոս լուսա-
ւոր փառքի մը մէջ նստած՝ կ'աղաչէր Քրիս-
տոսի որ իրեն տիկինն ալ արքայութիւն մէջ
առնէ : Մտեսիլքը պատմելով իրեն՝ ա-
պրսպրեց որ մահուան պատրաստութիւն
տեսնէ : Մնիկայ խիստ ուրախացաւ աս բա-
նիս վրայ . որովհետեւ միշտ կ'աղաչէր Մա-
տուծոյ , որ որ մը առաջ լմնցնէ աս կեանքս ,
Քրիստոսի քովն երթայ . կանչեց իր աղ-
ջիկը Աւարաքսէն , խրատ տալէն ետեւ ձեռ-
քը յանձնեց ունեցած երկիրներուն թըղ-
թերը , ապսպրեց վանքերու և աղքատնե-
րու տալ . իրեք օրէն վախճանեցաւ :

Մտոր մեռնելը լսելով նշանածին հայրը՝
հասկըցուց թագաւորին՝ որուն խորհրդա-
կանն էր՝ թէ Մնտիգոնոսին կնիկը մեռնե-
լով՝ Աւարաքսէն աղջիկը առանց մօր , ա-
ռանց վերակացուի մնացած էր՝ հրամայեիք
որ հոս դայ իր նշանածը առնելու : Շուտ
մը հրաման գրեց թագաւորը , իրեն մեծ
խոստմունքներ ընելով : Իայց Աւարաքսէն
իր ձեռքովը պատասխան գրեց՝ յիշեցնելով
իր միտքը , որ մօրը հաւանութիւն Քրիստո-
սի էր տուած զինքը , աշխրքի անուն չէր
ուզէր լսել . աղաչելով որ հոն եղած իրենց
գեղերը ապրանքները՝ աղքատներուն տայ
ու վանքերուն : Թագաւորը գովեց Աւ-
արաքսէայ միտքը . սն ապրանքներն ալ ի-
րեն ուղածին պէս ընել տուաւ :

Ան ատենը տասուերկու տարուան էր եղած Աւսրաքսէ կոյսը , որ լսելով թագաւորին ըրածը խիստ ուրախացաւ : ()րէ օր իր ճգնութիւններն եւելցուց . օրը ժուամը կ'ուտէր աղ , հաց , ջուր . միայն տօն օրերը ոսպ ու կանանչեղէն . անդադար աղօթք կ'ընէր , Աստուածաշնչին տեղեակ ըլլալով միշտ կը կարդար , իրեն ջանքն էր առաքիւնութիւն վաստրկիլ , մանաւանդ խոնարհութիւն ու հեզութիւն . ամմէնուն ծառայութիւնը կը նայէր որ ինքն ընէ : Անքին մէջ կանոն մը կար , երբոր փորձութիւն մը կու գար սատանայէն՝ կը զուրցէին մեծաւորուհիին . ան ալ պաք ու աղօթք կը յանձնէր , ինքն ալ ջերմեռանդութեամբ աղօթքի հետ կ'ըլլար : Արբոր Աւսրաքսեայ ալ ասանկ հանդիպեցաւ , ամընչցաւ զուրցելու . անկէց տրտում էր կեցած , կու լար , չէր ուզեր ոչ հաց ուտել , ոչ ջուր խմել . տեսնելով որ՝ մեծաւորուհին ոմանց փորձութի քաշողներուն քար կրել կու տար , մոխիր ցանել կու տար իրենց հագուստին վրայ , ինքն ալ անանկ սկսաւ ընել . բայց մէկալ կուսանքը իմանալով՝ հասկըցուցին մեծաւորուհիին , ան ալ կանչեց Աւսրաքսէն յորդորելով խօստովանցուց . սատանան է , ըսաւ , որ փորձութեան հետ մէկտեղ ամօթ կը բերէ , զուրցընել չի տար որ դեղն ալ չի գտնես հոգևոր կարգով ու աղօթքով՝ որ աս բանիս համար դրեր են սուրբ հարք . բայց դուն խօստովանելովդ սատանային գլուխը կոխէ , որ Վրիստոսէ պսակը առնես :

Ըստ ըսելով՝ վրան աղօթք ըրաւ, մէկի մը յանձնեց որ մեծ մարապետներէն մէկն էր, Յուլիա կ'ըսուէր՝ որ խիստ սէր կապեց Աւարաքսեայ վրայ, աղէկ խրատներ սկսաւ տալ. կը յորդորէր սատանային փորձութիւնները միշտ զուրցել հոգևոր մօրը, որպէս զի անոր աղօթքովը յաղթէ սատանայի: Աւարաքսէն աս խրատները լսելով՝ անկէց ետքը քան մը չէր պահէր իր հոգևոր մօրմէն. հրաման խնդրեց երկու կամ իրեք օրը ժուժ մը ուտելու՝ ան ատենն որ ինքը տասնըեօթը տարուան էր եղած: Սեծաւորուհին ալ զինքը փորձելու համար ծանր գործքեր սկսաւ յանձնել. տեղ մը քարեր կային, հրամմեց անոնք կրել՝ իբր թէ շէնք շինելու համար պէտք էին. Աւարաքսէն ալ սիրով կը կրէր, կը նայէր որ իր մարմնաւոր գեղեցկութիւնը աշխատանքով պաքով աւրէ տգեղցընէ: Տասնըհինգ օր քարերը կրելէն ետև՝ հոգևոր մայրը փորձելու համար հրամմեց իրեն ան քարերը ուրիշ տեղ տանել տասնըհինգ օր ալ ան քարերը կրեց. իրեն սովորական գործքերէն ալ, պաքէն ալ ամենեւին ետ չի կեցաւ: Փռնապան ալ ընել տուաւ՝ որ հաց շինէ ամմէնուն համար, Աւարաքսէն առանց մէկի մը օգնելու կ'ընէր, ուրիշ կուսանքներու ալ կը ծառայէր:

Սատանան տեսնելով որ չի կրնար աս աղջըկանը յաղթել, գիշեր մը երբոր քուն էր՝ իր նշանածին կերպարանքը մտնելով

բազմութեամբ ներս մտաւ՝ որ զինքը առնէ տանի. Աւարաքսէն վախնալէն կանչել սկըսաւ, ինչուան լսեց մեծաւորութիւն եկաւ արթընցուց. երբոր պատմեց Աւարաքսէն տեսածները, մեծաւորութիւն սիրտ տուաւ. Վրիստոս քեզի հետ է, ըսաւ, չի թողներ քեզ սատանային ձեռքը: Վիշերուան ժամը զուրցելէն ետեւ հրամմեց Աւարաքսէայ ոտքի վրայ կենալով սուրբ կուսանքներուն վարքը կարդայ. Աւարաքսէն ալ անանկ աղէկ կարդաց որ՝ ամմէնն ալ լաց շարժեց:

Ասանկ օրէ օր առաջ կ'երթար հոգևոր ձամբու մէջ. ամմէն ժամասացութեան առտենը անխաբան կը գտնուէր, ամմէն աշխատանքի գործքի կը վազէր, աշխարհական խօսքերէն կը փախչէր, հոգևոր խօսքերը ջերմեռանդութեամբ կը լսէր: Հրաման ուզեց մեծաւորութիւն շաբաթնիբուն հինգ օր անօթի կենալ, միայն շաբաթ ու կիրակի կերակուր ուտել. որովհետեւ շատ է, ըսաւ, իմ քաշած պատերազմս սատանային ձեռքէն: Այն ալ հրաման տուաւ. միայն զգոյշ կեցիր, ըսաւ, որ չի հպարտանաս. չըլլայ թէ ուրիշ դիացէն սատանային որողայթը իյնաս աւելի պաքիզ համար:

Բայց սատանան ուրիշ փորձութիւն մը հանեց անոր դէմ. քուրերուն մէջէն մէկը Վերմանա ըսուած խիստ հակառակ ընկաւ Աւարաքսէայ դէմ. միշտ կ'անարգէր կը նախատէր. կեղծաւորութեան համար անչափ պաք կը բռնէս, կ'ըսէր, որ քեզ մեծաւոր

րուհի ընել տաա : Աւարաքսէն թողութիւն
ուզելով իրմէ՝ միշտ կը նայէր խոնարհութիւն
սիրտը շահել : Արբոր չեղաւ՝ մեծաւորու-
հին կանչեց Վերմանան, աղէկ մը յանդի-
մանելէն ետեւ՝ քանի մը օր իրենց ժողով-
քէն դուրս հանեց, հազիւ Աւարաքսէին
աղաչանքովը ներս առաւ :

Աւարաքսէն երբոր քսանրեօթը տա-
րուան եղաւ, խնդրեց հոգևոր մօրմէն որ
բոլոր մեծ պաքը անօթի անցընէ . որպէս
զի կատարեալ յաղթեմ, ըսաւ, սատա-
նային ինչպէս որ դուն յաղթեցիր . որով-
հետեւ Քրիստոս մեր տէրն ալ կ'ըսէ . Այս
ապտ ոչ ե-ի-ի ելանէ, ելե-ի ոչ աղօթի-ի-ի եւ պահօ-ի-ի :
Հոգևոր մայրն ալ մէկալ քուրերուն աղա-
չանքին համար հրաման տուաւ : Արբոր
ծաղկազարդն եկաւ՝ աղաչեց որ ինչուան
աւագ հինգշաբթի ալ իր ծումը չաւրէ, ա-
նանկով սուրբ հաղորդութիւնը առնէ : Այց
ան օրը անանկ մարմնիլ մը եկաւ իրեն որ
գետինն ընկաւ, հազիւ կրցան փանել եկե-
ղեցին սուրբ խորհուրդը առնել . անով զօ-
րացաւ :

Աղօթքը լմննալէն ետեւ հոգևոր մայրը
խրատ տուաւ չափէն աւելի ճգնութիւն չը-
նել . ան օրը հաց ուտելէն ետեւ ապրսպը-
րեց ամմէն օր մէյմէկ ժուժ ուտել . անկէց
ետքը Աւարաքսէն ալ անանկ ըրաւ : Այց
սատանան մարմնաւոր հարուածներով սկը-
սաւ փորձել սրբուհին . օր մը հորէն ջուր
քաշելնինի՝ յանկարծ հորին մէջը ձգել

տուաւ գլխիւ վար . վազեցին մէկալ կուսանք ,
երբոր հորէն հանեցին՝ ամենեւին անմնաս
գտան . որովհետեւ Աւարաքսէն իյնալնինի
օգնութի կանչեր էր զՔրիստոս . հորէն
ողջ ելաւ , ալ աւելի սկսաւ աշխատիլ : Աւ-
րիշ օր մը փայտ կոտրելնինի՝ սատանան ա-
նանկ բռնեց կացինն որ ծռելով իր ոտքին
զարկաւ . անանկ գետինն ընկած մարած
գտան՝ ինչուան որ ուրիշները հասան , ջուր
զարնելով երեսին խաչակնքելով արթնցու-
ցին . ետքը նորէն աշխատանքի տուաւ զին-
քը : () ր մըն ալ փայտ կոտրելէն ետեւ եր-
բոր շալակն առած սանդուխքը կ'ելլէր , սա-
տանան յանկարծ զարկաւ , վերէնիւ վար
գլորեցաւ . քովինները մեռած կարծեցին
զինքը . բայց Աւարաքսէն զօրութեամբն
Քրիստոսի ոտքի վրայ կեցաւ անմնաս :
Անգամ մըն ալ երբոր կրակին առջև կեցած
բան կ'եփէր , անանկ եռալով դուրս պօռթ-
կաց որ երեսին ու վրան ցաթկեց . ան ա-
տենն ալ անանկ պահեց զինքը Աստուած ,
որ բան մը չիմացաւ :

Սատանան ասանկ զանազան փորձանք-
ներով կ'ուզէր կոյսը կորսնցընել , Քրիստոս
ալ զանազան հրաշքներով կը փառաւորէր :
Այն դիւահար կնիկ մը բերին խիստ կատ-
ղած , երկրթներով կապած՝ վանքէն դուրս
ձգեցին , բերողները փախան . մէկը չէր կըր-
նար մօտիկնալ , կերակուրն ալ հեռուանց
երկնցընելով կու տային . որչափ որ աղօթք
ըրին՝ չի կրցան բժշկել : Աայց միայն Աւ-

պրաքսէն իր մեծաւորութիւն հրամմելովը
քովը կ'երթար կերակուրն ալ կու տար :
Գերմանա մարապետն ալ որ նախանձ ու
ներ Եւրաքսեայ վրայ , փորձեց ինքն ալ
գնաց կերակուր տալու . դիւահար կնիկն
ասոր վրան վազեց , լաթերը պատռելով
գետինը ձգեց , ահուաներովը խածնել սկսաւ
մարմինը , մէկը չի կրցաւ խալըսցընել , միայն
Եւրաքսէ կոյսը , որ Գերմանան ազա-
տեց , դիւահարին վրայ ալ շատ աղօթք ը-
րաւ , գաւազանով զարնելով յանուն Յի-
սուսի կը հրամմէր դիւին որ ելլէ . անիկայ
կ'աղաղակէր՝ չեմ ելլեր , ելլելու ըլլամ ո՞ր
երթամ , կ'ըսէր . Եւրաքսէն հրամմեց՝
ելլես երթաս արտաքին խաւարն անշէջ
հուրը : Սատանան երբոր լսեց աս Քրիստո-
սին խօսքերը , վայ տալով իրեն՝ ըսաւ . վայ
ինձի որ մէկ աղջիկէ մը կը բռնադատուիմ .
աս ըսելով՝ ծուխ մը հանելով հալածեցաւ
գնաց . ամմէնը զարմացան : Բսանկ ալ եօ-
թը տարուան տղայ մը անդամալոյժ խուլ
ու համր ըռընտցուց :

Բս բաներս ըլլալէն ետե գիշեր մը տե-
սիլք տեսաւ մեծաւորութիւն՝ որ լուսաւոր
մարդիկ իրեն կ'ըսէին . Եւրաքսէն ա՛ռ մե-
զի բեր , անմահ թագաւորն ամմէնուն տե-
րը կ'ուզէ անիկայ : Երբոր առին տարին՝
մէկ գեղեցիկ գուռ մը հասան որ ինքիրմէ
բացուեցաւ , ան դռնէն ներս տարին Բս-
տուծոյ առջև կեցուցին , որուն ոտքը պա-
գաւ Եւրաքսէն . բիւրաւոր հրեշտակներ

ալ անուշ ձայներով երգել սկսան. հոն մայրն
Մատուծոյ կեցած կը ցցընէր իրեն անձառե-
լի փառքը անթառամ պսակը ըսելով, աս է
վարձքը, որդեակ, քու ձգնութեանդ որ
ինչուան հիմա քաշեցիր, տասն օրէն պիտի
գան վայելես :

Երբոր աս տեսիլքը պատմեց ամմէն կու-
սանքներուն, ամմէնն ալ լալ սկսան. ինչ
պէս պիտոր զատուինք, կ'ըսէին, անոր նք-
ընկերութէն : Աւարաքսէն ալ լսելով՝ ան
ալ լալ սկսաւ. մէկ բարեգործութիւն մը
չունիմ, կ'ըսէր, որ համարձակիմ Վրիս-
տոսի առջին երևնալու, վայիմ ծուլութես.
ես կարծէի որ դեռ շատ պիտոր ապրիմ,
պտուղ արժանի ապաշխարութեան կրնամ
ընել. հիմա ասանկ թոյլ խորհրդով ինչպէս
արժանի պիտոր ըլլամ Մատուծոյ առջին
ելլել. գոնէ տարի մըն ալ ապրէի՝ որ ատեն
ունենայի բարեգործութիւն մը ընելու :
Մեծաւորուհին յոյս կու տար կը քաջալե-
րէր՝ նորէն տեսիլքը պատմելով :

Աւարաքսէն աղէկ հասկընալով Մատու-
ծոյ կամքը, Յիսուսի ու Մատուածածնայ
բարեխօսութեանը վրայ ապաւինելով, հրա-
ժարական ողջոյնը տուաւ իր հոգևոր մօրն
ու ամմէն կուսանքներուն. ժամ մտաւ, գի-
շերնիլուս աղօթքի հետ ըլլալով պատարագ
տեննելէն ետև հաղորդուեցաւ. ժամէն
եկաւ, հիւանդ պառկեցաւ : Ամմէն կու-
սանքները քովը շարուած կու լային կ'ող-
բային իրմէ բաժնուելուն վրայ. անիկայ ա-

զօթք յանձնեց որ մէկտեղ ընեն . երբոր լմնցաւ , սրբուհին ալ հոգին աւանդեց իբր երեսունըութը տարուան , երեսուն տարի վանքին մէջը կենալէն ետեւ :

Ս Ո Ւ Ր Բ Բ Ա Ր Ս Ե Ղ

Կեսարիա ծնաւ . իրեն առջինները սեբաստացի էին , բայց հայրը նէոկեսարացի էր , նոյն անունով Քարսեղ կ'ըսուէր . մայրը կեսարացի էր Լամելիա անուն , երկուքն ալ սուրբ , իր պապն ալ ու քեռին ալ մարտիրոս եղած էին , իր ամմէն տունն ալ սրբակաց մարդիկ էին : Իսկ իրեն Մակրինա քոյրը ամմենէն երևելի եղած էր սրբութիւն իմաստութեամբ , որ իր եղբարներն ու քուրերը ամմէնն ալ իր ձեռքը մեծցուց աղէկ հոգեւոր կրթութիւն տալով . անանկով ասոնք իբր թէ ամմէնն ալ տնով տեղով սուրբ եղան :

Քարսեղ իր պզտիկութեան տեսնը ծանր հիւանդութի մը քաշեց . հայրը խիստ տրտմելով՝ քունին մէջը տեսաւ որ Քրիստոս կ'ըսէր իրեն , ինչպէս որ աւետարանին մէջը գրած է . Եւրե , որդին քո կենդանի է : Ինքն ալ անոր պէս հաւատալով՝ բոլորովին ողջընցած գտաւ իր տղան . որուն աղէկ կրթութիւն տուաւ թէ աստուածապաշտութեան և թէ ուսման մէջ : Երբոր տասնը

վեց տարուան եղաւ , հայրը վախճանած
ըլլալով՝ Վարսեղ իր ուսումնասիրութիւնը
եւեցուց . աղէկ սորվելու համար ասդիս
անդին քալեց , Վճէնք գնաց . ուր գտնե-
լով իր գաւառակիցը Վրիգոր նազիանզա-
ցին , խիստ սէր կապեցին երկուքը իրարու
հետ . մէկզմէկ կը յորդորէին առաջ երթա-
լու ուսման ու առաքինութեան մէջ : Վայց
Վարսեղ չի գտաւ Վճէնքը ինչպէս որ կը
կարծէր . համ մը չառաւ . իրեն սիրտը վե-
րին իմաստութիւնը կը փնտրուէր . իսկ ա-
թենացիք միայն երկրաւոր գիտութեան ե-
տեւէ ընկած էին , անոր համար Վճէնքը
ունայնութի կը կոչէր Վարսեղ : Վրիգոր կը
յորդորէր անիկայ սիրտը չի կոտրել , ինչուան
որ ուսմունքնին լինցընեն , ետքը երկուքը
մէկտեղ հոգևորին տան զիրենք . ասանկով
աս երկու երիտասարդքը մէկ ընտիր օրինակ
մը էին եղած Վճէնքի մէջ իրենց առաքի-
նի վարքովը : Վարսեղ երբոր դարձաւ Վճ-
թէնքէն , իրեն Վակրինա քոյրը որ էր լման
իմաստուն կուսան , վախնալով չըլլայ թէ
Վարսեղ երկրաւոր գիտութիւնը սորվելով
սիրտը փքուի , հոգևոր իմաստութեանէն պա-
ղի , շատ խրատ կու տար իրեն քրիստոնէա-
կան կատարելութեան ետեւէ իյնալ : Վճ-
քոջը խրատներէն Վարսղին սիրտը աւելի
վառուելով , իր սէրը աշխարհային գիտու-
թեանէ փառքէ բոլորովին կտրեց , աստուա-
ծային իմաստութեան տուաւ :

Ղամբայ ելաւ , Արուսաղէմ ու Միջա-

գետք գնաց ուր որ կրօնաւորներ կային . աւելի Ագիտոսի անապատը գնաց ճգնաւորներուն քով , որ ան ատենը մէկ Աթէնք մըն էր աստուածային իմաստութեան . ան ճգնաւորներուն վրայ ինչ առաքինութեան ծաղիկներ որ տեսաւ՝ իր վրայ ժողովեց , զինքը կատարելագործեց : Արքոր Աեսարիա դարձաւ , տեսաւ որ իր մայրն ու Մակրինա քոյրը կուսանաց վանքը մտած էին . ինքն ալ անոնց նմանելով անապատի մը մէջ քաշուեցաւ . ճգնութեան , աղօթքի ու կարգալուհետ եղաւ , ամմէն առաքինութեան մէջ զինքը կրթեց :

Անկեսարացիք շատ կը յորդորէին Ռարսեղն որ իր հօրը տեղն անցնի , դպրատուն բանայ տղոց իր հօրը պէս , շատ բան իրեն խոստանալով : Աեսարացիք ալ կ'ուզէին որ իրենց եկեղեցնայ սլաշտօնեայ ըլլայ . քայց Ռարսեղ մէկն ալ յանձն չառնելով կը զմայլէր երկնային մտածութեամբ՝ որ միայն առանձնութեան մէջ կրնայ ըլլալ : Աս իրեն կատարելութեան վարքը տեսնելով շատ եղբարներ քովն եկան , զինքը հոգևոր հայր ընտրելով՝ կրօնաւոր եղան իրեն ձեռքին տակը . Ռարսեղ ալ աղէկ կրթելով զանոնք գիտուն վարդապետութեամբ , տեսական ու գործնական վարք սորվեցընելով , կանոններ շինեց , որ ան կանոններուն վրայ երթան միակերպ : Ասկից ետքը եղաւ որ սուրբ Ռարսղին կարգն ու կանոնադրութիւնը մտաւ ամմէն արևելք , ինչպէս որ ինչուան հիմա կը քշէ :

Եւսեբիոս Աեսարիոյ եպիսկոպոսը քա-
հանայ ձեռնադրեց Ռարսեղը . աս բանս
շատ դէմ եկաւ Ռարսղին , բայց իրեն
պարտքը ընելու համար՝ սկսաւ եկեղեցնայ
մէջ քարոզ տալ , առական գիրքը մեկնել ,
ատեն ատեն ալ պարապ գտածին պէս նո-
րէն կ'առանձնանար , աղօթքի ու ձգնու-
թեան հետ կ'ըլլար . ուրիշ աշկերտներ ալ
կը ժողովէր , կրօնաւորութիւն կը սորվեցը-
նէր , աղքատներու ալ կը հասնէր : Չար
Յուլիանոսը որովհետեւ Ռարսղի հետ մէկ-
տեղ կարդացած էր Աթէնք քաղաքը՝ հա-
մարձակեցաւ թուղթ գրել իրեն , հազար
լիտր ոսկի ուղելով Պարսից դէմ պատերազ-
մելու համար : Ռարսեղ յայտնի խօսքերով
յանդիմանեց անոր ըրած չարութիւնները ,
իր քրիստոնէայ ժողովրդեան աղքատու-
թիւնն ալ հասկըցուց : Սրբոյն Ռարսղի ա-
ղօթքովը եղաւ որ , կ'ըսեն , ետքը չար Յու-
լիանոսը յանկարծ սատկեցաւ :

Բայց Յուլիանոսին տեղը Աաղէս կայս-
րը նստաւ . աս ալ արիօսեան ըլլալով՝ ու-
րիշ հալածում մըն ալ աս հանեց . ան ա-
տենը սուրբ Ռարսեղ անապատէն ինջնե-
լով , ուղղափառները հաստատեց , արիօ-
սեանները պապանձեցուց խօսքով ու գրով .
Աաղէսին առաջարկութիւնն ալ մերժեց :
Ետքը երբոր եպիսկոպոս ձեռնադրուեցաւ
Աեսարիոյ վրայ , ան ատենը աւելի ջանք ը-
րաւ արիօսեան աղանդը բոլորովին ջնջե-
լու անկից , նաև ուրիշ աղանդներն որ ան

ատենը կային . լուսաւոր խօսքերով ճառեր ,
քարոզներ , մեկնութիւններ կը գրէր , գրով
և վարդապետութեամբ կ'աշխատէր . ատոր
անոր , աւելի երևելի եպիսկոպոսներուն
թղթեր կը գրէր . ո՛ր որ կուի ու տարածայ-
նութիւն կար ուղղափառ եպիսկոպոսաց մէջ
կը շտկէր . աստուածսիրութիւն ու եղբայր-
սիրութիւն հաստատելու համար ժողովըր-
դեան մէջ բանէ մը ետ չէր կենար , թէ և
բամբասուէր նախատուէր . իր աղօթքներն
ալ , ճգնութիւններն ալ միշտ կ'ընէր , թէ
պէտ և տկար էր ու հիւանդոտ :

Աղէս կայսրը լսելով սրբոյն Ռարսղի
նախանձը արիօսեանց դէմ՝ ուզեց քշել .
բայց իր տղան ալ , կինն ալ ծանր հիւընտ-
ցան . իրեն գրիչն ալ իրեք անգամ կոտրեցաւ .
քանի անգամ որ ձեռքն առաւ վճիռը գրե-
լու . գիտցաւ որ սրբոյն հրաշքներն են , քո-
վը կանչեց . աղաչեց որ բժշկէ : Սուրբ Ռար-
սեղ առաջարկեց՝ թէ որ թողնես , բտաւ , ա-
րիօսեան մոլորութիւնը , ան ատենը տղան
կը բժշկուի . բայց Աղէս չի դառնալով իր
մոլորութենէն՝ տղան մեռաւ . Աղէսին
տեղը Սողեստիոս եպարքոսը դարձաւ ուղ-
ղափառ եղաւ , երբոր զինքը ողջնցած տե-
սաւ ծանր հիւընտութենէ՝ սրբոյն Ռարսղի
ձեռք դնելովն ու աղօթքովը :

Սսրբոյն խօսքերն ու քարոզութիւնը մէկ
ուրիշ զօրութիւն մը ունէին , բոլորովին ըլ-
լալով աստուածային . ինչպէս որ սուրբ Նփ-
րեմ յայտնի տեսաւ որ Ռարսղին խօսելու

ատենը վրան լուսաւոր աղաւնի մը կեցած էր
օրինակ Հոգւոյն սրբոյ . ինչ իմաստութեան
խօսքեր որ կը խօսէր ժողովրդեան՝ ան ա-
ղաւնին էր որ անկաճնիվար կը զուրցէր :

Եսանկ զարմանալի վարուք քաղաքավա-
րութեամբ ապրելով սուրբ Տարսեղ՝ լսեց
որ Ալաղէս կայսրը ուղղափառներուն հալա-
ծողը պատերազմի մէջ մեռեր է , ետեւէն
Սէոզոս կայսրը նստելով՝ ուղղափառ ե-
պիսկոպոսները ետ դարձուցեր է քշուած
տեղերնէն , ասոր վրայ սիրտը հանգչեցաւ .
անանկ հանգիստ սրտով վախճանեցաւ յա-
մին 380 :

ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆ

Արքայ կամ Անապատակակ

Ասիկայ եգիպտացի էր (ղպտի) , բարե-
պաշտ ու հոգւոր ծնողաց զաւակ . պղտի-
կուց տանը մէջ փափուկ մեծցած աղօթա-
սէր ժամասէր տղայ մըն էր , հեզահոգի ,
հնազանդ . մէկ նեղութիւն մը չէր տուած
իր ծնողացը . կարդացողութիւն չունէր , ու-
սում չիյտէր , բայց աստուածաշնչին խօսքե-
րուն խիստ փափագով մտիկ կը դնէր , ըսած-
ները բռնել կընայէր :

Երբոր տասնըութը տարուան էր՝ մեռան
իր ծնողքը , ինքն ու քոյրը մինակ մնացին .
վեց ամիս անցնելէն ետեւ ժամ երթալու

ատեն առաքելոց վարքը կը մտածէր՝ թէ
ինչպէս ամմէն բան թողին, Վրիստոսի ե-
տեւէ գնացին. ուրիշ աշակերտաց վարքն ալ
միտքը կը բերէր, որ իրենց ամմէն ունեցա-
ծը կը ծախէին, գինը առաքեալներուն կու-
տային որ աղքատաց բաժնեն: Ասոնք մտա-
ծելնինի՝ մէյմըն ալ ժամուն մէջ ան օրուան
աւետարանը լսեց որ կը կարդային. Այնէ
համիս հասարեալ լինել, էրն վաճառեալ զամենայն
չոր ինչ ունիս եւ որոր աղքատաց, եւ եկ զչի իմ
եւ ունիցիս գանջս՝ ի յերկինս: Աս խօսքը իրեն
սիրտը մտաւ, լուսաւորուեցաւ, իրեն հա-
մար ըսուած սեպեց. իր ունեցածները, ոս-
կի արծաթ ամմէնն ալ ծախեց, աղքատաց
տուաւ, միայն քիչ մը բան իր քրոջը համար
պահեց. իր արտերն ալ հոն եղող գեղացի-
ներուն պարգևեց:

Արքոր մէյմըն ալ ժամը մտնելով լսեց ա-
ւետարանին խօսքը. Ա՛յ հոգայք վասն վա-
ղութն, ինչ որ պահեր էր քրոջը համար՝ ամ-
մէնն ալ աղքատներուն բաժնելով արտոր-
նօք՝ իր քոյրը յանձնեց հաւատարիմ կու-
սանքներուն. անանկով ամմէն հոգէ խա-
լըսելով՝ գեղէն դուրս առանձին բնակիլ
սկսաւ, կարգով կանոնով զինքը ճնշել. ան
ատենը ինքը քսան տարուան մը կար: Աոմա
գեղին մօտիկ մէկ ծեր մը տեսաւ բնակած
որ խիստ ճգնութիւն կ'ընէր. ինքն ալ ան-
կից բարի օրինակ առնելով գեղէն հեռու
սկսաւ բնակիլ յամին իբր 270, անոր նման
ճգնութիւններ ընել:

Ըստրբարի յօժարու թիւնը տեսնելով սատանան, սկսաւ միտքը փորձու թիւն ձգել. յիշեցնելով ազգականներուն գուժը, ունեցած մեծութիւնը, բռնած ճամբուն դրժուարութիւնը. բայց սուրբ Մատն հաւատքով աղօթքի հետ ըլլալով՝ ամմէն փորձութեան վրայ կ'ելլէր: Ատքը սկսաւ ցանկութեան խորհուրդներով տանջել. անոր ալ յաղթեց սուրբ Մատն աղօթքով, պաքով ու ճգնութեամբ. անանկ որ՝ չիղիմանալով սատանան, օր մը դարչելի տղի մը կերպարանքով երևցաւ, իրեն ոտքին տակն ընկած կը գանգտէր ըսելով՝ Ես շատ մարդ խաբէցի գետինը ձգեցի, հիմա քեզնէ յաղթուեցայ: Սուրբ Մատն ըսաւ. Տէր է Ի՞՞՞օֆնահան, Է ես որեսի զԷշնաֆու Ի՞՞՞: Ըստ սաղմոսը լսելուն պէս սատանան հալածեցաւ, մէյմըն ալ քովը չեկաւ:

Բայց սուրբ Մատն գիտնալով որ սատանան շատ ճամբաներ ունի մարդը կորսնցնելու, անկից ետեւ ալ աւելի շատցուց իր ճգնութիւնը. օրը ժում մը կ'ուտէր, երբեմն ալ երկու իրէք օրն անգամ մը, կամ շաբաթն անգամ մը. կերածն ալ աղ ու հաց, խմելիքը ջուր. խոտի վրայ կը պառկէր, շատ հեղ ալ գետնի վրայ. գիշերն ինչոյս աղօթքի հետ կ'ըլլար, իրիկուրնէ աւրելէք դառնալով աղօթք կը սկսէր, անանկ մը կը վերանար մտքովն որ ինքը չիմանալով մէյմըն ալ արևը երեսը ծագած առտու եղած կը գտնէր. հեռու տեղ քարայրի

պէս տեղուանք կային . անոնցմէ մէկին մէջ մտաւ , բերանն ալ գոցել տուաւ մէկի մը որ իրեն հաց կը բերէր . հոն տասնըհինգ տարի կեցաւ սաստիկ ճգնութեամբ :

Սատանան վախնալով չըլլայ թէ ուրիշներն ալ օրինակ առնելով՝ իրեն նման անապատը քաշուին , գիշեր մը շատ սատանաներով վրան վազեց , անչափ ծեծեց որ մեռելի պէս գետինն ընկաւ . հաց բերող եղբայրը ասանկ ընկած տեսնելով , շալկեց գեղին ժամը տարաւ , ուր ամմէնը մեռած կարծեցին . բայց սուրբ Մատն կէս գիշերուն արթննալով՝ նորէն իր տեղը տանել տրւաւ . ծեծին ցաւէն չի կրնալով ոտքի վրայ աղօթք ընել , գետնատարած կ'ընէր : Հոս եմ , չար սատանաներ , կ'ըսէր , ինչ ընէք , ասկեց աւելի ալ ընէք՝ Քրիստոսի սիրոյն իս չէք կրնար բաժնել . (Թէ յարեցէ 'ե վերայ էմ պատերազմ , ոչ երկեցէ սերս էմ , սաղմօսը կը զուրցէր :

Սատանաները կատղելէն՝ տեղը թնդացուցին . խցին չորս դիէն պատուելով՝ կերպ կերպ ահաւելի գազաններու կերպարանքով վրան վազեցին , ողջ ողջ կուլ տալ կ'ուզէին : Սուրբ Մատն վրանին նայեցաւ , լուսաւոր հաւատքովն ըսաւ . թէ որ ձեր քովը ուժըլլար , մէկերնիդ հերիք էր , բայց Քրիստոս ձեր ուժը ոչնչացուց . թէ որ Մատուծմէ հրաման ունիք՝ ինչ որ կրնաք ըրէք , չէ՛նէ ինչո՞ւ ասչափ շիտթեր էք . մեր պահապանը սուրբ խաչն է , Քրիստոս է : Մը ըսենինի

վեր նայեցաւ , տեսաւ տանիքը բացուած ,
լոյս մը որ վրան կ'ինջնար . սատանաները
խսկոյն հալածեցան , իրեն ցաւերը վերջա-
ցան , իր ծակծրկած խուցն ալ շինուեցաւ .
ան ատենը աղաղակեց , ո՞ր էիր , տէր իմ
Յիսուս , ո՞ր էիր ասչափ ատեն : Չայն ե-
կաւ իրեն վերէն . հոս էի , սով Մ'նտոնիէ ,
քու կռուելիք կը տեսնէի . որովհետեւ համ-
բերեցիր և յաղթեցիր , ես ալ քեզի միշտ
օգնական ըլլամ , ամմէն աշխարհ անուանի
ընեմ : Մ'ս խօսքէս անանկ ուժ առաւ սուրբ
Մ'նտոն , որ առջինէն աւելի զօրացաւ :

Մսկէց ետքը բաղձալով աւելի անդբաղ
Մ'ստուծոյ ծառայելու , գնաց սուրբ Մ'նտոն
վերոյիշեալ ծերոյն աղաչեց՝ որ մէկտեղ
ներսի անբնակ անապատը երթան . աղէկ
իմացած էր որ Մ'ստուծոյ ծառայելու մէկ
հատիկ ճամբայ՝ մարդէս փախչելն է : Այր-
բոր ան ծերը աս բանխոնորու թիւնը յանձն
չառաւ՝ իր ծերու թիւնը պատճառ բերելով ,
ինքը մինակ սկսաւ դէպ 'ի անապատն եր-
թալ . ան ատենը սուրբ Մ'նտոն երսունը-
հինգ տարուան մը կար : Ղաւթեան տեսաւ
արծրթ է աման մը ձգած . հասկընալով որ
սատանային որոգայթն է , քամահրելով մը
անցաւ գնաց , խսկոյն ան արծաթն ալ
աներևոյթ եղաւ . քիչ մը առաջ երթալով ոս-
կիի մեծ կտոր մը տեսաւ , անկից ալ անցնե-
լով լեռ մը ելաւ . վրան քարայր մը գտաւ լե-
ցուն գազաններով , որոնք սուրբը տեսածնին
պէս փախան . հոն մտնելով քարերով գո-

ցեց դուռը, քսան տարի կեցաւ : ոչ ինքը
դուրս ելաւ, ոչ ալ ներս մարդ առաւ . եր-
կու հեղ միայն տարին հաց կը տանէր մէ-
կը, վերէն ներս ձգելով : Ահողներ կ'ըլլային
զինքը տեսնելու, բայց ներսէն կուուելու
ձայն կ'առնէին . ինչ կեցեր ես հոս, մեր
տեղն է ասիկայ, ել քնա : Սուրբ Մատնին
ձայնն ալ կ'առնէին՝ որ անոնց դէմ կը խօ-
սէր . առաջ կը կարծէին որ ներսը մարդ
կայ, ետքը ծակերէն նայելով միայն սուրբը
կը տեսնէին . անկէց կ'իմանային որ սատա-
նաներուն կռիւն է : Արօնք յայտնի տես-
նելով որ սուրբ Մատնին սորվեցուցած ճամ-
բան՝ մարդէ փախչել առանձնանալը՝ շատ
հոգի փրկել տայ պիտոր մեղքերէ հեռացը-
նելով, անհնարին կը կատղէին հետը կը
կուուէին . աս կռիւն էր որ եկողները կը
լսէին, վախնալով կը փախչէին ետ կը դառ-
նային :

Արքոր յամին 306 մեծն Աոստանդիա-
նոս թագաւորեց, ան ատենը քրիստոնէու-
թիւնը համարձակ ըլլալով՝ շատ ցաւագար-
ներ կու գային կը բժշկուէին . շատ մարդ
ալ քովը գալով իրեն խօսքերը լսելով, սըր-
տերնին կը շարժէր . իրեն աշակերտ կ'ըլ-
լային, անանկ որ՝ քիչ ատենի մէջ ան մեծ
անապատը լեցուեցաւ կրօնաւորներով . ամ-
մէնուն առաջնորդող, սորվեցընող եղաւ սբ
Մատն : Մտնցմէ օրինակ առնելով ուրիշ
դիւերն ալ քանի ձգնաւոր որ կային, անոնք
ալ աղաչեցին իրեն որ գայ՝ իրենց ալ սոր-

վեցրնէ ան կրօնաւորական վարքը : Սուրբ
Մատն անոնց ալ յօժարութեամբ կ'եր-
թար կը սորվեցրնէր . թէպէտ երթալու
գալու ատենը մէկ գետէ մը կ'անցնէր որ
մէջը լեցուն էին գազաններ :

Հալածումի ատենը երբոր լսեց թէ Մ.
ղեքսանդրիայի մէջ շատ քրիստոնէայ կը
նահատակուէին , իրեն գլխաւոր աշակերտ-
ներովը հոն եկաւ որ ինքն ալ մարտիրոսու-
թեան արժանի ըլլայ : Քրիստոնէաները
դատաւորին առջև տանելու ատենը՝ քովեր-
նին կու գար սիրտ կու տար . բանտը դրած
ատեննին կ'երթար կը մխիթարէր կը ծա-
ռայէր անոնց . գլխատուելու ատեննին ինքն
ալ հոն կը վազէր . անոնց նահատակուիլը
տեսնելով՝ անանկ կ'ուրախանար իբր թէ
ինքն էր որ մարտիրոս եղաւ :

Իրեն ասչափ համարձակութիւնը տեսնե-
լով՝ հասկըցուցին դատաւորին . ան ալ սաս-
տիկ հրաման մը հանեց արեղայ մը չերև-
նալու , ուր մնաց ատեանը գալու : Մտոր վը-
րայ ամմէն ճգնաւորները պահուրտեցան ,
մինակ սուրբ Մատնը չի պահուրտեցաւ ,
մանաւանդ աւելի երևնալու համար՝ ճամ-
բու վրայ կը կենար ուսկից որ դատաւորը
պիտոր անցնէր : Իսայց Մտուած ուրիշ բա-
նի համար էր պահէր զինքը . մէկը չի բռ-
նեց . ինքն ալ տրտմիլ սկսաւ . ետքն ալ տես-
նելով որ հալածումը կը քիչնար՝ իր տեղը
դարձաւ , մարտիրոսութեան տեղը ալ ա-
ւելի ճգնութեան տուաւ զինքը :

Հոն ալ եկողներուն շատուորու թենէն ձանձրանալով՝ ճամբայ ելաւ հեռու տեղ մը երթալու : Արբոր վերին Սեբայիդ պիտոր երթար , երկրնքէն ձայն մը եկաւ . թէ որ հանդարտութիւն կ'ուզէս գտնել , ներսի անապատը գնա : Արեք օր իրեք զիշեր քալելով հոն գնաց . բարձր լեռ մը հասաւ , որուն տակէն ջուր կ'անցնէր , վրան ալ արմաւենիներ կային . իրեն հացն ու պիտոյքը կը բերէին ան վաճառականներն որ զինքը բերին : Ասիկայ է երկրորդ անապատն որ սուրբ Անտոնի լեռ ըսուեցաւ . ինչուան հիմա վանք կայ հոն . (տես Աւրիկէին հատորը . երես 77) : Հոն շատ աշակերտներ եկան սուրբ Անտոնի քով . որոնց համար վանք շինեց նստեցուց որ Պիսպիուի անապատ ըսուեցաւ : Անքը ներսի լեռը կ'երթար , իրեն առանձին ճգնութեան հետ կ'ըլլար . ամիսը քանի մը հեղ աս գիւ լանքը կուգար , եղբայրներուն կ'առաջնորդէր կը խրատէր . ցորեն ու բրինձ բերել տուաւ . հոն ինքնիրեն գետինը կը բանէր , իրեն աշխատանքովը կ'ապրէր . պարտեզ ալ տնկեց հոն . երբոր անապատին կենդանիները մտան հոն , Աստուծոյ անունովը սաստեց անոնց , մէյմըն ալ չի մտան չի դպան :

Սատանան հոս ալ զինքը հանգիստ չի թողաւ . իրեն նոր վարքին վրայ որ ամմենուն կը սորվեցընէր՝ խիստ նախանձելով՝ քանի գազան որ կը գտնուէին՝ ամմէնն ալ վրան ժողվեց , որ վախնայ փախչի : Սուրբ

Մտոնն հասկընալով, թէ որ Մտուծոյ հրա-
մանովն էք եկած, ըսաւ, բզիկ բզիկ ըրէք
զիս. իսկ թէ որ սատանան բերաւ ձեզ,
տեղերնիդ գացէք: Մ լսածնին պէս՝ ամ-
մէնն ալ մէյմէկ դի գացին: Չի դադրեցաւ
սատանան, աչքին ահռելի տեսիլքներ կը
ցցընէր. երբեմն երբեմն սատանաներու
բազմութիւն իրարու հետ կը զարնուէին,
իրեն վրայ կը վազէին. բայց սուրբ Մտոնն
միշտ Քրիստոսի անունը տալով խաչ հա-
նելով ամմէնն ալ կը հալածէր:

Մ ըջի աշակերտներէն բարեկամներէն է-
կան բռնադատելով տարին զինքն որ մխի-
թարուին: Ղամբան ծարուեցան. սուրբ
Մտոնն աղօթքի կենալով ջուր բխել տը-
ւաւ. իր քրոջն ալ տեսութեան գնաց, որ
մայր էր եղած բազմութեան կուսանաց: Հոն
մէկ դիւահար մը բերին, սուրբ Մտոնն չու-
զեց հոն բժշկել. Ագիպտոս խրկեց, հոն
իսկոյն բժշկուեցաւ ինչպէս որ իրեն յայտ-
նուեր էր. որովհետեւ կատարեալ հոգետես
էր եղած, շատ բան կ'իմանար. ասանկով
տեսաւ սուրբ հօրն Մմոնի հոգւոյն հրեշ-
տակներով երկինքն ելլելը՝ տասուիրէք որ
հեռու իր կեցած տեղէն:

() ր մը աղօթքի մէջ տեսաւ զինքը եր-
կինք ելլել, բայց սև մարդիկ իրեն դէմն
ելլելով՝ թող չէին տար. իրեն հրեշտակը
կ'ըսէր անոնց, աս արդարն ինչ մեղք ունի
որ թող չէք տար: Մն սևերը տղակուց ը-
լած մեղքերը համար բերել կ'ուզէին:

Հրեշտակն ըսաւ . ան օրն որ աշխարքէս դուրս
ելաւ , զինքն Մատուծոյ տուաւ , Մատուած
ալ իրեն տղայութեան մեղքերը ներեց ,
կրօնաւորութեան ատենը մեղք մը չունի :
Արբօր սևերը իրեն վրայ ակռայ կը կրճը-
տէին , հրեշտակը չեխեց , ամմէնն ալ գե-
տինն ընկան , սուրբ Մատոն շիտակ երկինքն
ելաւ : Մն տեսիլքը տեսնելէն ետև շատ օր
լալու հետ կ'ըլլար սուրբ Մատոն , անօթի
կը կենար . եղբայրներ , կ'ըսէր , աղօթք ը-
նենք որ վերի սատանաները մեզ չարգիլեն :

() ր մըն ալ եղբայրները հարցուցին . մար-
դիկ մեռնելէն ետև հոգինին ինչ կ'ըլլայ :
Մն ատենը ձայն մը եկաւ իրեն . Մատոնիէ ,
էլ , տես : Այցէն դուրս ելաւ տեսաւ որ բազ-
մութիւն մարդկան թւեր առած երկինքը
կ'ելլէին , բայց մէկ սև ահռելի մարդ մը կե-
ցած էր անանկ երկան որ՝ գլուխն երկինքը
կը հասնէր . ասիկայ թւերն երկնցընելով
շատը անոնցմէ վար կը քաշէր , գետինը կը
ձգէր , ձգելովը կ'ուրախանար . մէկալնոնք
վեր թռչելով երկինքը կը մտնէին . անոնց
վրայ կատղելէն ակռայ կը կրճտէր : Մն ա-
տենը հասկըցաւ սուրբ Մատոն որ անոնք
քրիստոնէից հոգիներն էին , սև հսկայ
մարդը սատանան էր , շատ քրիստոնէայ
հաւատք ունենալնուն համար կ'ուզէին վեր
ելլել , բայց մեղաւոր ըլլալնուն համար՝
սատանան անոնք դժօխքը կը ձգէր . մէկալ-
նոնք արդար ըլլալնուն համար երկինքը ար-
քայութիւնը կը մտնէին :

Քանի մը արիօսեանք սուրբ Մատնի քովն եկան, որոնք վարնտեց քովէն. բայց ասոնք Մղէքսանդրիա դառնալով անանկ ձայն հանեցին թէ սուրբ Մատնն ալ իրենց մտքովն է. անոր համար սուրբ Մթանաս և ուրիշ ուղղափառ եպիսկոպոսներ ալ աղաչեցին, որ դայ ամօթ ընէ ան հերետիկոսները: Սուրբ Մատն մէկէն ինջաւ Մղէքսանդրիա, բազմութեան առջև Քրիստոսի Մտուածութիւն քարոզեց. հոն կուսալաշտներ ալ իր վրայ թափիլ սկսան, որհնութիւն կը խնդրէին. իրենց հիւանդները սրբոյն լաթերուն դպցուցածնին պէս՝ շուտ մը կը բժշկուէին. աս հրաշքները տեսնելով՝ շատը քրիստոնեայ կ'ըլլային: Մնչափ շատ էին եկողներուն բազմութիւնն որ իր աշակերտներէն ոմանք անդին հրել սկսան. բայց սուրբ Մատն ծիծաղելով մը կը զուրցէր անոնց. աս եկողներուն բազմութիւնը աւելի չէն քան սատանաներուն բազմութիւնն որ լեռը մեր վրայ կու գային. անոնք մեզի չարիք ընել կ'ուզէին, ասոնք բարիք ուզող են:

Փիլիսոփաներ ալ քովն եկան՝ մտուրնին դնելով որ իրենց գիտութեամբը վրայ պիտոր ելլեն, անանկ մարդու որ չէր կարգացած. բայց սուրբ Մատն աստուածային գիտութեամբ անանկ կապեց զիրենք որ պապանծելով ետ դարձան. ինչ որ լսեր էինք իր վրայ, շատ աւելի տեսանք, ըսին: Մնչափ անուանի եղաւ որ մեծն Արստանդիանոս

Թուղթ գրեց իրեն, քովը կանչեց. բայց անիկայ չի գնաց: Արիոսեան զօրապետ մը խիստ կը հալածէր ուղղափառները. ասոր խրատ գրեց սուրբ Անտոն որ դագրի հալածեւէն, բայց անիկայ մտիկ չի դնելով իր խրատին՝ չարաչար մեռաւ, ինչպէս որ սուրբը գուշակեր էր. աս տեսնելով ամմէնն ալ կը վախնային, սրբոյն խօսքը բռնել կը նայեին: Ետ զինուորներ շատ ունեւոր մարդիկ աշխարհք ձգելով իրեն տակը կրօնաւոր կ'ըլլային:

Այանկով աս սուրբս եղած էր լման մէկ վարպետ բժիշկ մը հոգևոր ու մարմնաւոր, ամմէնուն բարիք ընող, ինչուան որ իննըսուն տարին հասաւ: Ան ատենը աղաչեցին իրեն աշակերտներն որ իր ծերութիւնը նայելով՝ ալ չերթայ ներսի լեռը իրեն ճգնարանը, հապա իրենց քովը Պիսպիռեան վանքը մնայ որ զինքը հոգան. բայց սուրբ Անտոն յանձն չառաւ, միայն երկու հոգի իր աշակերտներէն հետը տարաւ. անոնք զինքը նայեցան տասնըհինգ տարի: Ան ատենն եղաւ որ սուրբ Անտոն ներսի անապատները գնաց, Պօղոս անապատականը գտաւ: ()ը մըն ալ երբոր Պիսպիռեան վանքը գընաց, զուրցեց աշակերտներուն իր մեռնիլը, որ Աստուած յայտներ էր իրեն. անոնք լաւ սկսան, աղաչեցին որ քովերնին նստի ինչուան իր մահը: Սուրբը ուրախ սրտով անոնք մխիթարեւէն խրատեւէն ետե՛ դարձաւ իր լեռը. քանի մը օրէն հիւընացաւ:

Մշակերտներուն պատուիրեց որ՝ չի թողնեն իր մարմինը Ազիպտոս տանելու, այլ հոս հողի մէջ թաղեցէք, ըսաւ, անանկ տեղ մը՝ որ դուք միայն գիտցած ըլլաք. անանկով ողջոյն տալով ուրախ երեսով հողին աւանդեց յամին 356. հարիւր հինգ տարուան: Մտարիքն էր հասած, բայց ծերու երես կամ տկարութիւն չէր ունեցած, ակռաներէն մէկն ալ չէր թափած, աչուրներն ալ ողջ մնացած էր: Իսկ իր մարմինը 170 տարիի չափ գաղտուկ մնաց. բայց յամին 527 աստուածային յայտնութեամբ գտնուեցաւ. ամմէն տեղ իր հրաշքները տարածուեցան, ամմէն տեղ ալ պաշտպան բռնուեցաւ կրակէն պահելու, նաև ներսի հիւանդութեան կրակէն պահելու: Մտուրբս մէկ հատիկ եղաւ որ խիստ ճգնութիւնը զուարթութեան հետ միացուց. երկան աղօթելը, սաղմոսելը սիրելի բան մը ըրաւ. ամմէնուն ճամբայ բացաւ աւետարանական խստութիւնը սիրով յանձն առնելանանկով եղաւ հայր անչափ կրօնաւորներու, անչափ վանքերու:

Ե Ի Փ Ի Մ Է Կ Ո Յ Ս

Քաղկեդոն ծնած էր Գիսկղեփանոս կայսեր ատենը. հայրը Փիլոփրոն կ'ըսուէր՝ որ ատենակալ էր կամ սինկղիտոս. մայրը թէոդոսիա. երկուքն ալ բարեպաշտ քրիստոնեայ: Պրիսկոս ըսուած անթիպատոս

մը՝ որ է եպարքոսի փոխանորդ՝ օր մը Վազկեդոն եկաւ որ քանի քրիստոնեայ որ հոն գտնէ, տանջէ վերցընէ. որովհետեւ խիստ շատցեր էին հոն քրիստոնեաները, շատը Վիկոմիդիա փախած, ուր սաստիկ հալածում կար: Պրիսկոսի աւելի դրդող եղաւ Վպելիանոս մէյմը՝ որ քուրմ էր Վրէս կուռքին, ժանտ, բայց ճարտասան մարդ մը. ասիկայ յիշեցուց անոր, մօտիկ է Վրէս կուռքին տօնն, ըսաւ, պէտք է որ հանդիսով զոհ ըլլայ անոր կռատան մէջը: Պրիսկոս ալ աս խօսքս աղէկ առիթ առնելով, թուղթ հանեց որ՝ ութը օր ամմէնն ալ պատրաստուին, Վրէսին կռատունը ժողվուին զոհ մատուցանելու համար; ո՛վ որ չի գայ՝ չարաչար պատժուի: Վպելիանոս որովհետեւ խիստ փնտրուելու հետ էր, իմանայ ո՛ւր են կամ ո՛վ են քրիստոնեաներն որ պահուած էին ո՛րը Վազկեդոնի մէջ, որն ալ դուրսը, իմացաւ որ մէկ պզտիկ տան մէջ յիսուն հոգիի չափ քրիստոնեայ պահուած կան, որոնց մէջն էր նաև աս Լափիմէ կոյսը, շուտ մը գնաց մատնեց: Պրիսկոս զօրք խրկելով ամմէնն ալ իր առջին բերել տուաւ, յորդորել սկսաւ որ իրենք ալ զոհեն. երբոր անոնք համարձակուածք մերժեցին՝ հրամմեց տանջել, ետքը բանաւր դնել:

Վսոնք տասնուինը օր բանտի մէջ մնալէն ետե՛ւ ետքը նորէն բերել տուաւ իր առջին Պրիսկոս, ամմէնուն ձեռքը կապած, վզեր-

նին երկաթ զարկած . երբոր նորէն մերժեցին Պրիսկոսին խօսքը , ծեծել հրամանեց : Ըն ատենը չար Լաւիւիանոսը խրատ տուաւ Պրիսկոսի որ ամմէնն ալ Նիկիոմիդիա խըրկենք՝ ուր էր թագաւորը՝ ան օրն ամմէնն ալ սպաննել տանք : Ըս բանիս հաւնեցաւ Պրիսկոս . բայց ուզելով մէջերնէն Եւփիմէ կոյսը իրեն քաշել , որ աստղի մը պէս մէջերնին կը փայլէր , հիմակուհիմա բերդին մէջ թող մնան , ըսաւ . անանկով տանելու ատեննին Եւփիմէ կոյսը մէկդի քաշեց , սկսաւ յորդորել . տեսաւ որ կը մերժէ՝ իր տունը տանել հրամանեց :

Ըն ատենը սք կոյսը երկինքը նայելով աղաչեց Ըն օգնութիւն խնդրելով , որ իրեն կուսութե լոյսը չի խաւարի իրեն հաւատքը յոյսը չի կորսուի՝ որ պղտիկուցմէ ինչուան հիմա անարատ պահեր եմ , ըսաւ : Պրիսկոս ուրիշներուն չի ցցընելու համար իր միտքը Եւփիմեայ վրայ՝ կուսպաշտութիւնն առջևը դրաւ , յորդորեց որ քրիստոնէութիւնը ձգէ : Կոյսը համարձակ պատասխանեց . ինչ տանջանք որ պիտոր տաս քրիստոնէութեան համար՝ պատրաստ եմ , ըսաւ , զօրութեամբ Վրիստոսի քաշելու , որպէս զի յաղթեմ քեզի ու քու հօրդ սատանայի : Ըս խօսքերէս որ մէկ աղջկան մը բերնէն լսեց Պրիսկոս՝ կատղելով սէրը փոխեց յատելութիւն . նոր տանջանարան մը հրամանեց շինելու , սուրերով դանակներով լեցուն անիւններ (թէքէրլէկներ) . երբոր անոնց մէ-

Ջը ձգելով կոյսը կը պտըտցընէին , երեսը
խաչակնքելով ըսաւ . ո՞վ թշնամի ճշմար-
տութեան , գիտցիր որ ես մէկ տանջանք մը
չեմ քաշեր , Քրիստոս է իմ օգնականս :
Պատիճները կը դարձընէին կը ստըտցը-
նէին անիւները , սուրբ կուսին մարմինը կը-
տոր կտոր կ'ընէին , ոսկորներէն կը զատէին ,
անիկայ աղօթքի հետ կ'ըլլար : Մէյմըն ալ
հրեշտակ Ղստուածոյ իջնալով՝ տանջանարա-
նը կտորըտեց , Աւփիմէն ողջընցուց , դա-
հիճներուն ձեռքը ոտքը թուլցուց . երանե-
լին անմիաս ելաւ տանջանքէն :

Պրիսկոս աւելի խոստանալով՝ փուռը վա-
ռել հրամմեց . սուրբ կոյսը հոն աղօթքի
կեցաւ , որ ինչպէս Քաբիլոնի մէջ իրեք
մանկունքը՝ անանկ ալ հիմա զինքը պահէ
Ղստուած : Պրիսկոս հրամմեց կրակին մէ-
ջը ձգել զինքը , բայց իրեն սպասաւորներէն
երկու հոգի սարսափելով ետ դարձան ըսե-
լով . մենք չենք կրնար անոր մօտիկնալ , լու-
սաւոր նորատեսիլ մարդիկներ քովը կեցած
են , խօլոր աչքով մեր վրայ կը նային , վրա-
նիս կրակ թափել կ'ուզեն : Պրիսկոս ա-
սոնց վրայ բարկանալով՝ բանտը դնել տը-
լաւ , ուրիշ երկու զինուորի հրամմեց : Այր-
բոր ասոնք փուռը ձգեցին , ան լուսաւոր
մարդիկը Աւփիմէն պահեցին , զինուորնե-
րուն վրայ կրակ թափելով մեռուցին . ե-
րանելին անմիաս կենալով փռանը մէջ սկը-
սաւ Ղստուած օրհնել : Ղս բանիս վրայ
Պրիսկոսին խենթենալ կու գար թէ ինչ

պէս իր ծառաները փոռնէն հեռու կենալով
երեցան մեռան, իսկ Ալփիմէն կրակը մա-
րելէն ետև ողջ անարատ փոռնէն դուրս ե-
լաւ, մազ մըն ալ վրայէն երած չէր: Հրամ-
մեց զինքը բանար դնել. վաղուան օրն ալ
ան երկու սպասաւորն ալ իր առջին բերել
տուաւ, տեսաւ որ ասոնք իրաւ քրիստո-
նէութիւնը ընդունելու են, ամենեւին չեն
ուզեր կուսապաշտութիւնը ընդունել, գա-
ղաններուն առջին ձգելով անանկ նահատա-
կել տուաւ:

Իսկ Ալփիմէն հետևեալ օրը հրամմեց
իր առջին բերել. անիկայ Աստուծոյ օրհ-
նութիւնը երգելով ճամբան՝ անանկ առջևն
եկաւ: Արիսկոս նորէն յորդորեց կուսապա-
շտութիւն ընդունելու՝ մեծ մեծ խոստմունք-
ներ ընելով իրեն. սուրբ կոյսը ծիծաղե-
լով մերժեց, իրեն կուրութիւնն ալ երեսին
տուաւ: Ըն ատենը Արիսկոս հրամմեց
տանջանքի դործարան մը շինել մեքենաւոր,
մէկէն զինքը մէջը ձգել: Արբուհին երբոր
հոն եկաւ, համարձակ պարզերես մէջեր-
նին կը քալէր. երբոր դահիճները կ'ուզէին
անոր մէջը ձգել, հրեշտակներու ձեռքով
կոյսը յափշտակուեցաւ աղօթքի կեցաւ, ի-
րեն տեղը դահիճները մէջն ընկան մեռան:

Արիսկոս աս տեսնելով՝ անուշ խօսքե-
րով սկսաւ շողոքորթել որ կուսապաշտութիւն
ընդունի. երբոր կոյսը նորէն մերժեց, զինքն
ալ յանգիմանեց, ան ատենը հրամմեց որ
չարաչար ծեծեն. բայց չար Ապելիանօսը

միտքը ձգելով՝ սղոց (տէսթերէ) բերել
տուաւ որ երկու տախտրկի մէջ դնելով եր-
կու կտրեն, տաքցուցած երկաթներ ալ՝ որ
երեն : Արբոր սկսան 'ի գործ դնել, սղոցը
գուլցաւ չէր կտրեր, երկաթներն ալ պա-
ղեցան :

Առապաշտները աս ամմէն հրաշքները
կախարդութիւն սեպելով՝ հրամմեցին որ
գազաններուն առջև ձգեն . գազաններն իր
վրայ գալու ատենը Աւփիմէն խաչակնքե-
լով զինքը՝ Աստուած օգնութիւն կանչեց .
գազանները՝ իրեն հագուստին ծայրը լզել
սկսան . բայց կոյսը կ'աղաչէր Աստուծոյ, որ
ալ զինքը երկինքն ընդունի . գազաններն ալ
կը յորդորէր որ իր վրան վազեն : Ան ա-
տենը առիւծին մէկը վրան վազեց . ձայն
մըն ալ եկաւ երկրնքէն . Ա-՛ի-՛ի, եկէ՛ առ-
բաստեցին : Անանկ շարժում մըն ալ եղաւ
որ ամմէնն ալ փախան . ան ատենը Աւփի-
մէն ալ աւանդեց իր հոգին յամին իբր 303 :
Աւ որովհետեւ մարդ մը չէր մնացեր հոն,
իրեն ծնողքն որ պահուրտած էին, եկան
առին մարմինը, նոր գերեզմանի մէջ դրին,
որ քիչ մը հեռու էր Քաղկեդոնէն . ետքը
փառաւոր ժամ մը շինուեցաւ վրան . շատ
հրաշքներ եղան :

Ս Ո Ւ Ր Բ Ա Ք Ա Ն Ա Ս

Աղէքսանդրիա քաղաքը ծնաւ . հօրն անունը Մարկեղոս կ'ըսուէր, մօրը Սողոմի . ասոնք իրենց զաւակն Մատուծոյ նու իրեցին, աղէկ խրատներով մեծցուցին . Մթանասն ալ ան խրատները պահելով բարի զաւակ մը եղաւ , պարկեշտ , առաքինի , բարի օրինակ իր ամմէն ընկերներուն , կարգալու գրելու ալ խիստ սէր ունեցող :

()ը մը Մղէքսանդրիայի հայրապետը Մղէքսանդրոս անուն՝ տեսաւ որ բազմութիւն տղոց մէկտեղ կը խաղան . մէջերնին Մթանասը եպիսկոպոս ձեւանալով՝ ո՛րը քահանայ՝ ո՛րը եպիսկոպոս կը ձեռնադրէր : իսկ ան տղաքն որ դեռ չէին մկրտուած՝ կը մկրտէր ամմէն ձևերն ըսելով : Մսոնք իր առջևը կանչեց հարցուց՝ ի՞նչ կ'ընէիք : Մսոնք ալ պատասխան տուին . ի՞նչ որ ժամու մէջ կ'ընեն , մենք ալ ան բաներն ըրինք . մեզի առաջնորդողը աս է ըսելով , Մթանասը ցցուցին : Մղէքսանդր հայրապետը տեսնելով Մթանասին շնորհալի կերպարանքը՝ վրան սէր մը կապեց , իր հայրապետանոցն առաւ :

Մթանաս հոն առաջ երթալով Մատուծային ու արտաքին գիտութեան մէջ , գրագիր եղաւ Մղէքսանդրի , ետքը սարկաւագ

ձեռնադրուեցաւ . իրեն իմաստութեամբը
բարի վարմունքովը աջ բազուկ եղաւ Մ.
ղեքսանդր Տայրապետին : Սկսէստ երիտա-
սարդ էր , բայց ծերու կատարելութիւն ու-
նէր վրան . շնորհաբուղիս քարոզող , ժողո-
վուրդը հոգացող , քաղքի մէջ կենալով իբր
թէ անասպատի մէջ կեցող անանկ կրօնա-
ւորի պէս կեանք կը վարէր :

Մ. րիոսեանց հետ որ նոր ելեր էին՝ քա-
ջութեամբ կը հակաճառէր . ասդիս անդին
թղթեր կը գրէր Մ. ղեքսանդր Տայրապետին
բերնէն , որուն հետ մէկտեղ Սիկիոյ ժո-
ղովը գնաց . հոն ամմէնէն աւելի հակաճա-
ռող՝ Մ. րիոսը ամացնող իր հետեւողներուն
հետ մէկտեղ՝ աս Մ. թանաս սարկաւագն
եղաւ : Սողովքին ամմէն սուրբ հարբը կը
զարմանային Մ. թանասին բերած զօրաւոր
պատճառներուն ու ձեռնարկութեանցը վը-
րայ . որով ուղղափառաց կողմը յաղթող
կ'ըլլար կ'ուրախանար , իսկ արիոսեանց
կողմը կը պապանձէր . նախանձէն ակռայ
կը կրճտէին Մ. թանասին վրայ . յայտնի
կ'երևնար որ հոգին սուրբ Մ. թանասն ա-
ռեր էր , իրեն գործիք էր ըրեր Մ. րիոսին
չարութիւնը խայտառակելու համար , ինչ-
պէս որ կը ցցընէ աս դիպուածս որ պատ-
մենք :

Սողովքին մէջը խօսք բացուեցաւ հա-
ւատամբ մը շինելու համար որ հանգանակ
ալ կ'ըսուի . երբոր Մ. ղեքսանդր Տայրա-
պետն ու Մ. թանաս ժողովքին տեղէն ելան

իրենց կեցած տեղը դարձան, ան ատենն որ Մթանաս մինակ իր խուցը նստեր էր՝ տեսաւ որ քովն եկաւ Ղլեքսանդր Տայրապետը, ըսաւ իրեն. գրէ ես ինչ որ կ'ըսեմ քեզի հաւատամքին խօսքերը, որ ետքը ես երբոր ըսեմ քեզի՝ կարդաս ժողովքին մէջը ամմէն հայրապետներուն առջև: Մթանասն ալ գրեց ինչ որ Ղլեքսանդրը ետեւէ ետեւ զուրցեց հաւատամքին խօսքերը. լմընցընելէն ետեւ՝ Ղլեքսանդրը ելաւ զնաց: Սամմը անցաւ՝ նորէն ներս մտաւ Ղլեքսանդր Տայրապետ, հարցուց Մթանասին. ինչ կը կարդաս: Մթանասն ալ ըսաւ. հաւատամքին խօսքերը կը կարդամ որ քիչ մը առաջ ինծի գրել տուիր: Այս լսածին պէս՝ զարմացաւ մնաց Ղլեքսանդրը. գիտէր որ ինքը ամենեւին քովը չէր գացած, հաւատամքին խօսքերն ալ չէր գրել տուած. ասկէց հասկըցաւ յայտնի որ հոգւոյն սբջ գործքն էր ասիկայ, որ իրեն կերպարանքն առնելով Մթանասին քովն էր եկեր, տուն տուեր էր. բայց ինքը ամենեւին բանը վեր չի հանեց, Մթանասին չի զուրցեց. այլ երբոր ժողովուեցան, հոն բարձր ձայնով կարդալ տուաւ Մթանասին, որ ամմէն ժողովականք միաբան հաւանութեամբ ընդունեցան:

Ժողովքը լմննալէն հինգ ամիս անցնելէն ետեւ Ղլեքսանդրը հիւրնտնալով վախճանեցաւ. իր տեղը սուրբ Մթանասը պատրիարգ նստեցուցին Ղլեքսանդրիայի աթո-

ուր . բայց ինքը փախած ըլլալով՝ ասդիս անդին փնտրուեցին անանկ գտան : Արբոր խորանն ելաւ առջի պատարագն ընելու , տեսաւ որ եկեղեցնայ տանիքը բացուեցաւ , սաստիկ լոյս ինջաւ , հրեշտակներու բազմութիւն խորանին քովը շարուած կեցան . Քրիստոս սուրբ խորհրդին վրայ նստած՝ հացը իր անապական մարմնոյն հետ կը շաղուէր , իր կողը բանալով՝ սուրբ արիւնը կը վազցընէր , հողին սուրբ աղանակերպ երևնալով խորհրդին վրայ կը հանգչէր . իսկ պատարագը լմննալէն ետև Քրիստոս վեր համբարձաւ հրեշտակներով : Այ տեսիլքն որ տեսաւ սուրբ Աթանաս՝ և ուրիշ քովի կեցողները՝ խիստ սիրտը շարժեցաւ . ամմէնն ալ զարմացած մնացին : Արբոր հաղորդութիւն տալ սկսաւ ժողովրդեան՝ մէկ անարժանութեամբ առնող մը հոն երևցաւ մեռաւ . մէկ ուրիշ մըն ալ կատղիլ սկսաւ ինչուան իր մարմինը խածնել . ասկէց ամմէնուն վրայ սարսափ մը ընկաւ , մէկը չի համարձակեցաւ սուրբ խորհուրդը առնել . անոր համար սուրբ Աթանասն ալ ելաւ աղէկ քարոզ մը տուաւ ասոր վրայ , որ ամմէն մարդ ինքը զինքը աղէկ սրբէ , շտկէ , ետքը սուրբ հաղորդութիւնն առնէ :

Այանկով խիստ աղէկ հողալ սկսաւ իր նոր ժողովուրդը՝ խրատելով , սորվեցընելով , ամմէնուն հասնելով , մեծն ու պզտիկը միակերպ նայելով , աղքատները հողալով , հիւանդները բժշկելով . ամմէնէն աւելի

իր բարի վարքը օրինակ տալով, որ այնչափ
զբաղմանց մէջ իր աղօթքը, ճգնութիւնը
էր վերջացրներ. անդադար սուրբ գիրքը
կը կարդար, հոգեշահ վարդապետութիւն-
ներ կը գրէր :

Մրիստեանք Աստանդիանոսին միտքը
չինելով՝ թէ Մրիոսն ալ նիկիական հա-
ւատքը ընդունիլ սկսաւ, քշուած տեղէն
ետ դարձրնել տուին, իրեն երկիրը նստե-
ցուցին՝ որ էր Մղեքսանդրիա : Բայց որով
հետեւ Մթանաս չընդունեց անիկայ իր ե-
կեղեցին, թէ և Աստանդիանոս գրեւ էր
իրեն ընդունելու, անկից իրեն վրայ շատ
ամբաստանութիւն ընելով արիստեանք՝ Աս-
տանդիանոսի քով կանչել տուին դատաս-
տան ընելու. բայց հոն երեւան ելաւ արիս-
տեանց ստութիւն ու Մթանասին անմեղու-
թիւր, անոր համար Աստանդիանոս կայսրը
պատուով իր տեղը դարձուց Մթանասը :

Մրիստեանք նորէն զրպարտութիւն հանե-
լով Մթանասին վրայ, կայսերմէ հրաման
հանել տուին որ Տիւրոս քաղաքը եպիսկո-
պոսներու ժողով ըլլայ, հոն կտրուի Մ-
թանասին վրայի դատաստանը : Մթանաս
հնազանդելով կայսեր՝ իրեն եպիսկոպոսնե-
րը մէկտեղ առնելով որ քառսունըունն
էին՝ գնաց ժողովը : Մռաջ մէկ կնիկ մը հա-
նեցին ժողովին մէջ՝ որ կ'ըսէր թէ Մթա-
նաս երբոր որ մը իմ տունս ինչաւ՝ ինձի
հետ մեղանչեց : Մտոր դէմ ելաւ ժողովին
մէջէն Տիմոթէոս Մթանասին աշակերտը,

անանկ ցցուց որ ինքն Մթանասը, կնկանը
երեսին ըսաւ . ես երբ տունդ ինջայ, երբ
անանկ մեղք ըրի որ՝ իմ վրաս ասանկ մուր
կը քսես . մէյմը աղէկ նայէ ինծի : Անիկն
որ չէր ճանչնար Մթանասը, այլ արիօսեանք
իրեն շատ ստակ տուեր էին որ աս զրպար-
տութիւնն ընէ, պոռալով կը պնդէր կ'ըսէր .
ես քեզ չեմ մի ճանչնար, դուն էիր որ ե-
կար մեղանչեցիր . ասոր վրայ երդում ալ
կ'ընեմ : Մս ըսածին պէս՝ զրպարտութեան
ստութիւնը ամմէնուն առջև երևան ելաւ .
ամմէն ժողովականք կնիկը դուրս վաճնտե-
ցին :

Արկրորդ զրպարտութիւնն աս եղաւ որ՝
արիօսեանք մէկ կտրած ձեռք մը հանեցին
ձգեցին ժողովին մէջ, ըսելով որ Մրսենիո-
սին ձեռքն է, Մթանասը խռովարար մարդ
ըլլալովը՝ պատճառ եղաւ սպաննել տուաւ :
Մթանաս առաջ հարցուց ամբաստանողնե-
րուն . իրաւ աղէկ կը ճանչնա՞ք Մրսենիո-
սը, հաստատուն խօսք տուէք : Մնոնք մէկ
բերան ըսին . աղէկ կը ճանչնանք, ամմէնքս
ալ հաստատուն խօսք կու տանք, աս կըտ-
րած ձեռքն ալ գիտենք որ Մրսենիոսին
է : Մն ատենը մէկէն ժողովին մէջը հա-
նել տուաւ Մրսենիոսը, որ հոն պահուած
կեցուցեր էր գաղտուկ . ամբաստանողները
տեսածնին պէս՝ հասկըցան որ ամմէնուն
առջին ամօթ խայտառակ եղան, ակռայ կը
կըճտէին Մթանասին վրայ, կախարդ կը
կանչէին, հնարքներ կը փնտրուէին պա-

տրիարգութենէ ձգել զինքը՝ ինչպէս որ վերջապէս ըրին :

Արիօսեանք ամբաստանեցին կայսեր որ Աթանասը ըսած ըլլայ . ես կրնամ արգիւլել որ Աղեքսանդրիայէն ցորեն խրկել չիտամ Պօլիս : Այ բանիս վրայ խիստ բարկանալով կայսրը՝ Վաղղիա քչեց Աթանասը . հոն շատ հոգևոր պտուղ ըրաւ սուրբը քարոզութեամբ ու գրով . բայց երկու տարի ու չորս ամիսի չափ հոն կենալէն ետև , նորէն իր աթոռը դարձընել տուաւ Աոստանդ կայսրը :

Արիօսեանք չէին դադրեր նոր նոր ամբաստանութիւններ ընել Աթանասին վրայ , ինչուան հռոմալ գրեցին Յուլիոս պապին . ան ալ հռոմ կանչեց ամբաստանողներն ալ , Աթանասն ալ : Աթանաս գնաց հռոմ , տարի ու կէս հոն կեցաւ սպասեց , տեսնելով որ ամբաստանողներէն մէկն ալ չեկաւ , ինքն իր աթոռն եկաւ , որ ժողովուրդն երեսի վրայ չի մնայ :

Արիօսեանք չի դադրեցան հալածելէն . մեծ ժողով մը ըրին Անտիոք , Աթանասը ձգեցին , անոր տեղը Վրիգոր անունով մէկը դրին պատրիարգ , որ զինուորներով եկաւ նստաւ . շատ նեղեց ուղղափառները , որք բանտը դրաւ , որք քչեց . զիր գրել տուաւ Աոստանդ կայսեր՝ չարախօսելով որ Աթանասը չէ թէ միայն անարժան է աթոռը նստելու՝ այլ նաև մահապարտ է . ասանկ ամբաստանեց նաև Աոստաս կայսեր ալ որ

Հում կը նստէր : Լձանաս որ տեղ մը պահուրտած կեցեր էր , աս լաածին պէս նորէն Հում գնաց . հոն յայտնի եղաւ իր անմեղութիւնը . անոր համար Կոստաս կայսրը Սիլան ըլլալով՝ հոն կանչեց Լձանասն ու պատուով պահեց . իր եղբօրն ալ որ Կոստանդ կ'ըսուէր ու Պօլիս կը նստէր , գրեց որ օրինաւոր ժողով ընել տալով խաղաղցրնէ ամմէնը :

Լս խօսքիս վրայ մեծ ժողով մը եղաւ Սարգիկէ քաղաքը . հոն սուրբ Լձանաս բոլորովին արդարացաւ . արիօսեանք մտածեցին ինչ ընեն , իրենք ալ Սարգիկէի մօտիկ Փիլիպէ քաղաքը ժողով ըրին , Լձանասին վրայ շատ չարախօսութիւն ընելով դատապարտեցին , իրենց ըրած վճիռներն ալ՝ Սարգիկէ ժողովքին անունովը դուրս հանեցին . աս հերիք չէ , Կոստանդ կայսեր ապաւինելով որ արիօսեանց դին էր՝ ուղղափառ եպիսկոպոսներէն որք բանտը դրին , որք քշեցին . բայց այնչափ անձոռնի անգթութիւններ ըրին որ Կոստանդն ալ ձանձրանալով հրաման հանեց Լձանասին ու իրեն հետևողներուն գէմ բան չընել :

Գրիգոր բռնաւոր եպիսկոպոսը երբոր մեռաւ՝ Կոստանդ կայսրը ետեւէ ետեւ թուղթ գրեց Լձանասին որ դայ նստի իր աթոռը : Լձանաս ան առենը Լկուիլայ քաղաքն ըլլալով՝ Հում եկաւ , անկէց Լստիօք անցաւ , ուր Կոստանդ կայսեր հետ տեսնուելով սէր կապեց վրան . միայն թէ

արիոսեանց դրդելովը առաջարկեց Մթանասի՝ որ Մղեքսանդրիա եղած ժամերէն մէկը արիոսեանց ձեռքը տայ : Մթանասն ալ աս խնդիրս պարապ հանելու համար ըսաւ . ես ալ կը խնդրեմ որ արիոսեանք ալ Մնտիոք եղած ժամերէն մէկը ուղղափառաց ձեռքը տան : Մ լսելով արիոսեանք՝ ոչ մէկն ըրին , ոչ մէկալը :

Երբոր Մթանաս Մղեքսանդրիա եկաւ , ժողովուրդը կայսերմէն աւելի պատուով ընդունելու թիւ ըրաւ իրեն . քիչ մը անցնելէն ետեւ՝ ապստամբներն սպաննեցին Վոստասը , որ արեւմտեան կայսր էր՝ հռոմ կը նստէր . քայց Վոստանդ արեւելեան կայսրը որ Պօլիս կը նստէր , ան ապստամբները իր տակն առնելով՝ ինքը ամմէնուն վրայ կայսր եղաւ : Մնատենը արիոսեանք ամբաստանեցին որ Մթանասն ալ ձեռք ունէր ան ապստամբութեան մէջ . քանի ալ որ անիկայ Մղեքսանդրիայի աթոռը նստած է , ըսին , եկեղեցնայ քանը միշտ գէշի կ'երթայ , հաւատքն ալ կը կործանի : Ի իբերիոս պապին անունովն ալ սուտ թղթեր հանեցին Մթանասին դէմ , անով շատ քանսարկութիւն խառնելով՝ ուղղափառներն ալ երկուբաժնեցին :

Մ քաներս խաղաղցրնելու համար կայսերմէն հրաման ելաւ Սիլանու մէջ ժողով ընելու . արիոսեանք եկող եպիսկոպոսները առաջ կը բռնադատէին Մթանասին դէմ ձեռագիր տալ , ետքը անոնք ժողովը

կը մտցրնէին . իսկ ժողով չեկող եպիսկոպոսներն ալ կը ստիպէին կայսեր հրամանովն որ Մթանասը աթոռէն ձգեն . որուն շատ վախկոտներ հաւանութի տուին ըսելով՝ մէկ մարդու մը համար պէտքը չէ բոլոր եկեղեցին տակնուվրայ ընել , թագաւորը ուղղափառներուն դէմ հանել : ՄԺժողովին մէջը Կոստանդ կայսրը եղաւ թէ դատաւոր և թէ դատախազ (տավաճի) , յանցաւոր վճռեց Մթանասը . ան ատենը ուղղափառ եպիսկոպոսներէն ոմանք՝ անիրաւ է ըսին աս ժողովը , Մթանասը հոս չէ , օրինաւոր քննութիւն ալ վրան չեղաւ , մենք՝ չենք խառնուիր . չեկող եպիսկոպոսներն ալ ասանկ գրեցին կայսեր :

Կայսրն ալ բարկանալով զանոնք բանտը դրաւ , ետքը քչեց . Ղեքսանգրիա զօրք խրկեց որ Մթանասը բռնեն . հինգ հազար զօրք յանկարծ պաշարեց ան եկեղեցին որուն մէջն էր Մթանաս . բազմութիւն ժողովրդեան թող չէին տար որ Մթանասը ձեռուրնին իյնայ . ինքը կ'ուզէր՝ որպէս զի ժողովրդեան վնաս մը չըլլայ : Կայց վերջապէս ժողովուրդը իրենց մէջ խառնելով զՄթանասը փախուցին . զօրքը անիկայ չի գտնելով շատ կոտորած ըրին ժողովրդեան մէջ . արիոսեանք քաղքին ժամերը տները մտնելով թալլեցին : ՄԺ բաներս տեսնելով կռասպաշտները իրենք ալ անանկ ընել սկսան :

Մթանասին տեղը անանկ եպիսկոպոս

մը 'նստաւ' ուսկից ամմէն ուղղափառ կը
 փախչէր . ան ալ որը ծեծելով բանտը կը
 դնէր , որն ալ կը սպաննէր . ժողովուրդը չի
 դիմանալով ըրած անգլթութեանցը՝ օր մը
 յանկարծ վրան վազեցին ժամուն մէջը . ա-
 նիկայ հազիւ խալըսելով կայսեր ընկաւ ա-
 սպաւինեցաւ . անկէց օգնութիւն առնելով
 նորէն եկաւ , աւելի բռնութիւն ըրաւ ժո-
 ղովրդեան վրայ :

Մթանաս ան ատենները անասպատի դին
 փախած ըլլալով՝ երբոր լսեց որ իր պատ-
 ճառովը շատ եպիսկոպոսներ նեղութիւն կը
 քաշէն , ինչուան Սիբերիոս հռոմայ հայ-
 րապետը , ինչուան Սիսիոս Կորդուբայ ե-
 պիսկոպոսը՝ որ Սարդիկէ ժողովքին գլուխն
 էր եղած , միտքը դրաւ որ անձամբ երթայ
 կայսեր ճար մը գտնէ : Երբոր ճամբան
 լսեց որ Կոստանդ կայսեր հրամանովը ա-
 րիոսեանք հալածումը շատցուցեր են , Մ-
 թանասն ու մէկալ եպիսկոպոսները կը փրն-
 տրուեն կորսնցընելու , ան ատենը յոյսը կըտ-
 րելով յԱստուած միայն ասպաւինեցաւ , նո-
 րէն անասպատը դարձաւ : Հոն ալ տեսնելով
 որ կրօնաւորները կը չարչարեն որպէս զի Մ-
 թանասը ձեռք տան , աւելի խորունկ անա-
 սպատը գնաց , լեռնէ լեռ՝ անբնակ տեղեր
 քալեց վեց տարի , որ իր պատճառով ուրիշ
 ներուն չարիք մը չի հասնի . երբեմն անանկ
 հորերու մէջ բնակեցաւ՝ որ ամենեւին արեւ
 չէր տեսներ . բայց հոն ալ խրատական
 թղթեր կը գրէր ժողովրդեան ու եպիսկո-

պոսաց որ հաստատուն կենան . ան ատենը
գրեց շատ ճառ Վրիոսի ու Մակեդոնի դէմ :

Եկաւ ատեն որ Կոստանդ կայսրը մե-
ռաւ , Յուլիանոս ուրացողը նստաւ . ասի-
կայ զինքը ընդունելի ընելու համար քանի
քուած եպիսկոպոսներ որ կային՝ տեղեր-
նին դարձուց . Վթանասն ալ Վղէքսան
գրիա իր աթոռն եկաւ . ժողով ընելով ամ-
մէն հակառակութիւն շտկեց :

Ի այց լման որ խաղաղացաւ , Յուլիանո-
սէն ուրիշ հալածում մը ելաւ աւելի գէշ ,
որ ամմէնն ալ կ'ուզէր կռապաշտ ընել , Վ-
թանասին համար ալ գրեր էր որ դուրս
քշէն : Երբոր բռնողները վրայ եկան՝ ուղ-
ղափառները նաւակի մը մէջ գրին Վթա-
նասը , Սեղոս գետին վրայէն փախուցին .
բայց ճամբան լսելով որ ետեւէն կու գան՝
վախն առաւ զիրենք . սուրբ Վթանաս որ
միշտ Վստուծոյ ապաւինելով ամմէն բանէ
կը խալըսէր , շուտ մը ետ դարձրնել տուաւ
նաւակը . հոն վրայ հասան փնտրողները ,
իրենց կը հարցընէին՝ արդեօք տեսա՞ք Վ-
թանասը : Վնոնք պատասխան տուին , հի-
մա տեսանք հեռու չէ ձեզնէ : Վստուծոսին
պէս՝ զիրենք թողին , առաջ երթալ սկսան
որ գտնեն :

Վստուծոս սուրբ Վթանաս խալըսելով
Վղէքսանգրիա գարձաւ գիշերանց , պա-
ռաւի մը տուն պահուրտեցաւ ինչուան որ
Յուլիանոս սատկեցաւ , Յովիանոս կայսր
նստաւ , որ ամմէն հալածում դադրեցուց :

Ըն ատենը սուրբ Աթանաս յանկարծ երևան ելլելով գիշերանց իրեն ժամն եկաւ . ետքը կայսերմէն հրաման առնելով համարձակ նստաւ իր աթոռը : Բայց Յովիանոս շուտով մեռնելով՝ շուտով անցաւ խաղաղութիւնը . որովհետեւ Աղէս նրստաւ կայսր որ արիոսեան էր . քանի եպիսկոպոսներ որ Յովիանոսին հրամանովը դարձեր էին , նորէն քշել հրամանեց . Աղէքսանդրացիք թող չէին տար Աթանասը քշելու աս պատճառով որ՝ Յովիանոսին հրամանովը դարձեր էր իր աթոռը , կ'ըսէին , չէ թէ Յովիանոսին : Աթանաս տեսնելով որ խռովութիւն կ'ըլլայ՝ ինքիրմէ ելաւ . Աղէս լսեց , քաղաքը խաղաղելու համար նորէն դարձուց իր աթոռը :

Ասկէց ետքը որչափ որ նստաւ սուրբը՝ անդադար աշխատելու հետ եղաւ ժողովորդեան վրայ . ամմէն եկողները կը մխիթարէր , սիրտ կու տար համբերութեամբ քաշել ան հալածումն որ արիոսեանք կրնէին Աղէս կայսեր ձեռքովը . շատ յորդորական թղթեր գրեց ուղղափառ եպիսկոպոսներուն որ զգուշանան արիոսեանց աղանդէն : Ասանկ լի արդեամբք առ Աստուած փոխեցաւ յամին իբր 371 . ասլըսպրելով որ իրեն մարմինը հասարակաց գերեզմանը թաղեն . բայց ետքը Վոլիս բերին , անկից Աենետիկ . ուր մենք ալ կը տեսնենք ամբողջ կեցած , բայց 'ի գլխէն որ ուրիշ տեղ է տարուած :

Ուրիշ սուրբեր մեղքի առիթներէ փախ
չելով չի մեղանչեցին սուրբ եղան . բայց աս
սուրբիս վարքը ան կը զարմացնէ որ՝ իր բո-
լոր կեանքը յիսուն տարիի չափ մեղքի ա-
ռիթներու մէջ անցուց , կռիւներու մէջ ,
բայց մէկ մեղք մը չըրաւ . պատճառ՝ ինչ որ
կ'ընէր , Մտուած իր աչքին առջևն ունէր ,
Մտուածոյ համար կ'ընէր : Մնոր համար
Վրիգոր Վաղիանզացին իր գովասանքին
մէջը կ'ըսէ . թէ որ սուրբ Մթանաս կ'ու-
զես ճանչնալ՝ ճանչցիր առաքինութիւնը ,
վասն զի սուրբ Մթանաս ըսել՝ առաքինու-
թիւն ըսել , մի և նոյն է :

Ս Ո Ւ Ր Բ Ս Ս . Ր Գ Ի Ս

Կապագովկիա աշխարհէն էր՝ որ Կեսա-
րիոյ երկիրն է , խելացի ճարպիկ մարդ :
Օրնուորութե մէջ ըլլալով շատ քաջու-
թի՛ ընելով բարբարոսաց դէմ՝ մեծն Կոս-
տանդիանոս զինքը Ստրատելատ էր ըրած ,
որ մեծ պատիւ է , և գաւառապետ , (իբր
պէյլէրպէյի) : Մ երանելիս խիստ անճա-
պաշտ ըլլալով՝ իր մենծութիւնը բանեցուց
անճապաշտութիւնը ծաւալելու համար : Պըզ-
տիկուցմէ ադէկ կարդացած ըլլալով Մծա-
շունչ գիրքը՝ իրեն իմաստութեամբ շատ
տեղէն վերցուց կռապաշտութիւնը՝ որ դեռ
կը գտնուէր , կռատունները կը փլցնէր , ա-
նոնց տեղը ժամ կը շինէր , ինչուան որ թա-
գաւորեց չար Յուլիանոսը :

Սարգիս տեսնելով որ Յուլիանոս նորէն
կռապաշտութիւն խօթել կ'ուզէ՝ խիստ կը
ցաւէր, աղօթքով կ'աղաչէր Մատուծոյ ցը-
ցընել իրեն որ ինչ ընէ . Յիսուս իրեն ե-
րևնալով ապսպրեց գուրս ելլել իր երկրէն,
երթալ ան երկիրը՝ որ ես քեզի ցցընեմ, ը-
սաւ, ուր մարտիրոսութեան պսակն առնես :
Ըն օրերը լսեց սուրբն որ Յուլիանոս շատ
զօրքով պիտոր արևելք գայ Պարսից դէմ
կռուելու, յիշեց իրեն երևցած տեսիլքը .
ինչ ապրանք որ ունէր՝ ծախեց, աղքատաց
բաժնեց, իր ամմէն մենծութիւնը փառքը
մէկդի ձգելով Հայաստան փախաւ :

Տիրան Հայոց թագաւորը պատուով ըն-
դունեց Սարգիսը իրեն Մարտիրոս անուն
տղովը՝ որ որք էր մնացած իր մօրմէն . քա-
նի մը օրէն լսելով Տիրան որ Յուլիանոս
Ընտիրք քաղաքը հասած ըլլալով շատ փրն-
տըռելու հետ է քրիստոնէաները, վախ-
ցաւ իրեն քովը պահել . խորհուրդ տուաւ
Սարգսին ելլել Պարսից թագաւորին քովն
երթալ, որ կ'ըսուէր Շ ապուհ : Շ ապուհ
երբոր տեսաւ ասիկայ՝ խիստ ուրախացաւ .
իրեն քաջութիւնը գիտնալով՝ բարբարոս-
ներու դէմ խրկեց ծեծկուելու . ուր Մատու-
ծոյ օգնութեամբ շորուն միշտ կ'ապաւինէր,
շատ յաղթութիւններ ըրաւ Սարգիս : Իայց
անչափ կռիւները չէին խափաներ իրեն ա-
ղօթքը, իրեն ջերմեռանդութիւնն ընելու,
աղքատներուն հասնելու :

Շ ապուհ օր մը լսեց որ Տաճկաստանէն

շատ զօրք վրայ գալով կ'աւրեն կ'աւրըշտը-
կեն Պարսից աշխարհքը, անոնց դէմ խըր-
կեց Սարգիսը զօրքով, բայց իր Սարտի-
րոս տղան իր քովը պահեց: Երբոր Սար-
գիս հոն հասաւ՝ հետը եղողները թշնա-
մեաց բազմութիւնը տեսնելով խիստ վախ-
ցան. սուրբ Սարգիս աղէկ առիթ գտնե-
լով՝ թէ որ ամմէն սրտովսիդ հաւատաք,
ըսաւ, Ճշմարիտ Մտուածը՝ մէկերնիդ հա-
զարը կը հալածէ Յիսուսին անունովը: Մ-
կէ սկսաւ Ճշմարիտ հաւատքը քարոզել. ի-
րեն քարոզելովը մէկ շնորհք մը ինչաւ զօ-
րաց վրայ. ամմէնն ալ ընդունելով քրիս-
տոնէութիւնը յաղթեցին թշնամիներուն:
Իսկ երբոր թշնամիները Սարգսին վրայ ու-
զեցին վազել, մութ խաւար ընկաւ վրանին,
ճամբանին մոլորեցան, ձայն մըն ալ լսեցին
որ կ'ըսէր. մի կուռիք Մտուծոյ ծառային
հետ, ամմէնքդ ալ կը կորսուիք:

Մ բաներս լսելով աւելի հաստատեցան
նորահաւատները. ան ատենը ամմէն զօրքը
մէկբերան կանչելով՝ կը հաւատանք, ըսին,
ամենասուրբ երրորդութեան՝ որ Սարգիս
կը քարոզէ. աս ըսելով մկրտուեցան: Արա-
պաշտներէն ոմանք գացին աս ամմէն բա-
նը պատմեցին Շապուհ թագաւորին, վե-
րազիր ընելով թէ Սարգիս հռոմայեցւոց
զօրաց հետ միաբան է: Շապուհ տտոր վը-
րայ խիստ խռովեցաւ. բայց խռովութիւն
մը չելլելու համար՝ առաջ պարպեններ, ետքն
ալ իր Սարտիրոս տղան խրկեց քանի մը

մենծերով, հետն ալ մէկ սիրալիր խօսքերով
Թուղթ մը գրելով իր քովը կանչեց :

Երբոր ասոնք ճամբան կու գային՝ Թըշ-
նամինները բռնեցին իրենց բանակը տարին .
սուրբ Սարգիս լսածին պէս՝ խիստ տրտմե-
լով Մատուծոյ ապաւինեցաւ, իրեք օր բան
մը բերանը չի դնելով գիշեր ցորեկ աղօթք
կ'ընէր Մատուծոյ որ իր զաւակն ազատէ :
Սէյմըն ալ չորրորդ օրը ձիաւոր մարդ մը
եկաւ Թշնամիներուն բանակէն, իր տղան
և ուրիշ բռնուողները հետը բերելով՝ եօ-
թը հոգի՝ ըսաւ, աս տղան գերի բռնեցին
բերին, եօթն ալ ան օրը մեռան . մեր բա-
նակին մէջն ալ փորձանքներ չի պակսեցան,
մեր զօրագլուխն ալ տեսիլք կը տեսնէր . աս
պատիժները աս տղին համար է, կ'ըսէր,
տարէք իր հօրը ձեռքը տուէք, չէ նէ ամ-
մէնքդ ալ կը կորսուիք :

Մը լսելով նոր դարձողները աւելի կը
հաստատուէին քրիստոնէութեան վրայ, ա-
ղաղակելով մեծ է Մատուածն Սարգսի . չի
դարձածներն ալ կը դառնային ճշմարիտ հա-
ւատքը կ'ընդունէին : Սուրբ Սարգիս ուրա-
խանալէն փառք կու տար Մատուծոյ իր զա-
կին ազատուելուն համար . աղօթք կ'ընէր
Թշնամեաց բանակին համար՝ որ Մատուծոյ
բարկու թիւնը անցնի վրաներնէն, ինչուան
որ՝ իրեք օրէն մարդ եկաւ անոնցմէ ըսելով,
մեծ է Սարգսին Մատուածը . իրեն աղօթ-
քովը դադրեցաւ պատիժը, մենք ալ կը հա-
ւատանք ան Մատուծոյ :

Սուրբ Սարգիս լսեց իր տղին բերնէն
թէ Շ ապուհ զինքը կը կանչէ, ասոր հա-
մար եկանք որ, ըսաւ, քեզ տանինք: Հաս-
կըցաւ Սարգիս Շ ապուհին չար միտքը, ամ-
մէն զօրքը կանչելով ըսաւ. եկաւ ատենն
որ քրիստոնէութիւննիս յայտնենք: Օր-
քը մէկբերան աղաղակեցին. քեզի հետ
մէկտեղ պատրաստ ենք մեռնիլ: Բայց ա-
ղաչել սկսան որ չերթայ: Սուրբը պատաս-
խանեց. մեր տէրը չի հրամմեր մարմնով
զօրանալ, այլ հոգւով, և նեղութեան մէջ
համբերել. անոր համար մի խափանէք
ճամբաս, այլ աղաչեցէք որ արժանի ընէ իս-
իրեն անուանը համար մեռնիլ, ձեզ ալ ձըշ-
մարիտ հաւատքի մէջ հաստատել: Եւ ըսե-
լով քանի մը զօրքով ու իր տղովը Պարսից
դուռն եկաւ:

Շ ապուհ խիստ ուրախացաւ իր գալուն
վրայ, պարգևներ տուաւ. կարծեց որ սուտ
էին իր լաճները քրիստոնէայ ըլլալուն հա-
մար. իրաւը հասկընալու համար իրենց տօ-
նին օրը Սարգիսը հրաւիրեց կռատունը
գալու՝ կրակը պաշտելու: Պատասխանեց
սուրբը. ես ճշմարիտ Եւտուծոյ կ'երկիր-
պագանեմ որ կրակն ստեղծեր է. քեզի ալ
պէտք էր, թագաւոր, անիկայ պաշտել՝ չէ
թէ անշունչ ստեղծուածը: Տեսնես մի, ը-
սաւ, Շ ապուհ, հիմա յայտնի եղաւ քու
մոլորութիւնդ. քու սէրդ մէկ հրեայի մը
տուերես՝ որ խաչուեցաւ: Եւ քամահրանքը
լսելով սուրբը չի դիմացաւ, թագաւորին

երեսին թքաւ իր կուսպաշտութիւն վրայ .
ես չեմ վախնար , ըսաւ , քեզնէ ու քու
գարշելի կուռքերէդ . այլ ճշմարիտ Մատու
ծը կը պաշտեմ , որուն չեն հասնիր հայ-
հոյիչներուն խօսքերը :

Մն ատենը Շ ապուհ հրամեց քարերով
բերնին զարնել , երկրթէ կապերով կապել ,
գետինը քաշկուտել . անանկով բոլոր մար-
մինը քեղըրթուեցաւ . քաշողները կը յոր-
դորէին որ քրիստոնէութիւն թողնէ , կուռ-
քերը պաշտէ : Սուրբը պատասխան տուաւ .
ցըցուցէք ինձի կուռքերնիդ՝ որ անոնց զօ-
րութիւն տեսնեմ , ես ալ իմ Մատուծոյս զօ-
րութիւնը ցցընեմ : Արբոր աս լսեց Շ ա-
պուհ թագաւորը , կարծելով որ կուռքերը
կ'ուզէ պաշտելու՝ ուրախանալով քանի մը
մենծերու հետ կուստունը խրկեց : Հոն
մտածին պէս սուրբն ըսաւ . ասոնք տասու-
երկու կուռք են , չորսը վիշապի բերան ու-
նին , չորսը սատանայի երես ունին , չորսը
կովու գլուխ . ասոնցմէ ո՞րը պաշտելու է ը-
սելով՝ ստուծիւննին հասկըցուց : Արբոր
անոնք վրան կը կատղէին , թողէք որ , ը-
սաւ , քովերնին երթամ : Հոն երեսը խաչ
հանելով և Մատուծոյ օգնութիւնը խնդրե-
լով , վրայի եղած երկաթներովը զարկաւ
կուռքերուն , ամմէնն ալ փշուր փշուր ե-
ղան : Տեսա՞ք մի , ըսաւ , անմիտներ , ձեր
պաշտածները ինչ եղան : Վմմէնն ալ վրան
վաղեցին , բռնելով կը քաշկուտէին , մէկբե-
րան մեռնի կը կանչէին . անանկ վաղելու ա-

տենը Սարտիրոս իր տղան կոխկռտուելէն մեռաւ , իր անուան նշանակու թիւնը գործքով կատարելով մարտիրոս եղաւ : Նազմու թիւնը առին ատեանը տարին , հոն կ'ուզէին մեռցընել . բայց Շապուհ թագաւորը չի թողաւ . դուն չէս վախնար , Սարգիս , ըսաւ , որ ան կուռքերը քեզ կը մեռցընեն , չէ թէ ես կը մեռցընեմ : Սուրբը պատասխանեց . պատրաստ եմ մեռնելու իմ Մատուծոյս համար՝ որ ինծի անմահութիւն կու տայ , քու կուռքերդ բան մը չեն կրնար ընել . ինչպէս որ երկաթներովս անոնք փրշրեցի , կրնայի նոյն երկաթներն ալ փշրել , բայց ես կ'ուզեմ մեռնիլ Մատուծոյ համար՝ ըսելով , գլուխն ու վիզը կը ծռէր :

Թագաւորը հրամայեց բանտը տանել . հոն դահճապետը շատ տանջանք կու տար սրբոյն , թագաւորին վճիռը կը զուրցէր , որ վճիռ հանեց մեռնելու . սուրբը կը գոհանար , մարտիրոս ըլլալու շնորհք կը խընդրէր Մատուծմէ : Մն գիշերը սատանան երևնալով ըսաւ . ինչպէս որ դուն իմ կուռքերս կոտորտեցիր , ես ալ քու ոսկորներդ կոտորտել պիտի տամ : Սուրբը չեխելով անիկայ Վսին անունովը հալածեց : () ընիբուն կը չարչարէին սուրբը քերելով քաշկրուտելով . անիկայ չարչարուելու ատենը աղօթք կ'ընէր : Մն գիշերը հրեշտակ երևցաւ ըսաւ . զօրացիր , ով Սարգիս , ես քեզի հետ եմ . ինչ որ խնդրեցիր՝ տուի քեզի , ինչ ալ որ ասկից ետքը ինդրես՝ անոնք ալ

պիտի տամ: Ըս խօսքէս սիրտ առաւ սուր-
բը, տանջանքները բանի տեղ չի դրաւ. սա-
տանան կատողէլէն նորէն կ'երեւնար, ահ կը
ձգէր սիրտը պատմելով ինչպէս կարողու-
թիւն ունէր ամմէն չարիք ընելու. ես էի,
ըսաւ, որ Ըդամ դրախտէն դուրս հանեցի,
Յօբը զարկի, մարգարէները՝ առաքեալնե-
րը՝ մարտիրոսները չարչարել ու մեռցրնել
տուի, Քրիստոս ալ շրեաներուն սպան-
նել տուի: Սուրբ Սարգիս՝ Քրիստոսի զօ-
րութիւնը մարդուս փրկուիլը, սատանային
ամօթով իյնալը՝ իրեն երեսին տալով նո-
րէն հալածեց: Շինգերորդ օրը երբոր ա-
զօթքով օգնութիւն կը խնդրէր Քրիստո-
սէ, երեցաւ իրեն Քրիստոս, սիրտ տա-
լով արքայութի խոստացաւ իրեն: Քրիս-
տոսի լուսէն բանտը լուսաւորեցաւ: Սար-
գսին կապանքներն ալ արձրկուեցան. հոն
եղող բազմութիւնը տեսնելով փառք կու-
տային Ըստուծոյ, Շ ապուհ թագաւորին
կը պատմէին:

Շ ապուհ պատուով բերել տուաւ իր
առջին, յորդորեց դառնալու. այսօր մեր
հրամանը կատարէ, ըսաւ, ետքը գնա՛ Սա-
զովրեցին պաշտէ: Բայց իր միտքը ան էր
որ՝ Սարգիսը ապրեցընէ, Յուլիանոսին
դէմ խրկէ, որ Շ ապուհոյ վրան կու գար.
գիտէր Սարգսին քաջութիւնն որ կրնար
դէմ դնել: Սագաւորին խաբէութիւնը
գիտնալով Սարգիս՝ իս չէս կրնար, ըսաւ,
բեզի պէս մոլորցրնել. թէ որ իս չի մեռցը-

նես , քու մահդ իմ ձեռքովս պիտոր ըլլայ .
չեմ թողներ որ պիղծ բերնովդ հայհոյու-
թիւն խօսիս ճշմարիտ Մատուծոյ դէմ : Մ
լաածին պէս Շ ապուհ թագաւորը հրամ-
մեց քաղքէն դուրս հանել սպաննել . տա-
նելու ատենը կռապաշտներէն քէն պահող-
ները թէ ինչու մեր կուռքերը կտարտեց
վրան կը վազէին , եղունգներով մարմինը
կը բզբտէին : Սուրբ Սարգիս աս չարչա-
րանքները բանի տեղ չի սեպելով , հայր
մեր ըսելով կ'երթար , կը յիշէր Մատուծոյ
զօրութիւնն որ արդարները միշտ փրկեր է ,
կ'աղաչէր որ նոյն զօրութիւնը իրեն ալ տայ :

Արբոր մեռնելու տեղը հասաւ՝ գոհու-
թիւն տուաւ Մատուծոյ մարտիրոսութեան
արժանի ըլլալու համար . թողութիւն խըն-
դրեց իր և ամմէն քրիստոնէից մեղքերուն .
ով որ իր անունը յիշելու ըլլայ , ամմէն վը-
տանգներէ փրկէ , սատանաները հալածէ ,
հիւանդները բժշկէ , բանտէ՝ ծառայութե-
նէ ազատէ , խռովութենէ՝ ալէկոծութենէ
ամմէն չարէ խալըսէ . ով ալ որ իրեն յիշա-
տակը կատարէ , խնդրեց որ բիւրապատիկ
վարձ հատուցանէ : Արբոր խօսքը լմնցուց ,
հրեշտակ Մատուծոյ երկրնքէն ինչնալով
ձեռքը պսակ բռնած սիրտ տուաւ իրեն .
ինչ որ խնդրեցիր , ըսաւ , Մատուած պիտոր
կատարէ . որ քրիստոնէն որ քու անունովդ
բան մը պիտի խնդրէ , իր խնդիրքը կ'առ-
նէ : Հոն եղած բազմութիւնը տեսնելով
հրեշտակը՝ աղաղակեցին , մեծ է քրիստո-

նէից Մատուածը , անկէց ուրիշ Մատուած
չիկայ : Սուրբը դարձաւ անոնց ըսաւ . իմ
մեռնիլս որ Մատուծոյ համար կը մեռնիմ՝
մեռնիլ չէ , հապա անմահութիւն ձեռք
ձգել է . ինչ ուրախութիւն կ'իմանամ որ
պզտիկուցմէ փափագած բանս այսօր կ'ու-
նենամ , որ է նահատակուիլ , սրբոց քովն
երթալ : Մը ըսելով ծունկ չոքեցաւ դէպ 'ի
արևելք . խաչակնքելով գլուխը դահճին
երկնցուց ըսելով , տէր Յիսուս , ընկալ ըզ-
հոգի իմ : Արբոր գլուխը կտրուեցաւ յա-
մին 363 , լոյս մը ինջաւ մարմնոյն վրայ , որ
ցոլանալովը կռապաշտները կ'երէր . ձայն մը
կու դար երկընքէն՝ եկէ՛ ով երանելի Սար-
գիս , յաւիտենից հանգիստը ժառանգէ :
Քրիստոնեայ եղողները մարմինը վերու-
ցին , բայց Շասուհ բարկանալով տասնը-
չորս հոգի անոնցմէ կտորեց՝ որ պարսիկ էին .
մարմիննին դազաններուն առջև ձգեց , բայց
մէկ գազան մըն ալ չի մօտիկցաւ . հասկը-
նալով որ շատ պարսիկ քրիստոնեայ կ'ըլլան
աս հրաշքները տեսնելով՝ միտքը դրաւ կը-
րակով երել : Մէյմըն ալ Յուլիանոսին գալը
լսեց , ամմէն բանը մէկդի թողաւ , անոր
դէմ գնաց . ան ատենը քրիստոնեայք ասոնց
ու սրբոյն Սարգսի մարմինն ու իր Մարտի-
րոս տղինը առին պահեցին :

Ս Ո Ւ Ր Բ Ս Ի Մ Է Ո Ն

Միշնակեաց

Անտիոքայ երկիրը ծնած ըլլալով փոքր (Ս)էոզոս կայսեր օրերը, աղքատ ծնողաց զաւակ, իր հօրը ոչխարները կ'արածէր. կիրակի օրերը ժամ երթալով Մստուածաշունչ գիրքը կը լսէր: Երբոր տասուիրեք տարուան եղաւ, օր մը Պօղոս առաքելոյն խօսքերը լսելով և աւետարանին երանութիւնները, սիրտը անանկ Մստուածային լոյս մը ծագեց, անանկ արթնցուց որ փրկուտուք ընկաւ միտքը իմանալու. հոն մէկ բարի ծեր մը գտնելով՝ հարցուց, ինչ էր ան կարդացած խօսքերը. ես մէկ տխմար տղայ մըն եմ, ըսաւ, կը փափագիմ Մստուծոյ ճամբան գտնելու:

(Ե)րը պատասխանեց. ժուժկալու թեան վրայ էր. թէ որ կ'ուզես, ըսաւ, որդեակ, ժուժկալու թիւ սորվիլ, ան է որ մէկը սուրբ սրտով պաք պահէ, ահով դողով աղօթքի հետ ըլլայ, գիշեր ցորեկ բարեգործութիւն ընելու ետևէ իյնայ. աս բաներս աշխրքի մէջ կենալով ալ կրնայ ըլլալ, բայց կարգով կանոնով վանքերու մէջ կ'ըլլայ: Մտալսեցիր, ըսաւ, որդեակ, աս ամէն խօսքը սրտիդ մէջը բռնէ, նայէ աղէկը քեզի ընտրէ. թէ որ կը փափագիս կատարելութեան

Ճամբան երթալ, պէտք է քեզի անօթի կե-
նալ, ծարաւ քաշել, մերկ մնալ, լալ, հառա-
չել, արթուն կենալ, քանի մը բան քեզի
հերիք սեպել, մէկալ բաներէն ետ կենալ,
խոնարհութիւն յանձն առնել, հալածան-
քի համբերել, քամահրուիլ, շատ բան քա-
շել մարդէ, միայն թէ հրեշտակներէն զըր-
կեալ չի մնաս . Մտուած քու միտքդ բա-
նայ որ ճանչնաս, ասոնք ընես, որդեակ,
քու բաղձանքիդ հասնիս : Մ Խօսքերս
տղին սրտին մէջը կրակի մը պէս անանկ վա-
ռեցին Մտուածային սէրը, որ աշխարհք բռ-
լորովին ձգեց քամահրեց, երկնային մարդ
մը եղաւ . նոր զարմանալի ճամբայ մը բռ-
նեց, որ հոս պատմենք :

Մ աջ ժամ մը մտնելով՝ գեանի վրայ ըն-
կաւ, խնդրեց Մտուածմէ որ իրեն ճամբայ
մը ցցընէ ո՛ւր երթայ, ինչ ընէ . աղօթքէն
ելաւ, իր ծնողաց բան մը չըսելով որ ար-
գելք չըլլան՝ մէկէն անապատը փախաւ . հոն
ալ երեսի վրայ իյնալով՝ եօթն օր անօթի
ծարաւ կեցաւ . կու լար կ'աղաչէր Մտուածոյ
որ իրեն առաջնորդ ըլլայ : Մ իրեն առաջ-
նորդեց Հելիոդորոս արքային վանքն եկաւ,
որ մեծ մարդ էր Մ յ առջև . իրեն ոտքը իյ-
նալով ըսաւ, ողորմէ ինձի մեղաւորիս որ կը
ցանկամ Մտուածոյ ծառայել, իս շահէ : Հե-
լիոդորոս ամմէն բանը իմանալով վանքն ա-
ռաւ : Սիմէոն անանկ ձգնութեամբ ու պաք
պահելով կեցաւ հոն, որ ամմէնը զարմա-
ցուց : Իրեք տարի ասանկ կենալէն ետև

սիրտը կ'եփէր աւելի ճգնութիւն ընել կ'ուզէր . որ մը հորին չուանը քակելով անանկ պինտ մէջքը փաթթեց որ՝ մտին մէջը թաղուեցաւ , ատեն անցնելով որդնոտեցաւ . պաքն ալ անչափ աւելցուց՝ որ բոլոր շաքաթը ժում մը կ'ուտէր կիրակիէ կիրակի . ինչ կերակուր որ իրեն կու տային՝ անոնք աղքատաց կը բաժնէր :

Այ բաներս տեսնելով եղբարները՝ դանգրտեցան վանահօրը . որովհետեւ իրենք ամ մէն օր իրիկուրնէ իրիկուն կ'ուտէին : Անահայրը կանչեց Սիմէոնը հարցուց ասանկ խիստ պաք պահելուն ու որդնոտելուն վրայ . անիկայ պատասխան մը չի տալով վար կը նայէր կու լար . երբոր հանուեցրնել տուաւ , տեսաւ որ չուանը միսը մտնելէն որդնոտեր էր , հազիւ քակեցին , խոցերը յիսուն օր նայելով բժշկի ձեռքով ըւրնտցուցին : Ամ մէնն ալ զարմացած կը նայէին վրան . իսկ ինքը իբր մէկ ուրիշ մարդ մը եղած կ'ըսէր . Անորէնու-Ռեամբ յղացաւ , ե՛ տ' Ռիս ծնաւ զիս Տայր էմ : Այդէք ինծի պէս մեղաւորի պատիժ քաշել ու մեռնիլ : Աայց եղբարքը սոսկալով ասոր ճգնութենէն չէին ուզեր մէջերնին . անոր համար վանահայրն ալ ճամբայ տուաւ ասոր :

Սիմէոն խոնարհութեամբ բաժնուելով լալով կ'երթար . ինչուան դտաւ մէկ ցամաք հոր մը լեցուն օձերով , հոն ձգելով զինքը՝ եօթն օր անօթի մնաց : Աայց Աճ որուն մտածմունքը շատ հեռու է մարդուս մտած

մունքէն՝ հրեշտակներ խրկեց վանահօրը
որ հասկըցուցին թէ Միմէոն որչափ մեծ
էր Մ. Մառջին, և ասլըսալրեցին որ գտնէ բե-
րէ : Արբոր վանահայրը աս տեսիլքը պատ-
մեց ամմէն եղբարներուն, փնտրուելով աս-
դիս անդին, ետքն ալ ան մուծ հօրը ինջ-
նալով գտան բերին : Վանահայրը տեսա-
ծին պէս՝ Միմէոնին ոտքն ընկաւ թողու թի-
ուզելու . ասկից ետքը դուն եղիր, ըսաւ,
առաջնորդ, ծառայ Մ. Մ. Միմէոն որ բոլո-
րովին խոնարհ էր՝ կու լար երբոր աս խօս-
քերս կը լսէր . քանի մը օր հոն կենալէն
ետե՛ չուզելով լսել անանկ գովու թիւններ՝
գաղտուկ ելաւ անկից, ուր իրեք տարի էր
կեցած . գնաց մէկ անապատ մը, քարեր
ժողովելով մէկ նեղ տեղ մը շինեց իրեն . չորս
տարիի չափ ալ հոն կեցաւ, շաբաթն ան-
գամ մը թրջած ոսպ ուտելով, իսկ մեծ
պաքին մէջ ամենեւին բան մը չուտելով, կը
բաղձար որ Սուլսեսի ու Աղիայի նմանի :
Բայց հոն ալ իր սրբութեան անունն ե-
լաւ, բազմութիւն սկսան գալ . ամմէն ե-
կող երբոր իրեն բերնէն ելած խօսքերը կը
լսէին, խիստ կը շահէին :

Ան անապատին մէջ Բաստոս կամ Վլա-
ստո անունով վանահայր մը կար, առաջ-
նորդ երկու հարիւր եղբարներու, անձա-
շնորհ մարդ, որ կը քալէր կը պտըտէր ամ-
մէն եղբարներու քով, կ'առաջնորդէր, սք
հաղորդութիւր կը բաշխէր՝ գլուխ քահա-
նայից ըլլալով : Միմէոն ասիկայ իրեն հո-

գլխոր հայր ընտրեց, բացաւ իրեն ամմէն խորհուրդը և անչափ փափաքը Մ. Յ. ծառայելու : Մասոս իրեն խրատ տուաւ որ ճգնութե մէջն ալ պէտք է ընտրողութիւն ընել . երբոր անօթենալէն մարելու պէս կ'իմանաս՝ պէտք է , ըսաւ , քիչ մը բան ուտել . չափն անցնիլը քնաս կու տայ , չէ թէ մինակ մարմնոյ՝ այլ նաև հոգւոյ : Սիմէոն կատարեալ հնազանդելով՝ իրեն յանձնեց տասը հաց ու ջուր խրկել , որ պէտք եղած ատենն առնէ : Մասոս ալ անանկ ըրաւ , դուռն ալ ծեփեց որ քառսուն որ մէկը չի կրնայ քովը գալ : Մայց երբոր օրերը անցնելէն ետև եկաւ բացաւ , տեսաւ որ ամենեւին հաց ու ջուր չէր առած . զինքն ալ տեսաւ գետինն ընկած , աղօթքի մէջ յափշտակուած , զրդելով արթնցուց աղօթքէն , բայց իբր կէս մեռած ելաւ անչափ պաքէն . երանելին խնդրեց հաղորդութեան սուրբ խորհուրդը . անով զօրանալով գետնէն ելաւ , քիչ մը խոտ կերաւ . անչափ խտոր հերիք սեպեց իրեն :

Մասոս աս կերպը տեսնելով զարմացաւ մնաց . հասկընալով որ Սիմէոնին վարքը Մ. սուծմէ է , ալ բան մը չըսաւ իրեն խիստ ճգնութեը համար . միայն իր աշակերտներուն պատմեց ասոր հրաշալի վարքը : Սիմէոն անչափ առաջ գացած էր իր հոգեսիրութեան ու ջերմեռանդութեանը մէջ որ անկից ետև շատ հեղեբօունըութիւնը որ անօթի ծարաւ կ'անցընէր . քառասներորդ օրը

միայն կ'ուտէր սրբու թիւն առնելէն ետև .
քսան օր ոտքի վրայ կը կենար աղօթելով ,
սաղմոս ըսելով , երկնային մտածմանց մէջ
ընկղմելով , ետքը քանի մը օր նստած կ'ան-
ցընէր . անկից ետքը դեռնատարած կը կե-
նար , անդադար Մտուած օրհնելով . ա-
նանկ որ՝ իբր թէ երկրիս վրայ մարդ չէր ,
այլ մէկ անմարմին մը հրեշտակներու հետ
մէկտեղ Մտուած փառաւորող :

Իրեք տարի աս նեղ խուցս կենալէն ե-
տև՝ մօտիկ լեռ մը կար հոն դնաց . քարերը
շարելով պատ մը դարձուց՝ վրան բաց . հոն
կեցաւ զիշեր ցորեկ , անձրեւն ու արևը ,
ցուրտն ու տաքը քաշելով : Քանի որ կը
մտածէր թէ ինքն բանն Մժ՝ երկնի և եր-
կրի ստեղծողը կրնար մարմին առնելով՝ կա-
թիլ մը արիւն թափելով աշխարհքս փրը-
կել , հերիք չի սեպեց , այլ անօթի ծարաւ
կեցաւ , ամմէն սաստիկ տանջանքները քա-
շեց . ես որ մեղաւոր իր ծառան եմ , որչափ
աւելի պէտք է որ քաշեմ , ըսելով , ասանկ
ճգնութե կու տար զինքը : Եւ որովհետև
հոն ալ շատ մարդ կու դային իրեն՝ երկան
շղթայ մը կապեց , մէկ ծայրը իրեն ոտքը ,
մէկալ ծայրը քարի մը վրայ . որպէս զի մէ-
կը չի կրնայ անկէց դուրս հանել՝ թէ և ին-
քը ուզէնայ : Մտանկով միշտ երկնային բա-
նէրը կը մտածէր , կարօտով փափափով
դէպ 'ի երկինքը կը հառաչէր . իրեն հա-
ւատքը լուսաւոր ըլլալով՝ իբր թէ աչքով
կը տեսնէր , իրեն եկողներուն ալ աս բանս
կը սորվեցընէր :

Մեղիտիոս անունով մէկն եկաւ ասոր
քով որ Մնատիոքայ եպիսկոպոսը կը կարծեն,
շատ զարմացաւ իրեն ըրած ճգնութեանը
վրայ, բայց խրատ տուաւ շղթան վերցընել.
հերիք է մարդուս, ըսաւ, ինքիր կամքովը
զինքը կապել: Եւ բանիս շուտ մը հնազան-
դեցաւ Սիմէոն. դարբին (չիլինկիր) մը
կանչելով՝ քակել տուաւ շղթան. բայց կա-
պած տեղը ճզմուած ըլլալով՝ միսը տրորեր
որդնոտեր էր, որ կամօք կը թողնէր երա-
նելին որ տանջուի. Պօղոս առաքելոյն ը-
սածը միշտ յիշելով, թէ երբոր մարմինս
կը տկարանայ, հոգիս կը զօրանայ:

Բայց ՄԾ որ իրեն ծառայողներուն միշտ
չնորհք կը բաժնէ, ասոր ալ շնորհք հոգե-
շահ վարդապետութե տուաւ, ու շնորհք
բժշկութե. քովն եկողներուն զարմանալի
խօսքերով հոգինին կը շահէր, ամմէն ցաւ
ալ կ'ըռնտցընէր: Մնչափեղան եկողներուն
բազմութիւնն որ՝ ամմէն անապատի ճամ-
բաները լեռները քաղաք մը դարձեր էր:
Իրեն անունը լսողները հեռու տեղերէն
զանազան ազգերէն կը վազէին քովը կու
գային. Բրաբացի, Պարսիկ, Հայ, Սրացի,
նաև եւրոպացոցմէ Սպանիացիք, Իտալա-
ցիք, Մնգղիացիք, Գաղղիացիք, ամմէնն ալ
ասոր կու գային: Հռոմ տներու մէջ՝ ճամ-
բաներու վրայ ասոր քաշուած պատկերը կը
դնէին, կենդանի սուրբի պէս կը պագնէին:
Բանի որ ինքը փառքէ կը փախչէր, ՄԾ
ալ անչափ կը փառաւորէր իր ծառան: Եւ

կողներուն շատուորու թիւնը անչափ էր որ՝
հազիւ կրնային իրեն լաթերուն դպչիլ :
Իսկ ձեռքը պագնել՝ քիչ հոգի կրնային ,
բայց ամմէնն ալ կը շահէին . որը փորձանք-
ներէն ցաւերէն կը խալըսէր , որը իր թըշ-
նամիներուն հետ կը հաշտուէր , որը իր
հոգևոր խօսքերը լսելով մեղքէ կը դառնար
կ'ապաշխարէր . անհաւատներն ալ դարձի
կու գային քրիստոնեայ կ'ըլլային :

Բայց աս ամմէն արդիւնքը բան մը չէր
երևնար սուրբին աչքին . իր փափագն ան էր
որ՝ միայն Մստուծոյ հետ տեսնուի , աղօթ-
քով հետը խօրաթէ , սրուն երկնային ա-
նուշու թիւ միայն ինքը կ'առնէր կ'իմանար :
Մտոր համար տեսնելով որ ինչուան հիմա
ուր որ գնաց՝ բազմութենէ չի կրցաւ խալը-
սելու , միտքը դրաւ անանկ տեղ մը ելլել՝ ուր
մարդիկ չի կրնան մօտիկնալ . հոն կէնալով
բոլորովին հոգեղէն ըլլայ : Սիւն մը տնկել
տուաւ իր կեցած տեղը՝ հինգ կանգուն
բարձր , անոր վրայ կեցաւ հինգ տարիի չափ .
ետքը սւելի բարձր սիւն մը տնկեց տաս-
ուերկու կանգուն բարձր . տասուերկու տա-
րի ալ հոն ձգնեցաւ . ուրիշ սիւն մը տնկեց
քսան կանգուն բարձր , հոն ալ տասուերկու
տարի կեցաւ . ետքը աւելի բարձր սեան վը-
րայ ելաւ՝ որուն երկանքը երսուն կանգուն
էր , չորս տարի ալ հոն կեցաւ : Մնկեց
բարձր սեան վրայ ելաւ՝ որ երսունը վեց
կամ քառսուն կանգուն բարձր էր . աս
սեան դլուխը խուց մը շինած էր՝ վրան բաց ,

քովերը պատշգամբ (փարմախըխ) քաշած .
հոն ինչուան իր մահը կեցաւ տասնըվեց տա-
րի . ամմէն իր կեանքն որ սեան վրայ ան-
ցուց՝ եղաւ քառսունըեօթը տարի : Առաջ
քսան օր՝ ետքը քառսուն օր ոտքի վրայ կե-
նալ սորվեցուց իրեն զիշեր ցորեկ , ծով
ցամաք՝ բան մը բերանը չի դնելով . իբր թէ
ան սեան վրայ ինքն ալ մէկ սիւն մը եղած
էր , բայց հոգեղէն սիւն . աչուրները բոլո-
րովին վեր վերցուցած , ձեռուրները բազ-
կատարած , միտքն ալ բոլորովին Աստուծոյ
յափշտակուած , անդադար աղօթքի հետ
կ'ըլլար , մանաւանդ տօն օրերը՝ իրիկունը
արևելք դառնալով աղօթքի կը կենար բազ-
կատարած . առտուն արևն ելլելով երբոր
երեսին կը զարնէր՝ անկէց կ'արթըննար իբր
իր փափագն առած , ան փափագն որ կ'ու-
ղէր բոլորովին երկնային ըլլալ , մարդիկնե-
րէ հեռանալ , Աստուծոյ հետ միանալ , որ
աս աշխարքիս մէջ միայն աղօթքի մէջ կ'ըլ-
լայ՝ Աստուծոյ հետ խօրաթելով : Քառ-
սուն օր անանկ անօթի կ'անցընէր , ամմէն
շաբաթ կը հաղորդուէր , իր ուղած կրօ-
նաւորներէն ոմանց թող տալով իր քովը
ելլելու :

Աս ամմէն բանը լսելով եզիպտացւոց ա-
նապատին հարքը՝ թէ ինչ արտառոց նորա-
տեսիլ բան էր իրեն վարքը , ժողվուեցան՝
որոշեցին մարդ մը խրկել , իրենց դիացէն
հարցընել՝ ինչ է աս նորութիւն որ դուն կ'ը-
նես . ինչո՞ւ թողիր հին ճամբան՝ որ ասչափ

սուրբ հարք սորվեցուցեր են, նոր ճամբայ
մը բռներ ես որ մէկը չէ ըրած. վար ինջիր,
հասարակաց ճամբան բռնէ: Թէ որ չի հը-
նազանդի մեզի չինջնի, ըսին, յայտնի է
որ մարդկային բան է, բռնու[թ]ք ինջեցու-
ցէք. իսկ [թ]է որ մեզի հնազանդի՝ ինջնիլ
ուզէ, յայտնինչան է որ Մտուածային բան
է, [թ]ողէք ըսին, խափանող չըլլանք Մ-
տուծոյ ըրածին, Սիմէոն շուտ մը ցցուց որ՝
իր ըրածները Մտուածային ազդեցութիւն
կամքովը եղած էին և ոչ մարդկային. լսա-
ծին պէս՝ [թ]է ժողովը հրամմեց վար ինջ-
նիլ, բան մը չի խօսելով՝ սանդուղք բերէք
որ, ըսաւ, վար ինջնիմ: Մն ատենը ժո-
ղովքին մէկալ հրամանը յայտնեցին իրեն,
[թ]ող չի տուին ինջնելու, յորդորելով որ
հաստատուն կենայ իր ճգնութեանը մէջ:
Արբոր ժողովը լսեց իր հնազանդութիւն,
խիստ ուրախացաւ ասանկ անձային քաղա-
քավարութիւնը վրայ. բայց ամմէնուն վրայ
ալ մէկ զարմանք մը մէկ ահ մը ինկաւ.
սրբոյն անունը ալ աւելի մեծցաւ ծաւալե-
ցաւ. ինքը բարձր սեան վրայ ելեր էր որ
խալըսի մարդիկներէն ու մարդկային գովու-
թենէն, Մտուած ալ անչափ շնորհք տուաւ
իրեն որ՝ ալ աւելի գովուեցաւ. եկողներուն
շատուորութիւն անհատնում եղաւ, որոնք
կու գային աս սուրբին քով իրենց նեղու-
թեանց դեղ գտնելու: Արովհետեւ ամմէն
ցաւ կը բժշկէր, սրտերնուն անցածները
գիտէր կը զուրցէր, հեռու տեղեր եղած

բաները կը պատմէր, ամմէն բժշկուողնե-
րունալ կ'ապսպրէր որ մ' ըսէք Միմէոն
բժշկեց. աս խօսքս սուտ է, կ' ըսէր. հապա
ըսէք որ ՄԾ բժշկեց. աս խօսքս ճշմարիտ է.
մի երգուըննաք, կ' ըսէր, Մտուծոյ անունին
վրայ, որ է անուն ահաւոր. հապա երգուըն-
նալ հարկ ըլլայ՝ Միմէոնին անուանը վրայ
երգուընցիք, որ է մեղաւոր :

Ասեց իրեն մայրը, չի դիմացաւ եկաւ իր
զաւկին կարօտը առնելու, քսանըեօթը տա-
րի տեսած չըլլալով : Այլ որովհետեւ Միմէո-
նին սիւնը պատուէր, չէր թողնէր կնկտոց
պատէն ներս մտնելու, մարդ խրկեց մայ-
րը. սուրբը լսածին պէս՝ երեսը գոցեց, չու-
զեց իր մայրը տեսնելու : Ատ լաց ողբ ը-
րաւ մայրը. հայրդ քու կարօտէդ լալով ող-
բալով մեռաւ, ըսաւ, քեզ կորսուած սե-
պելով. հիմա ես որ քեզ գտնելու եկայ, ին-
չու պիտի չի տեսնեմ. թէ որ չի տեսնեմ, ես
ալ հոս կը մեռնիմ : Միմէոն իր փոքրաւորին
բերնովը հասկըցուց ըսելով. աս աշխարհքս
իրար չի տեսնենք որ՝ անդին արժանի ըլլանք
տեսնելու : Մս խօսքս լսելով մայրը՝ ալ աւե-
լի սիրտը կ'եփէր զինքը տեսնելու : Սուրբը
մարդ խրկեց ըսելով. քիչ մը հոս հանգչէ,
քուն եղիր, ինչուան որ իրար տեսնենք : Մն
ալ ուրախանալէն գլուխը պատին կաթընցը-
նելով քուն եղաւ, հոգին աւանդեց ինչպէս
որ Միմէոն ինդրեր էր Մտուծմէ : Մն ա-
տենը վար ինչաւ Միմէոն, սաղմոս ըսելով
սեանը առջին թաղել տուաւ, որ միշտ տես-

նելով՝ անոր հոգին յիշէ աղօթքին մէջը :
Միմէոնին ասանկ սրբութիւն տեսնելով
սատանան՝ ուրիշ կերպով մը ուզեց փորձու-
թեան մէջ ձգել . գիշերը աղօթքին ատենը
զինքը երեցուց տէր փառաց որ կու դայ .
նով հաւատարիմ ծառայ , ըսաւ , վեր ելիր
որ փառաւորութիս , պսակդ առնես : Այրանե-
լին առջի բերանը վախնալով ան ահաւոր
տեսիլքէն՝ անանկ սեպեց որ Մատուած կը
կանչէ զինքը , ուզեց հնազանդիլ . երբոր
ոտքը վեր առաւ խաչակնքեց զինքը , մէկէն
իմացաւ սատանային խարդախութիւն . ոտ-
քը վար առնելով Մատուծոյ դիմեց : Սատա-
նան տեսնելով որ իրեն չարութիւն երևան
ելաւ , կատղելէն ոտքին զարկաւ աներևոյթ
եղաւ : Մն զարնելէն՝ մէկ խոց մըն ալ բա-
ցուեցաւ առջի խոցին վրայ որ նոր էր ող-
ջընցած . անանկ վերք մը որ որդնոտեցաւ .
անկէց ետքը մէկ ոտքի վրայ կը կենար ին-
չուան իր մահը , որ մեռաւ յամին 459 .
սեպ . սկիզբները , 69 տարուան : Տասը տա-
րի վանքի ու անասպատի մէջ ձգնեցաւ . մնա-
ցածն ալ սեան վրայ . անոր համար Սե-նա-
կեաց ըսուեցաւ :

Մեռնելէն ետեւ երեսը լուսով կը փայ-
լէր . շատ հանդիսով մարմինը առին տարին
վեց եպիսկոպոսներ , Մնտիոք քաղաքը թա-
ղեցին . հոն եզող իշխանը 6000 մարդով
ընկերացաւ , որպէս զի տեղացիք չիյափըշ-
տակեն սուրբ մարմինը , ինչպէս որ խօսք
դրեր էին : Մնչոփ բազմութիւն ժողովուե-

ցան որ լեռը լեցուցին մարդով . իրեն տա-
պանը եղաւ մէկ մեծ ուխտատեղի մը , շատ
հրաշքներ տեսնելով ինչպէս իր կենդանու-
թիւ ատենը , անանկ ալ մահուանէն ետքը :

Կ Ա Տ Ա Ր Ի Ն Է Կ Ո Յ Ս

կամ

Ն Ե Ք Տ Ա Ր Ի Ն Է

Աղէքսանդրիա քաղքէն ըլլալով Կա-
տարինէ , աղէքսանդրացի կ'ըսուի , Մաքսէն-
տիոս ու Մաքսիմիանոս թագաւորներուն ա-
տենը . քրիստոնէայ էր և Կոստանդիանոսի
ազգական , գեղեցկատես և զօրաւոր խել-
քով : Ըն ատենը Մղէքսանդրիա քաղաքը
խիստ ծաղկեալ ըլլալով ուսմամբ՝ ամմէ-
նուն քով մեծ սէր կար սորվելու . ուր չէ
թէ մինակ էրիկ մարդիկ , այլ կնկտիք ալ
սորվելու հետ կ'ըլլային . անոր համար աս
կոյսն ալ որ խիստ խելացի էր՝ սորվելու
հետ եղաւ և շատ առաջ գնաց . երևելի
փիլիսոփաներուն գրքերը անչափ կարդաց
որ ինչուան բերան առաւ սերտեց անոնց
գրուածները . սորվեցաւ նաև թուաբանու-
թիւ , երկրաչափութիւ , երաժշտութիւ , աստ-
ղաբաշխութիւ : Իսկ լեզու սորվելու անանկ
յաջողութիւն մը ունէր որ երսուն լեզուէն
աւելի սորված էր ու կը խօսէր . անանկ ե-

զաւ որ՝ աս աղջըկան իմաստութեան անու-
նը ամմէն ազգաց մէջ անուն հանեց . ո՛վ
ալ որ զինքը կը տեսնէր , հետը կը խօսէր ,
ամմէնն ալ զարմացած կը մնային :

Երբոր վերոյիշեալ Թագաւորը Ղլէք-
սանդրիա եկաւ , կռատունը գնաց զո՛հ մա-
տուցանելու . աս կոյսը Թագաւորական տը-
նէն ըլլալուն համար համարձակութիւն ու-
նենալով , Մատուծ մէ ալ սիրտ առնելով , քո-
վը գնաց . իմաստութեամբը սկսաւ մէկիկ
մէկիկ ցցընել՝ իրենց գրքերէն վկայութիւն
բերելով Թէ ինչպէս մեծ մոլորութիւն է
կուռքերը պաշտել . և Թէ ինչպէս պէտք է
ճշմարիտ Մատուծը պաշտել , և Արդին նո-
րա միածին՝ որ իրեն խաչուելով մեզի փրկ-
կիչ եղաւ : Թագաւորն ու քովի իշխաննե-
րը ամմէնն ալ զարմացած կեցած էին ասոր
ճարտասան լեզուին ու խելացի խօսքերուն
վրայ՝ որ իր բերնէն կը լսէին . անոր համար
Թագաւորը իր հետը տարաւ : Իշխաններու
հետ խորհուրդ ընելով՝ կռապաշտներուն
մէջէն երևելի փիլիսոփաները , ճարտասան-
ները քովը կանչեց , որ աս աղջըկանը հետ
խօրաթելով՝ քրիստոնէութիւնը ձգել տան ,
կռապաշտութիւնը ընդունել տան : Յիսուն
փիլիսոփայ ու ճարտասան մարդիկ ժողովուե-
ցան , հետը խօսիլ սկսան . բայց Վատարի-
նէն ձեռնարկութիւններն որ կ'ընէր , վկայու-
թիւններն որ իրենց գրքերէն կը բերէր կը
ցցընէր անչափ բազմութեան առջին՝ ամ-
մէնուն բերանը կը գոցէր կը պապանծեցը-

ներ : Սինակ իր խելքը իր իմաստու թիւնը
չէր, հապա հողին սուրբ ալ անոր բերնովը
կը խօսէր, ան հպարտ փիլիսոփաներուն
միտքը կը շփոթէր իրենց կուռքերուն ստու-
թեանը վրայ : Ըն ատենը ամմէնն ալ
յայտնի խոստովանեցան որ՝ մենք աս աղ-
ջըկանը պատասխան չենք կրնար տալ, ը-
սածները ճշմարտութիւն են :

Թագաւորը տեսնելով ասչափ փիլիսոփա-
ներուն խայտառակուիւն ու մտուընին ծռի-
լը իրենց կուռքերուն վրայ և քրիստոնէից
պէս մէկ Մատուած ընդունիլը, կեցած տեղը
կտոր կտոր կ'ըլլար կը կատղէր, մէկէն ամ-
մէնն ալ կրակը ձգել կը հրամմէր : Արբոր
ասոնք կը տանէին երելու, կուսին կ'աղա-
չէին ճար մը գտնել իրենց մկրտուելուն
վրայ : Պատասխան տուաւ կոյսը . մի վախ-
նաք, կրակը ձեզի մկրտութի կ'ըլլայ, դուք
չնորհակալ եղիք Մատուծոյ՝ որ ձեզ մոլորու-
թենէ դուրս հանեց, հրեշտակներուն հետ
պիտոր ուրախանաք : Ընանկով կրակին մէջ
նահատակուեցան աս յիսուն փիլիսոփանե-
րը, բայց իրենց մէկ մազն ալ չէր երած :
Ը տեսնելով բազմութիւն ժողովրդեան
քրիստոնէայ եղան, որոնց մէկն էր Պոր-
փիւրոս զօրապետ իրեն 200 զինուորներու
վը : Թագաւորն իր կատաղութիւնը կուսին
վրայ թափեց . իրեն ծիրանի հագուստը,
ոսկի զարդերը վերցընելով՝ ծեծել հրամ-
մեց, ետքը բանտը դնել տուաւ :

Արբեւարի տիկին մը կար որ երբէմն թա-

գուհի եղած էր Մագսենտիոսին ատենը .
ասիկայ խիստ կը բաղձար տեսնել Վատարինէ կոյսը . վերոյիշեալ Պորփիւրոսը յարմար ատեն գտնելով տարաւ աս տիկինը Վատարինէին քովը . երբոր լսեց անոր բերնէն ելած խելացի խօսքերը , Քրիստոսի շնորհքը սիրտը միտքը լուսաւորեց , բոլորով սրտով հաւատաց , տունը դառնալէն ետեւ մկրտուեցաւ :

Արկրորդ անգամ ատեանը կանչեցին կոյսը . երբոր տեսաւ թագաւորն որ առջինին պէս նոյն ճշմարիտ հաւատքը կը խոստովանէր , խիստ բարկացաւ . մէկ իշխանի մը խորհրդով անանկ մեքենայի մը վրայ կեցընել տուաւ , որուն անիւները (թէքերէրէկները) սուրեր դամած ունենալով պտըտցընելու ատենը կտոր կտոր պիտոր ընէին մարմինը : Ըն ատենը սրբուհին առ ըն աղաղակելով հրեշտակ Մատուծոյ եկաւ փրկեց զինքը : Ըս տեսնելով վերոյիշեալ թագուհին , թագաւորին քով վազեց , շատ մեղադրանք տալով իրեն երեսին ասանկ անողորմ ըլլալուն համար , ինքն ալ հոն զՔրիստոս Մատուած խոստովանեցաւ համարձակ : Թագաւորը խիստ բարկանալով հրամմեց գլուխը կտրել անոր ալ , Պորփիւրոսին ալ իրեն 200 զինուորներովը :

Վատարինէին սկսաւ հարցուփորձ ընել յորդորել . շատ բան զուրցելէն ետեւ երբոր տեսաւ թագաւորն որ միտքը չի փոխեր , գլուխը կտրել հրամմեց : Արբոր կտրելու

տեղը հասան՝ սրբուհի Կատարինէն աղա-
չեց դահիճներուն որ քիչ մը թողնեն . ին-
քը աղօթքի կեցաւ , աղաչեց Մատուծոյ՝ ո-
րոնք որ իր անունը յիշեն ողորմութի գրտ-
նեն , իրենց ցաւերուն բժշկութիւն . ով ալ
որ հոգեվարքութեան ատենն իմ անունս
յիշելու ըլլայ , ըսաւ , անոր հրեշտակ եր-
կնից խրկէ , ըսաւ , տէր իմ , որ խաղաղու-
թեամբ հոգին աւանդէ : Չայն եկաւ ի-
րեն , դուն եկէ սուրբերուն հետ հանգչէ .
ով ալ որ քու հանգստեան օրդ կատարէ ,
ես ալ իրեն խնդիրքները պիտի կատարեմ :
Մնկէց ետքը գլուխը կտրեցին , որուն ա-
րեան տեղը կաթ բխեց . իրեն մարմինն ալ
հրեշտակները առին սինէական լեռը տա-
րին . կ'երեւնայ որ հոն ատեն մը քաշուած
կեցեր էր ճգնութեան համար :

ՍՈՒՐԲ ԿԻՒՐԵՂ, ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅԻ

Պաղեստինու երկրէն էր , որ է Ռարա-
չամ : Երուսաղէմ քաղքին մէջ տորվեցաւ ,
խիստ տեղեակ եղաւ հին ու նոր կտակա-
րանաց . արտաքին ուսմանց մէջն ալ աղէկ
վարժեցաւ . բայց առաքինութեանց վրայ
սղտիկուցմէ մեծ սէր ունենալով՝ կրօնաւոր
եղաւ . աղօթքի , պաքի , հոգևոր կրթու-
թեանց տուաւ զինքը : Մտ իրեն աղէկու-
թիները տեսնելով՝ Սակար Երուսաղէմայ
Եպիսկոպոսը՝ զինքը սարկաւադ ձեռնա-

գրեց . իսկ Մաքսիմոս եպիսկոպոսը ձեռնադրեց քահանայ :

Սովորութիւն էր որ եպիսկոպոսը քարոզելու չէլաժ՝ քահանայ մը կ'ելլէր առաջ կը խօսէր ժողովրդեան : Մաքսիմոս եպիսկոպոսը իրեն քարոզիչ ընտրեց Աիւրեղը՝ ճարտասան լեզուին ու սքանչելի վարդապետութեանը համար , որ խիստ հարկաւոր էր Արուսաղէմայ մէջ . որովհետեւ ամմէն տարի բազմութիւն զանազան ազգաց կը ժողովուէին հոն , որոնց մէջը շատ գիտուն մարդիկ ալ կը գտնուէին : Ինչպէս նաև բազմութիւն երեխայից՝ այսինքն նոր դարձողներն ալ հոն կը գտնուէին , դրսի երկիր դարձողներն ալ շատը Արուսաղէմ կու գային Յորդանան գետը մկրտուելու համար : Ասոնք պէտք էր կըթել , սորվեցընել , պատրաստել . ասանկ բանի մէկ հատիկ յարմար մարդ էր սուրբ Աիւրեղ : Յարմար եղաւ նաև ժողովուրդը զսպելու զգուշացընելու հերետիկոսներու դէմ , որ ան ատենը խիստ շատցեր էին կերպ կերպ հերետիկոսութիւններ հանելով . ան պատճառաւ ուղղափառաց մէջն ալ շատ հակառակութիւններ կ'ըլլային տեղ տեղ :

Մաքսիմոս Արուսաղէմայ եպիսկոպոսը երբոր մեռաւ , մէջերնին վէճ ելաւ . բայց ժողովրդեան բազմութիւնը Աիւրեղն ուզելուն համար՝ անիկայ գրին Արուսաղէմայ եպիսկոպոս , որ աւելի ջանք ըրաւ ան ատենը հերետիկոսութիւնները ջնջել . ան

Զանքով շատ մոլորեալ քրիստոնէաներ ուղ-
ղափառութեան ճամբան բերաւ : Ըստուած
ալ իրեն նոր ժողովուրդ մը շատցուց եր-
կնային հրաշքով ասանկ . մայիսի եօթը ,
երրորդ ժամու ատեն մէկ հրաշալի լուսեղէն
խաչ մը երեցաւ երկինքը Վողգոթայ լե-
ռան վրայ , որ կ'երկրննար ինչուան ձիթե-
նեայ լեռը . բոլորտիքն ալ պատկաձե ճա-
ռագայթ ունէր ծիրանի գօտիի պէս : Ըս-
տեսիլքն որ երկան ատեն քշեց՝ ամմէն քրիս-
տոնեայ ժողովուրդը տեսնելով վազեցին սբ
Սիոնի եկեղեցին մտան Վճ օրհնելու . իսկ
անհաւատները տեսնելով շատը դարձան
քրիստոնեայ եղան : Սուրբ Աիւրեղ ասոնք
ամմէնն ալ առաւ օրերով կրթեց սորվեցուց .
տեսիլքին պատմութիւնն ալ Աոստանդ կայ-
սեր գրեց : Ըս է որ Արեման խաչ անունով
կը տօնէնք :

Աիւրղին անուներ որովհետեւ օրէ օր խիստ
մեծնալու հետ էր , Վկակիոս՝ որ պաղես-
տինեան Աեսարիոյ եպիսկոպոսն էր , խիստ
նախանձիլ սկսաւ անոր դէմ . վրան անուն
հանելով թէ պարտաւոր է աթոռին՝ ձգեց
անիկայ աթոռէն , քաղքէ քաղաք հալա-
ծեց , ինքը տիրել սկսաւ ան աթոռին :

Աիւրղի երբոր հարկ եղաւ Արուսաղէ-
մէն դուրս ելլել՝ մեծ ժողովքին բողոքելով
Ընտիոք եկաւ . բայց հոն քաղքին եպիս-
կոպոսը վախճանած գտնելով՝ անկից ելաւ
Տարսն գնաց , որուն եպիսկոպոսը Սիղուա-
նոս սիրով ընդունեց , թող տուաւ որ քա-

ըողութիւն ընէ : Ընկից Սելէկիայի ժողովը գնաց հետը մէկտեղ, ուր 150 եպիսկոպոս ժողովուած էին յամին 359. ասոնք Վիւրղին դատը քննելով ընդունեցան զինքը, արժանի վճռեցին Երուսաղէմայ աթոռը նստելու, Ըկակիոսը իրեններով մերժեցին :

Բայց Ըկակիոս սիրելի ըլլալով Աոստանդ կայսեր՝ որ արիօսեան էր, Պօլիս գնաց Վիւրղի վրայ շատ ամբաստանութիւն ըրաւ. մէկն ալ աս էր որ՝ երբոր Երուսաղէմ սով եղաւ, Վիւրեղ աղքատաց հասնելու համար նաև ժամուն բաները ծախեց. որոնց մէջն էր նաև ան ոսկեթել շուրջառն որ մեծն Աոստանդիանոս՝ Աոստանդ կայսեր հայրը՝ Երուսաղէմայ ժամուն էր տուեր աս մտքով որ՝ միայն մկրտութիւն ընելու ատենը հագնուի. Վիւրղէն մէկ միմոս (չէնկի) մը ծախու էր առեր ան շուրջառը, իրեն խաղերը խաղալու ատենը կը հագնէր :

Ըկակիոս ասանկ ամբաստանութիւններ ըրաւ Վիւրղի վրայ. բայց ինքը Ըստուծմէ պատժուելով մեռաւ : Աոստանդ կայսրը քանի արիօսեան եպիսկոպոսներ կային որ Ըկակիոսի դին կը բռնէին՝ ժողովել տուաւ. ասոնց ժողովը Վիւրեղը ձգեց, կայսրն ալ անոր համար քշել հրամայեց : Եկաւ ատեն որ Յուլիանոս կայսր նստաւ. ասիկայ առջի բերանը զինքը սիրցընելու համար՝ ամմէն քուած եպիսկոպոսները ետ կանչել հրամ-

մեց . ան ատենը Վիւրեղ ալ եկաւ Արուսազէմայ աթոռը նստաւ :

Յուլիանոս երբոր երկրորդ անգամ արևելք եկաւ Պարսից դէմ երթալու համար , Պաղեստինու երկիրը հասնելու ատենը Նրեաները գիտնալով որ քրիստոնէից դէմ է , խնդրեցին որ զիրենք պաշտպանէ քրիստոնէից ձեռքէն , հրաման տայ իրենց սինովա շինելու : Յուլիանոս որ ամէն կերպով կ'ուզէր քրիստոնէութիւն ջնջել , Նրեաներուն ամմէն կերպ ազատութիւն տալէն ետե՛ հրաման տուաւ յայտնի զո՛հ մատուցանել , ինչպէս որ դրեր էր Սուլսէս : Նրեաները ըսին որ՝ ինչուան մեր փլած տաճարը չի շինուի , մենք զո՛հ չենք կրնար ընել : Ընոր ալ հրաման տուաւ անօրէնը , շինուելու ստակն ալ թագաւորական գանձէն վճարելու խօսք տուաւ : Ըս հրամանը Նրեաներուն եղաւ տօն ցնծութեան , ամմէն դիացէն հոն թափեցան ժողովեցան աշխատելու , գետինը փորելու . իրենց կնկտիքն ալ ինչ զարդ որ ունէին , հանեցին տուին որ տաճարնին զարդարեն , և որպէս զի ամուր շէնք ըլլայ՝ հին փլած տաճարին մնացած քարերն ալ փորեցին հիմանց հանեցին . որուն վրայ սուրբ Վիւրեղ արդէն մարգարէացեր ըսեր էր , թէ սուրբ աւետարանին խօսքն է , տաճարին մնացած քարերն ալ պիտոր չի մնան : Ըս ըսելով կը մխիթարէր , աղօթք ընելու կը յորդորէր քրիստոնէաներն որ տաճարին նօրէն չի

նուելուն համար խիստ կը ցաւէին : Հրեաները ամմէն բան պատրաստած՝ լման որ կը սպասէին հետեւեալ օրը տաճարին հիմը ձգելու, անանկ գետնաշարժ ու փոթ որիկ մը եղաւ որ շրջակայ տները ամմէնն ալ փլան. իրենց բանուորներն ալ որ մէջն էին՝ մեռան հանած հողերնին իրենց փորած փոսերուն մէջը նորէն լեցուեցան. ինչ քար ու փայտ որ պատրաստեր էին՝ հեռու տեղուանք ցիրուցան եղան : Բայց հրեաները աս բանս պատահմունք կարծելով՝ նորէն ձեռք զարկին փորելու. ան ատենն ալ գետնին տակէն կրակ ելաւ, շատ հրեայ կորսնցուց. փախչող հրեաները եկան քրիստոնէից ժամը, բայց բացուած դռները ինքիրեննին գուցուեցան հրէից դէմ : Բնոնք կարծելով որ ժամն եղող քրիստոնեաներն են գոցող, ուժով կը հրէին որ բանան. բայց ժամուն ճակատէն կրակ ելաւ որը երեց, որը խանձեց փախուց : Արբոր եկան փլած տները բանալու որ մեռնողները հանեն, կրակ մըն ալ յանկարծ հոն ելաւ գործիքնին երեց. փախչողներուն ետեւէն կը վազէր երելու լափելու :

Բայ ամմէն բանն ըլլալէն ետեւ ալ չէին արթըննար հրեաներն որ խաչին զօրութիւնն է զիրենք պատժողը : Բայց Բստուած իրենց աչուրնին խօթելու արթընցընելու համար հետեւեալ գիշերը խաչանման լոյս մը երևցուց երկինքը աստղերով զարդարած Գողգոթա լեռնէն ինչուան

ձիթենեաց լեռը, ինչպէս որ տարիով առաջ երեցեր էր : Օ արմանալի բան մըն ալ ան եղաւ որ շատ հրեաներուն հագուստին վրայ ալ խաչեր երեցան ասդիս անդին բանուած . կը թօթուէին , կը շփէին , կը լուանային որ ան խաչերը հանեն աներեւոյթ ընեն , բայց ճար չեղաւ : Աս բանիս վրայ քրիստոնէաները խիստ ուրախացան փառաւորեցան , մանաւանդ որ նոյն խաչերը քրիստոնէից շատին վրայ ալ նաև եկեղեցնայ սպասուց վրայ ալ երեցան : Հրեաներէն ու հեթանոսներէն շատ մարդ դարձան քրիստոնէայ եղան . որոնք ամմէնն ալ սուրբ Վիւրեղ կ'ընդունէր , կը սորվեցընէր , ետքը կը մկրտէր : Ասկ հրեայ մնացածները ամմէնն ալ ամբնջցած վախի մէջ ընկած թողին տաճարին շէնքը :

Այլաւ ատեն որ Աղէս կայսր նստաւ . ասիկայ արիօսեան ըլլալով՝ քանի ուղղափառ եպիսկոպոս որ դարձեր էին քշուած տեղերէն , նորէն քշել հրամայեց . ան պատճառով սուրբ Վիւրեղ ալ նորէն քշուեցաւ . անանկով Պաղէստինու կամ Քարաչամու երկիրը առանց եպիսկոպոսի մնալով՝ լեցուեցան հոն զանազան հերետիկոսներ : Վիւրեղ տասը տարի մը քշուած կենալէն ետև՝ Պրատիանոսի ու մեծին (Թ)էոդոսի ատենը ինչպէս որ ուրիշ քշուողները , ասանկ ալ Վիւրեղ դարձաւ եկաւ Արուսաղէմայ աթոռ . սկսաւ շտկել բարեկարգութիւն մտցընել . բայց շատ բան քաշեց հակառակորդներէն :

Յամին 381 Պօլսի ընդհանուր ժողովը
գնաց . հոն նորէն հաստատուեցաւ իր ա-
թուր . անկէց ետե խաղաղութեամբ նստե-
լով քանի մը տարի , լի արդեամբք առ Մ.ս.
տուած փոխեցաւ իբր յամի 386 կամ 389 :
Իրեն գրուածներուն մէջը երևելի եղաւ
Առջումն ընծայութեան ըսուած գիւրքը :

Ս Ո Ւ Ր Բ Պ Ա Ն Դ Ա Լ Է Ո Ն

Ե Ի Ե Ր Մ Ո Ղ Է Ս

Նիկոմիդեայ քաղքէն էր Մաքսիմիա-
նոս կայսեր օրը . հայրը կռապաշտ էր սինկ-
ղիտիկոս՝ այսինքն դրան մարդ . մայրը քրիս-
տոնէ . բայց իր տղայութեան ատենը մայրը
վախճանելով՝ չի կրցաւ սորվիլ քրիստո-
նէութիւնը , մանաւանդ որ իր հայրը կռա-
պաշտներուն դպրատունը դրեր էր զինքը
սորվելու , ետքն ալ Աւփրոսինոս բժշկա-
պետին քովը դրաւ բժշկութիւն սորվելու ,
որ կռապաշտ էր ու թագաւորի բժիշկ : ()
մը տեսնելով թագաւորը Պանդալէոն տը-
ղան աղուոր և շնորհալի վարմունքով , խիստ
հաւնեցաւ . հասկըցաւ ալ որուն տղան ըլ-
լալը , յանձնեց բժշկապետին որ աղէկ սոր-
վեցրնէ :

Տղան վարպետին երթալու գալու ատե-
նը ամմէն օր կ'անցնէր մէկ տան մը առ-

ջլէն՝ ուր Արմուէս քահանան կը բնակէր :
Այս քահանան երկու բիւր մարտիրոսներուն
կոտորուելուն ատենը փախած ըլլալով՝ հոն
գաղտուկ երկու ընկերով պահուրտած կը
նստէր առանձին . կը տեսնէր ամմէն օր աս
Պանդալէոն տղան պարկեշտ ու շնորհալի .
խմացաւ հոգւով սրբով որ աս տղան ինչ մեծ
մարդ պիտոր ըլլար Աստուծոյ առջին : ()
մը ներս կանչելով սիրով խօրաթեց հետը .
թէ որ դուն , որդեակ , քրիստոնեայ ըլլաս ,
ըսաւ , Վրիստոսի անունովը ամմէն հիւ
ւանդները կը բժշկես : Այս ըսելով հասկը
ցուց իրեն քրիստոնէութիւնը :

Պանդալէոն տղան աղէկ երկրի պէս ընդ
ունեց աս աւետարանական սերմունքը՝ որ
լսեց Արմուէայ բերնէն . ամմէն օր իրեն
քովը կու գար խրատ կը լսէր , ետքը տուն
կ'երթար . օր մըն ալ ճամբան երթալնինի ,
տղայ մը տեսաւ որ օձը զարնելով մեռու
ցեր էր , օձն ալ քովը կեցեր էր : Հիմա է
ատենն , ըսաւ , տէր (Յիսուս Վրիստոս ,
թէ որ կ'ուզես իս ընդունել , աս տղան քու
անունովդ ողջընցուր : Այս ըսածին պէս՝ մե
ռած տղան յարութի առաւ , օձն ալ սատ
կեցաւ : Այս տեսածին պէս՝ վաղեց եկաւ
Արմուէայ քովը , հասկըցուց իրեն ինչպէս
գործքով տեսաւ իրեն ըսածներն ու (Յիսու
սին անուան զօրութիւնը՝ շուտ մը մկրտուիլ
ուզեց : Արմուէայ քովը եօթն օր կեցաւ ,
ամմէն բան սորվեցաւ :

Ատքը ուզեց հայրն ալ դարձնել . հե-

ուռանց խօսքեր կը պտըտցընէր, ինչո՞ւ կուռ-
քերը չէն շարժիր, կ'ըսէր, նստողները միշտ
նստած են, կեցողները միշտ կեցած են, կը
հարցընէր, միտքը տարակոյս կը ձգէր. ան-
չափ ըրաւ որ՝ հօրը միտքը կասկած ձգեց,
կուռքերուն զո՛հ ընելը վերջացուց: Մայց
երբոր օր մըն ալ տեսաւ որ՝ ան կոյրն որ
բժիշկները չէին կրնար ողջընցընել, իր տը-
ղան Պանդալէօնը վրան մէկ խաչ մը հանե-
լով և: Յիսուսին անունը տալով մէկէն լու-
սաւորեց, ան ատենը շուտ մը հաւատաց.
Երմոյեայ ձեռքովը քրիստոնէութիւնը սոր-
վելով մկրտուեցաւ, իրեն կուռքերը կտարը-
տեց: Մայց տես Մատուծոյ շնորհքն որ՝
ճշմարիտ հաւատքը ընդունելէն ետե քիչ
մը անցաւ մեռաւ:

Հայրը մեռնելէն ետե Պանդալէօն իր
ամմէն ծառաներն ազատեց, հօրն ապրան-
քը աղքատաց բաժնեց. ինքն սկսաւ բա-
րեգործութեց ետեէ իյնալու. հիւանդնե-
րու, աղքատներու, բանտը եղողներու,
տանջանք քաշողներու քովերնին պտըտե-
լով՝ սիրտ կու տար կը մխիթարէր, Յիսու-
սին անունովը կ'ողջընցընէր: Ինչափ որ՝
նախանձ ընկաւ բժիշկներուն մէջ. գնացին
մատնեցին թագաւորին. թէ որ Պանդա-
լէօնը չիկորսնցընես, ըսին, ամմէնն ալ քրիս-
տոնէ կ'ընէ: Պատմեցին իրեն ինչպէս բան-
տը կ'երթայ, տանջուող քրիստոնէաները
կը յորդորէ որ ամուր կենան իրենց քրիս-
տոնէութեանը վրայ. ան կոյրն ալ ցցուցին

որ Քրիստոսի անունովը լուսաւորեր էր :
 Թագաւորն աղէկ հասկընալու համար
 կոյրը իր առջև կանչեց, զուրցընել տուաւ .
 երբոր իրաւը հասկըցաւ որ քրիստոնեայ
 եղեր է, մէկէն գլխատել տուաւ . ետքը
 Պանդալէոնը կանչեց յանդիմանեց : Պան-
 դալէոն պատասխան տուաւ . Թէ որ կ'ու-
 զեօ աս բանիս իրաւը հասկընալ, հրամայէ
 որ անդամալոյծ մը բերեն առջևդ . քուկին
 քուրմերդ թող վրան գան, կուռքերուն ա-
 նունը տալով կանչեն, ես ալ Քրիստոսի ա-
 նունը կանչեմ, նայինք որին անունովը կը
 բժշկուի, ան ատենը կ'իմանաս իրաւ հա-
 ւատքը : Ընանկ ընել տուաւ Թագաւորը .
 երբոր քուրմերը շատ կանչուըռտելով չի
 կրցան ըռնտցընել անդամալոյծը, Պանդա-
 լէոն մէկ անգամ Քրիստոսի անունը տա-
 լով ոտքի վրայ հանեց :

Ըստ հրաշքը յայտնի տեսնելով կռապաշտ-
 ները՝ շատը հաւատքի եկան . ան ատենը
 քուրմերը ամմէնը մէկէն Թագաւորին ոտ-
 քը վազեցին, շուտ մը կորսնցընել կ'աղա-
 ղակէին Պանդալէոնը : Թագաւորն առաջ
 շատ յորդորեց Պանդալէոնն որ ձգէ քրիս-
 տոնէութիւնը . տեսաւ որ չի դառնար, հրամ-
 մեց կապել ու երկըթով բերել, կողերն
 ալ երել : Պանդալէոն ան տանջանքին մէ-
 ջը Քրիստոս կը կանչէր օգնութիւն . որ
 Երմոյեայ կերպարանքովը երևցաւ իրեն,
 քաջալերելով կրակը մարեց, կապանքները
 արձրկեց :

Թագաւորն ասոնք կախարդութիւն սե-
պելով՝ երկրթէ տապակ տաքցընել տուաւ,
կապար հալեցընել, զինքն ալ մէջը ձգել:
Սուրբը աղօթքի կեցաւ. ան ատենը հրեշ-
տակ երեցաւ, ձեռքէն բռնելով մէկտեղ
կրակին մէջը մտաւ, մտնելուն պէս՝ շուտ մը
կրակը մարեցաւ, տապակը պաղեցաւ: Մաք-
սիմիանոս Թագաւորը կատղելէն հրամմեց
վիզը մեծ քար մը կապել, ծովը ձգել. ան
ատենն ալ Վրիստոս երեցաւ Արմուլեայ
կերպարանքովը՝ սաստեց ծովուն. Պանդա-
լէոն անանկ զօրութիւն առաւ որ ջրին վը-
րայէն ցամաքն ելաւ:

Ասոնք կը տեսնէր Թագաւորը, որովհե-
տե ծովին քովը կեցեր էր. բայց կախար-
դութի է ըսելով գազաններուն առջև ձգել
հրամմեց: Հոն նորէն տեսաւ Պանդալէոն
Վրիստոս նոյնպէս Արմուլեայ քահանային
կերպարանքովը, որուն զօրութիւն Պանդա-
լէոնի ոտքը կը լզէին գազանները: Այ տես-
նելով ժողովուրդը մէկ բերան կը կանչէին,
մեծ է քրիստոնէից Աստուածը, արձրկէ,
Թող տուր աս արդարը: Այ լսելով Թագա-
ւորը՝ խղճալուն տեղը կատղելով՝ անոնցմէ
հազար հոգիի չափ կոտրել տուաւ, մարմին-
նին գազաններուն առջև ձգեց: Տեսաւ որ
գազանները անոնց ալ չէն մօտիկնար ամե-
նեին, անոնք ալ ջարդել տուաւ:

Չիգաղբեցաւ Թագաւորին կատաղու-
թիւր, նորէն կը մտածէր չարչարել սուրբը.
մէկ անիւ մը (Թէքէրլէկ) շինել տուաւ մե-

քենաւոր, որուն վրայ կապելով՝ դէպ'ի վար
գլորել տուաւ սուրբը : Քայց հոն ալ տե-
սաւ հրաշքը . կապերը քակուեցան, անիւր
ջարդուբուրդ եղաւ, կռապաշտներուն վրայ
քալելով 500 հոգիի չափ անոնցմէ սպան-
նեց : Թագաւորը ասոնք կը տեսնէր կը զար-
մանար, բայց իր մոլորութենէն չէր դառ-
նար . իր առջին կանչելով Պանդալէոնը՝ ո՞վ
սորվեցուց քեզի աս բաները՝ կը հարցընէր :
Ըն ալ յայտնի ըսաւ որ Արմուէս քահա-
նան սորվեցուց, յուսալով որ զինքն ալ կա-
րելի է դարձընէ :

Թագաւորը խրկեց Պանդալէոնն որ կան-
չէ իր առջին բերէ : Արմուէս ան գիշերը
Քրիստոսէ լած ըլլալով իր նահատակուի-
լը, ուրախութեամբ Պանդալէոնին հետն
եկաւ Թագաւորին առջէն ելաւ . ետքը Թա-
գաւորն անոր երկու ընկերն ալ բերել տը-
ւաւ . բայց ինքը դառնալուն տեղը՝ զանոնք
կը յորդորէր որ Պանդալէոնին միտքը փո-
խէն : Ընոնք ան ատենը յորդորելուն տե-
ղը՝ աղօթքի կեցան . ասոնց աղօթքովը բան
մը տեսաւ Թագաւորն որ Պանդալէոնէն
չէր տեսած : Քրիստոս աղօթք ընողնե-
րուն երեցաւ, երևնալով շարժ ելաւ . ան
շարժէն կուռքերը գետինն ընկան, փշուր
փշուր եղան . մէկը ներս վազելով զուրցեց
Թագաւորին :

Շուտ մը իրեքն ալ տանջել հրամանեց
Թագաւորը, ետքը գլխատել տուաւ . ինքն
սկսաւ նորէն յորդորել Պանդալէոնը . տես,

ըսաւ , ան իրեքը դարձան կուռքերուն զո-
հեցին , դուն ալ անանկ ըրէ : Պանդալէոն
որ գիտէր ինչ ըրաւ թագաւորը անոնց վր ,
երևան հանեց , նահատակուիլնին զուրցեց :
Թագաւորն ան ատենը յուսահատելով ,
սրդողէլէն հրամմեց առաջ ծեծել , ետքը
զլխատել : Վլխատելու ատենը երբոր դա-
հիճը թուրը հանեց որ զարնէ , թուրը ձեռ-
քին մէջ մոմի պէս կակրղցաւ , ծալուեցաւ .
աս տեսածնին պէս դահիճները՝ ամմէնն
ալ սրբոյն ոտքն ընկան , հաւատքի եկան :
Սուրբը աղօթքի կեցաւ . տէր Մատուած ,
փափագս կատարէ , ըսաւ . աս մարդիկնե-
րուն ալ թողութիւն շնորհէ , արքայութե
մասնակից ըրէ : Չայն եկաւ երկնքէն որ՝
քու փափագդ կատարեցի , երկնքին դռնե-
րը բացուած են քեզի , քու անունդ ալ
Պանտէլէյմոն ըսուի , որ ամենողորմ՝ ըսել
է . դուն որ ամմէնուն ողորմութիւն ըրիր ,
հիմա ողորմութիւն գտնես , ապաւէն ըլլաս
իրենց նեղութե ատենը . քու նշխարքներդ
ալ ամմէն ցաւագարները բժշկեն :

Մեկէց ետքը սուրբը կանչեց դահիճ-
ներն՝ ըսաւ որ թագաւորին հրամանը կա-
տարեն . անոնք կը քաշուէին , բայց սուրբը
զուրցեց , թէ որ չընէք , մասն չէք ունենար
ինձի հետ : Մնոնք ալ առաջ եկան ամմէն
մարմինը համբուրեցին , ետքը գլուխը կըտ-
րեցին յամին իբր 303 . բայց արեան տեղ
կաթ վազեց , մարմինը ձեան պէս ճերմակ-
ցաւ , ինչ ծառին ալ որ կասեր էին՝ պրտ-

ղով լեցուեցաւ . տեսնողներէն շատը դարձան քրիստոնեայ եղան : (Թ)ազաւորը լաճին պէս՝ ծառը կտրել հրամայեց , մարմինն ալ երել . բայց քրիստոնեաները գաղտուկ ոսկորներն առին (Թաղեցին , կաթնախառն արիւնն ալ ժողվեցին պահեցին :

ՍՈՒՐԲ ՈՆՈՓՐԻՍՍ ՃԳՆԱՒՈՐ

Եգիպտոսէն ըլլալով պղտիկուց կրօնաւոր եղաւ վանքի մը մէջ՝ որ Սիտի կ'ըսուէր , Լըրիմոպօլիս քաղքին մօտիկ , (Թ)եբայիգու մէջ . հոն սորվեցաւ ամմէն կրօնաւորական կարգը : Լըբօր չափահաս մարդ եղաւ՝ կը լսէր վանքին մէջի եղողներէն՝ որ հարիւր հօգիի մը չափ կային , (Թ է ճգնաւորներ կան որոնք անապատի մէջ միս մինակ առանձին կեցած կը ճգնին , անոնց վարքը մեզնէ շատ վեր է :

(Մ)ոփրիոսի գէմ կ'երևնար աս բանը . ինչպէս կրնայ ըլլալ , կ'ըսէր , վանքի մէջ նստողներէն վեր ըլլալ , ուր շատ խոնարհութի , շատ համբերութի , ու կամքը կտրել պէտք է՝ եղբարներու հետ մէկտեղ վարուելու համար : (Մ)ոնք ալ ըսին . ասոր համար վեր է ճգնաւորներուն վարքն որ սաստիկ է անոնց պատերազմը սատանաներուն ձեռքէն . անապատի մէջ կենալով՝ մէկէ մը մխիթարութիւն մը չունին՝ ոչ մարմնաւոր ոչ հոգեւոր , ինչպէս որ մենք հոս

վանքի մէջ կ'ունենանք իրարմէ . այլ միայն Մատուծմէ կը սպասեն գտնել իրենց մխիթարութիւնը . երանի անանկ մարդուն թէ որ գիտնայ ինչպէս պէտք է համբերել :

Անտիրիոսին սիրտը խիստ վառուեցաւ աս խօսքերէն , իրեն ալ բաղձանք կու գար անանկ կեանք վարելու : Գիշեր ատեն աս փափագով ճամբայ ելաւ , դէպ 'ի անապատն սկսաւ երթալ , քիչ մը հաց , քիչ մը ջուր հետն առնելով չորս օրուան համար : Մայց խորունկ անապատը մտնելնինի՝ յանկարծ լոյս մը տեսաւ իր առջին , վախէն ետ դառնալ մտածեց . ետքը Մատուծոյ ասպաւինելով ուժ առաւ , սկսաւ առաջ երթալ . ան ատենն իրեն պահապան հրեշտակը երեցաւ , առաջնորդ եղաւ ան խորունկ անապատին մէջ : Մանկ երթալով մէկ քարայրի մը առջեն հասաւ . դուռը զարկաւ , մէյմըն ալ տեսաւ որ ներսէն մէկ ալեոր մարդ մը ելաւ շնորհալի երեսով , բարե տալով ըսաւ . դուն ես իմ եղբարս Անտիրիոս , ներս եկէ , Մատուծ քեզի օգնական ըլլայ , որ աս սուրբ կոչումը քեզ կոչեց :

Մ'ը ծերը հոն քանի մը օր սորվեցընելով Անտիրիոսի աս ճգնաւորական վարքը , ետքը առաւ աւելի խորունկ անապատը տարաւ : Մանկ չորս օր չորս գիշեր ներս քալելով մէկ պղտի խուց մը գտան՝ քոյն ալ արմաւենի (խուրմայի) ծառ . աս է , ըսաւ , ահա ան տեղն որ Մ'ծ քեզի պատրաստեր է : Հոն երտուն օր մէկտեղ կեցաւ՝ պէտք

եղածը սորվեցընելով, ետքը ելաւ իր տեղն
եկաւ . տարին անգամ մը միայն քովը կու
գար աս ծերը ինչուան որ վախճանեցաւ ,
որ սուրբ Մնութրիոս թաղեց զինքը :

Մնութրիոս անկէց ետքը ալ աւելի շատցուց
իրեն ճգնութիւնները , այնչափնեղութիւն
քաշեց տաքէն , խորշակէն , ցրտէն , անօթի
ծարաւ մնալէն , որ շատ հեղ մեռնելու դու
ուր հասաւ . ինչուան որ բարերարն Մս
տուած տեսնելով իրեն համբերութիւնն
ու ջանքը՝ հրամայեց հրեշտակին ամմէն օր
իր հացն ու ջուրը տանել , քովի եղած ար
մաւենին ալ ամիսը կուզ մը բերելով , ան
արմաւն ու հոն բուսած խոտերը իրեն հե
րիք կ'ըլլային : Մնանկով վաթսուն տարի
հոն ապրելով խիստ ճգնութեամբ և սա
տանային փորձութիւն դիմանալով արիու
թիւ՝ հրեշտակային վարք մը ունեցաւ :

Մմէն շաբաթ սուրբ հաղորդութիւնը
կ'առնէր հրեշտակի սպասաւորութեամբ ,
ան առնելովը բոլորովին կը փոխուէր , հո
գևոր մարդ մը կ'ըլլար , աստուածային սի
րով կը հալէր , շատ հեղ իրմէ դուրս կը
յափշտակուէր , իբր երկնաւոր դրախտին
մէջ զինքը կը տեսնէր սրբոց հետ մէկտեղ .
սիրտը անսպասմելի ուրախութեամբ կը լե
ցուէր , չէր յիշէր որ արդեօք աս աշխրբիս
մէջն էր . անոր համար երբոր ինքնիրեն կու
գար , ալ աւելի ճգնութիւնները կը շատցը
նէր , յիշելով թէ ինչ մեծ փառք է եղեր
մարդուս՝ Մստուծոյ ծառայելը , Մստուծոյ

Համար քաշելը . ինչ մեծ վարձք կայ եղեր քաշողներուն աշխատողներուն :

Ոստիրիոս երբոր ասանկ ճգնութե հետ էր՝ Պափնոտիոս որ սուրբ կրօնաւորներէն մէկն էր Աբիպտոսի մէջ՝ մէկ փափագ մը կ'իմանար սրտին մէջը խորունկ անապատները ներսէ ներս քալելու տեսնելու թէ արդեօք հոն ալ կը գտնուին ճգնաւորներ իրմէ աւելի հեռու տեղեր քաշուած : Եւ փափագն ըստուած էր ձգեր սրտին մէջը , որպէս զի իր ծառան Ոստիրիոսը թաղել տայ իրեն , ինչպէս որ պիտի պատմենք :

Պափնոտիոս աս մտքով ճամբայ ելլելով տասներեօթը օրի չափ ներս քալեց անհնարին աշխատութեամբ . ասանկ երթալով ան տաք տեղուանքը՝ հասաւ մէկ լեռան մը մօտիկ , ուր հեռուանց տեսաւ աս սուրբ Ոստիրիոսը , բայց մէկ ահուելի կերպարանքով մը որ վախցաւ . մարդ մը մազերը երկրնցած , վերէնիվար մազերով գոցած մարմինը , մէջքը տերեւներ փաթթած , երեսը պաքէն ճգնութէն բոլորովին փոխուած . ասիկայ իրեն մէկ վայրենի մարդակերպ անասուն մը երեւնալով , և ոչ իրաւ մարդ , վախէն լեռան վրայ վազեց որ փախչի : Ոստիրիոս հասկընալով իր քովը կանչեց . մի վախնար , ըսաւ , ես ալ քեզի պէս մարդ եմ , Յիսուսին անուանը համար աս անապատն եկեր նստեր եմ : Պափնոտիոս աս լսելով լեռնէն վար ինջաւ , ոտքն ընկաւ . բայց սուրբը թող չի տուաւ . դուն ալ ըս-

տուճոյ ծառան էս , ըսաւ , սուրբերուն սիրելի . ինչպէս է աշխարհք , ինչպէս են Ազգիպտոսի կրօնաւորները՝ հարցուց : Պափնոտիոս քիչ մը պատմեւէն էտե՛ւ՝ ուզեց որ իրեն վարքը պատմէ :

Պնոփրիոս պատմեւէն էտե՛ւ իր խուցը տարաւ . բոլոր օրն ասանկ հոգեւոր խօսակցութեամբ անցընեւէն էտե՛ւ՝ արեւը մարը մտածատենը հաց մը տեսան քիչ մըն ալ ջուր . ո՛վ Պափնոտիէ , ելիր կեր , ըսաւ սուրբն Պնոփրիոս , շատ յոգնած կը տեսնեմ զքեզ , քիչ մը զօրանաս : Պափնոտիոս չուզելով առաջ ինքն ուտել , երկուքը մէկտեղ կերան . գիշերնիլուս աղօթքի հետ եղան , բայց առտու եղածին պէս՝ Պափնոտիոս տեսաւ որ սուրբ Պնոփրիոսի երեսը արեւի պէս լուսաւորուեր է , ինքն ալ փոխուած հրեշտակ մը դարձեր է , ուրիշ մէկ վախ մըն ալ ան ատենն առաւ զինքը :

Պնոփրիոս մի վախնար , ըսաւ . այսօր էս լինցընեմ պիտոր իմ կեանքս , մարդասէրն Աստուած քեզ հոս խրկեց որ իմ մարմինս թաղես . երբոր Ազգիպտոս երթաս՝ ինչ որ տեսար պատմէ եղբարներուն որ իմանան յիշեն . էս ալ խօսք կու տամ , ո՛վ որ իմ յիշատակս ընէ աղօթք ընելով , կամ նուէր մը տալով , կամ ուրիշներուն բարիք ընելով՝ անիկայ առաջի Աստուծոյ պիտոր յիշեմ . Աստուած ալ իր երկնային բարութեանցը արժանի ընէ , որովհետեւ հաճոյ եղաւ Աստուծոյ իմ խնդիրքս կատարելու :

Պափնոտիոս կ'աղաչէր սրբոյն որ ինքը
հոն իրեն տեղը կենայ, Ազիսպտոս չի դառ-
նայ : Բայց սուրբ Ստոփրիոս ըսաւ իրեն .
դուն ասոր համար չեկար, այլ քեզ Մս-
տուած հոս բերաւ որ՝ անապատի մէջ եղող
Մստուծոյ ծառաները տեսնես, եղբարնե-
րուն սրատմես որ շահին, զՄստուած փա-
ռաւորեն : Ըն ատենը Պափնոտիոս ոտքն
ինկաւ օրհնէնք ուզեց . ինչպէս որ աս աշ-
խարհիս մէջ իրար տեսանք, ըսաւ, խնդրէ
Մստուծմէ որ անանկ ալ անդիի աշխարհքը
իրար տեսնելու արժանի ընէ : Ստոփրիոս
օրհնէնք տալով ելաւ աղօթքի կեցաւ . ար-
ցունք թափելով հառաչելով երկինքը կը
նայէր . քիչ մը անցաւ՝ գետինը ծռեցաւ
ծունկ չոքեց . քու ձեռքդ կը յանձնեմ, տէր
Մստուած իմ, հոգիս ըսելով՝ աւանդեց հո-
գին : Իսկոյն հրեշտակներու ձայներ լսեց
Պափնոտիոս, որ անոր հոգւոյն առջևէն եր-
թալով կ'երգէին անուշ ձայներով երկնային
երգ : Պափնոտիոս վրան զմայլելով լալով
թաղել սկսաւ . իր հագուստը երկու ձգքե-
լով՝ մէկ կտորը ձգեց սրբոյն մարմնոյն վը-
րայ . փորուած քար մը գտաւ, անոր մէջը
գրաւ երանելոյն մարմինը . վրան ալ քա-
րեր ժողվելով ծածկեց ան սուրբ նշխարքը :
Առ լար կը հառաչէր, չէր ուզեր անկէց զա-
տուիլ . խնդրել սկսաւ Մստուծմէ որ հոն
կենայ, բայց մէյմըն ալ տեսաւ որ ան խու-
ցը փլաւ, արմաւենի ծառը գետինն ինկաւ .
անկէց իմացաւ որ Մստուած չուզեր իրեն

հոն կենալը , սկսաւ լալ օրքոյն բաժնուե-
լուն վրայ :

Ըն ատենը հրեշտակ Լ'ստուծոյ իրեն ե-
րենալով սիրտ տուաւ , առաջնորդեց ին-
չուան որ հասաւ Եգիպտոս : Ճամբան ու-
րիշ շատ ձգնաւորներու հանդիպեցաւ , որ
թէպէտ չէր ճանչնար , բայց անոնք իրեն
անունը տալով բարե կու տային . երանի
քեզի , եղբայր Պափնոտիէ , կ'ըսէին՝ որ
արժանի եղար հայրն Ոստիւրիոս տեսնելու ,
իրեն օրհնէնքն առնելու : Ըս ամմէն բանն
որ տեսաւ , Եգիպտոս հասածին պէս՝ պատ-
մեց ամէն եղբարներուն . անոնք ալ ասոր
հոգևոր ճանապարհորդու թէն հոգևոր նոր
բաներ իմանալով՝ Լ'ստուած կ'օրհնէին , կը
զարմանային թէ ինչ գաղտուկ ծառաներ
ունի եղեր Լ'ստուած անբնակ անապատնե-
րու մէջ :

Մ Ա Ր Ի Ա Ն Է Կ Ո Յ Ս

որ և

Մ Ա Ր Գ Ա Ր Ի Տ Ա

Աս կոյսը Ընտիրք քաղքէն էր՝ որ Պի-
սիդիա գաւառին մէջն է . մէկ հատիկ աղ-
ջիկ հարուստ մարդու մը զաւակ , որ կռա-
պաշտներուն քուրմն էր . իր պղտիկու թեան
ատենը մեռաւ իրեն մայրը . անոր համար
հայրը կնկան մը քով դրաւ , որ Լ'ստուծոյ
յաջողելովը քրիստոնէայ էր : Երբոր քիչ

մը մեծցաւ Սարիանէն՝ իրեն հայրը մէկ զբօսանքի տեղ մը շինեց քաղքէն դուրս, հոն դրաւ կուռքերը պաշտելու համար, բայց աղջիկը ճշմարիտ հաւատքը սորված ըլլալով ան քրիստոնեայ կնկնէն, երբոր բանավարութիւնը բացուեցաւ՝ կուռքերուն ստութիւնը սկսաւ երևան հանել:

() ր մը արևուն լոյսը ծագելու ատենը՝ ներսէն ալ ինքը լուսաւորուելով՝ Ստուծմէ, ըսաւ իրեն քովի եղած աղջիկներուն ու աղախիններուն. Մճ անիկայ է՝ որ աս արևս ստեղծեր է. ես ալ ան Ստուածը կը պաշտեմ, անոր խունկ կը մատուցանեմ. աս արևն ու հօրս կուռքերը չեմ պաշտեր: Այրբոր հայրը իմացաւ, այնչափ ատելի եղաւ որ՝ զինքը դուրս հանեց իր զաւկութենէն, երեսի վրայ ձգեց: Մն ատենը Սարիանէն ալ աւելի մօտիկցաւ քրիստոնեայ կնկանն իր դայեկին. սկսաւ ոչխար արծել քաղքէն դուրս, զինքն ալ անպաշտութե մէջ կըրթել, բայց մկրտութիւն չի կրցաւ առնել:

Այրբոր տասնըջորս տարուան եղաւ, կը լսէր ինչ տանջանք որ կը քաշէին մարտիրոսները, իրեն ալ փափագ կու գար, լալով հառաչելով կ'ըսէր. երբ կ'ըլլայ որ իսաւ տանջէին Քրիստոսի համար, որպէս զի հոգիս խալըսի յաւիտենական տանջանքէն. աս բանիս համար շատ հեղ աղօթք կ'ընէր կ'աղաչէր Ստուծոյ:

Մն օրերը Ղեկոս, ըստ ոմանց Ղիովղետիանոս, կայսրը մէկ իշխան մը խրկեց

հոն , ապապրելով ինչ քրիստոնեայ գտնե-
լու որ ըլլայ՝ տանջէ , անոնց արիւնովը քաղ-
քին պատերը ներկէ : Ան իշխանը երբոր
քաղքին քովն հասաւ , տեսաւ Սարիանէ
կոյսն որ ուրիշ աղջիկներու հետ ոչխար ար-
ծելով կը դառնար իր դայեկին տունը կ'եր-
թար , խիստ հաւնեցաւ իրեն աղուորու-
թեանը համար , հրամեց ծառաներուն որ
իրեն բերեն : Արբոր կոյսը բռներ կը տա-
նէին , Քրիստոսի անունը կանչելով շատ
աղաչելով շնորհք խնդրեց իրմէ , որ սրբու-
թիւնը պահէ , հաւատքը յոյսը զօրացնէ ,
արիութիւն իմաստութիւն տայ որ աներկիւղ
պատասխանէ ան բռնաւորին : Ծառաները
եկան պատմեցին իշխանին , որ ան աղջիկը
Քրիստոսի անունը կու տայ , քրիստոնեայ
է . ասիկայ արժանի չէ պահելու , ըսին :
Իշխանը խիստ տրտմելով հարցուց ինչ ա-
նուն , ինչ ազգէ ըլլալը , ինչ Աճ պաշտելը :
Սարիանէն իր անունը զուրցելէն ետե՛ հա-
մարձակ զուրցեց ճշմարիտ Աստուած պաշ-
տելը Հայր և Արդի և Հոգի սուրբ , և
Քրիստոս Աստուած և մարդ : Իշխանը
հրամեց պահել անիկայ , ինքը մտաւ քաղա-
քը կռապաշտութիւնը շատցընելու . քանի
քրիստոնեայ որ ձեռք կը ձգէր , ամմէնն ալ
սպաննել կու տար , անոնց արիւնը քաղքին
պատին քսել կու տար :

Քանի մը որ անցնելէն ետե՛ Սարիա-
նէն ալ առջևը բերել տուաւ . տեսնելով ի-
րեն աղուորութիւնը՝ խղճա խնայէ , ըսաւ ,

քու մատղաշ տարիքիդ, քու աղուորու թէգ. եկէ կուռքերը պաշտէ որ չի մեռնիս, ամմէնուն ալ ցանկալի ըլլաս: Աոյսը պատասխանեց. դուն չես կրնար իմ կամքս փոխել, և ոչ յոյսս կտրել որ Աստուծոյ վրայ դրեր եմ. իրեն հոգւոյն սրբոյ զօրութիւնը իմ վրաս խրկեց, իս զօրացուց. ես ալ իմ անձս իրեն պատարագ պիտոր մատուցանեմ: Աշխանն ըսաւ. թէ որ ինձի չես լսեր, շատ տանջանքով քեզ պիտի կորսնցընեմ. իսկ թէ որ լսես՝ իմ կուռքերս պաշտես, քեզ թագուհի կ'ընեմ: Աոյսը պատասխանեց. ես չեմ վախնար քու տանջանքէդ, թէ որ մարմինս չի տանջուի՝ հոգիս չի մտներ երկնաւոր թագաւորին քովը. ես պատրաստ եմ ինչուանի մահ անոր կամքը կատարելու. անիկայ իրեն սուրբ խաչին նշանովը իմ մարմինս կը պահէ:

Այ խօսքերուս վրայ խիստ սրգողելով իշխանը՝ հրամմեց երկրթէ գաւազանով ծեծել. անչափ զարկին որ՝ մարմինը պատրուտելով արիւնը գետինը կը վազէր, բայց ինքը աղօթքի հետ կ'ըլլար ըսելով. Մի քեզ որեր յոսացայ, մի՛ աճալեցից. քեզի համար յանձն կ'առնեմ աս հարուածները, որ ինձի ողորմիս: Իշխանին քով նստողներէն մէկ մենձ մը ըսաւ. ո՛վ Արիանէ, կուռքերը պաշտէ, մեծ պարգև կ'առնես, քու ծաղիկ տարիքդ նայէ, դուն քեզի ողորմէ. ինչու ասանկ կը տանջուիս, աղուորութիւնդ կը կորսնցընես: Այսանկ կ'ըսէին հոն եղող ամ

մէն ժողովուրդը , խրատ կու տային իշխանին կամքը կատարելու :

Բայց երանելի կոյսը ամմէնն ալ չեխեց . ով անմիտ խորհրդակիցք սատանայի , ըսաւ , ինչպէս չէք իմանար որ ճշմարիտ Մատուածն է իմ օգնականս . ով որ անոր կ'ապաւինի՝ կը փրկէ . անոր համար չեմ պաշտեր ձեր խուլ ու համր կուռքերը : Դուն ալ , ով անորէն դատաւոր , ըսաւ , զիտցիր որ ամենեւին չեմ լսեր քու հօրդ սատանայի . դուն իմ մարմինս կը տանջես , այլ Վրիստոս իմ հօգիս ձեռքէդ կը փրկէ , դուն կ'երթաս դժոխքին անդունդը :

Իշխանը հրամայեց կախել , մարմինը երկրթներով քերել . սրբուհին երկինքը նայելով աղօթք կ'ընէր , խնդրելով Վրիստոսէ որ իր կուսութիւնը պահէ , զինքը զօրացունէ : Բահիճները անանկ կը տանջէին որ՝ տեսնողներուն սիրտը չէր դիմանար . իշխանն ալ իր երեսը գոցեց որ չի տեսնէ տուած տանջանքնին . լէ ինձի , աղջիկ , կ'ըսէր , կուռքերուն երկրպագութիւն տուր որ խալըսիս , չէ՛նէ՛ քեզ սրով պիտի մաշեմ : Չէր գիտէր որ տանջանքին դիմացընել տուողը հօգին սուրբ էր . թէ որ առաջ սիրտը բաւ դիմացաւ , տանջանք քաշէլէն ետե՛լ լեցուած ըլլալով հոգւով սրբով , իր սիրտը կապուած միացած էր բոլորովին Մատուծոյ հետ , չէր կրնար անոր սէրը թողնել : Մնոր համար պատասխանեց երանելին . քանի տանջանք որ տաս ինձի , անչափ աւելի ա-

ղէկու թիւն ըրած կ'ըլլաս . թէ որ մարմինս
հոգաս , ըսաւ , չապրիր հոգիս . թէ որ չի
տանջուիմ , չեմ պսակուիր :

Եւ խանր կեցած տեղը կտոր կտոր կ'ըլլար
չէր գիտեր ինչ ընէ որ՝ աս աղջըկան միտքը
դարձնէ . հրամմեց բանտը տանել : Իսկ
կոյսը ան մութ բանտին մէջ զինքը խաչա-
կրնքելով աղօթքի նստաւ . երկիւղածու թք
կ'աղաչէր Մտուծոյ որ զինքը չի թողնէ .
սատանան որովհետեւ իրեն հետ հակառակ
ընկեր է՝ յայտնի ցըրնէ , անիկայ խօսեցը-
նելով և ինքը լսելով դատաստան կտրէ մէ-
ջերնին : Մտ խօսելնինի մէյմըն ալ յան-
կարծ տեղը շարժեցաւ , վիշապ մը դուրս
ելաւ՝ վիզը օձեր փաթթուած , աչքէն բեր-
նէն կրակ ու կայծակ կը ցաթ կէր . ասանկ
ահագին տեսիլքով դարչելի հոտով վազեց
սրբուհւոյն վրայ . ան ատենը վախ մը ին-
կաւ վրան , բայց պզտիկ փայտէ խաչ մը
ձեռքը ունենալով աղօթքի նստաւ : Արբոր
աս վիշապը որ էր կերպարանեալ սադայելը՝
բերանը բացաւ կուլ տալ կ'ուզէր , կուսին
ձեռքի եղած խաչափայտը վիշապին փորը
պատռեց , կոյսը մնաց անվնաս :

Մծ որ տկարները ձեռք կ'առնէ՝ իր զօ-
րութիւն անոնցմով կը ցըրնէ , մէկ լոյս մը
հանել տուաւ ան ատենը բանտին մէջ , հո-
գին սուրբ աղաւնիի մը սէս երևնալով ը-
սաւ . սիրտ առ , զօրացիր , ով Մարիանէ ,
ոտքովդ վիշապին վզին վրայ կոխէ , խօսե-
ցընել տուր , որ իր ըրած չարութիւնները

ամմէնն ալ խոստովանի : Մարիանէ աս խօսքէս սիրտ առաւ , կոխեց վիշապին վզին վրայ , երգուընցուց յանուն զօրութե սուրբ հոգւոյն որ ըսէ՝ ո՛վ է ինքը , ինչ գործքեր է ըրեր : Մնիկայ պատասխանեց . ես եմ սատանաներուն զլուխը որ կ'ըսուիմ քելիար , սագայէլ : Մը ըսելով սկսաւ ետքը մէկիկ մէկիկ խոստովանիլ իրեն ըրած չարութիւնները , թէ ինչպէս Մճ զինքը գերազանց ստեղծուած մը ստեղծեր էր հրեշտակ լուսոյ , իսկ ինքը շնորհակալ ըլլալուն տեղը ուզեր էր իրեն քաշել ՄՅ փառքը . աս բանիս համար Մստուած ալ զինքը իրեն հետևողներն ալ գժոխոց անգունգը խրկեր էր : Մստուած , ըսաւ , հողեղէն մարդ մըն ալ ստեղծեց խօսք տուաւ իրեն ու իր զակրներուն որ երկինքը մեր ընկած տեղը նըստեցրնէ . աս բանս խիստ ծանր եկաւ մեզի՝ քան թէ մեր փառքը կորսնցրնելը . նախանձեղէս չի դիմացայ , մարդուն ալ սորվեցուցի Մստուծոյ դէմ ելլել , Մստուծոյ պատուէրքը ոտքի տակ առնել , անանկով մահ խօթեցի աշխարհքը , եղբար եղբօր հետ կռիւ ընել , զիրար սպաննել , Մստուծոյ դէմ մեղքեր ընել զրդեցի , ինչուան որ Մստուծոյ բարկութիւնը շարժելով ամմէնը մէկէն ջրհեղեղով կորսընցուց , ետքը Մստուծոյ տեղ կուռքերը պաշտել սորվեցուցի :

Մոր նման ինչ չարութիւն որ ընել տրւեր էր էր մարդուս առաջուցմէ ինչուան ետքը , ամմէնն ալ մէկիկ մէկիկ խոստովանե-

ցաւ , աղաչեց որ ոտքը վզին վրայէն վերցը-
նէ , [Թող տայ զինքը • Իս անհնարին տագ-
նապի մէջ ձգեցիր , ըսաւ , իս [Թող տուր ,
ես ալ խօսք կու տամ՝ ուր որ քու անունդ
յիշուի՝ հոն չի մօտիկնամ : Իրեն մեծ տագ-
նապը հարհըրիլը ան էր որ՝ մէկ տկար աղ-
ջըկան ուժովը կապեր էր հոն զինքը հոգին
սուրբ , ու իրեն ամմէն խայտառակու [Թիւ-
նը անոր բանալ ու զուրցել կը բռնադա-
տէր : Սարխանէ նորէն վրան խաչակնքա-
ծին պէս՝ գետինը պատուեցաւ , ան չար վի-
շապ սաղայէլը անդունդը կորաւ :

Ս աղուան օրը բանտէն հանեցին սրբու-
հին իշխանին առջևը բերին • կը զարմանար
իշխանը անանկ ողջ առողջ մնալուն վրայ •
բայց ինքը միտքը փոխելուն տեղը՝ նորէն
կը յորդորէր սրբուհւոյն միտքը փոխելու ,
իրենց կուռքերը պաշտելու • տեսնելով որ
միտքը չի փոխեր , հրամմեց նորէն քերել
մարմինն ու կրակին վրայ խորվել : Սրբու-
հին աղօթքի կեցաւ , դահիճներուն ձեռքը
կապուեցան • տէս , ըսաւ , ո՛վ դատաւոր , ես
խուլերուն չեմ երկրպագեր , այլ միայն ճրչ-
մարտին Մատուծոյ , որ հոգիս ալ մարմինս
ալ մարգրտի մը պէս անարատ պահեց իրեն
սքանչելի փառքովը :

Մն ատենը իշխանը հրամմեց ջուր տաք-
ցընել , ձեռքը ոտքը կապած եփուն ջրին
մէջը ձգել • երանելի կոյսը աղաղակեց Մա-
տուծոյ , որ ան ջուրը ըլլայ կրկին մկրտու-
թիւն • աս ըսածին պէս մեծ շարժ մը ե-

ղաւ , աղաւնի մը երեցաւ , ձիթենիի պը-
տուղ իր քերնին մէջ , ձայն մը եկաւ որ
կ'ըսէր . Ե՛կէ՛ Ս'արիանէ , հանգչէ արտայու-
նէ . երանի՛ չեղի որ հոսոս-^մի-նդ ամբողջ պա-
հեցեր : Իրեն կապերը ինքիրեննին քակուե-
ցան , կոյսը ողջ առողջ ելաւ ջրին մէջէն :

Ըստ հրաշքը տեսածին պէս ժողովուրդը՝
մէջերնէն իրեք հազար հոգիի չափ դար-
ձան ամմէնն ալ քրիստոնեայ եղան : Իշ-
խանը կը կատողէր աս բաներս տեսնելով .
ալ չի դիմացաւ , հրամմեց Ս'արիանէն քաղ-
քէն դուրս հանել , անոր ալ ու ամմէն դար-
ձողներուն գլուխն ալ կտրել : Արքուհի
Ս'արիանէն ան ատենը խնդրեց . տէր Ըս-
տուած , ըսաւ , ով որ իմ անունս յիշելու
ըլլայ , ան մարդը ինչ նեղութեան մէջ որ
ըլլայ , իրեն օգնութիւն դտնէ : Ըսանկով
աս երանելիս եղաւ արագահաս օգնական
ամմէնուն , ով որ իրեն բարեխօսութեանը
կ'ապաւինի :

ՍՈՒՐԲ ԻԳՆԱՏԻՈՍ

Աստուածագրեաց հայրապետ

Աս սուրբս ան տղան է որ Յիսուս իր
գիրկն առաւ , վրան ձեռք դնելով օրհնեց .
ինչպէս որ կը պատմէ Ս'ատթէոս աւետա-
րանիչը Ժր . գլ . և Ս'արկ . Թ . գլ : Ըսան-
կով Արուսաղէմայ գիւերը ծնած ըլլալով
ետքէն աշակերտ եղաւ՝ մանաւանդ Պետ-

րոսի ու Յոհաննու . Լ'նտիոքայ աթուր
նստաւ Եւոզիոսի ետեէն՝ որ յաջորդ էր
Պետրոսի . մօտիկ տեղուանք շատ կռասպաշտ
դարձուց քրիստոնեայ ըրաւ քարոզութի
ու հրաշքներով . իսկ հեռու տեղ եղող-
ները գիր գրելով կը դարձնէր , ամմէ-
նուն սիրտ կու տար հալածանքի համբե-
րել . իր վրայ միայն կը ցաւէր որ արժանի
չէր եղած մարտիրոսութեան : Վիտցիք որ ,
կ'ըսէր , նահատակուիլն է որ զմեզ աւելի
կը մօտիկցընէ , ընտանի կ'ընէ Լ'ստուծոյ .
Յիսուսին համար մեռնիլն է որ Յիսուսին
սէրը կը ցցընէ : Իրեն ասչափ մեծ փափա-
զը Լ'ստուած ալ կատարեց :

Տրայիանոս կայսրը երբոր Լ'նտիոք եկաւ ,
իր առջևը կանչեց Լ'գնատիոսը իբրև գլուխ
քրիստոնէից . սկսաւ յանդիմանել . դուն
ինչո՞ւ համար , ըսաւ , աս քաղաքն ու ամ-
մէն Լ'սորուց աշխարհքը կռասպաշտութենէ
դարձուցիր քրիստոնեայ ըրիր : Լ'գնատիոս
յայտնի քարոզեց քրիստոնէութի ճշմար-
տութիւնն ու կուռքերուն ստութիւնը . ա-
սոր վրայ երկան հակաճառութիւն ըրաւ :
Տրայիանոս սրդողելով հրամմեց կռնակը
ծեծել , երկրթներով կողերը քերել , աղով
շփել : Ատքը նորէն առջևը բերել տալով
կը յորդորէր կուռքերուն զօհելու . տեսաւ
որ միտքը չի փոխեր , հրամմեց ձեռքին մէ-
ջը կրակ լեցընել , կողերն ալ երել . գետի-
նը կրակ փռել , կրակին վրայ զինքը պառ-
կեցընել : Բայց սուրբ Լ'գնատիոս անանկ

վառեալ էր Վրիստոսի սիրովն որ՝ աս ամ-
մէն տանջանքը բան մը չէր երևնար իր առ-
ջև : Տրայիանոս հրամեց երկըթներով կո-
ղերը քերել, աղ ու քացախ լեցընել վրան .
ետքը իրէք գիշեր անօթի ծարաւ բանտին
ներսի գին շղթան զարնել տուաւ, ետքն ալ
վճիռ հանեց հռոմ տանել ու հոն գազան-
ներուն առջևը ձգել :

Խիստ ուրախացաւ սուրբը երբոր աս
լսեց . ուրախանալէն շղթաները իր վրայ
ձգել կու տար . դահիճները առին անանկ
կապած Սելեկիա ինջեցուցին, անկից նա-
ւով Օմիոնիա բերին . հոն սրբոյն Պօլի-
կարպոսի հետ տեսնուելով խիստ ուրախա-
ցաւ, որովհետև մէկտեղ աշակերտակից
էին : Ետ եպիսկոպոսներ, քահանաներ,
սարկաւազներ եկան հոն զինքը տեսնելու,
որպէս զի հոգևոր շնորհք առնեն իրմէ . ին-
քը ամմէն եկողներուն առջին կը ցցընէր
ինչ փափագ ինչ սէր ունէր որ մը առաջ
նահատակուելու . Վրիստոսի սէրն որ իր
սրտին մէջն ունէր՝ գիտես թէ դրսէն ալ
կը ցցընէր կրակի պէս վառուելով : Ամմէ-
նուն ալ կ'աղաչէր՝ մանաւանդ Պօլիկարպո-
սի՝ աղօթք ընել որ իրեն փափագը շուտով
կատարուի . որ մը առաջ գազաններուն ձեռ-
քով աշխրբէս ելլէ, Վրիստոսի տեսքին
արժանի ըլլայ :

Կասկած մը առաւ որ՝ հռոմ եղած քրիս-
տոնեաները ետևէ են զինքը խալըսցընե-
լու . երկան բարակ թուղթ մը գրեց ասոնց

Օ միւռնիայէն աղաչելով, չըլլայ որ աս
մարտիրոսութեան շնորհքիս խափանող ըլ-
լան : Այս շատ աղօթքով իմ փափագիս հա-
սայ, ըսաւ, միայն թէ դուք հիմա արդե-
լող չըլլաք . սեղանը պատրաստ է, վրան
զոհ ընելու է . ասկէց աւելի շնորհք ինծի
չէք կրնար ընել թէ որ իս թողնէք վրան
ելլեմ զոհ ըլլամ, որպէս զի դուք ալ քովս
բողորուելով սիրով երգ ընէք : Յիսուսի, թէ
Մտուած արժանի ըրաւ՝ Մտուոց եպիսկո-
պոսը արևելքէն արևմուտք բերել տուաւ
որ մարտիրոս ըլլայ : Մնանկով մինակ անու-
նով քրիստոնեայ չըլլամ, այլ և գործքով .
ան ատենը գործքով կրնամ քրիստոնեայ
ըլլալ, երբոր Վրիստոսի համար աշխրբէս
վերնամ . քրիստոնեայն ան ատենն է մեծ՝
երբոր աշխրբիս ատելի ըլլայ : Այս մէկ ցո-
րեն մըն եմ . ցորենը ինչուան որ Ջաղացքի
տակէն չանցնի՝ հաց չի կրնար ըլլալ . անանկ
է նէ թողէք իս որ գազաններուն ակռանե-
րովը իբր Ջաղացքով մանրուիմ, որպէս զի
հաց սուրբ ըլլամ Մտուծոյ : Մէք գազան-
ներուն, իս անանկ կուլ տան որ՝ մարմինէս
կտոր մը չի թողնեն դուրսը, մեռելս կարօտ
չըլլայ թաղելու, այլ իրենք ըլլան իմ գե-
րեզմանս : Մն ատենը կ'ըլլամ ճշմարիտ
Վրիստոսի աշակերտ, երբոր աս աշխարհքս
ալ չի տեսնէ իմ մարմինս . ամմէն տանջանք
թող վրաս գան, միայն թէ զՎրիստոս ին-
ծի ունենամ : Սողութիւն ըրէք, եղբարք,
ինծի համար մի ուզէք որ ապրիմ, այլ մեռ-

նիւմ. մեռնելովս լոյսը պիտոր տեսնեմ. հիւ
մա մարդ եմ, ան ատենը հրեշտակ պիտոր
ըլլամ :

Ըսոր նման խօսքեր որ շատ կան ան թըղ
թին մէջը՝ ու յայտնի կ'ընեն որ աս սուրբս
բոլորովին վառուած էր սիրովն Վրիստոսի.
մարդ մըն էր եղած՝ որ իբր թէ աչքովը կը
տեսնէր երկնային փառքը . խելքը միտքը
հոն երթալ էր օր մը առաջ : Ըս թուղթը
գրելէն ետև զինքը նաւ դրին, Օմիւռ.
նիայէն նաւով ելան, բայց ճամբան տեղ
տեղ ցամաքով՝ տեղ տեղ ալ ծովով երթա-
լով հռոմ հասուցին :

Վիտնալու բան է որ՝ հին ատենը կռա-
պաշտները հռոմ զանազան խաղեր կը խա-
ղային քանի մը օր ետևէ ետև . մէկ խաղն
ալ ան էր որ՝ մահապարտ մարդիկը անօթի
գազաններուն առջև կը ձգէին, որ ամմէնն
կ'արտորային ճամբան, որ ան խաղին հաս-
ցնեն : Արբոր զսուրբն Վգնատիոս խաղին
տեղը մտուցին, կանչեց ամմէնուն . Ո՛վ
հոռմայեցիք, դո՛ւք որ թողնուէր էք աս խաղս
պէսնելու, մի կարծէք որ շարագործութեան հա-
ճար էս ասանէ ճահո՞ւամբ պիտի մեռնիմ, հաստ
Ըստո՞ւած պաշտութեանս համար . էս մէկ ցորեն
ճէն էմ ճշմարտին Ըստո՞ւծոյ, Գալաններուն ակ-
ռաներովը ակերի պէս պէտք է իշխուիմ որ
հայ սորբ ըլլամ Ըստո՞ւծոյ :

Ըս ըսելնինի երկու առիւծ վրան թո-
ղին, որ ամբողջ մարմինը կերան յամին իբր

110 . Ինչպէս որ ինքը փափագելով կը ցանկար որ գաղաններու բերանը թաղուի . միայն քանի մը մեծ ոսկորներէն թողին : Ինչ ատենը ոմանք ալ տեսիլք տեսան որ՝ իր հոգին Մատուծոյ առջևն ելեր կեցեր էր , իբր ծանր աշխատանքէ եկած քրտինքը կը սրբէր :

Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ս Տ Ո Ւ Ա Մ Ա Բ Ա Ն

Նագիանգագի

Նագիանգ քաղաքը ծնաւ . մայրը քրիստոնեայ էր ու խիստ բարեպաշտ . հայրը՝ որ նոյնպէս Վրիգոր կ'ըսուէր՝ կռապաշտ էր , բայց ետքը իր ընկերոջը աղօթիւք դարձաւ քրիստոնեայ եղաւ . երկու տարիէն ետեւ Նագիանգու եպիսկոպոս եղաւ : Վրիստոնեայ ըլլալէն ետեւ ծնաւ աս Վրիգոր տղան մօրը աղօթքով , որ ուխտ էր ըրեր Մատուծոյ նուիրել . անոր համար գիտես թէ պզտիկուց սկսաւ Մատուծոյ շնորհքը վրան երևնալ :

Իր տղայու թէ ատենը գիշեր մը տեսաւ երազին մէջը երկու կուսանք , որ ըսին իրեն :
 Ա՛նչ էնչ մաքրութիւնն ու պարկէշտութիւնն , ընտանի ու սիրելի երկնասոր Ռաֆաւորին , Ռէ որ մշտնջան ըլլաւ , Ռաֆաւորին առջևը կը հանէնչ զէնչ : Վրիգոր աս երկու առաքինու թիւնս ալ գերազանց կերպով ունեցաւ . ինչ խորհուրդ ալ գար իրեն պարկէշտու թեան դէմ ,

աս տեսիլքը միտքը բերածին պէս՝ շուտ մը
կը փարատէր, ինքն ալ ամմէն դիացէն կը
ջանար զգուշանալու. ամմէն երկրաւոր
վայելչութիւնները ձգեր էր, փափուկ կե-
րակուրներէն՝ հաղուստէն՝ զբօսանքներէն
միշտ ետ կը քաշուէր :

Արիշ եղբար մըն ալ ունեցաւ Աեսա-
րիոս անունով, քոյր մըն ալ Վորգոնիա ա-
նուն. ասոնք ալ բարեպաշտ անձինք եղան.
անանկ մօրը ձեռք կըթուելով, որ իր զաւ-
կրները ամմէնն ալ բարեպաշտութեամբ
կը մեծցընէր, մանաւանդ Վրիգորը. որուն
շատ հեղ կը բանար Մատուածաշունչը, նա-
հապետաց վարքը կարդալ կու տար. կը
յորդորէր անոնց արդարութեան՝ անձպաշ-
տութեան նմանիլ. անկէց տղին սլափիկուց
սէր կու դար Մատուածաշունչը կարդալու,
խելք հասցընելու :

Արբոր մեծցաւ՝ իրեն սէր եկաւ արտա-
քին ուսմունք ալ սորվելու. անոր համար
քալեց ան քաղքըններն ուր որ ան ատենը
ուսմունք ծաղկեալ էին. աւելի Վթէնք ու-
զեց երթալու, բայց ճամբան սաստիկ ալե-
կոծութիւն քաշեց, մօտիկ ընկղմելու եղաւ
ուսկից մօրը աղօթքովը խալըսեցաւ, ինչ-
պէս որ մէկին յայտնուեր էր Վթէնքի մէջ,
հոն իրեն ընկեր ունեցաւ սուրբ Վարսե-
ղը. երկուքն ալ խիստ սէր կապեցին իրարու
հետ. իրենց սրամտութիւնը ուսումնասիրու-
թիւնը շատ առաջ գացին, ամմէնէն վեր ե-
լան, իրենց բարի վարքովն ալ աղէկ օրի-

նակ եղան ամմէնուն . անանկ որ՝ Աթենաս
ցիք չէին ուզէր թող տալ :

Բայց Վրիգոր ծովու ճամբան թողաւ ,
ցամաքէն փախաւ Վաղիանդ եկաւ . գալուն
պէս՝ կ'ուզէր անապատը առանձնանալ , բայց
ճնողքը չի թողին որ իրենց ծերութիւնը հո-
գայ : Սուրբ Վրիգոր անոնք ալ կը հոգար ,
կատարեալ կրօնաւորութիւն ալ կը պահէր .
որովհետեւ ուխտ էր ըրած ամմէն տեղ ա-
նանկ կենալ ինչպէս թէ անապատի մէջ
ըլլար , հոգւոյն բաները աւելի հոգալ քան
թէ մարմնոյն բաները , միշտ վերինը մտա-
ծել , պարապ խօսք մը չի խօսիլ , պարապ չի
կենալ , այլ միշտ Վճաշունչը կարդալ , ա-
նոր խօսքերը մտածել : Ասանկ վարք ունե-
նալովը բոլորովին Աստուծոյ հետ միացաւ .
չատ հեղ Վրիստոս կը տեսնէր , հետն ըն-
տանեբար կը խօրածէր :

Իր աշխատանքովը իրեն հայրը խալըսեց
արիօսեանց մտորութիւն . որոնք խաբէական
խօսքերով մտորցուցեր էին . հայրն ալ զին-
քը քահանայ ձեռնադրեց , որպէս զի օգնա-
կան ըլլայ իր ծերութեան ատենը : Արքոր
ճնողքը ծանր հիւանդութիւն քաշեցին , ա-
ղօթքով ողջընցուց , ետքը անապատը քա-
շուեցաւ սրբոյն Վարսդի հետ , որուն հետ
չատոնցուրնէ խօսք զրած էին հոն քաշուե-
լու . երկուքը մէկ սիրտ մէկ հոգի ըլլալով
կը ջանային առաքինութիւն ճամբան երթալ .
խիստ կրօնաւորական կեանք վարել , պա-
քով աղօթքով անցընել : Արկուքին խուցն

ալ որովհետև շատ հեռու չէին իրարմէ ,
շատ կը տեսնուէին մէկմէկու հետ , հա-
ւատքի վրայ , բարի վարուց վրայ խօրաթե-
լով . քանի որ ասանկ հոգևորի մէջ առաջ
կ'երթային , այնչափ ալ ատելի մը կ'ըլլար
իրենց արտաքին ուսմունքն որ Վճէնք սոր-
վեցան՝ հոգևորէն զուրկ ըլլալուն համար :
Մնապատին մէջը գրեց սուրբ Վրիգոր աս-
տուածային ճառեր , քարոզներ , խելացի
խօսքեր , գեղեցիկ տաղեր , որոնք սորվեցը-
նել կու տար տղոց . ասոնցմով ամօթ ըրաւ
Յուլիանոսը , որ միտքը դրեր էր թէ քրիս-
տոնէից մէջը չիկայ ամենեին իմաստու-
թեան գրուած :

Մսանկ վարք կը վարէր Վրիգոր անա-
պատի մէջ . միայն թէ իր ծերացեալ ծնո-
ղաց կամքը կատարելու համար երբեմն՝ Վա-
զիանդ քաղաքը կ'երթար , երբեմն անապա-
տը կը քաշուէր . ետքը երբոր Վաղէս կայ-
սեր ատենը արիօսեանք նորէն համարձա-
կութիւն առին , ան ատենը բոլորովին քա-
ղաքն ինջաւ , ինչպէս Րարսեղ ալ , Վրի-
գոր նիւսացին ալ : Մը իրեք սուրբը իրեք
ջահ եկեղեցւոյ ըլլալով , ժողովրդեան մէջ
կը մանէին , ուղղափառները լուսաւորելով
կը պահէին Վրիոսին մօլորութենէ :

Արբոր Րարսեղ եպիսկոպոս ձեռնադրե-
ցաւ Վեսարիոյ վրայ , աս Վրիգորն ալ ե-
պիսկոպոս ձեռնադրեց Սասիմայ քաղքին
վրայ . բայց հայրը ան ատենն անկար ըլլա-
լով՝ իրեն Վազիանդու աթոռը նստեցուց .

Երբոր հայրն ու մայրը վախճանեցան, Վրիգոր ելաւ Նաղիանգու աթոռէն. որովհետեւ ես, ըսաւ, միայն գործակից եղայ հօրս, կապուած չեմ, ուրիշ հովիւ մը ընտրեցէք ձեզի: Բայց տեսնելով որ հինգ տարի անցաւ նաղիանգացիք մէկը չի դրին, ակամայ յանձն առաւ, նորէն հօն դարձաւ:

Ուղղափառ եպիսկոպոսները խօսք դրին Պօլիս ժողով ընել. որովհետեւ հօն շատ զօրացեր էին արիստեանք և ուրիշ հերետիկոսներ, անոր համար Վրիգորն ալ կանչեցին. երբոր հօն հասաւ՝ Սաղէս արիստեան կայսրը մեռեր էր՝ մեծն Սէոզոս տեղը նստեր էր: Վրիգորին ինջած տունը Պօլսոյ մէջ եղաւ լման ուղղափառութիւնը տնկելու տուն. անոր համար ան տեղը Մնաստասիա կոչեցին, որ ըսել է յարութի. իբր թէ հօն յարութի առաւ ուղղափառութիւր: Հօն կը ժողվուէին ուղղափառները լսել իրեն քաղցրաբուղիս վարդապետուիր, որ կը սորվեցընէր միասնական սուրբ Արորորդութիւնը, բանին Մատուծոյ և Հոգւոյն սրբոյ Մծութիւնը, յստակ խօսքերով անանկ կը վարդապետէր որ ամօթով կը մնային ան ատենուան հերետիկոսները՝ որ խիստ շատցեր էին, ու կու գային իրեն հետ հակաճառելու. բայց Վրիգոր անանկ կը կապէր զանոնք իր խօսելովն որ չէին կրնար իրեն դէմ խօսք հասցընել, ետ կը դառնային: Ըն ատենն եղաւ որ զինքը աստուծոյ ծախն կոչեցին: Հերետիկոսները ալ ճար

չի գտնելով՝ կը սկըսէին ծաղը ընել, նախա-
տանաց անուներ տալ, զըսարտութիւն ը-
նել. բայց ամմէն ըրածնին պարապ ելաւ :
Վրիգոր անանկ մէկ շնորհք մը ունէր բնա-
կան և գերբնական՝ որ ամէնուն սիրտը իրեն
կը քաշէր . մէկ անգամ հետը խօսողը՝ մէյ-
մըն ալ չէր ուզէր իրմէ զատուիլ . անոր հա-
մար հեռուէն իրեն անունը լսողներ երևե-
լի մարդիկ՝ վազելով ասոր քովը կու գային .
ինչուան սուրբ հերոնիմոս մեծ վարդապե-
տը լատինացւոց՝ ասոր քովն եկաւ, փառք
սեպէց իրեն աշակերտ ըլլալ . և աս նշանա-
ւոր խօսքը զուրցեց . Վրիգոր աստուածաբա-
նին վարդապետութիւնը ուրիշ հոնացի ու Վա-
րիկն վարդապետներէն շատ վեր էր պէսնէմ :

Մասնկ մեծ մարդ ըլլալով՝ Պօլտոյ պատ-
րիարգ դրին զինքը, թէպէտ ինքը շատ գէմ
կեցաւ : Վնչ խռովութիւն որ կը հանէին
հերետիկոսները, սիրով հեզութիւն ամմէնն
ալ խաղաղցուց . ուղղափառներուն մէջէն
ալ քանի նախանձողներ որ ելան ու իրեն
վրայ խռովութիւն հանեցին, ամէնուն ալ
համբերեց : Մըջի խռովութիւն հանողն ե-
ղաւ Մաքսիմոս ըսուած մէյմը՝ որ շատ ա-
զէկութիւն տեսեր էր իրմէ . երբոր հի-
ւընտցած էր Վրիգոր, աս Մաքսիմոս զին-
քը Պօլտոյ պատրիարգ ձեռնադրել տուաւ :
Վրիգոր որ խաղաղութիւն կը սիրէր՝ ուզեց
հրաժարիլ, բայց բազմութիւն ժողովրդեան
թող չի տուաւ . մեծն Սէոզոս որ դրսէն
եկեր էր Պօլիս՝ ան ալ Վրիգորը նստեցուց

աթուր . իրեն հակառակորդները մէկի մը
ձեռքով սպաննել ուզեցին , Մտուած ան
մարդուն ձեռքովը բանը երևան հանել
տուաւ :

Տեսաւ սուրբ Վրիգոր որ հերետիկոս-
ները դեռ չէին վերջացած , յորդորեց (Սէռ-
դոս Թագաւորը ժողով ընել տալ , զինքն
ալ աթուէն հանել . ասոր վրայ Պօլսոյ ընդ-
հանուր ժողովն եղաւ 150 հայրապետնե-
րու . որոնք ճշմարիտ ուղղափառ հաւատքը
սահմանելէն ետե՛ եկան Վրիգոր անձաբա-
նը բռնադատեցին որ իրեն օգուտը չի նայե-
լով՝ հապա ուղղափառաց օգուտը՝ նորէն
նստի Պօլսոյ աթուր : Բայց սուրբ Վրի-
գոր յիշեցընելով անոնց իրեն ըրած երախ-
տիքն ու չարախօսներուն զրպարտութիւր ,
հրաման խնդրեց հրաժարելու : Բնանկով
ելաւ գնաց՝ Վաղիանդի մօտիկ Մրիազոն գե-
ղը . հոն նստելով ձգնութեան տուաւ զին-
քը , հօրն ապրանքն ալ աղքատաց բաժնեց :

Բն ատենը շատ գրքեր շարագրեց իրեն
վարքն ալ գրեց որ՝ իր չարախօսները ամօթ-
ընէ : Բայ սուրբս այնչափ խիստ էր իր վրայ
որ՝ անգամ մը իրեն երեցաւ թէ խիստ խօ-
րածեց մէկի մը հետ , զինքը պատժելու
համար քառսուն օր լուռ կեցաւ . երբոր
ծանր հիւանդութե՛ մէջ ինկաւ՝ ան ատենն
ալ օգտակար գրուածներ հանելէն ետ չէր
կենար , ինչուան որ վերջին թելը հասնե-
լով հողին աւանդեց յամին իբր 390 , ըն-
տանեքար խօսելով՝ Քրիստոսի հետ :

ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՅԻ

Եղբայրն էր սրբոյն Տարսղի, անոր ու Սահրինայ քրոջը դաստիարակութեամբ պզտիկուց աղէկ կրթութի ունեցաւ. մեծնալէն ետե կարգուեցաւ (Թ)էոսէվիայի հետ, որ երևելի կնիկ եղաւ իրեն առաքինութեցը համար, բարի օրինակ ամմէնուն. ինչուան զարդ եկեղեցւոյ կը կոչէն զինքը: Վրիգոր ետքը քահանայ ձեռնադրուեցաւ. իսկ իր ընկերը (Թ)էոսէվիան մեռնելէն ետե՝ Վրիգորը բռնադատելով եպիսկոպոս ձեռնադրեցին Մեոկեսարիայի վրայ, որ կ'ըսուի նաև՝ Միւսա: Տայց երբոր Սաղէս կայսր արիոսեան ըլլալով՝ քշել սկսաւ ուղղափառ եպիսկոպոսները, ան ատենը Վրիգորն ալ քշեց, պատճառն որ՝ համարձակ կը հակաճառէր արիոսեանց հետ, ամմէնուն առջին ամօթ կ'ընէր: Սաղէսի վերջի տարին քշուելէն դարձաւ Վրիգոր Մատիոքայ ժողովը քնաց. երբոր ժողովքէն կը դառնար՝ ուզեց տես երթալ Սահրինայ իրեն քրոջը, որ մարապետի պէս մէկ տուն մը քաշուած կեցեր էր:

()րուան մը ճամբայ մնացած՝ երազին մէջ տեսաւ ձեռքը նշխարքներ, ուսկից անանկ լոյս կը ցոլանար որ աչուրնին կ'առնէր. աս տեսիլքը իրեք հեղ տեսաւ մէկ գիշերուան մէջ՝ բայց մեկնութիւնը չիմացաւ:

Երբոր տունն եկաւ իր Մակրինա քոյրը տեսաւ ծանր պառկած, որ սրբոյն Րարսղի ետեւէն ինքն ալ նոյն տարուանը մէջ մեռաւ անանկ ջերմեռանդութեամբ Քրիստոսի տեսոյն փափագելով և խորունկ հոգևոր բաներու վրայ խորաթելով որ՝ Վրիգոր զարմանալով և իրեն հետը խօսելով՝ գրեց հոգւոյն վրայի գիրքը: Վոյրը մեռնելէն ետեւ հասկըցաւ Վրիգոր իրեն տեսած երազին խորհուրդը:

Երկէց ետքն եղաւ Պօլսոյ ընդհանուր ժողովը, ուր գնաց Վրիգոր՝ հետը տանելով իրեն շինած գիրքը Եւնումեան հերետիկոսաց դէմ, ժողովին մէջ կարգալու: Ախտանձող բանսարկու մարդիկ որ չէին պակսէր՝ Վրիգորին դէմ գրգռեցին Եւրագիոսը, որ սուրբ Րարսղէն ետեւ Աեսարիոյ եպիսկոպոս էր նստած. բայց ետքը իրաւը հասկընալով շինուեցաւ հետը:

Վրիգոր ամմէն տեղ կը պտըտէր իր ժողովուրդը հավուելու և եկեղեցնայ օգուտը հոգալու համար. Երուսաղէմ ալ գնաց ուխտի համար: Եմմէն եպիսկոպոսներ՝ ուր որ մէկ դժուար բան մը կ'ելլէր՝ զինքը հոն կը կանչէին, ինքն ալ հասնելով ճար մը կը գտնէր, ամմէն բան կը շտկէր՝ զօրաւոր ըլլալուն համար թէ՛ խելքով, թէ՛ մանաւանդ ճարտասանութեամբ: Երանկով մէկ լուսաւոր ճրագ մը եղաւ եկեղեցնայ. սրբութեամբ մեռաւ յամին իբր 396. շատ ազէկ գրքեր թողնելով:

ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՁԵԼԱԳՈՐԾ

Նկուկեսարիա քաղքէն էր՝ որուն գաւառը Պոնտոս կ'ըսուէր . հեթանոս ծնողաց որդի , այլ ազնուական , անչափ որ՝ ասոր պապերն էին որ Պոնտոս գաւառին իշխանը կ'ըլլային : Գրիգոր տղակուց մէկ կատարեալ մարդու մը վարք ունեցաւ . ամենեւին չունէր ան բնութիւնն որ սովորական է տղոց . խաղի հետ ըլլալ , ժուռ գալու ետեւէ իյնալ , հագուել կապուել , փափկութի սիրել , աս բաներէս մէկն ալ չունէր . հապա իրեն սիրելի բան առաքինութիւնն էր իմաստութիւն , ուսումնասիրութիւն . անանկ որ՝ պէտք է ըսել թէ՛ Ղստուած աս տղան պզտիկուց որոշեր էր իրեն քաշել , իրեն մեծ ծառայ ընել : Ղսանկ Ղստուծոյ լուսաւորելովն էր որ Գրիգոր արարածոց վրայ նայելով՝ ինքիրմէ ճանչնալ սկսաւ արարիչը , ինչուան որ թողաւ կուսպաշտութիւնը որուն մէջ ծնած էր , քրիստոնէութիւնը ընդունելով մկրտուեցաւ :

Այլքոր Ղզէքսանդրիա երթալով փիլիսոփայութիւն ու սուրբ գրոց տեղեկութիւն սորվելու հետ էր , հոն մէկտեղ սորվող երիտասարդները կը տեսնէին ասոր խելքն որ ամմէնէն վեր էր , իրեն սուրբ վարքն որ չափահաս ծերու մը պէս էր , իր խօսուածքը և վարմունքը կատարեալ , ամենեւին

անարատ, հեռու ցոփութիւնք և աշխարհասիրութիւնք, օտար իրենց աշխարհասէր վարմունքէն, ասոր վրայ շատ նախանձ կապեցին, մտմտացին ինչ ընեն որ անունը կոտրեն: Պունիկ կնկան մը ստակ կերուցին, որ բազմութեւն առջին եկաւ սյուալով ըսաւ. ո՛ր է ստակն որ՝ ինծի խօսք տուիր տալու, քանի մէկ կ'ուշացընես: Եւ լսելուն պէս ամմէն հոն եղողները, գայթակղելէն նայեցան որ կնիկն անկէց հեռացընեն. բայց Վրիգոր ամենեւին չի սրգողելով՝ գիտէր որ ո՛վ է ան կնիկը դրողը, ան մարդուն ստակ հանեց տուաւ որ կնկանը վճարէ: Սուրբը ասանկ խոնարհութիւն ցցուց, բայց արդարութիւն Վստուածային իրեն վրէժխնդրութիւնն ըրաւ. սրբոյն անմեղութիւն երևան հանեց, ան կնիկը քիչ մը անդին գացածին պէս՝ դիւահարեցաւ գետինն ընկաւ ամմէնուն առջև. երբոր դէր խղզէր պիտոր անիկայ զարհուրելի ձայն հանելով, սուրբը քոփն եկաւ, Վստուծոյ անունը տալով բժշկեց. ամմէն տեսնողներն իրաւը հասկընալով, զարմացան մնացին:

Եսկէց ետքը Վրիգոր գնաց Արոգինեսին քով, հինգ տարի անոր աշակերտելով՝ ինչ որ քրիստոնէական ուսմունք կան՝ աղէկ մը սորվեցաւ. երբոր իրեն աշխարհքը դարձաւ, ամմէնն ալ իրեն կ'առաջարկէին կարգուելու. բայց անիկայ մէկէն հրաժարեցաւ: Վմասիայի եպիսկոպոսը ուզեց զինքը քահանայ ձեռնադրել, ինչպէս որ Վճ

իրեն ապրսպրեր էր . բայց Վրիգոր անկէց
ալ հրաժարելով իրեք օրուան հեռու տեղ
փախաւ . ինչուան որ Մատուած իրեն ալ
հրամմեց , ան ատենը քահանայ եղաւ :
Բայց չէր համարձակէր իրեն պաշտօնը 'ի
գործ դնել և քարոզութիւն ընել . որովհե-
տե ան ատենը անանկ քրիստոնէաներ ելեր
էին որ պտոյտ խօսքերով վարդապետելով
պարզամիտները կը խաբէին : Մնոր համար
շատ ազաչանք կ'ընէր Մատուծոյ՝ որ իրեն
մէկ կանոն մը յայտնէ , հաւատքին շիտակ
խոստովանութիւնը սորվեցընէ , որ ինքն ալ
համարձակ ան բանը քարոզէ ամմէնուն :
Մբանիս համար երկան աղօթքու հսկում
ընելէն ետե՝ տեսաւ մէկ ծեր քահանայ մը
հրեշտակային կերպարանքով որ կ'ըսէր ի-
րեն . Մատուծոյ հրամանովն եկայ քեզի վար-
դապետելու և կանոն մը սորվեցընելու : Մց
ըսելով՝ մատովն ուրիշ տեսիլք մը կը ցցընէր :
Սէյմըն ալ ասդին նայելով տեսաւ մէկ ըս-
քանչելի թագուհի մը , անանկ լուսի մը
մէջ նստած որ մարդուն աչքը կ'առնէր , աս
ծերուն անունը տալով ըսաւ . ո՛վ Յոհան-
նէս աւետարանիչ , սորվեցուր ասոր ճշմար-
տութեան խորհուրդը՝ որ կը խնդրէ : Մն
ալ պատասխան տուաւ պատրաստ եմ , ու
մայր տեառն , ընել՝ ինչպէս որ դուն կը
հրամմես : Մն ատենը Յոհաննէս աւետա-
րանիչ բացաւ աստուածաբան բերանը , մէ-
կիկ մէկիկ զուրցեց իրեն ինչ խօսքով որ
քարոզելու է ամենասուրբ Արրորդութիւ-

նր : Ըս վարդապետութիւնն է՝ որ սուրբ
Վրիգոր իր ժամուն մէջ քարոզեց գրեց .
ան ձև վարդապետութիւնը պահուեցաւ իբ-
րև Ըստուծոյ վարդապետութիւն , չէ թէ
միայն՝ Նէոկեսարիոյ մէջ՝ այլ ամմէն տեղ՝
ամմէն ժողովքի մէջ որ սուրբ հարբ կը
ժողովէին , մանաւանդ Նիկիոյ սուրբ ժողով-
քին մէջ . իրեն գրուածն ալ պահուեցաւ
իբրև Ըստուծոյ գրուած մը . աս վարդա-
պետութիւնն է որ Վրիգոր աստուածա-
բանն ալ սուրբ Նարսէղ ալ քարոզեցին :

Ըսկէց ետքը եղաւ որ սուրբ Վրիգոր
սիրտ առաւ , քաղաքն եկաւ , միտքը դնե-
լով որ ժամ մը շինէ հոն . որովհետև ին-
չուան ան ատենը մինակ կռատուններ էին
չէ թէ միայն քաղքին՝ այլ ամմէն գաւա-
ռին մէջ : Ըրաջ ուզելով որ կռատունները
վերցընէ՝ քաղքէն դուրս կռատուն մը մտաւ
գիշեր ատեն որ խիստ երևելի էր . ինչ որ
քուրմերը կը հարցընէին՝ սատանաներն ալ
ան կուռքին բերնովը պատասխան կու տայ-
ին : Սուրբ Վրիգոր խաչին զօրութեամբը
սաստեց , սատանաները դուրս վարնտեց .
ինքը հոն գիշերնիլուս աղօթքի հետ եղաւ ,
լուսուն դէմ ելաւ գնաց : Արքոր քուրմը
եկաւ , ինչպէս որ սորված էր՝ հարցուց կուռ-
քին : Սատանաները դրսէն զուրցեցին .
Վրիգորն եկաւ մեզ դուրս հալածեց , ան-
կարելի է հիմա մեզի ներս մտնել քեզի
պատասխան տալ : Քուրմը կատղելով ե-
կաւ գտաւ Վրիգորը , դատաւորին կ'ուզէր

մատնելու : Վրիգոր հեղու թեամբ պատաս-
խան տուաւ . որպէս զի իմանաս ինչ զօրու-
թիւն ունի մեր ճշմարիտ Մատուածը , ինչ
պէս իրեն ձեռքն է՝ ուր որ կ'ուզէ՝ ան սա-
տանաները հոն կը կեցընէ որ դուք Մատու-
ծոյ տեղ կը պաշտէք , ես հիմա անոնք նո-
րէն տեղերնին դարձընեմ : Մ'ս ըսելով գիր-
մը գրեց հրամմելով սատանաներուն որ նո-
րէն կռատունը մտնեն . քուրմը առաւ աս
գիրը կռատան մէջ սեղանին վրայ դրաւ . և
իրաւ դրածին պէս՝ սատանաները նորէն
մտան , սկսան կուռքին բերնէն խօրաթել :
Մ'սոր վրայ խիստ զարմանալով քուրմը՝ նո-
րէն եկաւ Վրիգորին աղաչեց որ իրեն սոր-
վեցընէ ո՞վ է ան Մ'ճն որ սատանաներուն
վրայ ասանկ իշխանութիւն ունենայ : Սուր-
բը հասկըցընելէն ետե՛ք քուրմը ուրիշ հրաշք
մըն ալ ուզեց որ հաւատայ . ան ատենը
Վրիգոր լեռան վրայի քարը մէկ խօսքով
տեղէն հանեց , ուրիշ տեղ մը բերել տուաւ
ուր որ կ'ուզէր քուրմը : Մ'ս հրաշքը տեսա-
ծին պէս քուրմը՝ բոլոր սրտով հաւատաց .
ամէն բանը ձգելով առաւ սուրբը քաղաքը
տարաւ , ըրած հրաշքներն ալ ամմէնուն
պատմեց : Հոն ճշմարտութիւնը քարողե-
լով սուրբը՝ ամբողջ քաղաքը դարձուց քրիս-
տոնեայ ըրաւ . ան քուրմն ալ սարկաւագ
ձեռնադրեց . քաղաքոցոց ծառայութեամբը
եկեղեցի մը շինեց , որ ատեն անցնելէն ե-
տե՛ք երբոր շարժը ամմէն շէնքերը փլուց ,
աս եկեղեցին միայն մնաց որ չի փլաւ : Մնչ

խնդիրք որ ուզէր՝ աղօթքով Աստուծմէ կ'առնէր, ինչ աղէկութիւն ալ որ ձեռքէն կու գար՝ ամմէնուն կ'ընէր, ինչպէս որ յայտնի կը ցըցընեն աս դիպուածներս որ հոս պատմենք :

Արկու եղբայր ժառանգութիւն բաժնելու ատենը խիստ մեծ կռիւ ունեցան մէկ ծովի մը վրայ որ իրենց երկրին մէջն էր . ամմէն մէկը կ'ուզէր որ իրեն իյնայ ան ծովը . սբ Արիգոր մէջերնին մտաւ՝ շատ խրատեց, չի կրցաւ շտկել . անոնք իրեն խօսքին մտիկ չի դնելով զօրք ժողովեցին որ հետեւեալ օրը իրարու հետ պիտի զարնուէին : Արիգոր տեսնելով ասոնց պատրաստութիւնը՝ օր մը առաջ գնաց ծովին քով, գիշերնիլուս աղօթքի կեցաւ, ան ծովը անանկ ցամքեցուց որ՝ ետքէն վրան շէնքեր շինուեցան, արտեր պարտէզներ տնկուեցան, կռիւն ալ վերջացաւ գնաց :

Ահիկեսարիա գաւառին մէջէն գետ մը կ'անցնի Վայլ անունով, որ շատ փնաս կու տար ատեն ատեն դուրս պօռթալով, ինչ որ կ'ընէին՝ չէին կրնար ճար մը գտնել : Սուրբը իր գաւազանն ան գետին քովը տրնկելով աղօթքի կեցաւ . գաւազանը կանանչ նալ սկսաւ, գետին ջուրն ալ ոչ երբէք գաւազանէն անդին անցաւ :

Վոմանայի քաղքին ժողովուրդը եկան աղաչեցին որ գայ իրենց վրայ մէկ եպիսկոպոս մը ձեռնադրէ . երբոր գնաց՝ ընտրելու ատենը մէկը աս կ'ուզէր, մէկալը ան : Ա՞նք

ըսաւ անոնց . դրսի կերպարանքը , դրսի մէն-
ծու թիւը մի նայիք , ժողովուրդք , հապա ան
հոգին ընտրեցէք՝ որ Մատուծոյ հաճոյ է :
Մն ատենը մէջերնէն մէկը ելաւ ծաղր ը-
նելով մը ըսաւ . թէ որ ատանկ է՝ Մղէք-
սանդրոս դարբինը բերենք : Մը ըսելով հոն
մտուցին իր առջևը բերին մէկ դարբին մը
(չիլինկիբ), մրոտ երեսով , աղտոտ ծրտոտ
հագուստով : Վրիգոր չի մերժեց սնիկայ ,
այլ լուանալ տուաւ , լաթերը փոխեց , նոյն
դարբինը ձեռնադրեց իրենց վրայ քահա-
նայ ու եպիսկոպոս : Սրբոր կը զարմանար
ժողովուրդը , մէյմըն ալ ետքէն հասկըցան
որ աս դարբինը փիլիսոփաներէն մէկն է ե-
ղեր , իրեն խոնարհու թեան ու աղքատնե-
րուն հասնելուն համար աս արհեստը սկսեր
է բանեցընել , իր վաստրկածն ալ աղքա-
տաց կու տայ եղեր . ան ատենը ժողովուր-
դը փոխեց զարմանքը . իրենց չի ճանչնալուն
վրայ և սրբոյն Վրիգորի ճանաչողութեա-
նը վրայ զարմանալ սկսան : Մը Մղէքսան-
դրոս անչափ երևելի եղաւ սրբութեամբ ,
որ հոգւոյն սրբոյ շնորհքը աղանակերպ ին-
ջած վրան տեսան , ետքն ալ հաւատքի հա-
մար մարտիրոս եղաւ :

Մսանկով սուրբ Վրիգոր միշտ պտրտե-
լով Մէսոկեսարիա գաւառին մէջ , միշտ
հրաշքներ ընելով , շատ մարդ դարձուց
քրիստոնեայ ըրաւ . որուն վրայ թագաւորը
բարկանալով՝ հրամմեց իշխանին որ ժամե-
րը գոցէ , քրիստոնեաները տանջէ : Մն ա-

տենը սուրբը վախնալով իր նորահառատ
ժողովրդեան վրայ, որ չըլլայ թէ ոմանք չի
կրնալով դիմանալ ուրանան հաւատքը, հրա-
ման տուաւ որ ատեն մը փախչին, ինքն ալ
անապատը քաշուեցաւ իրեններովը, բայց
մէկի մը մատնելովը եկան կռապաշտները
բաղմուծք պաշարեցին ան տեղը : Սուրբ
Վրիգոր իրեն սարկաւազովը (որ դարձած
քուրմ էր), հոն բազկատարած աղօթքի
կեցաւ, անոր աղօթքովը ամմէն փնտրող-
ները կուրացան, որչափ որ պտրտեցան՝ չի
կրցան գտնել, ետ դարձան. մատնողն ալ աս
հրաշքը տեսնելով՝ քրիստոնեայ եղաւ :

Հալածանքը որովհետեւ երկնցաւ՝ սուր-
բը հոգ կ'ընէր, կը մտմտար, միշտ աղօթքի
հետ կ'ըլլար. օր մըն ալ իրեն հոգետեսու-
թքը տեսաւ որ՝ մէկ երիտասարդ մը Տրոա-
դիոս անուն տանջանքներ քաշելով նահա-
տակուեցաւ. անկէց ձայն եկաւ իրեն որ՝
հալածումը պիտի դադրի : Այս լսելով սուր-
բը ուրախացաւ, ամմէնուն պատմեց. իրեն
սարկաւազն ալ գնաց քաղաքը հասկըցաւ
որ՝ իրաւ սրբոյն պատմածին պէս եղեր էր,
ան ատենը ամմէնն ալ զարմացան մնացին
որ՝ ինչպէս իմացեր էր սուրբը օրովը, նա-
հատակին անունովը :

Արբոր սրբոյն Վրիգորի աղօթքովը հա-
լածանքը դադրեցաւ, քաղաքը դարձաւ,
մարտիրոս եղողներուն մարմինը ժողովեց,
յատուկ տեղեր շինելով տեղաւորեց. ի-
րենց տօնն ալ կատարել ապսպրեց : Առա-

Ջուցմէ իմանալով իր վախճանիլը՝ հոգ կ'ընէր, կը փնտրուէր արդեօք կուսպաշտութի գեռ մնացեր է՝ Ահոկեսարիայի մէջ: Ատքը հասկընալով որ՝ տասներեօթը հոգի միայն մնացեր էին, անոնց համար ալ շատ աղօթք ըրաւ որ անոնք ալ դառնան, իրմէ ետեւ եկողը կուսպաշտ մը չի դտնէ: Ասանկ լի արդեամբք անցընելով իր կեանքը, իր նորահաւատ ժողովուրդն ալ օրհնելով, հոգին աւանդեց Աստուծոյ Արեւիանոս կայսեր ատենը, որ նստեր էր յամին 270:

Ս Ր Բ Ո Ւ Հ Ի Ք Ր Ի Ս Տ Ի Ն Է

Տիւրոս քաղքէն էր Տրայիանոս կայսեր ատենը. մէկ հատիկ զաւակ իրեն ծնողացը, որուն հայրը Աւրբանոս կ'ըսուէր. հարուստ մարդ՝ միանգամայն և դատաւոր, մայրը Թագաւորական տնէ էր: Վրիստինէին երբոր չափը հասաւ, տասուերկու տարուան մը եղաւ, հարուստներէն շատը ուզեցին իրենց տղոցը նշանել գեղեցկութեանը համար. բայց իր հայրը Աւրբանոս կուռքերուն վրայ խիստ սէր ունենալուն՝ կ'ուզէր որ իրեն դուստրը քրմուհի ընէ, կուռքերուն ծառայութե մէջը մտցընէ: Աս մտքով ոսկիէ արծրթէ կուռքեր շինել տուաւ, բարձր աշտարակի մը մէջ շարեց, հոն դրաւ իրեն աղջիկն ալ, որպէս զի մէկի մը չերևնայ, հոն միայն կուռքերուն ծառայէ, զոհ ընէ:

տասուերկու աղջիկ ալ իրեն ծառայութի տուաւ : Արբոր ուրիշներն ետեւէ կ'իյնային Աւրբանոսի որ աղջիկը նշանէ , Աւրբանոս կ'ըսէր անոնց . լաւ է իմ աղջրկանս անանկ կենալ , որ կուռքերուն աւելի սիրելի ըլլայ : Այդ գիտեր որ անիկայ Վրիստոսի սիրելի պիտոր ըլլար :

Մը կոյսը բնական խելացի ըլլալով՝ առաջուց ալ տեսած ըլլալով քրիստոնէից բարի վարքը , իրենց նահատակութիւնին ալ լսած , անկից իրեն մէկ տարակոյս մը կու գար , կը կասկածէր որ սուտ ըլլան իրենց պաշտած կուռքերը , կը հառաչէր , կը փափագէր որ մէկ տեղէ մը իմանայ ճշմարտութիւր : Տարիքն աւելի առնելէն ետեւ՝ օր մը երբոր բուրվառը ձեռքն առած պատրաստութիւն կը տեսնէր կուռքերուն խունկ ծխելու , Մճ որ պատրաստ է ասանկներուն ողորմել , յանկարծակի իր միտքը բացաւ , իրեն մէկ խղճմտանք մը եկաւ ան սուտ կուռքերը պաշտելու . Ժողովեց ան կուռքերը , տարաւ պատուհանին մէջ դրաւ . սկսաւ երկինքը նայել դէպ 'ի արևելք . ո՞վ է արդեօք ըստեղծեր , ըսաւ , աս արևը , լուսննկան , աստղերը : Մը ըսելով կը հառաչէր , ախ , տէր Մճ քրիստոնէից , յայտնի ըրէ , կ'ըսէր , ինձի քու անունդ , որ քեզ պաշտեմ , սուտ անձները չի պաշտեմ . աս կ'ըսէր ու արցունք կը թափէր : Մն գիշերը Վրիստոս իրեն երևնալով , զինքը կանչեց սիրտ տուաւ . ես քեզի հետ եմ , ըսաւ , ով Վրիստինէ . չեմ

Թողնէր . դուն համբերութեամբդ հողիդ
պիտի գտնես : Ըստ խօսքով հասկըցուց իրեն
որ մարտիրոսութիւն պիտի մեռնէր . բայց
կուսին սիրտը ուրախութեամբ լեցուեցաւ ,
սկսաւ փառք տալ Ըստուծոյ :

Եւ թէն որ անցած էր քանի որ կուռքե-
րուն խունկ չէր ծխած . քովի աղջիկները
իրեն յիշեցուցին . չըլլայ թէ , ըսին , մեր
վրայ բարկանան կուռքերը : Քրիստինէն
պատասխան տուաւ . ով մոլորեալներ , կուռ-
քերը սուտ են . ես ասկէց ետքը անոնք պի-
տոր ձգեմ , միայն Քրիստոսի տեառն իմոյ
զոհ պիտի մատուցանեմ : Ընտելք ոտքն ըն-
կան , կ'աղաչէին . չըլլայ որ , ըսին , հայրդ
լսէ , քեզ ալ մեզ ալ կը կորսնցընէ : Ըստ
ցեղնինի՝ հայրը ներս մտաւ , կուռքերուն
զոհ ըրաւ . աղջիկները պատմեցին հօրը ինչ
որ ըսաւ Քրիստինէն :

Հայրը կանչեց , աս ինչ է , ըսաւ , դուստր
իմ , որ քու վրագ կը լսեմ : Քրիստինէն ը-
սաւ . իս մի կանչեր քու դուստրդ , այլ
դուստր երկնաւորին Ըստուծոյ : Հայրը չի-
մացաւ աս խօսքս . կարծեց որ իրեն սուտ
Ըստուածներուն համար կ'ըսէ , ելաւ գնաց :
Ընտելքն առաջ առաջ գտնելով Քրիս-
տինէն , Ըստուծոյ անունը կարդալով , քա-
նի կուռք որ կային՝ ամմէնն ալ կոտորեց
աղքատներուն բաժնեց : Քանի մը օրէն
հայրը եկաւ , երբոր իմացաւ ինչ ըրեր է
իր աղջիկը , բարկանալէն հրամմեց իր ըս-
պասաւորներուն՝ երեսին զարնել . աս հե-

ըիք չի սեպելով՝ գաւազանով ծեծել տուաւ զինքը : Այսը գէպ 'ի երկինքը վերցընելով ձայնը՝ անանկ օգնութիւն կը խնդրէր Մ. սուծմէ , համարձակ վար կը զարնէր կու պաշտներուն անմտութիւնը . ինչպէս չէք հասկընար , կ'ըսէր , որ մէկի մը մէկ օգնութիւն չեն կրնար ընել :

Մ. խօսքերուս վրայ հայրը ալ աւելի կատ ղելով , վիզն ու ձեռուրները երկաթը զարնելով՝ անանկ բանտը տանել տուաւ . ինքն ալ տակնու վրայ եղած տուն եկաւ , կիսամեռ պառկեցաւ : Մայրն ալ իմացածին պէս՝ լալով ողբալով՝ գլուխը մօխիը ցանելով՝ անանկ բանտը վազեց . վայ որդեակ , աս ինչ ըրիր , ըսաւ , իս պիտոր մեռցընես , ես շատ աղաչելով կուռքերուն քեզ ծնայ . յիշէ ան մայրական կաթն որ քեզ տուեր եմ , քեզ ձեռքովս մեծցուցեր պահեր եմ . ինչ ըրիր հիմա , ինչպէս մօլորեցար և ուրիշ Մ. սուծմը պաշտել սկսար որ մենք չենք ճանչնար : Բայց Քրիստոսի սէրն որ կը վառէր սրբուհւոյն սրտին մէջը՝ չէին կրնար մարել ոչ հայրական և ոչ մայրական սէրը . ան էր իր փափագն որ Քրիստոսի համար մեռնի : Հոգւոյն սրբոյ զօրութիւնն առնելով ըսաւ իր մօրը . իս մի կոչեր քուկին դուստրդ . ես Քրիստոսի դուստր եմ , ան է իմ հայրս մայրս . ես իս անոր եմ նուիրեր , ան իս լուսաւորեց որ ձեր կուռքերուն ստութիւնը ճանչցայ կոտորտեցի . դուք ալ թէ որ կ'ուզէք ապրիլ՝ դարձիք , ճշմարիտ Մ. սուծմը պաշտեցէք :

Ըստնք լսելով մայրը տրտմութեամբ տա-
դարձաւ պատմեց հօրը . հայրը խիստ սրը-
դողելով լաւ է որ ես անիկայ տանջանքով
սպաննեմ, ըսաւ , քան թէ ամմէնուն առ-
ջև ամթով մնամ : Ըստուն ատեանը բե-
րել տուաւ . Քրիստինէն , բռնադատեց որ
դառնայ . տեսաւ որ իր մտքին վրայ ամուր
կեցած է , ծեծել տուաւ անչափ որ՝ ծեծող-
ները յոգնեցան , բայց կոյսը փառք տալով
Ըստուծոյ՝ իր հօրը երեսին կու տար . ինչ
պէս միտք չես առներ , կ'ըսէր , Քրիստոսի
զօրութիւն որ դահիճները զարնէլէն յոգ-
նեցան , ես բան մը չեղայ :

Հայրը հրամմեց կախել , երկըթներով
քերել . անանկ քերեցին որ՝ միտը կտոր կը-
տոր վրայէն գետինը կ'իյնար . ինջեցընէլէն
ետե՛ հօրը գազանութիւնը յիշեցընէլ ու-
զելով կոյսը , գետինն ինկած արուն թա-
թախ մօին կտորը երեսին նետեց . կ'ու-
զէիր մարմինս ուտել , ըսաւ , առ ուզածդ :
Ըսայց հայրը գութ շարժելուն տեղը՝ աւել-
ւի կը կատողէր , նորէն կը բռնադատէր որ
կուռքերուն զոհէ : Պատասխան տուաւ
Քրիստինէն , Քրիստոս որ իսլուսաւորեց ,
հոգիս ալ մարմինս ալ կը փրկէ :

Սէկ մեքենայ (չարխ) մը բերել տուաւ
հայրը՝ վրան սուրեր գամած . անոր վրայ
կապել տուաւ կոյսը . գետինն ալ հրամմեց
կրակ վառել , անանկով պտրտեցընել , որ մէկ
դիացէն ան մեքենան ոսկորները պիտի կո-
տըրտէր , մէկալ դիացէն ալ կրակը պիտոր

րիքէր : Բայց կուսին աղօթքովը կրակը մա-
րեցաւ , ինքն ալ մեքենային վրայ կեցած
բան մը չեղաւ : Եւ հրաշքէն ալ չի շարժե-
ցաւ հայրը , բանտը դնել տուաւ անօթի-
ան գիշերը հրեշտակ Եստուծոյ երևնալով
խոցերը սղջնցուց , կերակուր ալ տուաւ :

Եւ հրաշքով կը պահէր , հայրը Եւ դէմ
մեռցընել կ'ուզէր իր զաւակը . ան գիշերը
հինգ հոգի խրկեց որ՝ աղջկը բռնեցին նա-
ւու մը մէջ դրին , վիզը քար կապելով ծո-
վը ձգեցին . հրեշտակ Եւ ծովէն ալ խա-
լըսցընելով ցամաքը բերաւ : Արբոր հօրն ի-
մացուցին , ամմէն հրաշքը կախարդութիւն
սեպելով բանտը խրկեց որ վաղուան օրը
սրով սպաննէ . չի շարժեցաւ ամենեւին սըր-
բուհին խօսքերէն , որ նորէն երեսին կու-
տար իրեն խստասրտութիւն ու կուրութիւր :
Բայց արդարութիւն Եստուծոյ պատուհա-
սելով առաւ իր վրէժը հօրմէն , վասն զի
նոյն գիշերը տանջուելով սատկեցաւ :

Քանի մը օրէն ուրիշ դատաւոր մը ե-
կաւ . աս ալ տեսնելով որ Քրիստինէն ա-
մուր կեցեր է իր քրիստոնէութիւր վրայ ,
նորէն տանջանքներ տուաւ : Եւ աջ հրամ-
մեց ծեծել , ետքը տաքցուցած երկաթ ու-
տուրներուն տակը դնել . գլխուն մազերը
ածիլել ու անանկ մերկ քաղքին մէջ ժուռ
ածցընել . ետքը կուտուներ բերելով կը բըռ-
նադատէր զօհ ընել : Այսը ձեռքն երկինքը
վերցընելով աղաչեց Եստուծոյ , ամմէն կուռ-
քերը գետինն ընկան կոտորտեցան , տեսնող-

ները դարձան քրիստոնեայ եղան իրեք հազար հոգիի չափ . ան դատաւորն ալ վախէն ամօթէն յանկարծամահ եղաւ :

Երրորդ դատաւոր եղաւ Յուլիանոս անուն . ան ալ տեսնելով որ Քրիստինէն չի թողներ քրիստոնէութիւնը՝ փուռը ձգել տուաւ . բայց կոյսը ողջ ելաւ փռնէն : Ըստ հրաշքը կախարդութիւն սեպելով , թովիչներ կանչեց , անոնց ձեռքով օձեր խրկեց Քրիստինեայ վրայ . բայց օձերը սրբուհւոյն ոտքին տակը կը շարժէին , բան մը չէին ըներ . դատաւորը կատողելով թովչին հրամմեց որ՝ օձերուն վր կարդալով հրամմէ որ սպաննեն կոյսը . բայց օձերը թովչին վրայ յարձրկելով մեռուցին : Քրիստինէն ան ատենը գոհութիւն տալով Ըստուծոյ՝ հրամմեց օձերուն որ մէկի մը չի դպչելով իրենց տեղն երթան . ինքն եկաւ մեռելին վրայ աղօթք ընելով և Յիսուսին անունը տալով ողջընցածին պէս՝ դարձաւ քրիստոնեայ եղաւ :

Ինչ հրաշքներ որ տեսաւ դատաւորը չարթընցաւ , նորէն կը ստիպէր կոյսն որ կուռքերուն զոհ ընէ . ետքը ծիծերը կրտրել տուաւ , ուսկից արեան տեղը կաթ վազեց : Եւ շատ կռասպաշաներ աս հրաշքները տեսնելով ու լսելով քրիստոնեայ եղան , որոնցմէ եօթը հոգի մենծ տիկիներ էին . Դատաւորը տեսնելով որ Քրիստինէին պատճառովը շատ հոգի քրիստոնեայ կ'ըլլան , լեզուն կտրել տուաւ որ ինչու կռա-

պաշտութիւնը կ'անարգէր իր լեզուովը . բայց
կտրելէն ետեւ ալ կոյսը խտակ խօսքով սկը-
սաւ գոհանալ Մատուծոյ ու աղաչել որ աս-
կէց ետքը քօմն առնէ զինքը : Չայն եկաւ
երկրնքէն , ով Վրիստինէ , եկէ հանգչե-
ան ուրախութեան մէջն որ քու չարչարան-
քովդ վաստակեցար : Մն ատենը դատաւո-
րը հրամմեց , երկու հոգի վրան վազեցին ,
կողը խօցելով նահատակեցին աս բազմա-
չարչար կոյսը երանելի Վրիստինէն յամին
իբր 110 :

Ե Պ Ի Փ Ա Ն Կ Ի Պ Ր Ա Յ Ի

Աղքատ հրեայի մը զաւակ էր գեղի մը
մէջ՝ որ իրեք մղոն հեռու էր Ալեթերու-
պօլիս քաղքէն . բայց ՄԾ որ պզտիկուց ըն-
տրեր էր աս տղան մեծ հայրապետ մը ընե-
լու , ինչ դիպուածներ որ զլուխը կու գային ,
հոգին սուրբ կը շտկէր , իր ուզած ճամբան
կը բերէր : Ապիփան երբոր տասը տարուան
եղաւ՝ հայրը մեռաւ . իրեն որբեվարի մայ-
րը աղքատութենէ տանջուելով՝ իրենց էջը
հանեց Ապիփան տղին տուաւ որ ծախէ :
Ճամբան կրօնաւոր մը ասոր դէմն ելլելով՝
հարցուց՝ ծախո՞ւ է : Ապիփան այնչափ
միամիտ տղայ էր որ՝ ըսաւ . կը ծախեմ ,
բայց գիտցիր որ շատ կատաղի էչ է , կը
վախնամ առնողին վնաս մը չի տայ , ես ալ
Մատուծոյ առջևը պարտական չի մնամ : Մ

ըսելու չի մնաց՝ էշը անանկ մը զարկաւ Ապիսիանին որ մարեցաւ . կրօնաւորը Վրիստոսի անունը տալով բժշկեց, էշն ալ սատկեցուց :

Մսկից արթննալով Ապիսիան հարցուց՝ ո՞վ է Վրիստոսն որ անունը տալով իս բռննտցուցիր : կրօնաւորը տեղնիտեղը պատմեց . Ապիսիանն ալ միտք առաւ : Մայց անատենը մէկ հարուստ հրեայ մը իրեն քովն առաւ, որդեգիր ըրաւ Ապիսիանը . ամմէն հրէու թեան բանը սորվեցընելով, խոստացաւ աղջիկն իրեն տալ . բայց քիչ մը անցաւ աղջիկն ալ ան հրեան ալ մեռան, Ապիսիանն եղաւ անոր ժառանգը :

()ը մը տեսաւ որ աղքատ մը ողորմութի ինդրեց կրօնաւորէ մը . կրօնաւորը բան մը չունենալով՝ իր կապան հանեց տուաւ որ ծախէ, մէյմըն ալ տեսաւ որ՝ ան կապային տեղը ձերմակ կապայ մը ինջաւ երկընքէն, կրօնաւորը ծածկեց : Մսկից վախ մը ինկաւ սիրտը . ան կրօնաւորին ետեւէն երթալով՝ քրիստոնէութիւն ալ կրօնաւորութիւնն ալ սորվեցաւ անկից, իր քրօջը հետ մէկտեղ եկեղեցին մտաւ մկրտուեցաւ՝ իր մայրը մեռած ըլլալով . մտնելու ատենը հողաթափները ոտքէն ընկան . ան օրէն ինքն ալ ուխտ ըրաւ միշտ բոպիկ քալելու . մկրտուելու ատենը եպիսկոպոսը տեսաւ Ապիսիանու երեսը բոլորովին լուսաւորած, գըլխին վրայ ալ պսակ մը զարմանալի : Ապիսիան մկրտուելէն ետեւ իրեն քոյրը կուտա-

նաց վանքը դրաւ , ինքն ալ տասնըվեց տա-
րուան տղայ գնաց ան վանքը ուր էր սուրբն
Հիլարիոն , հոն կրօնաւոր եղաւ :

Երբոր ուխտի համար Երուսաղէմու Ե-
գիպտոս քալել սկսաւ , հոն սատանան մեծ
փորձութիւն հանեց զլուխը՝ գնոստիկեան
չար աղանդաւորներն իր առջևը հանելով .
որոնք ուզելով իրենց քաշել աս տղան , տա-
րին իրենց բնակարանը նստեցուցին , հոն ի-
րենց մոլորութեան գրքերը տուին որ կար-
դայ : Եպիփան երբոր աղէկ զիրք կարծե-
լով կը կարդար միամտութեամբ , իրենց չար
կնկտիքը քովը խրկեցին . ասոնց վարմուն-
քէն հասկընալով որ որոգայթի մէջ ընկած
է , ամմէն սրտով Մատուծոյ ապաւինեցաւ ,
հազիւ զինքը անարատ խալըսեց շնորհօքն
Մատուծոյ : Եգիպտոս գնաց , հոն եղած ե-
պիսկոպոսներուն պատմեց . անոնք ալ իմա-
ցածնին պէս՝ իրենց գլխաւորներէն ութ-
սուն հոգի քշեցին . Եպիփանն ալ վախէն
շուտ մը իր առջի կեցած վանքը դարձաւ ,
ալ աւելի ճգնութեան տուաւ զինքը . սըր-
բոյն Հիլարիոնի վրայ նայելով՝ ինքն ալ
միայն հաց ու աղ կ'ուտէր չափով երկու ի-
րէք օրն անգամ մը , ջուրն ալ չափով կը
խմէր : Սանքին մէջն ալ ինչ աշխատու-
թիւն որ կար , ամմէնն ալ ընեւէն ետեւ՝ ա-
ղօթքէն կարդալէն ալ չէր պակսէր :

Սատանան որ հակառակ է ասանկներուն ,
գիշերուան աղօթքի ատենը ահռելի տե-
սիւքներով վախցընել սկսաւ , ետքը բազ-

մութեամբ վրան վազելով չարաչար ծեծեց . բայց Ապիփան յԱստուած ապաւինելով միշտ անփնաս մնաց . Աստուած ալ աւելի շնորհքներով զինքը փառաւորեց , որով շատ չրաչքներ կ'ընէր . անոնցմէ մէկ քանին պատմենք :

Արբոր անապատը կը փախչէր մարդու գովասանք չի լսելու համար՝ ճամբան քառսուն աւազակներէն մէկն որ միաչէն էր՝ թուրը ձեռքն առած վրան վազեց , բայց զարնելու ատենը աչքը բացուեցաւ . ամմէնն ալ ոտքն ընկան թողութիւն խնդրելու . հետերնին տարին որ ճամբան ուրիշ աւազակներէն պահեն , ան իրենց անդադար խրատ կու տար աւազակութիւն չընել . աւսանկ իրեք որ ճամբայ ընելէն ետեւ թողին գացին . մէկը միայն անոնցմէ իրեն աշակերտելով մկրտուեցաւ , Յոհաննէս անուն առնելով՝ նոյն վանքը կրօնաւոր եղաւ . աս է որ Ապիփանին վարքը գրեց :

Անգամ մը դիւահար մը բժշկեց Ապիփան . դէն անկէց ելաւ՝ Պարսից թագաւորին աղջըկանը մտաւ . չեմ ելլեր , կ'աղաղակէր , ինչուան որ չիգայ Ապիփան : (Թագաւորին մարդիկն եկան տեսան որ գոց խցի մը մէջ աղօթք ընելէն չի դադրիր , մէկը անոնցմէ թուրը քաշեց դուռը կ'ուզէր կոտորել , բայց ձեռքը չորցաւ . Ապիփան դուրս ելաւ ձեռքն ողջընցուց , վերոյիշեալ Յոհաննէսին հետ մէկտեղ երթալով թագաւորին աղջիկը բժշկեց . մոզպետը աս հրաչ

քը կախարդութիւն սեպելով՝ Ապրիփանկ
կախարդ կանչեց . անոր համար պատժուե-
լով պապանժեցաւ : Ապրիփան ան ալ ըռընտ-
ցուց . մէկ երիտասարդ մը ողջընցուց . ետ-
քը իր անապատը գալով հոն ջուր մը բրդ-
խեցուց , գազանները հալածեց , առիւծ մը
սատկեցուց :

Ան անապատին մէջ յիսունի չափ աշա-
կերտ ունեցաւ , ամմէնն ալ աղէկ կրթեց .
աշակերտ մըն ալ հռոմայէն իրեն եկաւ՝ որ
երևելի մարդու տղայ էր , բայց դիւահար
էր եղած . ասիկայ երազին մէջ կը տեսնէր
Ապրիփանն որ կ'ըսէր իրեն . թէ որ ինծի
խօսք տաս՝ անապատը գալու ըլլաս ինծի ա-
շակերտելով՝ ես քեզ կ'ըռընտցնեմ . ան ալ
խօսք տուածին պէս՝ ողջընցած արթընցաւ .
անանկով քօլն եկաւ , աշակերտ եղաւ :

Այն անուանի ճարտասան ու փիլիսոփայ
մը կար Աւրֆայ քաղաքը կուսպաշտ . իրեն
անունն ալ Ապրիփան . ասիկայ լսելով սրբոյն
Ապրիփանու մեծ անունը՝ քօլն եկաւ , շա-
խօրաթեց հետը , շատ հակաձառեցաւ տա-
րիի մը չափ , բայց չիկրցաւ քրիստոնէու-
թիւնն ընդունիլ : ()ը մը սուրբին քօլը դի-
ւահար մը բերին անանկ կատաղի որ՝ վաթ-
սուն հոգի հազիւ կրնային զսպել երկաթ-
ներով կապելով . սուրբ Ապրիփան Վրիս-
տոսի անունը տալով՝ իրեք հեղ վրան խա-
չակնքելով ըռընտցուց : Աս անսածին պէս
փիլիսոփայ Ապրիփանը՝ շուտ մը քրիստո-
նեայ եղաւ . քահանայ ձեռնադրուեցաւ ,

կրօնաւոր ըլլալով շատ աշակերտներ ունեցաւ , երևելի մարդ մը եղաւ :

Մ'նաց որ սուրբ Եպիփան եկող դացողէն ձանձրանալով , Յոհաննէս աշակերտը հետն առնելով , դուրս ելաւ անապատէն , Երուսաղէմու Մղէքսանդրիա քալեց , ուր Մկիլաս հրեայն դարձուց : Տեղ մը տեսաւ որ Հերաքս անունով կրօնաւոր մը ծուռ վարդապետութիւն կ'ընէր , անիկայ պապանձեցուց , ինքը շիտակ վարդապետութի սկսաւ ընել . ետքը Հերաքսին լեզուն ալ բացաւ :

Սերին Թաբայիդի մէջ Ռուբիլ տեղը եօթը տարի նստաւ , հոն ալ սկսան մարդիկ գալ . մէջերնէն փիլիսոփայ մը եկաւ Եւդեմոն ըսուած , որուն հետ հակաձառելէն ետե՛ իր միաջէն տղին աչքը բացաւ . աս տեսնելով Եւդեմոն քրիստոնէայ եղաւ :

Երբոր իր անապատը դարձաւ , չորութի ըլլալով հոն՝ ամմէն եղբարք եկան իրեն աղաչեցին որ աղատէ , աղաչէ Մյ որ անձրև գայ , կ'ըսէին . Եպիփան աղօթքի կեցածին պէս՝ իրեք օր անանկ անձրև եկաւ , որ պէտք եղաւ նորէն աղօթք ընելով դադրեցրնէ :

Փիւնիկեցիք զինքը կանչեցին եպիսկոպոս ընելու իրենց վրայ . Եպիփան փախաւ , Պափոս քաղաքն եկաւ որ Ախլրոսին մէջն է . հոն դտաւ Իլարիօնը , որ խրատ տուաւ իրեն թէ Սալամինա քաղաքն երթայ . ասանկ հաճոյ է , ըսաւ , Մստուծոյ : Բայց Եպիփան որ փառքէն կը փախչէր՝ հոն չի

գնաց, նաև մտաւ որ Մսկալոն երթայ. փառքէ փախչել ուղեց, այլ Մստուծոյ ձեռքէն չիկրցաւ փախչել. ծովուն մէջ անանկ մէկ ալէկոծութիւն մը հանեց որ՝ իր չուղելովը հարկ եղաւ Սալամինա մտնել: Ապիսկոպոսներ ժողովուեր էին հոն, մէկ եպիսկոպոս մը ձեռնադրել կը փնտրուէին ան քաղքին վրայ. մէջերնէն Պապ անունով եպիսկոպոսը կ'ըսէր որ, Ապիփանն է յարմար, ինչպէս որ Մստուած ինծի ցցուց: Մը ըսելով գնաց գտաւ, եկեղեցին բերելով՝ առաջ սարկաւագ ու քահանայ ձեռնադրեցին, ետքը եպիսկոպոս:

Սուրբ Ապիփան կու լար որ իր առանձնութիւնը կորսընցուց, բայց Պապ եպիսկոպոսը կը մխիթարէր զինքը՝ յիշեցընելով իրեն Մստուծոյ կարգաւորութիւնը: Մնկեց ետքը անդադար խրատելու քարոզելու հետ եղաւ, շատ վանքեր շինեց, ժամերու մէջ բարեկարգութիւն խօթեց, աղքատներուն վրայ այնչափ գութ ցցուց որ՝ ատեն ատեն եկեղեցնայ սպասներն ալ կը ծախէր, աղքատաց կը բաժնէր. շատ բան ալ հրաշքով կը կատարէր:

Մըջի օրը երբոր խորանն ելաւ պատարագելու՝ յայտնի տեսաւ սուրբ խորհրդին վրայ հոգւոյն սրբոյ շնորհաց նշանը. անկից ետեւ քանի անգամ ալ որ կը պատարագէր, նոյն յայտնութիւնը կը տեսնէր: Ինչ դժուարին բան որ ըլլար՝ միշտ երեսին վրայ իյնելով կը խնդրէր Մստուծոյ իրեն ցցընել

աղէկը . Մտուած ալ իրեն ձայն կու տար՝
ըրէ կամ մ'ըներ : Մանկ Մտուծոյ հար-
ցընելով մէկ մեծ եկեղեցի մը շինեց Սալա-
մինա , որովհետեւ առջինը պղտիկ կու գար
ժողովրդեան :

Իրակոն իշխանին տղան բժշկեց , իշ-
խանն ալ ուրիշ հիւանդութենէ ըռնա-
ցուց , անոր համար ամմէն տնովը դարձաւ
քրիստոնեայ եղաւ : Մանկ ալ Սիւնեսիոս
իշխանին մեռած տղան յարուցանելով՝
դարձուց իշխանը քրիստոնեայ ըրաւ . ինչ
պէս մէկ հրեայ մըն ալ դարձուց Իսահակ
անուն գիտուն մարդ :

Երբոր Պօլիս գնաց , Եւզոբսիա թա-
գուհիին շատ խրատ տուաւ . բայց տեսնե-
լով որ թագուհին կը պնդէր կ'ուզէր վեր-
ջապէս որ Սսկեբերանը աթուէն ձգուի ,
ան ատենը սուրբ Եպիփան չուզելով խառ-
նուիլ՝ նաւ մտաւ որ իր տեղը դառնայ .
նաւուն մէջը հիւընտցաւ . գուշակեց որ
փոթորիկ պիտոր ըլլայ . անանկով հողին
աւանդեց աս զարմանալի հայրապետը 113
տարուան յամին 403 . որուն վարքը պըզ-
տիկուց սկսեալ՝ եղաւ բոլոր հրաշք մը , մե-
ռած ատենն ալ լմընցուց հրաշքով մը՝ որ
հողին աւանդելուն պէս՝ փոթորիկը խա-
ղաղցուց :

Դ Ի Ո Մ Ի Դ Է Ս Բ Ժ Ի Շ Կ

Տարսոն քաղաքը ծնած էր ասիկայ, որ
Տիմա (Թէրսիս կ'ըսուի. իրեն գաւառը Տին
ատենը Աիլիկիա՝ Տիմա Լտանա կ'ըսուի.
Վիոկլէտիանոս ու Մաքսիմիանոս կայսե-
րաց օրը. քրիստոնէայ ծնողաց զաւակ, ազ-
նուական ու հարուստ. ինքն ալ մէկ շնոր-
հալի գեղեցկատես երիտասարդ մը. դրսի
աղուորուածէ հետ խելքն ալ զարմանալի.
Ինչ որ պէտք է բժշկուածէ արհեստին ամ-
մէն բան կատարեալ գիտէր պղտիկուցմէ.
բայց բժշկուածէ արհեստը աւելի աղքատ-
ներու վրայ կը բանեցընէր, ամմէնն ալ ձրի
բժշկելով. որովհետեւ աս սուրբը ինչպէս
գիտուածք՝ ասանկ ալ ամմէն կերպ առաքի-
նուածեամբ պղտիկուցմէ զարդարուած էր,
բայց իրեն եղբայրսիրուածէ առաքինուածիը
ամմէնէն աւելի կը փայլէր: Իրեն ըրած
բժշկուածիներն ալ աւելի հաւատքովը կ'ը-
նէր: Յիսուսին անունը կարդալով, քան թէ
գեղերով. մարմիննին բժշկելը հերիք չի-
սեպելով՝ հոգինին ալ կը նայէր որ բժշկէ:
Վիոմիդէս սաստիկ հալածանաց ատենը
մէկդի ձգելով վախը, ամմէնուն կ'երթար
կը յորդորէր ամուր կենալ ճշմարիտ հա-
ւատքին մէջը, չի վախնալ մեռնելէն, հա-
մարձակ խոստովանիլ Վրիստոս, ոչինչ
սեպել աս անցուոր աշխարհքս, յաւիտե-

նական կեանքին միայն սպասել : Տարսոնի
երկրին մէջ ասանկ հոգևոր ու մարմնաւոր
բժշկութի ընելով և ամմէնուն հասնելով՝
մէյմըն ալ լսեց որ Միւթանիա գաւառին
մէջ աւելի սաստիկ է հալածանքը , հոն
չատ քրիստոնեայ կը բռնեն կը չարչարեն :
Մ^ր գաւառը հիմա կ'ըսուի Գօճա իլի , Սիւ-
տավէնտկեար սանձաղի : Մ^ր բանս լածին
պէս՝ վազեց եկաւ անոր մայր քաղաքը՝ Աի-
կիա , որ հիմա Չինիզլիք կ'ըսուի : Մ^ր քա-
ղաքս նման տեսնելով իր Տարսոն քաղքին՝
ուզեց հոն նստիլ . սկսաւ պտըտիլ բժշկու-
թի ընելով , ամմէնն ալ զարմացընելով . ո-
րովհետև մէկ շնորհք մը ունէր որ ինչ բա-
նի ձեռք զարնէր՝ հաւատքով ընելուն հա-
մար առաջ կը տանէր . բայց իր միտքը փա-
փազը աւելի հոգևոր բժշկութեան վրայ ըլ-
լալով՝ բռնուած քրիստոնէներուն քովը կը
պտըտէր . ստակ տալով բանտապաններուն՝
բանտերը կը մտնէր , ամմէնուն ալ խրատ
կու տար տանջանքներուն համբերել . խո-
ցերնին կը հոգար կ'ըռընացընէր : Մ^ր քա-
ղաճնիդ ոչինչ և անցաւոր է , կ'ըսէր , վարձ-
քերնիդ յաւիտենական . յիշեցէք առջի
մարտիրոսներուն քաղաճները . իրենց քա-
ղաճները անցան գացին , բայց իրենք հիմա
կը վայելեն արքայութիւնը : Մ^ր ասնկ խօս-
քերով ամմէնուն սիրտը կը վառէր . ամմէն
քրիստոնէները կը ցանկային հիմա Յիսու-
սին խաչակից ըլլան որ՝ ետքն ալ Յիսուսին
փառակից ըլլան :

Անոր ամեն ըսածներն ու ըրածները գացին մատնիչները պատմեցին Մաքսիմիանոսի, թէ ինչպէս Վիոմիդէս մէյմը վարպետ բժիշկ՝ բայց կուռքերը վար կը զարներ, կուռքերուն տեղը մէկ խաչելեալ մարդ մը կը պաշտէր. ան է Մստուած, կ'ըսէր, ուրիշներուն կը սորվեցընէր : Մաքսիմիանոս առաջ ալ լսած ըլլալով ասանկ ամբաստանութիւն անոր վրայ, սուտ խուլ կ'ըլլար՝ գիտնալով իրեն երևելի բժիշկ ըլլալը . հիմա չիկրնալով դիմանալ՝ մարդիկ խրկեց որ բռնեն Վիկոմիդիա բերեն, ուր կը նստէր ան ատենը Մաքսիմիանոս :

Վիոմիդէս իր բռնուիլը բանի տեղ չի սեպելով՝ երկու բանի վրայ խիստ հոգ կ'ընէր կը մաշէր . մէյմը՝ Վիկիա եղող քրիստոնեաներուն վրայ, չըլլայ թէ իրեն հեռանալով՝ մէջերնէն մէկը տանջանքին չի դիմանալով հաւատքը ուրանար . մէյմըն ալ չըլլայ թէ Մաքսիմիանոս իր դին քաշել ուզելով՝ իրեն խնայէր, նահատակութեան պսակէն զինքը զրկէր, որուն այնչափ փափագ ունէր : Մսոնք մտածելով խիստ կը տրտմէր իր վրայ . մանաւանդ որ բռնողներուն բերնէն լսեց թէ թագաւորը քեզի պէս ազուոր երիտասարդ ազնուական սիտուական մարդ, մի վախնար, չի կորսընցընէր :

Մսոնք աս խօսքերս կ'ըսէին զինքը մխիթարելու համար, բայց մէյմէկ խոց կ'ըլլային երանելոյն համար . որուն սիրտը վառուած

էր անձային սիրով, կը սպասէր կը փափագէր
արիւնը թափել Մատուծոյ համար : Ամ-
բան երբոր քիչ մը հեռացեր էին քաղքէն՝
աղաչեց տանողներուն՝ զինքը ձիէն իջեցը-
նել, քիչ մը թողուլ որ աղօթք ընէ . երբոր
թող տուին՝ ծունկ չոգելով բարձր ձայնով
ըսաւ Մատուծոյ . դուն իս ստեղծեցիր, տէր
Մատուած . աս կերպարանքը դուն տուիր
ինձի . ես ալ քեզի խօսք տուի աս պատ-
կերիս գեղեցիութիւնը անարատ պահելով
քեզի տամ, իմ ստեղծողիս ընծայեմ . ես
ժամանակաւոր մահուանէ չեմ վախնար,
այլ պատրաստ եմ կեանքս ալ տալ . հիմա
ինչպէս որ կ'ուզես անանկ կատարէ քու
կամքդ իմ վրաս . շնորհակալ կ'ըլլամ թէ
որ խոստովանող անուան զիս արժանի ընես .
քեզի կը յանձնեմ իմ հոգւոյս պահպա-
նութիւնը, որպէս զի նորէն մարմնոյս հետ
միանալով՝ անապական մարմին առնելով՝
քու սուրբերուդ հետ մէկտեղ արժանի ըլ-
լամ միշտ քեզ փառաւորելու : Մը ըսելով
զինքը խաչակնքեց, հոն հոգին աւանդեց
յամին իբր 303 :

Տանող զինուորները կը զարմանային որ
աղօթքին ձայնը դադրելէն ետեւ ինչո՞ւ չի
գար . շատ սպասելէն ետեւ ելան քովը դա-
ցին . առաջ կարծեցին որ քուն է, մէյմըն
ալ տեսնելով որ մեռած է, ձեռքի կապանք-
ներն ինքիրմէ քակուած՝ զարմացան ու վախ-
ցան, թէ Մաքսիմիանոսը դուք անիկայ փա-
խուցիք ըսելով՝ չըլլայ թէ զիրենք պատժէ,

ասոր վրայ խորհուրդ ընելով գլուխը կտրեցին, անանկ Մաքսիմիանոսի առջև տարին. բայց կտրող զինուորները կուրցան :

Մաքսիմիանոս մեռելին մինակ գլուխը տեսնելով զարմացաւ մնաց. խիստ ցաւեցաւ որ չի կրցաւ ողջ տեսնելու, որովհետեւ լսեր էր անոր աղուորութիւնն ու խելքը՝ կ'ուզէր կենդանի տեսնել. նոյն բերողներուն ապսպրեց որ գլուխը մարմնոյն քով տանին, գերեզմանի մը մէջ դնեն, որ անանկ երևելի մարդուն յիշատակը չի կորսուի : Արբօր ատոնք տարին մարմնոյն քովը դրին, նոյն ատենը իսկոյն աչուրնին բացուեցաւ. տեսան որ ագռաւ մը քովը կեցած թող չէր տար ուրիշ թռչուններուն մօտիկնալ սուրբ մարմնոյն ան իրեք օրը՝ որ ձգած կեցած էր հօն :

Բայց ասկէց երևելի հրաշքը ան եղաւ որ՝ իրենց հողւոր աչքն ալ բացուելով քրիստոնեայ եղան. ուրիշներուն ալ աներկիւղ քարոզեցին ճշմարիտ հաւատքը : Իսկ սրբոյն մարմինը մէկ հարուստ տիկին մը Պատրոնիա անունով շատ ստակ տալով՝ առաւ, անուշ եղերով օծելով պատշաճաւոր տեղ մը դրաւ. ինքն ալ իսկոյն բժշկուեցաւ իր հինցած ցաւէն, ուսկից շատոնց էր որ կը տանջուէր, չէր կրնար բըժիշկներուն ձեռքով ողջութիւն մը գտնել : Արբօր մեծն Վոստանդիանոս թագաւոր նստաւ, աս սրբոյն մարմինը իրեք տեղ բաժնելով՝ մէյմէկ եկեղեցի շինել տուաւ վրա-

նին . մէկը՝ Նիկիա որ է Չինիզլիք , մէկը՝
Նիկոմիդիա որ է Վլնիմիա , մէկաւն ալ Պօլ-
լիս , տօնել հրամմելով օգոստոսի 16 :

Յ Ո Ի Լ Ի Ա Ն Է Կ Ո Յ Ս

Ափրիկանոսի մեծ իշխանի մը աղջիկ էր
Նիկոմիդիա քաղքին մէջ Մաքսիմիանոս
կայսեր ատենը . իր ծնողքը կռապաշտ ըլ-
լալով՝ Յուլիանէն ինը տարուան նշանե-
ցին Նլլեսիոսի հետ՝ որ կայսեր խորհրդա-
կից էր , ու սիրելի բարեկամ իրեն : Բայց
Բստուած պզտիկուցմէ ընտրած ըլլալով
Յուլիանէն , իր սրտին մէջը մէկ սէր մը
տնկեր էր ճշմարիտ Բստուածն իմանալու .
կը տեսնէր արևը , աստղերը , ուրիշ արա-
րածները , իր մտքին մէկ հարցմունք մը կ'ի-
մանար ներսէն , ո՞վ է արդեօք ստեղծեր ա-
սոնք . ի՞նչպէս կ'ըլլան հովը , ծովը , կրա-
կը . ո՞վ է ասոնց զօրութիւն տուողը : Բս-
տուածմունքներէն կ'իմանար որ իրենց կուռ-
քերը չեն ասոնք ստեղծողը և ասոնց զօրու-
թիւն տուողը՝ որոնք փայտ ու քար էին .
փայտ ու քարը ի՞նչպէս կրնան աս երկնային
բաներն ստեղծել՝ կ'ըսէր :

Բստնք մտածողը որովհետև ինքիրմէն
ալ կ'իմանայ անոնց արարիչը՝ Պօղոս առա-
քելոյն ըսածին պէս , ասանկ պատահեցաւ
լման աս կուսիս , որ ինքը քիչ մը իմանալով

կ'ուղէր քրիստոնէիցմէ իմանալ աղէկը :
 Մօրմէն մինակ հրաման առնելով՝ հօրմէն
 գաղտուկ քրիստոնէներուն քովը գնաց . ա-
 նոնցմէ տեղնիտեղը ճշմարտութիւնը հաս-
 կըցաւ : Ան օրէն իր տարակոյսը փարատե-
 ցաւ , սիրտը բացուեցաւ , մէկ Աստուա-
 ծային սէր մը վառեցաւ իր սրտին մէջը . ա-
 մէն օր կը հառաչէր ու կ'ըսէր . ես ամէն եր-
 կրաւոր բաներէն ետ կը կենամ , միայն թէ
 ան երկնաւոր արարչին հաճոյ ըլլայի , մէյմը
 երեսը տեսնէի : Ան կ'ըսէր , անդադար ալ
 աղօթքի հետ կ'ըլլար , պաք կը բռնէր , ամ-
 մէն հանգստութէ զինքը կը զրկէր . միայն
 Ա՛ճաշունչը կարդալ , վարդապետներուն ը-
 սածները սորվիլ կը ջանար , որ քրիստոնէից
 ժողովներուն մէջը կը քարոզէին :

Արբօր աս սրբուհին ասանկ երկնաւոր
 մտածականներով կը մեծնար , իրեն նշա-
 նածը Ալլեսիոս կռապաշտ ըլլալով՝ բոլորու-
 վին երկրաւորը կը մտածէր : Իրենց ծնողքը
 խօսք կապած էին տասներութը տարուան
 որ ըլլայ՝ հարս առնեն զինքն . հիմա եկեր
 մօտիկցեր էին օրերը լմնալու՝ մարդ մար-
 դու վրայ կը խրկէր զինքն առնելու , հարս-
 նիք ընելու : Յուլիանէ կոյսը որ բոլորովին
 երկնաւոր հարսնիքին կը բաղձար , մտածեց
 ինչ ընէ որ՝ աս մարմնաւոր փեսան իրմէ
 հեռացնէ , փեսին անկաճը ձգել տուաւ
 որ՝ ինչուան եպարքոսութի (փաշայութիւն)
 մը ձեռք չի ձգէ՝ իրեն հարս չըլլար : Ալլե-
 սիոս որ զիտէր աս կուսին աննման գեղեց-

կութիւր, գիտէր իրեն խելքն ու ճորհալի
պարկեշտութիւնը, բան չի թողուց որ չընէ .
շատ ոսկի արծաթ տուաւ եպարքոսութիւն
մը ծախու առաւ . մէկէն Յուլիանեայ ի-
մացընելով շուտ մը հարսնիքն ընել կ'ար-
տորցընէր : Աոյսը տեսնելով որ աս բանովս
ալ չի կրցաւ խափանել ան մարմնաւոր հարս-
նիքը որ իրեն ատելի էր, յայտնի բացաւ
միտքը, հասկըցուց որ՝ ինչու ան քրիստո-
նէութիւնը չընդունիս, ես չեմ կրնար քե-
զի հարս ըլլալ :

Ալեւսիոս աս բանս լրածին պէս՝ տակն
ու վրայ եղաւ, գնաց աղջիկանը հօրը պատ-
մեց . հայրն ալ շփոթելով կանչեց աղջիկը,
առաջ անուշութենով խօսեցաւ, պատճա-
ռը հարցուց . երբոր Յուլիանէն նոյն բանը
կրկնեց, հայրը սրգողելով թէ որ կուռքե-
րուն չի զոհես, ըսաւ, գազաններուն առջև
քեզ կը ձգեմ : Այ ըսելով բանտը խրկեց :
Ատքը իր առջին բերել տալով տեսաւ որ
նոյն մտքին վրայ է, չարաչար ծեծեց, Ալ-
լեւսիոսին ձեռքը մատնեց որ ինչ կ'ուզէ ընէ :

Ալլեւսիոս վրան խիստ սրգողած ըլլալով
զինքը անարգելուն համար՝ շատ բան պի-
տոր ընէր . բայց երբոր ատեանին մէջը տե-
սաւ իրեն գեղեցկութիւնն որ ամմէնուն
աչքը կը զարնէր, մէկէն ինչաւ իր բարկու-
թիւր : Վ՛ի իմաստուն կոյս, ըսաւ, ասանկ
հրաշալի աղուորութիւնդ մի աւրեր՝ խօսքիդ
վ՛ր կենալով քեզ տանջանքի տալով . թէ որ
չես ալ ուզեր կուռքերուն զոհել, ինձի հետ

կարգուէ, քեզ թագուհիի պէս պիտոր մեծ-
ցընեմ: Պատասխան տուաւ Յուլիանէն .
ինչուան որ քրիստոնեայ չըլլաս, ոչ մենծու-
թիւն, ոչ տանջանք չեն կրնար իմ միտքս
փոխել: Ալլևսիոս ըսաւ . ան ալ կ'ընէի,
բայց թագաւորէն կը վախնամ: Տես հի-
մա, ըսաւ Յուլիանէն, թէ որ դուն աս թա-
գաւորէն կը վախնաս, որ միայն մարմնոյն
կ'իշխէ . ես ինչպէս չի վախնամ երկնա-
ւոր թագաւորէն որ մարմնոյս ալ հոգւոյս
ալ կ'իշխէ, անոր համար ինչ տանջանք որ
ուզես տուր, ես քու կամքդ չեմ կատա-
րեր, քուկին ընկերութիւնդ դժոխք է իմ
առջև:

Ալլևսիոս աս խօսքերս լսելով իր սէրը
փոխեց գազանական բարկութի, չորս դիա-
ցէն գեանին վրայ ձիգ կապել հրամայեց եր-
կայն ատեն՝ անանկ ծեծել տուաւ որ արիւ-
նը գետի պէս կը վազէր . բայց կոյսը Աս-
տուծոյ սիրովը վառուած ըլլալով՝ ուրախու-
թեամբ կը քաշէր ան տանջանքը, աղօթք
ընելով օգնութիւն կը ինդրէր . ինչ ալ որ
կը հարցընէին՝ պատասխան կու տար: Ար-
րէն կը յորդորէր Ալլևսիոս կուռքերուն զո-
հելու . Յուլիանէն ալ նորէն կը մերժէր ա-
նոր յորդորն ու տուած վախը:

Ան ատենը գլխուն մազերէն կախել տը-
ւաւ Ալլևսիոս, առտուրնէ ինչուան իրի-
կուն անանկ թողաւ . գլխուն մորթը զա-
տուեցաւ, աչուրները ընքուինները այլայ-
լեցան . ետքը բանտը դնել տուաւ . քանի

մը օրէն բերել տալով կը յորդորէր կուռ-
քերուն զոհելու . մեղք ես , ըսաւ , Յուլիա-
նէ , սիրտս վրայ կը խշխշայ , թագաւորաց
հրամանն է քեզ տանջանքով պիտոր մեռ-
ցնեմ . մտքիդ վրայ ամուր կենալովդ ա-
ղուորութիւնդ մի կորանցնէր . հօրդ մօրդ
ծերութիւն ալ ախով վախով գերեզմանը
մի խրկէր . բայց թէ որ կուռքերը պաշտես ,
կամքս կատարես , բիւր բարիք քեզի պի-
տոր ընեմ . անանկ մենծութեան քեզ հաս-
ցնեմ որ՝ մէկի մը չէ եղած : Այոսը պատաս-
խան տուաւ . մի յուսար որ քուկին ասանկ
խօսքերովդ իմ միտքս պիտոր փոխես . ես
անանկ մեծութեան հասայ որ՝ արծաթն
ու ոսկին անոր քովը բան մը չեն . անանկ
փեսայ գտայ որ՝ երկինք երկիր ոչինչ են ա-
նոր քով :

Ալեւսիոս աս խօսքերուս վրայ շատ սրը-
գողելով , հրամայեց երկաթներ տաքցնել ,
կողերուն ձեռուրներուն ծնկուրներուն վր-
կապել , անանկ բանտը դնել որ հոն մեռ-
նի : Այոսը հոն աղօթքի կենալով կ'ըսէր .
տէր իմ Յիսուս , ես քեզ պղտիկուցմէ սի-
րեցի , քեզ ընտրեցի , քեզի ինկայ , դուն ին-
ծի առաջնորդելով իս կռապաշտութեան
խաւարէն դուրս հանեցիր . ասչափ բարիք
որ ըրիր ինծի , հիմա մի հեռանար ինծմէն ,
այլ շնորհէ որ բոլոր մարմինս քեզի զոհ ը-
նեմ . ինչպէս որ դուն ալ բոլորովին քեզ
մեզի տուիր , արիւնդ թափեցիր :

Ըստ ընդհանրի՝ սատանան որ նախանձէն

վրան կ'ոխար՝ հրեշտակի կերպարանք առած
իրեն երևցաւ , յորդորեց որ քիչ մը ատեն
զոհ ըրէ կուռքերուն , ետքը թող տուր :
Յուլիանէն աս խօսքս լսելով , դուն ո՞վ ես՝
հարցուց : Սատանան ըսաւ . ես եմ հրեշ-
տակ Մատուծոյ , Մատուած իս խրկեց որ
աս խօսքս քեզի ըսեմ : Յուլիանէն որ կուռ-
պաշտութենէն նոր դարձած ըլլալով չէր
լսած ինչ որոգայթներ կը բանեցընէ սատա-
նան , շփոթութիւն մը եկաւ վրան , տես-
նելով տեսքը հրեշտակի , բայց խօսքը թըշ-
նամուոյն . ան ատենը աչուրներն արցունքով
լեցուած աղաղակեց Մատուծոյ՝ որ իրեն
յայտնէ ով էր խօսողը : Իսկոյն ձայն մը
լսեց երկընքէն , զօրացիր , ո՞վ Յուլիանէ ,
ես քեզի հետ եմ , քեզի իշխանութիւն կուռ-
տամ , ատ երևցողը բռնէ զուրցընել տուր ,
թող ինքն ըսէ որ ով է : Մը ձայնին հետ
մէկտեղ հրեշտակներ վար ինջան , երկաթ-
ները վրայէն քակուեցան , իր խոցերը ը-
ռննտցան , բռնել տուին ան հրեշտակ ձեւա-
ցածը . կոյսն ալ հրամմեց որ ըսէ , ո՞վ էր
ինքը : Մնիկայ աներևոյթ զօրութեամբ
կապուեցաւ . իրեն սատանայ ըլլալը երևան
հանելէն ետե՛ իրեն պատիժ՝ մէկիկ մէկիկ
խոստովանեցաւ ինչ չարիք որ ըրեր էր ա-
ռաջուցմէ ինչուան ետքը՝ Մւան խաբելը ,
Վայէնին եղբայրասպան ըլլալը , Ջրհեղե-
ղին և աշտարակին ատենի եղած մեղքե-
րը , ետեւէ ետեւ ինչուան Յուդային մատ-
նելը զուրցեց որ՝ ամմէնն ալ ես ընել տուեր

եմ: Ասոնք զուրցելու ատենը անանկ կա-
պուած էր սատանան որ չէր կրնար շարժիլ .
կոյսը կը նախատէր, կը զարնէր . անիկայ
խիստ տանջուելէն վայ կու տար իրեն որ
ինչպէս մէկ աղջըկանէ մը բռնուած կապ-
կըպած կեցեր էր, կ'աղաչէր որ թող տայ
զինքը :

Ան ատենը Ալլեսիոսին ծառաները վրայ
հասնելով՝ առին տարին : Յուլիանէն իր առ-
ջէր . Ալլեսիոս տեսնելով զինքը ողջ առողջ
իր առջի գեղեցկու թէր մէջ՝ կը զարմանար,
կը հարցընէր . ինչ արհեստ ունիս որ տան-
ջանքները քեզի փնաս մը չեն տար : Պա-
տասխան տուաւ կոյսը . աս բանս մարդու
ձեռքով արհեստով չեղաւ, այլ իմ Աս-
տուծոյս զօրութեամբը . որ ոչ միայն քեզ,
այլ և քու հայրդ սատանան իմ ձեռքովս
ամօթ ըրաւ . ինծի արքայութեան դուռը
բացաւ, քեզի որ կուռքերը կը պաշտես՝ չի
մարուելու կրակ պատրաստեց: Ալլեսիոս աս
խօսքերէս վախնալու և ճշմարտութիւնը
ճանչնալուն տեղը՝ աւելի կատղեցաւ . ու
րովհետեւ դուն չի ճանչցար, ըսաւ, մեր
կուռքերուն շնորհքն որ քեզ կենդանի պա-
հեցին, առջի գեղեցկու թիւնդ տուին, չի
ճանչնալէն ետեւ կրակ ալ կը սպառնաս մե-
զի, ես քեզ հիմա կրակին մէջ ձգել տամ .
նայիմ քու խաչելեալ Աստուածդ քեզ ինչ
պէս պիտի փրկէ :

Արքոր մեծ կրակ մը վառեցին, Յուլիա-
նէ շատ աղօթք ընելով՝ երեսը խաչակնքե-

լով՝ ինքիրմէ կրակին մէջը մտաւ . շուտ մը
կրակն անոր վրայ կամարածեւ կեցաւ . աչքէն
վազած արցունքն ալ կրակը մարեց : Աստեանեւ լով
հինգ հարիւր հոգիի շափ դարձան
քրիստոնեայ եղան . ասանկ ալ հարիւր եր-
սուն կնիկ մարդ : Ալլասիոս առջինները ամ-
մէնն ալ սրով կոտրել տուաւ . իսկ կնկտիքը
զանազան տանջանքով նահատակեց : Իր
վրէժն ալ Յուլիանէէն առնել ուզելով՝ մէկ
սղնձէ աման մը տաքցընել տուաւ , կուար
(զիֆթ), եղ, կապար և իրենց զոհերուն
ճարպն ալ մէջը ձգելով կրակը բռնկցուց .
լման որ մէջի ձգածներն սկսան եփելէ,
բերին սրբուհին որ մէջը ձգեն . անիկայ նո-
րէն երեսը խաչակնքելով՝ երկայն աղօթք
ընելով՝ ինքիրմէ մէջը մտաւ : Ինքն անվնաս
անարատ մնաց . իսկ ամանը յանկարծ պատ-
ռելով մէջինը թափեցաւ , քովի կեցած
դահիճներուն վրայ կրակ ցաթ կեցընելով
շատ մարդ կորսընցուց : Ալլասիոս տեսնե-
լով որ՝ ինչ տանջանք որ տուաւ սրբուհւոյն
չի կրցաւ վնասել , յուսահատեցաւ , վճիռ
հանեց որ գլխատուի : Արբոր ճամբայ ելաւ
սրբուհին գլխատուելուն տեղն երթալու ,
բազմութիւն ժողովրդեան հետը կ'եր-
թային . ամմէնն ալ կը յորդորէր ըսելով .
ասկեց աւելի մեծ շնորհք մեծ պարծանք
չի կայ մարդուս , ինչպէս որ Աստուծոյ հա-
մար մեռնիլ , ճշմարիտ հաւատքին համար
արիւն թափել :

Արբոր տեղը հասաւ , երկայն ատեն ա-

ղթութի կեցաւ . տէր Մ^Ժ, ըսաւ, ասկէց աւելի մենծութիւն չի կայ ինծի՝ ինչպէս քու սէրդ . ան սէրն է որ ինծի կ'անուշցընէ ամ մէն տանջանքը . ան սէրն է որ սիրտս կը վառէ որ մը առաջ քու երեսդ տեսնելու . քու տեսութիւնդ աւելի է իմ առջև՝ քան թէ բոլոր աշխրբիս թագաւորութիւնը : Իմ տեղս հրեշտակները քեզ օրհնեն՝ որ ասանկ նահատակութեան իս արժանի ըրիր . հիմա բաց սուրբ հարսնարանդ . սուրբերուդ մէջը իս ընդունէ, որ քեզի հարս եղայ պղտիկութէնէս : Այլ ալ որ իմ անունս յիշէ, խնդիրքնին կատարէ . ինչ ցաւ ինչ նեղութիւն որ ունենան, փրկէ : Մ^Գ ըսաւ, երեսը խաչ հանեց . 'ի ձեռս քո յանձն առնեմ զհողի իմ ըսելով՝ վիզը ծռեց դահճին առջևը . անանկով նահատակուեցաւ յամին իբր 300 : Իսայց Ալլեսիոսը պատժուեցաւ . երբոր նաւ մտած ճամբայ կ'ընէր, նաւը մէկ անբնակ կղզիի մը զարնուելով մէջիններն ամմէնն ալ ընկղմեցան . Ալլեսիոս տախտակի մը վրայ ելլելով կղզին ինկաւ, բայց հոն գաղաններուն կերակուր եղաւ :

ԿԻԻՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ

Օնաւ Մղեքսանդրիայի սահմանը, ազնուական ու բարեպաշտ ծնողքէ . աղէկ կրթութիւն ունեցաւ, ետքն ալ աղէկ ուսում սորվեցաւ (Կ)էոփիլէ պատրիարկին

ձեռքովը , որուն քեռորդին կամ եղբորորդին էր : Արքոր քահանայ ձեռնադրուեցաւ՝ ամմէնն ալ կը զարմացընէր իրեն զօրաւոր քարոզութիւնն ու բարի վարքովը : Անոր համար (Թ)էօփիլէն մեռնելէն ետեւ ժողովուրդն ասիկայ կ'ուզէր որ իրենց պատրիարկ ըլլայ . բայց որովհետեւ ոմանք ալ Տիմոթէոս աւագ սարկաւազը կ'ուզէին , իրեք որ վէճ ըլլալէն ետեւ՝ վերջապէս Աիւրեղը նստուցին Աղեքսանդրիոյ պատրիարկ :

Ասիկայ նստածին պէս՝ իրենն առջի ջանքն ան եղաւ որ՝ նովատեան հերետիկոսները Աղեքսանդրիայէն դուրս հանէ . դուրս հանելէն ետեւ քանի եկեղեցի որ ունէին՝ ձեռուրներնէն առաւ ուղղափառաց տուաւ :

Աղեքսանդրիայէն քիչ մը հեռու տեղուանք սատանաներ կային . (Թ)էօփիլոս շատ ուզեր էր հալածել , բայց չէր կրցած . Աիւրեղ աղօթքով խնդրեց Աստուծոյ ճարրցընել . հրեշտակ Աստուծոյ երևնալով իրեն ապրսպրեց քանի մը նշխարք , նաև սրբոյն Սարկոսի նշխարքը հոն բերել . բերածին պէս՝ սատանաները հալածեցան :

Սեծ խռովութիւն մը ելաւ Հրէից ու քրիստոնէից մէջ . Հրեաները բազմութիւն վաղելով շատ քրիստոնէայ կոտորեցին . ետքը թէպէտ Հրէից գլխաւորները բռնելով խաղաղացին , բայց Աիւրեղ ապսպրեց , ինչ Հրեայ որ չի դառնայ քրիստոնէայ չըլլայ , Աղեքսանդրիայի մէջ թող չի նստի : Անոր վրայ շատ Հրեայ դուրս ելան ցրուե-

ցան . որն ալ դարձաւ քրիստոնեայ եղաւ : Քաղաքապետը տեսնելով որ անոնց երթալովը շատ փնաս եղաւ առուտուրի՝ ամբաստանութի՛ գրեց կայսեր . Աիւրեղն ալ աղէկ արդարացուց զինքը , Հրեաներուն պատճառով եղած փնասը առջին դնելով :

Գէշն ան եղաւ որ՝ քաղաքապետը քէն պահէց Աիւրղի վրայ . աս երկուքը հաշտեցրնելու համար բաղմութի՛ կրօնաւորներու եկան անապատէն . հաշտութե՛ տեղը՝ բանը աւելի գէշի գնաց , ինչուան նոր խռովութի՛ ելաւ : Աւրիշներէն զատ Մամոնիոս անուն երևելի կրօնաւոր մը սպաննուեցաւ , նոյնպէս ալ Սպատիա անունով կին մը՝ որ քաղքին մէջ խիստ երևելի էր ու թուփոյնայ փիլիսոփային աղջիկն էր , անանկ զօրաւոր խօսքով ու գրով՝ որ իր ատենի փիլիսոփաներէն վեր կը դնէին զինքը : Ինչ և իցէ Աիւրեղ իրեն խոհեմութեամբը աս ալ խաղաղցուց :

Մասնկ ալ վերցուեցաւ մէկ ուրիշ տարածայնութիւն մը թուփոյնէ պատրիարգին օրէն մնացած , որ Սսկեբերանը որոգինեան սեպելով՝ խիստ հակառակ էր կեցած . Աիւրեղն ալ որ թուփոյնէն շատ աղէկութիւն էր տեսած , անոր պէս ինքն ալ չէր ուզեր Սսկեբերանին յիշատակն ընել , թէ և ուրիշ եկեղեցիներէն թղթեր առաւ ասոր վրայ՝ որոնք Սսկեբերան սրբոց հետ կը յիշատակէին , զինքն ալ կը յորդորէին անանկ ընել : Բայց աս ծուռ միտքը և տարածայ-

նութիւնը Վիւրեղ տեսիլք տեսնելով մը
շտկէց :

Նեստոր երբոր Պօլսոյ պատրիարգ նըս-
տաւ , իր մօլորութիւն սկսաւ ասդիս անդին
ծաւալել թղթեր գրելով , նաև Ագիպտոս
եղած կրօնաւորներուն : Վիւրեղ աս լսածին
պէս՝ զօրաւոր թուղթ մը գրեց ան կրօնա-
ւորներուն , յայտնի ցցընելով Նեստորին
մօլորութիւր . ուրիշ իրեք թուղթ ալ գրեց
աս բանիս վրայ , մէկը փոքր Թէոդոս կայ-
սեր , մէկն ալ Ալգոփսիա թագուհիին , մէ-
կան ալ Պոլքեր գշխոյին՝ որ Թէոդոսին
քոյրն էր : Ըս մօլորութիւնը լսելով նաև
Սելեստիանոս Հռոմայ հայրապետը՝ գրեց
Վիւրղի որ քննէ . Վիւրեղ ալ խրատական
թուղթ մը գրեց Նեստորի , բայց Նեստոր
զինքը մօլորած դնելուն տեղը՝ անոր վրայ
ալ աւելի կատղելով , Վիւրեղը մօլորեալ
բռնեց : Սելեստիանոս հասկընալով իրաւը՝
ժողովով դատապարտեց Նեստորին մօլո-
րութիւնը , Վիւրղին ալ գրեց որ ինքը հո-
գայ շտկէ բանը : Ըս հրամանս առնելով
Վիւրեղ՝ շատ հոգ տարաւ , ուրիշ եպիսկո-
պոսներուն ալ գրեց . Ղղեքսանդրիայի մէջ
ալ ժողով մը ընելով՝ Նեստորին աղանդը
դատապարտեց :

Նեստոր անչափ ամուր կեցաւ իր մօլո-
րութեւր վրայ որ՝ հարկ եղաւ ընդհանուր
ժողովք ընել Ափեսոս քաղաքը . ան ժողով-
քին մէջը Վիւրեղ իբրև փոխանորդ Հռո-
մայ հայրապետին՝ ամմէնէն վեր նստելով

դարմանալի ճառ մը խօսեցաւ գովասանք տր
Մատուածածնայ . անով սուտ հանեց Սէս-
տորին աղանդն ու դատապարտել տուաւ :
Ետքը հալածում քաշեց նեստորականնե-
րէն . բայց ինքը կ'ըսէր որ՝ ինչուան մահս
կեցեր եմաս ուղղափառութիւնը քարոզե-
լու : Մանկ աղէկ խօսուածքովը և իրեն
բարի սրտովը շահեցաւ նաև Մատիոքայ
պատրիարզը Յոհաննէս անուն , որ առաջ
Թշնամի էր իրեն :

Մ սուրբը ուրիշներէն ալ հալածում քա-
շեց , որոնք չէին հասկընար իրեն խորունկ
վարդապետութիւր . բոլոր մնացած կեանքն
ալ գրաւոր աշխատանքով անցուց հակառա-
կորդաց բերանը գոցելու համար : Իր գը-
րուածքներուն մէջ երևելի են Պարապ-
մանց ու Գանձուց ըսուած գրքերը : Մանկ
իրեն արդեամբքը եկեղեցնայ մէջ լուսա-
ւոր ջահ մը եղաւ ինչուան որ առ Մատուած
փոխուեցաւ յամին իբր 444 :

Ա Բ Բ Ա Յ Մ Ա Ր Կ Ո Ս

Օր մը երբոր սուրբ Սրապիոն Յոհան-
նէս ճգնաւորին քովն էր՝ տեսիլք մը տե-
սաւ . երկու կրօնաւոր զինքը կը կանչէին ,
կը յորդորէին որ (Ս)արմակիա լեռն երթայ ,
հոն աբբայ Սարկոսը տեսնէ . որուն նման
սուրբ հիմա աշխրբիս մէջ չի կայ , կ'ըսէին .

քառասուն օրէն ետև ալ պիտի մեռնի :
Սրապիոն աս տեսիլքէն արթըննալով՝ շուտ
մը Ղըքսանդրիա ինջաւ , որ տասն օրուան
ճամբայ էր իր կեցած տեղէն . ճամբան ա-
նանկ տաք էր որ՝ գիտես թէ գետնէն կրակ
կը ցաթկէր : Հոն հարցընելով վաճառա-
կաններուն՝ հասկըցաւ որ (Սարմակիա ծու-
վու քով լեռ մըն էր . ծովէն երթալով մօ-
տիկ է , բայց ցամաքէն քսանըհինգ օրուան
մը ճամբայ է :

Սրապիոն ցամաքէն երթալը աւելի ընտ-
րելով՝ հետն ամանով մը ջուր առաւ և ար-
մաւ (խուրմա), զինքը Ղ.Մ յանձնելով ճամ-
բայ ելաւ . տասն օր ասանկ ներսէ ներս եր-
թալով՝ սարսափն առաւ զինքը . մէկ անա-
սուն մը , թռչուն մը չի տեսաւ , ջուր ալ
չի գտաւ . անանկ մէկ ահռելի անապատ մը
որ՝ ոչ անձրև կու գայ , ոչ ցօղ կ'ինջնայ ,
մխիթարութի մը չի կայ : Տասն օրէն ետև
իր հետը բերած ջուրն ալ արմաւն ալ հա-
տաւ , ինքն ալ աշխատանքէն ու անօթու-
թենէն գետինն ինկաւ , ու ժ չէր մնացեր
վրան . կը մտածէր ետ դառնալ , բայց Ղ.Մ
աղաղակեց , իրեն ասլա ինեցաւ : Մէյմըն
ալ յանկարծ տեսաւ որ ան երկու կրօնա-
ւորները նորէն իր քովն եկան , ինչ յոգ-
ներ կեցեր ես , ըսելով , իրեն արմատ մը
ցցուցին . աս կեր , առաջ գնա ըսելով՝ անե-
րևոյթ եղան : Ալ իրաւ , անիկայ կերածին
պէս՝ ծարաւն անցաւ , ու ժը վրան եկաւ ,
սիրտն ալ հանգչեցաւ :

Արապիոն ասանկ զօրանալով՝ հինգ օր
ալ ներսէնէրս գնաց անապատը ճղքելով .
մէյմըն ալ լեռան մը քով հասաւ անանկ
բարձր որ՝ գիտես թէ ծայրը երկինքն էր ե-
լած , բայց չոր ցամաք ամենեւին ինչպէս որ
կ'ըլլան խիստ բարձր լեռները . եօթն օր
քշեց ինչուան որ գլուխն ելաւ . ութերորդ
օրը գիշեր ատեն տեսաւ քարայրի մը վրայ
որ հրեշտակներ կ'ինջնային կ'ըսէին . ահա ,
ով աբբայ Մարկոս , դուն որ մարդու մը
չէիր ցանկար տեսնել , բայց միայն հայր
Արապիոնին , հիմա քեզի բերինք անիկայ .
տես և ուրախացիր :

Ըս խօսքերս լեւնինի հայրն Արապիոն
գիշեր ատեն վախ մը եկաւ իր վրայ . մօ-
տիկցաւ ան քարայրին՝ մարդու ձայն լսեց ,
որ էր ձայն ան սուրբ ճգնաւորին աբբայ
Մարկոսի . ասիկայ հրեշտակներէն հասկը-
նալով որ պիտոր մեռնի , կը դողաք Ըստու-
ծոյ ահեղ դատաստանէն , թէպէտ մեղք մը
չէր ըրած : Ընոր համար կը լսէր հայրն
Արապիոն որ՝ ինքիրեն սիրտ տալու համար
աս խօսքերս կը զուրցէր աբբայ Մարկոսը :
Ըրդ ընդէր տրտում ես , հողի իմ , կ'ըսէր .
ընդէր խռովեա զիս . յիշէ Ըստուած ու մը
խիթարուէ . հազար տարին իբր թէ մէկ
օր մըն է Ըստուծոյ առջև . երանի է քեզ
որ աշխրբիս մէջ չի կենալով՝ անոր ապա-
կանութեամբը չի պլըշտրկուեցար . երանի
ձեզի իմ աչքս , ահանջս , ձեռուրներս , ոտուը-
ներս , որ Ըստուծոյ շնորհքովը աշխրբէս

դուրս ելլելով չընկաք ան մեղքերուն մէջն
որ աշխրբիս մէջ մնալով կրնայիք իյնալ :

Ասանկ աս սուրբը յիշելով Աստուծոյ ը-
րած բարերարութիւնն իր վրայ , և իրեն
բարեգործութիւն մը չունենալը՝ մէկ գիա-
ցէն խիստ վախ կու գար իրեն , մէկալ գիա-
ցէն ալ ինքիւր զինքը կը քաջալերէր . այն-
չափ ճգնութիւնները , ծոմն ու աղօթքը
բան մը չէին երևնար իր առջև : Աստուծոյ
երկիւղն որ՝ սուրբ գրոց ըսածին պէս ըս-
կիզբն է զգօնութեան , պզտիկուցմէ սիրտը
տապաւորէր էր , ան երկիւղն էր որ զուրցը-
նել կու տար աս խօսքերս : Աստուծոյ ան-
բաւ սիրոյն դէմ ես ինչ աղէկութիւն ըրած
ունիմ որ հիմա իր առջին պիտոր ելլեմ , ը-
սելով , վախ կու գար , բայց նորէն իրեն
սիրտ կու տար չի յուսահատիլ , այլ Աստու-
ծոյ անբաւ ողորմութեանը վրայ յոյսը դը-
նել : Ասանկ զինքը քաջալերելով նորէն կ'ը-
սէր . արդ ընդէր տրտում ես անձն իմ . ին-
չու կը վախնաս . մի վախնար հոգի իմ . եր-
բոր աս մարմինէս դուրս ելլես՝ հրեշտակ-
ներ քեզի առաջնորդ պիտոր ըլլան . մի վախ-
նար հոգի իմ , յիշէ ինչ կ'ըսէ Վաւիթ
մարգարէն . բանակք հրեշտակաց տեառն
չուրջ են զերկիւղածովք իւրովք և սրահեն
զնոսա : Յիշէ հոգի իմ Քրիստոսի ըսածը .
երանի է ծառային այնմիկ որ արասցէ ըզ-
կամս տեառն իւրոյ :

Այլափ քաջալերութե խօսքերը հերիք
չէին ըլլար իրեն երկիւղը դադրեցընելու .

այլ անանկ կու լար կը հառաչէր՝ իբր թէ ազէկ բան մը ըրած չունի, ինչ բանի համար Մատուած զինքը արքայութե փառաց մէջն առնէր . իր հողևոր սրատես աչքին առջև բան մը չէին երևնար իրեն ըրածները . Ղարձեալ կը յիշէր ան չար սատանաներուն բազմութիւնը՝ որոնք վերը լեցուած կեցեր են ճամբուն վրայ, ամմէնուն գործքը մէկիկ մէկիկ կը քննեն . կը յիշէր ահաւոր թագաւորին ատեանը . ասոնք յիշելով մէկ գիէն կը դողար, մէկալ գիէն ալ Մատուծոյ կ'ասուախնէր : Մ խօսքերս կը ցցընեն որ իրեն հաւատքը, յոյսը, սէրը շատ վեր էին քան ուրիշ քրիստոնէից :

Աբբայ Սարկոսն աս խօսքերը զուրցելով ներսը կը դողար, հայրն Արապիոն ալ զրսէն մտիկ դնելով կը դողար կը զարմանար թէ ինչպէս ան մարդն որ իրեն նման մեծ սուրբ չի կար՝ անանկ վախ քաշէ Մատուծոյ առջին երևնալու : Արբոր աբբայ Սարկոսը զազրեցուց իր խօսելը, հայրն Արապիոն բարև տալով ներս մտաւ . աբբայ Սարկոսն ալ իրեն անունը տալով բարեւեց . մէկ անուշահոտութիւն մը բուրեց ան ատենը երկնային : Աս քեզ շատոնց կ'ուզէի տեսնել, ըսաւ, ո՞վ հայր Արապիոն . իննըսունը եօթը տարի է որ մարդու երես չեմ տեսած, հիմա քեզ կը տեսնեմ . մէկ անասուն մըն ալ չեմ տեսած, մարդու կերակուր չեմ կերած . աշխրքիս լաթերը չեմ հագած : Մ ըսելով պատմել սկսաւ ի-

րեն քաշածները : Արեսուն տարի , ըսաւ ,
խիստ տանջանքով եմ կեցած աս լեռս ան-
պատմելի ճգնութեամբ , անօթի ծարաւ ,
չար սատանաներուն հետ կռուելով , գետ-
նին հողն ուտելով ու ծովուն ջուրը խմե-
լով՝ որ լեռանը տակն էր : Արեսուն տարի
մերկ անցուցի , շատ փորձութիւններ քա-
շեցի , շատ հեղ սատանաներն իս կը քա-
շէին , լեռանը գլխէն ինչուան վար կը տա-
նէին , իս ծովը ձգել կ'ուզէին , բայց Ար-
տուած թող չէր տար . անանկ կը քաշկըու-
տէին վերէնիվար որ՝ միսս պատառ պատառ
գետինը կ'իյնար . քանի որ անոնք իս վար
կը բերէին , այնչափ ալ ես հանդարտու-
թեամբ ինչուան լեռան գլուխը կ'ելլէի՝
թէպէտ խոցերով ցաւերով լեցուած . սա-
տանաները կ'աղաղակէին երեսիս թէ ինչ
եկեր ես հոս , գնա ասկից , մերն է աս
տեղս , մարդ մը չէ եկած հոս : Բայց ամ-
մէն նեղութենէ փրկեց իս Աստուած , ու-
րուն ապաւիններ էի հաստատուն յուսով :
Արբոր ասանկ երեսուն տարի համբերեցի ,
Աստուծոյ ողորմութիւնը վրաս ինջաւ մար-
մնոյս վրայէն մազեր հանել տուաւ՝ որ բոլոր
մարմինս գոցեց , պաղէն տաքէն պահեց ,
հոգևոր մարմնաւոր կերակուրս պարգևեց ,
հրեշտակներ ալ խրկեց իս մխիթարելու :
Արապիոն որ զարմանալով մտիկ կը դը-
նէր իրեն պատմածներուն , ուզեց իմանալ
նաև իրեն գալը . հարցուց . երբ եղաւ քու
հոս գալդ , կ'աղաչեմ , և ինչպէս եկար :

Պատասխանեց աբբայ Վարկոս . ան ալ
քեզի պատմեմ , ո՛վ զաւակ իմ . պզտիկուց
ես Վճէնք քաղքին մէջ փիլիսոփայութի
կը սորվէի . երբոր ծնողքս վախճանեցան՝
որ մը ինծի միտք մը եկաւ . ամէն մարդ կը
նայիմ որ աշխարհք կը թողնեն կ'երթան ,
որ մըն ալ ես պիտոր երթամ , Մտուծոյ
արդար դատաստանին առջեւն ելլեմ . անանկ
է նէ լաւ է , ըսի , ես հիմակուցմէ ելլեմ
աշխրքէս՝ որ բոլորովին ունայնութիւն է :
Վման որ աս մտքիս վրայ հաստատուեցայ ,
ինչպէս ելլելս , ուր երթալս կը մտմտայի :
Սէյմըն ալ միտքս կաթեց տախտակի մը
վրայ նստիլ , իս ծովուն տալ . յոյսս Մտու-
ծոյ վրայ դնելով՝ ուր որ տանի նէ հոն եր-
թալ : Մտ խորհրդիս վրայ միտքս լուսաւո-
րեցաւ , սրտիս ուրախութիւն մը եկաւ ,
ծովուն ահագին տեսիլքը ինծի վախ մը չի
բերաւ ամենեւին . անանկով մեծ տախտակ
մը առի , լաթերս հանուեցայ , մէկ թեթեւ
լաթով մը տախտակին վրայ նստելով ծո-
վուն մէջ հրեցի . իս Մտուծոյ յանձնելով՝
ուր որ ուզէ հոն առաջնորդէ : Սէյմըն ալ
յանկարծ անուշ հով մը սկսաւ փչել . քիչ
քիչ տախտակը առաջ քշելով՝ ցամաքն աչ-
քէս աներևոյթ եղաւ . ես վրան մէկ մեծ
նաւի մը վրայ նստածի պէս հանգիստ եր-
թալով աս լեռան տակը հասայ : Արբոր ցա-
մաքն ելայ՝ գոհութիւն տուի Մտուծոյ .
բայց լեռան վրայ նայելով մէկ կանանչ մը
չի գտայ , ան ատենը յոյսս բոլորովին Մ-

տուժոյ ձգեցի . ան որ իս ահագին ծովէն
փրկեց , ըսի , աս անապատիս մէջն ալ իս
կը փրկէ . անանկով երեսուն տարի համբե-
րեցի ան նեղու թեանցը ինչ որ առաջ պատ-
մեցի : Հիմա տասը տարի մը կայ որ հրեշ-
տակ Մտուժոյ քու անունդ տուաւ ինձի ,
ով հայր Արապիոն . օրէ օր կը սպասէի քեզ
տեսնելու . գոհու թիւն Մտուժոյ որ քեզ
այսօր տեսայ . խիստ աղէկ ըրիր որ եկար :

Ինչուան որ աս խօսքերս ընցուց , հայրն
Արապիոն անոր ձայնը միայն կը լսէր , զին-
քը չէր տեսներ՝ գիշեր ատեն ըլլալով . առ-
տուան լուսն սկսելով՝ տեսաւ որ արբայ
Մարկոսին ձայնը մարդու ձայն էր , բայց
ինքը մարդ չէր նմաներ , այլ մէկ կէնդանի
մը հաստ ու երկան մազերով վերէննիվար
գոցուած . վախ մը եկաւ իր վրայ : Աբբայ
Մարկոսը հասկընալով ըսաւ . մի՛ վախնար ,
որդեակ իմ Արապիոն , իս ասանկ այլանդակ
ու աղտոտ տեսնելով . աս աղտոտութեան
մէջ պիտի չի մնայ Վրիստոսի գալստեան
ատենը . վախը մէկդի թող . հիմա դուն
սկսիր ինձի պատմել աշխրբիս վրայ թագա-
ւորներն արդեօք առջիննին պէս անանկ կռա-
պաճտ մնացած են , եկեղեցնայ հալածող են :
Աբբոր լսեց որ թագաւորներն ալ իրենց
զօրքերն ալ հիմա ամմէնը քրիստոնեայ են ,
խիստ ուրախացաւ , փառք տուաւ Մտու-
ժոյ : Հապա հաւատքն որ ասչտի պայծա-
ռացեր է , ըսաւ , հաւատքով ալ հրաշք ը-
նողներ կան մի , հիւանդները բժշկող , մե-

ուելները յարուցանող . ինչպէս որ կ'ըսէ
Քրիստոս տէրն մեր , թէ որ հաւատքով
աս լեռան ալ ըսէք , տեղէդ ելիր փոխուէ ,
լեռն ալ տեղէն ելլէ , ձեզի հ'նազանդի : Այս
ըսելու ատենը մէյմըն ալ ան մեծ լեռը ու-
րուն վրայ կեցեր նստեր էին , տեղէն ելաւ
բարձրըցաւ կ'երթար ծովը պիտոր իյնար .
ան ատենն աբբայ Մարկոս ձեռքը լեռանը
կռթընցընելով ըսաւ . իմ խօսքս քու վրայդ
չէ որ՝ դուն տեղէդ շարժիլ սկսար . ես աս
եղբօրը բան հասկըցընել ուզեցի , քեզի
ինչ , դարձիր տեղդ նստէ : Այս խօսքն ըսե-
լու ատենը լեռն ալ նորէն դարձաւ , իր տե-
ղը անշարժ կեցաւ : Այս բաներս տեսնելով
հայրն Սրապիոն դողալէն երեսին վրայ ին-
կաւ . աբբայ Մարկոսը բռնեց վեր վերցուց .
մի վախնար , ըսաւ . անանկ է նէ չէս տե-
սած ասանկ հրաշագործութիւն որ վախը
քեզ առաւ . մեղք անանկ քրիստոնեանե-
րուն , շատ մեծ ցաւ եղաւ ինծի . Ճշմարիտ
քրիստոնեայ անոնք են որ՝ շիտակ աներկ-
բայ հաւատով ինչ որ ըսեն ըլլայ . ուր որ
հաւատք չի կայ՝ անուամբ միայն են քրիս-
տոնեայ . վայ ան տեղին ալ որ անունով
միայն քրիստոնեայ են . անոր համար օրհ-
նեալ է Աստուած , որ իս աշխրբէս հանեց
հեռացուց :

Ասանկ խօսքերով անցընելով բոլոր օրը ,
երբոր իրիկուն եղաւ , միայն խօսելու ատեն
չէ , ըսաւ , կերակուր ալ առնենք . ձեռքը
վեր վերցընելով Տէր հովուեսցէ սաղմոսն

ըսաւ՝ ետքը աջ դին նայելով հրամցուց ,
երթանք ուտենք , ըսաւ , ինչ որ Մատուած
պատրաստեր է : Հայրն Սրապիոն կը զար-
մանար թէ ո՞վ պիտի պատրաստէր , մարդ
մը չի տեսաւ պատրաստող , քարայրին մէջն
ալ բան մը չի կար . բայց ներս մտածին
պէս՝ տեսաւ սեղանն դրուած , երկու աթու ,
տաք հաց ձեան պէս ճերմակ , աղնիւ կա-
նանչեղէն , ձիթապտուղ , արմաւ , աղ , ու-
կի գաւաթ , մէջի խմելիքը մէկ համ մը
հոտ մը ունէր որ , կ'ըսէ , կարծեմ թէ թա-
գաւորներն ալ անանկ համ չէն առած :

Ուտելէն գոհանալէն ետե՛ ըսաւ աբբայ
Սարկոսը . տեսա՛ր , ո՞վ եղբայր Սրապիոն ,
Մատուծոյ բարերարութիւնը ամէն օր ին-
ծի համար մէկ բաժին մը կը պատրաստէր ,
այսօր քու գալուդ համար երկու բաժին
պատրաստեց : Մն երեսուն տարուան քա-
շածներուս տեղն որ պատմեցի՝ ինծի հիմա
աս հանգստութիւնս տուաւ . հողն ու ա-
ւաղն ուտելուս տեղը՝ ասանկ համով հաց
տուաւ . ծովու ջուր խմելուս տեղը՝ աս ա-
նուշ խմելիքը տուաւ . տաք ու պաղ քաշե-
լուս համար՝ աս մազերն ու ամբութիւնը
տուաւ մարմնոյս , որ անկէց ետեւ չեմ իմա-
ցած ոչ տաք ոչ պաղ . օտանաններուն դէմ
կուուելուս համար՝ հիմա հրեշտակներ ե-
ղած են ինծի մխիթարող : Մտէց հասկը-
ցիր , ո՞վ զաւակ իմ , Մատուծոյ անհատնում
գթութիւնն որ ունի իրեն երկիւղած ծա-
ւաններուն վրայ . ամենեւին պէտքը չէ յու-

սահատիլ Մատուծոյ քաղցրութենէն . ամ-
մէնն ալ թող իմ վրայէս սորվին Մատու-
ծոյ անվերջանալի գթութիւնը . ես ոչ եր-
բէք յոյսս կտրեցի իրմէ : Մն երեսուն տա-
րուան քաջածներուս ատենը մէկ կարծիք
մըն ալ չընկաւ սիրտս՝ թէ Մատուած մոռ-
ցեր է զիս , մէկ մեղադրանք մը չանցաւ
մտքէս՝ թէ ամմէն քաջածներս անպիտան
կերևան Մատուծոյ աչքին . հապա զիս ար-
ժանի սեպելով ան ամմէն նեղութեան՝ ու-
րախութեամբ կը համբերէի , որպէս զի
մաքրուիմ սրբուիմ ըրած սխալանքներէս :
Մնոր համար Մատուծոյ բարերարութիւնն
ալ տեսնելով սղորմեցաւ իմ վրաս . ասանկ
իննսունըեօթը տարի աս լեռը կեցայ , հի-
մա լմնցաւ իմ տարիքս . Մատուած քեզ
խրկեց որ՝ քու սուրբ ձեռքովդ թաղէս զիս ,
ով որդեակ :

Մանկ խօսքերով խրատներով անցուց
եօթն օր . միայն հացէն ետե խօրաթելով
կը սպտամէր Մատուծոյ ըրած բարերարու-
թիւններն ու հրաշքներն իր վրայ . իսկ
մնացած ատենը աղօթքի հետ կ'ըլլար ,
Մատուծոյ և հրեշտակաց հետ խօսակից ըլ-
լալով մէկ երկնային ստեղծուած մը կը դառ-
նար : Աւթերորդ օրը հաց ուտելէն ետե
ըսաւ . թողութիւն ըրէ՛ , եղբայր Արապիոն ,
աս գիշերքեզ աշխատցընեմ պիտոր արթուն
կենալով : Արբօր արեւը մարը մտաւ՝ սկսան
սաղմոս ըսել ինչուան վեց ժամը . լմնցընե-
լէն ետե նստեցուց՝ ըսաւ . տես ով եղբայր

Արապիոն , մարմինս աղէկ մը ծածկես , երեսս քարայրին դին տաս , դուն ալ հոս չուշանաս , շուտով ելլես երթաս :

Արապիոն ան ատենը լալով աղաչեց աբբայ Սարկոսին որ խնդրէ Մատուծմէ , ինքն ալ հոն մէկտեղ վախճանի : Սիրտս խիստ խռոված է , ըսաւ , աս ահագին անասպատին մէջ . ոչ ճամբայ ունի , ոչ ջուր : Առաջ կեցիր , մի լար , ըսաւ աբբայ Սարկոսը . Մտոր քեզ հոս բերաւ , ինքը քեզի առաջնորդ կ'ըլլայ կը տանի . մի վախնար , տանջանքով եկար , բայց հանգիստ անաշխատ կը դառնաս : Գիտցիր , ով հայր Արապիոն . այսօրուան օրս ինծի ամմէնէն մեծ օրն է . այսօր պիտի տեսնէ իմ հոգիս ան արքայութիւն որ Մատուծ պատրաստեր է արդարներուն :

Աս ըսելու ատենն իրենց կեցած քարայրը լեցուեցաւ Մատուծոյ լուսոյն արևէն աւելի պայծառ , լեռները կը փայլատակէին . իսկ իրենց կեցած լեռը անուշահոտութեան ծխով լեցուեցաւ . Արապիոն վախէն գետինն ինկաւ . աբբայ Սարկոսը զինքը վեր վերցուց , մի վախնար , ըսաւ , որդեակ իմ : Բայց աս ըսելու ատենը տեսաւ որ իր երեսն ալ բոլորովին լուսաւորուած էր , ինքը հոգևով սրբով լեցուած՝ բարի եկեք , ըսաւ , սուրբ հրեշտակներ , Գաբրիէլ և Միքայէլ : Ան ատենը քարայրէն դուրս հանեց ըսելով . ով որդեակ իմ Արապիոն , Մտորմութիւնը քու վրայ ըլլայ : Արեցած տեղն ալ սկսաւ օրհնել ասանկ . անչափ

ատեն իմ կենդանութեա ընտանիքս եղար,
ըսաւ, հիմա ալ մարմնոյս հանգստեան տեղ
ըլլաս, ինչուան որ գայ յարուցիչն Քրիս-
տոս. դուն ալ, ով մարմին իմ, որ եղար
տուն ցաւոց, հոս կեցիր ինչուան որ գայ
Քրիստոս, որուն համար ասչափ տանջա-
նաց համբերեցիր: Ատքը ամէն մէկ զգայ-
արանքներուն վերջի ողջոյնը տալով ըսաւ.
հանգչեցէք ասկէց ետքը որ արժուն կեցած
Քրիստոս կը պաշտէիք:

Այ խօսքերս երբոր կը լսէր հայրն Արա-
պիոն լալ սկսաւ. յանկարծ մէյմըն ալ ձայն
մը լսեց երկընքէն. բերէք հոս անապատին
ընտրեալ անօթը որ իմ կամքս կատարեց,
բերէք կատարեալ քրիստոնեան: Ան ա-
տենն արբայ Արիփոսը բարևելով ըսաւ.
ով հայր Արապիոն, Աստուծոյ խաղաղու-
թիւնը հետդ ըլլայ. Աստուած բարիք հա-
տուցանէ քու աշխատանքիդ որ ինձի հա-
մար աշխատեցար. խաղաղութիւնն Աստու-
ծոյ ամէնուն վրայ ըլլայ, տէր Հիսուս ի-
րեն եկեղեցին յաւիտեան պահէ: Տես, ը-
սաւ, եղբայր Արապիոն, բան մը չի հագուե-
ցընէս աս մարմնոյս, այլ իրեն մազերովը
թաղէս ինչ որ Աստուած հոգուեցուց. իմ
սակորներէս ալ բան մը չի տանիս, և ոչ
մազ մը. դուն ալ հետևեալ գիշերը ձամ-
բայ ելիր գնա, մի վախնար, հինգ ժամէն
ետև տեղդ կը հասնիս:

Այ զուրցելու ատենը նորէն ձայն մը ե-
կաւ երկընքէն՝ բերէք: Ան ատենը արբայ

Մարկոսին երեսը բոլորովին զուարթ ու
բախ՝ ելիր, ըսաւ, ով եղբայր Սրապիոն,
աղօթքի հետ ըլլանք: Հայրն Սրապիոն
մէյմը վեր նայելնինի՝ տեսաւ որ աբբայ
Մարկոսին հոգին հրեշտակներն առեր վեր
կը տանէին երգելով. տեսաւ ալ որ վերի
եղած սատանաներու բազմութիւնը վրայ
թափեցան, ժամ մը հոն կեցուցին արգի-
լեցին քննութիւն ընելու. բայց ժամէն ե-
տե ձայն եկաւ երկրնքէն, փախէք ժողովք
սատանայի, աս մարդս արդար է: Մնկից
ետե տեսաւ մէկ հրեղէն ձեռք մը անոր
հոգւոյն վրայ ինչուան որ վեր երկինքն ել-
լելով աներևոյթ եղաւ:

Մյոնք տեսնելով հայրն Սրապիոն, մէկ
դիացէն զարմանքով՝ մէկալ դիացէն տըրտ-
մութեամբ լեցուած, լալով ողբով առաւ
սուրբ մարմինը հոն թաղեց. աղաչեց Մս-
տուծոյ որ ան ահռելի անապատէն զինքը
հանէ: Մըւը մարը մտնելու ատենը մէյմըն
ալ տեսաւ որ ան երկու կրօնաւորներն որ
առաջ Յոհաննէս ձգնաւորին քովը տեսեր
էր, նորէն իրեն քովն եկան. երանի է քե-
զի, ըսին, ով եղբայր Սրապիոն, որ արժա-
նի եղար աբբայ Մարկոսը տեսնելու և թա-
ղելու, որու նման սուրբ հիմա չի կայ աշ-
խարհիս մէջ. ելիր, ըսին, երթանք գիշե-
րուան ատեն որ տաք չի քաշես:

Արբոր ասանկ գնալու հետ եղան հինգ
ժամ՝ Մստուծոյ ըրած բարերարութեանցը
վրայ խօրաթելով, բարև տալով հեռացան

իրմէ . մէյմըն ալ հայրն Արապիոն տեսաւ
զինքն որ Յոհաննէս ճգնաւորին խցին առ-
ջն կեցեր է , ուսկից որ առաջ ճամբայ ե-
լեր էր . զարմանքն առաւ զինքը , բարձր
ձայնով սկսաւ գոհանալ Աստուծոյ : Յոհան-
նէս ճգնաւորը ներսէն իրեն ձայնը առնե-
լով դուրս վազեց՝ մէկիկ մէկիկ լսեց իր-
մէ ամմէն եղածները , զարմացաւ օրհնեց
Աստուած ըսելով . յիրաւի մենք գործքով
քրիստոնէայ չենք , այլ միայն անուանով :
Քանի հոգի որ կային լսեցին , շուտ մը գիր
անցուցին աբբայ Մարկոսին վարքը :

Պ Ե Ղ Ե Գ Ի Թ Ա . Կ Ո Յ Ս

Ասիկայ էր մէկ խելացի ու գեղեցիկ
աղջիկ մը , հարուստ մարդու զաւակ , բայց
կռապաշտ , Տարսոն քաղքին մէջէն որ հի-
մա Թէրոսիս կ'ըսուի Ատանա գաւառին մէ-
ջը : Հոն եկած էր սուրբ եպիսկոպոս մը
Ալենոն անուանով , որ քրիստոնէութիւն քա-
րողելով շատ հոգի դարձուցեր էր : Ասոր
անունը լսելով Պեղեգիա կոյսը՝ ճշմարիտ
լոյսն հաւատոյ սրտին մէջը վառուեր էր .
կը փափագէր հետը տեսնուելու որ սորվի
անկից ճշմարիտ հաւատքը , բայց չէր կըր-
նար . մէյմը որ Ալենոն եպիսկոպոսը հալա-
ծուելով Տարսոնէն դուրս էր ելած , մէկը
չէր գիտեր ուր ըլլալը . մէյմըն ալ որ Պե-
ղեգիա անանկ մէկի մը հետ նշանած էր որ

Վիսկէտիանոս կռապաշտ կայսեր որդե-
գիրն էր, Սիմպլիկիոս դատաւորին զաւակ :
Բայց Քրիստոս որ զինքը պիտի լուսա-
ւորէր, գիշերը երազին մէջը ցցուց իրեն
Ալէնան եպիսկոպոսը, տեղն ալ ցցուց ուր
որ պահուրտած կեցեր էր քաղքէն դուրս :
Պեղեգեան արթըննալով աղաչեց մօրը՝ զին-
քը խրկել իր սնուցչին (տատային) քովը ի-
րեն տեսութեան, որ ան ալ Տարսոն քաղ-
քէն դուրս կը նստէր. անանկով Պեղե-
գիան երկու իրեն աղախինները՝ քանի մըն
ալ ներքինիներ սպասաւորներ հետն առնե-
լով՝ դուրս ելաւ, որոնց մէջը երկու հօգի
ծածուկ քրիստոնէայ էին :

Արբօր քաղքէն քիչ մը դուրս ելան՝ տե-
սան եպիսկոպոսն որ ծառերուն մէջը ժուռ
կու գար. Պեղեգիան իրեն սպասաւորները
հոն թողաւ, ինքն երկու աղախիններովն ե-
պիսկոպոսին քովն եկաւ պատմեց իրեն տե-
սած երազը. աղաչեց որ ճամբայ մը ցցնէ,
ինչ պէտք է ընել իրեն՝ որ ճշմարիտ Մօր
պաշտէ : Եպիսկոպոսն առաջ հասկըցուց
մկրտութեան պէտք ըլլալը. երբօր կոյսը
փափագով խնդրեց, եպիսկոպոսը աղօթք
ընելով հոն ջուր բղխեցուց, Պեղեգիան ու
իրեն երկու աղախինը մկրտեց, սուրբ խոր-
հրդոյն ալ հաղորդեց՝ որ հալածանքի պատ-
ճառովը վրան կը կրէր :

Մկրտուելու ատենը Պեղեգիան ջրին
վրայ երկու հրեշտակ տեսաւ ձեռուրնին
ճերմակ լաթեր բռնած. ինքն ալ մկրտուե-

էն ետև անանկ մէկ երկնային սիրով մը
լեցուեցաւ որ իրեն մենծութիւն ու ամմէն
աշխարհք քամահրելով՝ Յիսուսի երկնա-
ւոր փեսային զինքը նուիրեց . իրեն փառա-
ւոր հագուստը հանեց եպիսկոպոսին տուաւ
որ աղքատաց բաժնէ . ինքը աղքատ լաթեր
հագած՝ իր ծառաներուն քովը դարձաւ .
մէջերնէն կռապաշտ եղողները դարձուց
քրիստոնէայ ըրաւ , անոնց հետ եկաւ իր
սնուցչին տունը : Բայց անիկայ վախցաւ իր
տունն ընդունիլնոր քրիստոնէայ եղած աղ-
ջիկը , իր մօրը տունը դարձուց :

Արքոր մայրը տեսաւ զինքն անանկ աղ-
քատ լաթերով , հարցուց հասկըցաւ որ
քրիստոնէայ եղեր է , սկսաւ լալ ողբալ , իր
նշանածին իմացուց , որպէս զի դայ աղջկան
միտքը փոխէ : Աշանածն եկաւ , տեսնելով
որ Պեղեգիան իր միտքը չի փոխեր՝ ինքիւր
զինքը սպաննեց : Մայրը վախնալով չըլլայ
թէ իրենց մէկ փորձանք մը հասնի՝ գնաց
մատնեց դատաւորին , որ իր առջևը կանչե-
լով Պեղեգիան շատ յորդորեց որ միտքը
դարձնէ : Արքոր տեսաւ որ Պեղեգիան
թէ իրեն յորդորանքը և թէ իրեն տուած
վախը բանի տեղ չէր սեպեր վար կը դար-
նէր , հրամայեց ցուլի մէջ ձգել . ասիկայ
պղընծէ շինած աման մըն էր , ցուլի (պու-
ղայի) ձևով շինուած , որ խիստ տաքցընե-
լով՝ մեծ մահապարտները մէջը կը ձգէին :
Պեղեգիա որ խիստ կը փափագէր Վրիս-
տոսի համար կեանքը տալ , ուրախութեամբ

ան ամանին մէջ մտաւ , Մտուծոյ փառք տալով հոգին աւանդեց . անանկ մէկ անուշահոտութիւն մը բուրեց բոլոր քաղքին մէջն որ շատ կուսպաշտներ դարձան քրիստոնեայ եղան , որոնցմէ երկու հոգի ալ նա հատակուեցան :

Իսկ Պէղեգիային մնացած ոսկորները դատաւորին հրամանովը հանեցին Լինատան լեռը տարին ձգեցին՝ որ չըլլայ թէ քրիստոնեաներն առնեն տանին . բայց Մտուծոյ հրամանովը չորս առիւծ եկան պահապան եղան ոսկորներուն , ինչուան որնոյն սրբուհին երևնալով Ալեմոն եպիսկոպոսին՝ յայտնի ըրաւ իրեն տեղը : Ապիսկոպոսն ալ ոսկորներն առաւ լեռան գլուխը տարաւ , քարերով գոցեց . ետքը հալածանքը քիչ մը ինչնալէն ետև՝ վրան խորան ու մատուռ շինեց . ուր շատ քրիստոնեայ ուխտի կուգային , աղօթք ընելով իրենց խնդիրքը կ'առնէին : Մտեն անցնելէն ետև Պօլիս Պէյօղլու բերին , կ'ըսեն , ասոր սուրբ նըշխարքները :

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍՍԻՈՐԻԶ

Իրեն հայրը կ'ըսուէր Մնակ իսկ մայրը Ոգոհէ : Հայրը Պարթևաց ազգէն ըլլալով կուսպաշտ , ան մտքով Պարսից երկրէն տնով տեղով ելաւ եկաւ Հայաստան՝ որ Խոսրով Հայոց թագաւորն սպաննէ :

Լսոնք երբոր Արտազ զաւառը հասան
Թաղէոս առաքեալին գերեզմանին մօտիկ,
հոն եղաւ Առսաւորչայ յղութիւնը . իսկ
ճնունդն եղաւ Աղարշապատ քաղաքը՝ որ
մեր Թագաւորներուն աթոռն էր : Լսակ
երբոր սպաննեց Ասորով Թագաւորը՝ բոլոր
Լսակայ տունը թրէ անցուցին . միայն ի-
րեն երկու պղտիկ տղաքը կրցան փախցը-
նել, մէկը Սուրէն՝ Պարսից երկիրը տա-
րին, մէկաւն որ մեզի լուսաւորիչ պիտոր
ըլլար՝ իրեն ծծմայրը Սոփի անուն՝ Աեսա-
րիա փախուց . որ քրիստոնեայ ըլլալով՝ տը-
ղան մկրտել տուաւ, Վրիգոր անուն դնել
տուաւ, ինչպէս որ հրեշտակ Լստուծոյ ը-
սեր էր ճամբան, ծառի մը վրայէն աղաւնիի
բերնէն Վրիգոր կանչելով, որ արթուն ը-
սել է :

Սոփին բարեպաշտ քրիստոնեայ կնիկ ըլ-
լալով՝ աղէկ կրթութեամբ մեծցուց Վրի-
գորը . աղէկ աշակերտ ըրաւ գրոց՝ ինչպէս
որ պէտք էր : Վրիգորը երբոր մեծցաւ,
Պաւիթ անունով մէյմը իր աղջըկանը հետ
կարգեց, որ կ'ըսուէր Սարիամ : Արկու զա-
ւակ ըլլալէն ետեւ, որ Արիստակէս ու Ար-
թանէս ըսուեցան, Սարիամ վանք մը մը-
տաւ . իսկ Վրիգոր իրեն հօրն ըրածները
հասկընալով Տրդատ Թագաւորին քովն ե-
կաւ, անոր ծառայութեանը մէջ մտաւ աս-
տուածային ծածուկ կարգաւորութեամբը .
իբր թէ իրեն հօրն ըրածին տեղը որ Տըր-
դատայ հայրը մեռուցեր էր՝ հատուցումն

ընէ . բայց ամենեւին չի հասկըցուց որին տղան ըլլալը :

Տրդատ երբոր Հռոմայեցոց երկրէն իր երկիրը Հայաստան դառնալու եղաւ Վիտիւ Լետիանոս կայսերմէն պսակուելով՝ առաջ Լըրզնկայ ինջաւ . հոն խիստ երևելի կուռք մը կար Մնասիտ անունով՝ ան կուռքին զոհ մատուցանելու : Օրհն ընելէն ետև երբոր սեղան նստաւ , Վրիգորին ըսաւ որ ծաղկէ կանանչէ շինած պսակ ընծայէ կուռքին , որ անչափ բարերարութիւն ըրեր էր մեզի՝ կ'ըսէր : Վրիգոր ան ատենն իրեն քրիստոնէայ ըլլան երևան հանեց . ետ կեցաւ կուռքին պատիւ ընելու : Տրդատ բարկանալով ան օրը պահել տուաւ . վաղուան օրն առջևը բերելով ըսաւ . դուն մէկ օտարական մը քուլս եկար , ասչափ տարի միամտութիւն կը ծառայէիր . ես ալ միտքս դրեր էի քեզ մենծութեան հասցընելու . հիմա ինչ եղաւ քեզի , ինչո՞ւ իմ կամքս չես ըներ , ու կը պաշտես ան Մստուածն որ ես չեմ պաշտեր : Վրիգոր պատասխան տուաւ . ես միայն արարիչը կը պաշտեմ , ան է միայն Ճշմարիտ Մծ . ձեր կուռքերը անշունչ անբան են , մարդու ձեռագործ են . անոնք պաշտողներն ալ անմիտ են , անոնց պէս իրենք ալ անբան անասուն կ'ըլլան որ անանկները կը պաշտեն : Տրդատ ըսաւ . որովհետև դու կուռքերն ալ մեզ ալ անասուն ըրիր , անանկ է նէ ես ալ քեզ հիմա անասնոյ պէս տանջեմ որ հասկընաս :

Առաջ հրամանեց ձեռքն ետևը կապել, բերանը փայտ խօթել, երկրորդ՝ կոնակն ալ աղի քարեր շալկել տուաւ անասնոյ պէս. երրորդ՝ չուանով կապելով վեր վար կ'ինջեցընէին կը վերցընէին եօթն օր անանկ կապկըպած : Ատքը Տրդատ առջևը բերել տալով՝ հասկըցա՞ր մի հիմա, Վրիգօր, ըսաւ, որ անասունը դուն ես եղեր և մեր կուռքերն Աստուած՝ որ քեզ ձիու և իշու պէս տանջել տուին. հիմա թէ որ յանձն չառնես անսնք պաշտելու, ալ աւելի պիտի տանջուիս գիտցիր : Վրիգօր պատասխան տուաւ. քու կուռքերդ չիմացան ալ որ ես ինչ տանջանք քաշեցի. այլ իմ ճշմարիտ Աստուածս իս պահեց. փայտաշէն կուռքերդ կրակով պիտոր երին, զիրենք պաշտողներն ալ հետերնին մէկտեղ. իսկ քարաշէն կուռքերդ քարի պէս ջրին տակը պիտոր իջնան :

Տրդատ աս խօսքերուն վրայ խիստ սրգոյշելով չորրորդ տանջանքը տուաւ. որ էր մէկ օտքէն գլխիվար կախել, գլխին տակը աղը ծխել :

Հինգերորդ՝ կախելով չարաչար ծեծել տուաւ մարմինը. եօթն օր անանկ կախուած տեղը կը ծեծէին, որ մարմինը ջարդուբուրդ եղաւ : Վրիգօր անանկ կախուած՝ Աստուծոյ ըրած գործքերը մենծութիւնը անոնց կը վարդապետէր, իրենց դարձին համար ալ Աստուծոյ կ'աղաչէր : Տրդատ նորէն առջևը բերել տալով, նորէն կը յորդորէր կը վախցընէր : Վրիգօր պատասխան

տուաւ . ես օր մը առաջ կ'ուզեմ աս մարմինէն ելլել և յաւիտենական կեանքը մտնել , ինչպէս կ'ուզես հրամանէ իս մեռցուր :
Տրդատ ըսաւ . ես քեզ մէկէն չեմ մեռցըներ , այլ երկայն տանջանքներով՝ որ կուսքերուն անարգանաց տեղը հատուցանես :

Ա եցերորդ տանջանքն աս տուաւ . փայտէ կոճեր բերել տուաւ , ճիւղերը մէջը սխմել հրամանեց չուաններով կապելով , ինչուան ոտքին մատուրներէն արիւնը դուրս կ'ելլար :

Ըն տանջանքովն ալ որ չի կրցաւ միտքը դարձնել , եօթներորդ տանջանքը հրամանեց , ոտուրներուն գամեր զարնելով՝ ձեռքէն բռնած ասդիս անդին քայցընել , անանկ որ վազած արիւնը գետինը կը թըրջէր : Տրդատ քանի որ տանջանքը կ'եւելցընէր , Վրիգորն ալ մէկդիէն աղօթք կ'ընէր Ըստուծոյ որ իրեն համբերութիւն տայ և կուսպաշտ ժողովրդեանը դարձ . մէկալ դիացէն ալ կուսքերուն ստուածիւնն ու ճշմարիտ Ըստուածպաշտութիւնը իրենց կը սորվեցընէր . բայց օգուտ մը չեղաւ . այլ Տրդատայ վրայ աւելի կատաղութիւն մը եկաւ , աւելի յամառութիւն սատանային դրդելովը . միտքը դրաւ որ տանջանքը շատցընելով Վրիգորին միտքը վերջապէս փոխէ :

Ընոր համար ութերորդ տանջանքը տրուաւ . գլուխը մամուլի (ճէնտերէի) մէջ դնել տալով , եղեգով մը քթին մէջ աղ ու բորակ և բարակ քացախ փչել :

Ըններորդ տանջանք տուաւ , տկի մը մէջ

տաք մոխիր լեցընել հրամմեց, անանկ դու-
խը անցընել ու վզէն կապել. վեց օր անանկ
կեցուց սուրբը :

Տասներորդ՝ գլխիվար կախել հրամմեց,
ձագառ (խունի) մը անցընելով աղիքներուն
ջուր լեցընել փորը, անչափ որ քթէն բեր-
նէն ջուրը դուրս կը վազէր :

Տասներմէկերորդ տանջանքն եղաւ եր-
կըթէ քերիչներով կողերը քերել :

Տասուերկուերորդ՝ երկըթէ փշեր դե-
տինը ցանել, ան փշերուն վրայ քաշկուտել
պտըտցընել, ինչուան օր բոլոր մարմինը ծակ-
ծրկեցաւ :

Տասուիրէքերորդ՝ ծնկուրներն երկըթէ
ամաններու մէջ հագուեցընել ու անանկ
կախուած թողնել իրէք օր :

Տասնըջորսերորդ՝ կապար (ղուրչին) հա-
լեցընել ու եփ մարմնոյն վրայ և բերնին
մէջ ջրի պէս լեցընել :

Աչափ տանջանքներէն ետքը Վրիգորին
ողջ մնալը կը տեսնէին, որ յայտնի հրաշք
էր, բայց սրտերնին ամենեւին չէր շարժեր.
վասն զի անչափ կռապաշտներէն մէկն ալ
չի դարձաւ. մանաւանդ թէ մենծերէն մէկն
իմանալով որոն զաւակն ըլլալը, ու թա-
գաւոր, ըսաւ, աս մարդս Անակայ զաւակն
ըլլալով՝ որ քու հայրդ Այոսրով թագաւորը
մեռուց, ապրելու՝ արեւին լոյսն ալ տեսնելու
արժանի մարդ չէ : Այս լաածին պէս Տրդատ՝
շուտ մը Վրիգորին ոտքը ձեռքը կապած՝
Արտաշատ ըսուած բերդը խրկեց. որ աչ-

քը չի տեսնէ . հոն խոր վիրապը ձգել
հրամանեց , որ մահապարտները ձգելու հա-
մար գէշ հոր մըն էր , խորունկ , թաց ու
լեցուն օձերով . հոն ընկածը մէկէն կը
մեռնէր :

Բսոնք արժանի չի սեպեցին լոյս տեսնե-
լու անանկ մարդու որ Բստուած պատրաս-
տեր էր զիրենք լուսաւորելու . անոր հա-
մար ինչպէս որ տանջանքներուն մէջ՝ ա-
նանկ ալ աս մահաբեր խոր վիրապին մէջ
ողջ առողջ պահեց զինքը տասնըչորս տարի .
հրեշտակ Բստուծոյ ալ որբեվարի կնկան մը
երազի մէջ ապսպրեց ամէն օր մէյմէկ հաց
հորին բերնէն վար նետել . անով կ'ապրէր
սուրբ Վրիգոր մութ խաւար բանտին մէջ .
իրեն պահապան հրեշտակին ալ ապրու-
պրուած էր Բստուծոյ , որ կու գար կը մը-
խիթարէր ան բազմաչարչար նահատակը :

Տրդատ ան տանջանքները տալէն ետե
Երզնկայի մէջ՝ ճամբայ ելաւ Վաղարշա-
պատ քաղաք իր աթոռն երթալու . և ան
հրաշքները չի տեսածի պէս , կամ կուռքե-
րուն ստու թիւնը Վրիգորէն չի լսածի պէս՝
ամէն տեղ սաստիկ թուղթ գրեց որ հոգ
տանին կուռքերը պաշտելու , քրիստոնեա-
ները ջնջելու . օրինակ բերելով իրեն ըրա-
ծը՝ թէ ինչպէս ինքն ալ չէր ապրեցուցած
իր սիրելի ծառան Վրիգոր քրիստոնեայ ը-
լալուն համար :

Բայց տես թէ ինչ անհասանելի խոր-
հուրդ է Բստուածային խորհուրդը . ան

Վրիգորն որ կենդանու թեան ատենն ան-
չափ քարոզու թեամբ ու հրաշքներով տան-
ջանք քաշեց ու չի կրցաւ Տրդատը դարձը-
նել, Մատուած անանկ ըրաւ որ՝ իր մե-
ռեալ կարծուած ատենը Տրդատն ալ ամ-
մէնն ալ դարձուց : Խոր վիրապը ձգելէն
ետեւ, տասնըչորս տարի անցաւ՝ մէյմըն ալ
հեռու աշխրբէն հռոմայու երկրէն խումբ
մը կուսանքներու՝ տկար ազջիկներու ժո-
ղով մը խրկեց Մատուած Տրդատայ քով. որ
անոնք ալ նորէն քրիստոնէութեան ճրջ-
մարտութիւնը ցցուցին իրեն. քրիստոնէու-
թեան համար արիւննին թափեցին. իրենց
արիւնն ալ արդիւնաւորեցաւ Վրիգորին
քարոզութեանը պտուղ ընել : Տրդատն
ալ ամմէնն ալ լուսաւորել :

Մտնք էին սուրբ հռիփսիմեանք, որոնք
ամմէնն ալ Տրդատ նահատակել տուաւ,
մարմիննին բայը ձգել. բայց վեց օրէն ե-
տեւ աստուածային բարկութիւնը շարժե-
ցաւ, ինքը վրէժխնդիր եղաւ անոնց արեա-
նը ասանկ :

()ը մը երբոր օրսորդութե (ալի) ելաւ
Տրդատ, յանկարծ վրան դիւահարիլ մը
եկաւ, սկսաւ զինքը կառքէն վար նետել.
մարմինը խածխծել. Վաբուգողոնոսորայ
պէս իր կերպարանքը փոխուեցաւ, խոզի նը-
ման եղաւ. խոզերուն մէջը կը մտնէր կը
խառնուէր, խոտ կ'ուտէր. շատ ուզեցին
բռնել քաղաքը բերել, ճար չեղաւ. անոր
ուժը մէկը չէր կրնար զսպել : Մտնկ ալ

դիւահարեցան Տրդատայ ամմէն ծառաներն ու բոլոր տունը :

Բայց Ատուծոյ բարութիւնն որ մէկ դիացէն թէ որ պատժէ՝ մէկալ դիացէն իրեն ողորմութիւնը կը ցցընէ , իրեն հրեշտակը խրկեց որ երևնալով Ասորովիդխտին ըսաւ . ձեր տանը բժշկութեան ուրիշ ճարչըլար , ինչուան որ Վրիգորը խոր վիրապէն չի հանէք ձեր քովը չի բերէք : Ասորովիդուխտ Տրդատ թագաւորին քոյրն էր , ազնիւ կոյս , որ ()տայ ըսուած մեծ նախարարը Անակայ ձեռքէն փախուցեր Ամասի բերդը պահեր էր ինչուան որ Տրդատ եկաւ թագաւոր նստաւ . հոն քրիստոնէից մօտիկ ըլլալով , կ'երեւայ որ ինչպէս ()տայ նախարարը անոնցմէ լսելով՝ քիչ մը իմացեր էր կուռքերուն սուտ ըլլալը , ասանկ ալ աս կոյսս իմացած էր . Աորենացին ք . 82 . աս բանիս նշան մը կու տայ :

Ասորովիդուխտ հրեշտակին ըսածը զուրցեց քանի մը մեհմեհերուն՝ որոնց որ պէտք էր . անոնք աս խօսքս լսածնին պէս իր բերնէն՝ ամմէնն ալ վրան փրթան ըսելով . վայ , անանկ էնէ քեզի ալ բան մը եղեր է . մենք քեզ ողջ մտքով խելացի աղջիկ մը դրեր էինք մտուրնիս , դուն ալ խելքդ կորսընցուցեր ես եղեր , ըսին . ան հորին մէջ իյնողը ամիս մըն ալ չապրիր , ուր մնաց որ տասնը չորս տարի ապրած մնայ Վրիգորը՝ քանի որ զինքը հորը ձգեցինք : Բայց հրեշտակին տեսիլքը կրկին ու կրկին երևնալով և պա-

տու իրելով Աստուծոյ խղիւտին, ան ատենը վերջիշեալ () տայ նախարարը խրկեցին : Այրբոր եկան հորին բերնէն չուան երկնցուցին, տեսան որ Վրիգորը ողջ է, չուանը բռնելով վեր ելաւ, զարմացան մնացին, մարմինը լուանալով որ սեփ սև էր կտրած, լաթ հագուեցընելով առին տարին Ազղարշապատ :

Վիւահարած մարդերը տեսածնին պէս Վրիգորը՝ առջևը վազեցին Տրդատն ալ ամմէնքն ալ, մերկ խայտառակ փրփրալով ոտքն ինկան : Սուրբ Վրիգոր առաջ ծունկ չոքելով աղօթքի կեցաւ, աղօթքով զգատացուց զիրենք, անչափ որ սկսան խօսք հասկընալ, իրենց խայտառակութիւնն իմանալ ու վրանին լաթ հագնել. թագաւորն ու մենծերը սրբոյն ոտքը իյնալով թողութիւն խնդրեցին ինչ որ ըրեր էին ատեն մը իրեն՝ այնչափ տանջանք տալով : Սուրբը ոտքի վրայ կեցընելով զիրենք՝ ճշմարիտ Մատուածը պաշտեցէք, ըսաւ . բայց ո՞ր ձգեցիք սուրբ վկաներուն մարմինը : Մնոնք չի հասկըցան ամենեւին որ ինչ վկաներուն համար կը հարցընէ : Մն վկաներուն համար կը հարցընեմ, ըսաւ սուրբ Վրիգոր, որ դուք քրիստոնէութեան համար սպաննեցիք : Մն ատենը տեղը ցցուցին . տեսան որ իննը օր իննը զիշեր անանկ բացը ձգած ըլլալով ան մաքրափայլ կուտանաց մարմինները՝ ամենեւին չէին հօտած, գազան մըն ալ չէր մօտիկցած . շուտ մը իրենց ազնիւ

լաթերնին բերին որ պատեն : Քայց սուրբ
Վրիգոր՝ դուք կռապաշտ ըլլալով արժա-
նի չէք, ըսաւ, որ ասանկ սուրբերուն նըշ-
խարբը ձեր լաթերուն մէջն առնէք : Մնոր
համար իրենց խեղճ լաթերովը պատեց ու
իրենց բնակած տեղը ժողովեց մարմիննին,
ինքն ալ գիշերնիլուս աղօթքի հետ եղաւ
հոն, աղաչելով Մտուծոյ որ ան սուրբ կու-
սանաց արիւնը ծծող երկիրը սրբէ, իրենց
բարեխօսութեամբը կռապաշտութի գուրս
հանէ, դարձ տայ :

Աղուան օրը թագաւորն ալ ամմէն
մենծերն ալ քուրձ (խարար) հագած ու
մոխրի մէջ նստած՝ անանկ կու լային կ'ող-
բային, սրբոյն ոտքը իյնալով կ'աղաչէին որ
իրենց համար թողութիւն խնդրէ Մտուծ-
մէ և ապաշխարութեան ճամբան սորվեցը-
նէ որ չի կորսուին : Սուրբ Վրիգոր սկսաւ
անոնց սորվեցընել ճշմարիտ հաւատքն ու
փրկութեան ճամբան. վաթսունըհինգ օր
միշտ կը քարոզէր իրենց ու դրսէն եկողնե-
րուն, որ ամմէն դիացէն հոն կը թափէին .
վաթսունըհինգ օրն ալ պաք բռնել ու ա-
ղօթք ընել տուաւ իրենց : Մննալէն ետև՝
գիշերը տեսիլք տեսաւ սուրբ Վրիգոր,
սաստիկ լոյս մը՝ մէջը Քրիստոս, որ հրեշ-
տակներու բազմութիւն հոն ինջաւ, գետինը
զարնելով թնտացուց, սատանաները փա-
խուց. չորս տեղ սիւն երեւցան հրեղէն ու
ամպեղէն լուսաւոր խաչերով. ուր որ եկե-
ղեցիներ սխտի շինուէին՝ տեղերնին ցցուց .

ասոնք ամմէնն ալ ժողովրդեան պատմե-
լով՝ ան տեղուանքները խաչ տնկեց :

Երբոր ամմէնն ալ ժողովուած էին, ծունկ
չոքեցրնելով աղօթքի նստեցուց ան նորա-
հաւատ ժողովուրդը . ինքն ալ ամմէն սրտէ
աղօթք ընելովը՝ Տրդատայ սոսկալի կեր-
պարանքը անանկ շտկեց բժշկեց որ՝ մատ-
ղաշ տղի մարմին դարձաւ : Եսանկ ալ քա-
նի դիւահար որ կար մէջերնին , քանի հի-
ւանդ կամ անդամալոյծ , ամմէնն ալ ըռնտ-
ցուց :

Ետքն սկսաւ կռատունները փլցրնել .
ասդիս անդին քալելով ուր որ կռատուն կը
դտնէր , շատ տեղ վրանին խաչակնքելով
մը միայն՝ մէկէն կը փլցրնէր ինչուան տա-
կը . մէջերնէն սատանաներ կ'ելլէին կը
փախչէին , պօռալով ճչալով կ'ըսէին . վայ
մեղի , Յիսուս որդին Սարիամու ամմէն
տեղէն մեղ հալածեց , հոս ալ հիմա Վրի-
գորին ձեռքովը կը հալածէ : Եսոնք տեսնե-
լով ու լսելով ան կռապաշտ ժողովուրդը՝ ա-
ղէկ կ'իմանային սուրբ խաչին զօրութիւնը
և իրենց կուռքերուն ստութիւնն որ առաջ
կը պաշտէին : Քանի մը օրէն ետե ան
կուռքերուն տեղերը ինչուան ճամբաները
Վրիստոսի խաչը տնկուեցաւ :

Երբոր ասանկ կռապաշտութիւնը վեր-
ջացաւ և Հայոց ազգը քրիստոնէութիւն մէջ
աղէկ մը հաստատուեցաւ , հրեշտակ Ես-
տուծոյ երևցաւ Տրդատ Թադաւորին՝ պա-
տուիրեց որ Վրիգոր լուսաւորիչը քահա-

նայ ձեռնադրել տան որ զիրենք մկրտէ :
Եւսաւորչին ալ երեւնալով իմացուց ու
դէմ չի դնէ . ասանկ է Քրիստոսի հրա-
մանն , ըսաւ : Ընոր վրայ Տրդատ շատ զօր-
քով և իշխաններով Աեսարիա խրկեց լու-
սաւորիչը . ուր քահանայապետ Հայոց ձեռ-
նադրուեցաւ Պ ևոնդիոս հայրապետէն և
ուրիշ եպիսկոպոսներէն : Վառնալու ատե-
նը հետը բերաւ Յոհաննու կարապետին և
ԼԹանագինեայ մասունքները . ընտիր կրօ-
նաւորներ ալ բերաւ , որ շուտ մը Հայոց
մէջն ալ մտուցին կրօնաւորութիւնը :

Ղամբան գալնինի եկեղեցիներ կը շինէր
սուրբ Վրիգոր , մկրտութիւն կ'ընէր , քա-
հանաներ կը ձեռնադրէր , ինչուան որ եկաւ
Բագուան , որ Ափրատ կամ Մուրատ գե-
տին քովն է : Տրդատ հոն եկած ըլլալով
ամմէն բանակովն ու իրեն մարդերովը՝ լու-
սաւորչին առջևն ելաւ : Հոն լուսաւորիչ
ամիս մը պաք ու աղօթք ապսպրեց նորա-
հաւատ ժողովրդեան . ասանկ աղէկ պատ-
րաստելէն ետև զիրենք՝ ետքը մկրտեց Ա-
փրատ գետին մէջ , առաջ Տրդատ Թագա-
ւորը , Լճխէն Թագուհին ու Խոսրովի-
դուխտը , ետքը ամմէն իշխաններն ու ժո-
ղովուրդը : Ըտուած ալ ան ատենը զանա-
զան հրաշքներով կը ցցընէր իր գթութիւ-
նը անոնց վրայ . վասն զի մկրտուելու ատեն-
նին գետին ջուրը վազելէն դազրեցաւ ետ
դարձաւ . մէկ լուսաւոր սիւն մը ջրին վրայ
կեցաւ , գլուխը խաչ մը երևեցաւ անանկ

լուսաւոր՝ որ արեւուն լոյսը կը փոցէր . աս
բաներս տեսնելով՝ աւելի կը հաստատուէին
քրիստոնէութեան մէջ ան նոր դարձած ժողովուրդը : Հետեւեալ օրն ալ սլատարագ ը-
նելով սուրբ Վրիգոր՝ ամմէնուն ալ սուրբ
հաղորդութիւն տուաւ . եօթն օր հոն կե-
նալով՝ մնացած ժողովրդեան բազմութիւնն
ալ մկրտեց իրեն քահանաներուն հետ
մէկտեղ :

Անկէջ ետքը սուրբ Վրիգոր ստորտելով
ամմէն քաղաքներն ու գեղերը եկեղեցիներ
կը շինէր , քահանաներ կը դնէր , գլխաւոր
տեղերը եպիսկոպոսներ կը սահմանէր . ամ-
մէն օր խրատ տալով և քարոզելով կ'ան-
ցընէր : Թագաւորին ապսպրեց դպրատուն-
ներ բանալ տուաւ . վարդապետներ , վար-
պետներ նստեցուց . ամմէն դիւանէն տղաք-
ներ ժողովել տուաւ ան դպրատուններուն
մէջ՝ մանաւանդ քուրմերուն տղաքները .
ան սորված կըթուած տղաքներէն քահա-
նաներ ձեռնադրեց , եպիսկոպոսներ շա-
ցուց , անանկ որ իր ատենը բոլոր Հայաս-
տանին մէջ չորս հարիւր եպիսկոպոսարա-
նէն աւելի եղան :

Այսանկ ամմէն բանը աղէկ մը շտկելէն
ետե սուրբ Վրիգոր , իր հոգւոյն վրայ ա-
ւելի հոգ ունենալով և առանձնութե համն
ալ առած ըլլալով՝ ատեն ատեն աներևոյթ
կ'ըլլար , անապատները լեռները կ'եւլէր , մի-
նակ հոն կը ձգնէր , խոտ ուտելով՝ անդա-
դար աղօթքի ու կարգալու հետ ըլլալ

Հայաստան աշխրբին հոգը իր զաւկին Մ. րիստակէսի էր յանձնած՝ որ եպիսկոպոս ձեռնադրեր էր . արքունեաց հոգն ալ Օ ալբոս եպիսկոպոսին :

Եւ որովհետեւ աս ատեն եղաւ Արստանդիանոսին քրիստոնեայ ըլլալը՝ Մուսաւորիչ Տրդատ Թագաւորին հետ մէկտեղ շատ իշխաններով հռոմ գնաց , Արստանդիանոսի ու սրբոյն Սեղբէստրոսի հետ տեսնուեցաւ , շատ իշխանութիւններ անկից առաւ : Դառնալէն ետեւ երբոր Աիկիոյ սուրբ ժողովքը կանչեցին , փառքէ փախչելով ինքը չի գնաց , իր տեղն Մ. րիստակէսը խրկեց , որ երբոր դարձաւ , ժողովքին կանոնները հետը բերաւ , Մուսաւորիչն ալ քանի մը կանոն եւելցուց յարմար իր ժողովրդեան :

Ընկէց ետքը յամին իբր 331 բոլորովին քաշուեցաւ , Սեպուհ լեռն ելաւ հոն ճրգնելու . հոն եղաւ իրեն մահը որ մարդ չի մացաւ . այլ ատեն անցնելէն ետեւ եօթը հովիւ մեռած գտան զինքը՝ դէպ 'ի արևելք նստած , ձեռքը խաչանման վեր վերցուցած , գաւաղան մը ծնկանը վրայ կռթրնած , քոյն ալ սուրբ սեղան սկիհով : Ըսոնք չորս դին քարեր շարելով գոցեցին , իբր թէ մէկ գմբէթ մը շինեցին վրան : Շատ ատեն անցնելէն ետեւ Մուսաւորիչ երևցաւ Դառնիկ ճգնաւորին , ապրսպրեց որ՝ անկէց առնէ իր մարմինը Թորդան գեղը տանի . հոն տանելէն ետեւ շատ հրաշքներ եղան : Բայց ետքը ասդիս անդին բաժնուեցան ան սուրբ

նշխարքները , ինչուան Պօլիս , ուսկից կուսանքներ փախչելու ատեննին՝ հետերնին առին տարին՝ Ալեապօլիս , ուր ինչուան հիմա կեցած է կուսանաց վանքի մը մէջ :

Ըստուրբը աղէկ խրատներու գիրք մըն ալ թողուց , որ Յաճախապատում կ'ըսուի :

ՀՌԻՓՍԻՄԷ ԵՒ ԳԱՅԻԱՆԷ

Դիովետիանոս կայսեր ատենը մէկ տեղ մը ժողվուած կը նստէին քրիստոնեայ կուսանքները Հռոմ քաղքին մէջ . ինչուան իրեք հարիւր հոգիի չափ կային . քահանաներ ալ ունէին իրենց վրայ , բայց ամմէնքն ալ խիստ ծածուկ՝ հալածանքի վախէն : Ըստ աղջիկներուն գլուխ կամ հոգևոր մայր էր եղած սուրբ Վայիանէ , որ կայսերական տնէ էր . մէջերնին աղջիկ մը կար Հռիփսիմէ անունով կայսեր տնէն , որ պղտիկուց Վայիանեայ ձեռքն էր մեծցած :

Հռիփսիմէն երբոր տարիքն առաւ աղէկ կրթութիւն մեծցաւ Վայիանեայ ձեռքովը , եղաւ մէկ ընտիր անձ մը . այնչափ էր վառուած սիրովն Քրիստոսի՝ որ ինքիրմէ ընտրեց միշտ կուսութիւն ան տեղս մնալ Ըստուածածնայ ծառայել : Վայիանէն տեսնելով Հռիփսիմեայ ասանկ առաքինասիրութիւնը՝ խիստ կ'ուրախանար . աղօթք ընելով Ըստուածածնայ նուիրելով կ'ուրատէր որ իրեն աղախինն ըլլայ , Քրիստոսի

նուիրէ իրեն կուսութիւնը . ան ատենը
Հռիփսիմեայ վիզը կախեց ան խաչափայ-
տը , որ վանքին մէջ կը պահուէր : Ըստ խա-
չին կտորը Յակոբոս եղբայր տեառն բուն
Քրիստոսի խաչափայտէն կտրեր էր Պա-
տրոնիկէ Թագուհւոյն համար , որ իրենց
ազգականն ըլլալով՝ Առօրեայ կայսեր կնիկ
էր եղած , բայց քրիստոնեայ :

Ըսկից ետե սրբուհին Հռիփսիմէ առա-
ւել վառուեցաւ Ըստուածամօրն և Քրիս-
տոսի սիրովը . աւելի յառաջացաւ հոգևոր
կենաց մէջ , առաքինութիւն զարդարուելով
մէկալ կուսանքներէն աւելի , որոնք ամ-
մէնն ալ ճգնաւորի պէս կ'ապրէին . միայն
հրնտեղէն ուտելով ու հաստ զգեստ հագ-
նելով , միշտ աղօթքի ու կարգալու հետ
ըլլալով կ'անցընէին կեանքերնին . մնացած
ատենը ձեռագործ բանելով ապրուստնին կը
գտնէին :

Արբոր ասոնք ասանկ հանգիստ հոգևոր
կեանք կ'անցընէին , սատանան որ ասանկ
ներուն խիստ կը նախանձի , մէկ փորձանք
մը հանեց որ ամմէնն ալ ցիրուցան ըրաւ :
Դիոկլետիանոս կայսեր միտքն ընկաւ իրեն
նոր կնիկ առնել ուրիշ ունեցած կնկտոցը
վրայ . ան պատճառով ասդիս անդին մարդ
գնաց գեղեցիկ աղջիկներ գտնել , պատկեր-
նին քաշել , որ հաւնածն առնէ : Ըսոնք լսե-
լով աս տեղիս համար թէ շատ աղջիկներ
կան ժողվուած Թագաւորական ցեղէ , հոս
ալ եկան բռնութեամբ մտան . երբոր Հռիփ-

իսկեայ աղուորու թիւնը տեսան՝ շատ զար-
մացան, շուտ մը պատկերքը քաշելով թա-
ղաւորին տարին: Ղիօկլէտիանոս թագա-
ւորը խիստ հաւնելով՝ օր դրաւ հարսնիքն
ընելու. ամմէն մենծերուն ալ մարդ գնաց
հարսնիքի կանչելու:

Ըստելով հասկըցան ան սուրբ կուսանքն
որ սատանային փորձութիւնն է, Ըստուծոյ
ապաւինեցան աղօթք ընելով, աւելի սրբ-
բուհին Ղայիանէ ու իրեն սանը սրբուհին
Հռիփսիմէ. երկուքն ալ լալով ողբալով
կ'աղաչէին զԸստուած որ սուրբ Ըստուա-
ծածնայ բարեխօսութեամբը ճամբայ մը
ցցրնէ, աս փորձանքէն զիրենք խալըսէ,
կուսութեան մարգրիտը չի կորսնցրնէ: Ը-
ղօթքին պտուղն աս եղաւ որ՝ Ըստուած ո-
ղորմելով մեր աշխրբին, ասոնց ձեռքով լու-
սաւորել ուզելով, մտուրնին ձգեց ամմէնը
մէկէն իրենց քահանաներովը ելլել հեռու
երկիր մը երթալ: Ըսանկով եօթանասուն
հոգիէն աւելի հագուստնին յանկարծ փո-
խելով ճամբայ ելան. Ըստուծոյ յաջողելո-
վը պատրաստ նաւեր գտնելով Տիբերիս
գետին մէջէն ծովն ելլելով Ըղեքսանդրիա
գացին, անկէց Երուսաղէմ անցան ու խտա-
տեղերը քալելու:

Երբոր գեթսեմանի հասան, ուր է սուրբ
Ըստուածածնայ գերեզմանը, Ղայիանէ
գերեզմանին վրայ ձգելով Հռիփսիմէն՝ զօ-
րաւոր աղօթքով արցունք թափելով իրեն
յանձնեց որ պահէ, օտարին ձեռքը չի մատ-

նէ , կուսութեան գանձը չի կորսնցընէ : Ասանկ ամմէնն ալ լալով աղօթքի հետ կ'ըլլային ամսի մը չափ . որոնց ձայնը լսելով սուրբ Մատուածածին , տեսիլքի մէջ երևեցաւ իրենց ու ապրսպրեց որ Հայաստան երթան . բայց առաջ Աւրֆա երթան , անձեռագործ դաստառակը տեսնեն , ետքը իրեն պատկերին երթան որ Հայաստան էրինչուան որ , ըսաւ , ձեր կեանքը լմնցընէք նահատակութեամբ :

Այս ձայնս առին ելան Աւրֆա գնացին . հոն սուրբ դաստառակը տեսնելով այնչափ ուրախացան որ՝ ոմանք չէին ուզեր անկէց դուրս ելլել . նորէն տեսիլք երևցաւ իրենց , անոր վրայ որը հոն մնաց , որը ուրիշ դէպքնաց ինչուան Սեպուհ լեռը , որն ալ Արաստան գնաց : Բայց սրբուհի Վայխանէն ու Հռիփսիմէն ուրիշներուն հետ մէկտեղ խլաթ եկան , որ Հայաստանին մէջն է . անկէց Սոկաց գաւառն անցան՝ ուր մեծ հրաշք ըրաւ Մատուած . իրենց հետ եղող քահանաները սուրբ խաչով հալածեցին սատանաները կռատունին մէջէն : Բայց հոն իմացուելով՝ գաղտուկ ելան Սուրբի լեռը փախան , որ Բերկրի գաւառին մէջն է . հոն աչքի ցաւի հանդիպելով՝ աղօթքով երկու աղբիւր բղխել տուին , անոնց ջրովը առողջութիւն գտան : Անկէց եկան Հայոց ձոր ըսուած տեղը . քանի բորոտներ որ հոն հալածուած կային , քահանաները սուրբ խաչին զօրութեամբ բժշկեցին . իրենցմէ քա-

նի մը հոգի հոն և ուրիշ տեղուանք ճամբան մնացին, ինչուան որ եկան Մնձեացեաց գաւառը, ուր քանի մը քրիստոնեայ գտան. անոնք հասկըցուցին Մտուածածնայ պատկերքին տեղը, որ հոգւոց վանք ըսուեցաւ. ուխտերնին ընելէն ետեւ ճամբան երկու սև վիշապ աղօթքով ու զօրութեամբ սուրբ խաչին սպաննեցին՝ որ երկրըցիք կը պաշտէին, և ան տեսնելով դարձան քրիստոնեայ եղան: Արբոր Արազ եկան, կռապաշտները ետեւնէն հասան, անոնք ալ վախէն ասդիս անդին պահուրտեցան հոն մնացին. սուրբ խաչն ալ քարերու մէջ պահեցին:

Բայց հռիփսիմէն, Վայիանէն, ուրիշներ ալ մէկտեղ երսուներհինգ հոգիի չափ Մտուածոյ ապրսպրելովը Վաղարշապատ քաղաքն եկան, որ հայոց թագաւորին աթոռն էր: Իրենք կը զարմանային որ քանի հեղ Մտուածածնէն խնդրեցին զիրենք կռապաշտներուն ձեռքէն խալըսել, Մտուածածին ալ անչափ աւելի զիրենք կռապաշտից մէջ կը խրկէր. ետքէն իմացան որ Մտուած կ'ուզէր իրենց ձեռքով մեծ գործք մը ընել, մէկ մեծ աշխարհք մը պիտի վատըկէր, իրենք ալ նահատակուելով մեծ փառքի պիտի հասնէին: Վաղարշապատէն դուրս էգիներ խաղող կոխելու տեղեր կային՝ հոն բնակեցան եկող կուսանքը, ու իրենց հետ եղող իրեք քահանայք. մէջերնէն մէկը հիլուն գիտէր շինել, ան ծախե-

լով կ'ապրէին : Քայց հոն ալ չի կրցան հան
գիստ նստել : Վիտկէտիանոս լսելով որ
Հռիփսիմէն փախուցեր էին , հոն մնացած
կուսանքներուն գլխաւորները մեռցընել
տուաւ . անոնց մէջն էր Օոյի կոյսը . ետքն
ալ հասկընալով որ փախչողները Հայաստան
եկեր են , Տրդատ Թագաւորին Թուղթ ու
մարդ խրկեց , որ փնտռէ գտնէ Հռիփսի
մէն , կամ իրեն խրկէ , կամ Թէ որ ուզէ
ինքն առնէ : Արքոր գտան , Տրդատ Թա
գաւորին հասկըցուցին Հռիփսիմեայ ան
նման գեղեցկութիւնն որ չի պատմուիր ,
կ'ըսէին . ուզեց իրեն առնել . ոսկեզօծ գա
հաւորակ (Թահաբըվան) և ազնիւ հա
գուստներ խրկեց Հռիփսիմէն զարդարել
իրեն բերել որ հարսնիքն ընեն . վազող վա
զողի կ'ըլլային աւետիս տալու Հռիփսի
մեայ որ Թագուհի պիտոր ըլլար :

Վայիանէ երբոր տեսաւ աս մենծութիւ
նները . մէկէն ելաւ Հռիփսիմեայ քովն ե
կաւ , որդեակ , ըսաւ , չըլլայ Թէ աս փառ
քը փարթամութիւնքեղ խաբեն . միտքդ
բեր որ դուն ասկէց աւելի մեծութիւն ու
նէիր Հում , անոնք ամմէնն ալ քու ձեռքդ
էին . դուն ինքիրմէդ ձգեցիր ու աս աղքատ
կեանքը յանձն առիր որ Վրիստոսի հարս
ըլլաս , անդիու աշխարհքը սրբոց հետ Թա
գուհի ըլլաս . անանկ է նէ միշտ Վրիստոս
աչքիդ առջէն ունեցիր . աս մտքին վրայ ,
քեզ տեսնեմ . ամուր կեցիր : Այ խօսքե
րով երկան յորդորակ մը զուրցեց :

Հոփփսիմէ աւելի ուժ առնելով աս խօսքերէս , բարձր ձայնով սկսաւ երկինքը կանչել , Մտուծոյ օգնութիւնը խնդրել . իր աչքին առջև թէպէտ ոչինչ էին ամմէն աշխարքիս փառքը , բայց գիտէր որ առանց Մտուծոյ շնորհաց բան մը չէր կրնար ընել . անոր կ'ապաւինէր , յանձնապաստան չէր ըլլար , ինչպէս որ յատուկ է ամմէն սրբոց . մանաւանդ յայտնի կը տեսնէր որ իրեն մերժելովը ետքէն տանջանք ունէր քաշելու :

Երբոր թագաւորէն եկող իշխաններն ու մենծերը կ'արտօրցընէին կուսանքներն որ իրենց բերած հագուստովը Հոփփսիմէն հագուեցընէն զարդարեն , որպէս զի շուտով առնեն տանին թագաւորին . անոնք մէկբերան կը հասկըցընէին ան կուսապաշտներուն Հոփփսիմէայ ու իրենց կեանքը թէ ինչպէս ամմէնն ալ կուսութիւն ուխտեր էին ճրջմարտին Մտուծոյ . չէին կրնար փոխել տար իրենց միտքը , ոչ փառք պատիւ և ոչ տանջանք : Մտուծոյ զուրցելնինի մէկ ահաւելի ձայն մըն ալ երկրնքէն գոռաց ըսելով . մի վախնաք , սիրելիք իմ , մանաւանդ դուն Հոփփսիմէ , սրտերնիդ ամուր բռնեցէք , ես ձեզի հետ եմ , ամմէն տեղ ձեզ պահեցի հոս ալ պիտի պահեմ . դուք իմ անունս հոս պիտի փառաւորէք , ես ալ իմ հօրս հետ ձեզի տեղ պիտի պատրաստեմ արքայութեանս մէջ :

Մտուծոյ ձայնը Վրիստոսի բերնէն եկաւ , կուսանքները զօրացուց , կուսապաշտներ ,

վախցուց . անանկ որ շփոթելով իրենք ալ իրենց ձիանն ալ իրար զիրար կոխկրուտէին, կը սպաննէին : Ատքը ելան եկան թագաւորին պատմեցին . կուսանքներուն ըսածներն ալ որ գիր անցուցեր էին , թագաւորին առջև կարդացին : Տրդատ լսածին պէս՝ սրդողելով ըսաւ . ան չուզեց փառաւորութեամբ գալ , դուք բռնութեամբ բերէք :

Արքոր ասոնք բազմութեամբ եկան մտան կուսանքներուն տեղը , Հռիփսիմէն դուրս քաշեցին մէջերնէն : Թէ ինչ վախ ինչ սրտադող քաշեցին ամմէն կուսանքը՝ երկան կ'ըլլայ պատմելը . Հռիփսիմէն որովհետեւ չէր ուզեր երթալ , տեղ տեղ քաշկրուտելով՝ տեղ տեղ վերցընելով՝ անանկ բերին թագաւորին խուցը ձգեցին : Ան երանելին ճամբան աս հառաչանքը մինակ կ'ընէր , Տէր Յիսուս , օգնեա ինձ : Իսկ խցին մէջ երբոր մինակ կեցած էր , ձեռուրները դէպ 'ի երկինքը տարածելով ամմէն սրտով աղօթքի կեցաւ , մէկիկ մէկիկ յիշեցընելով Աստուծոյ ինչ մենձ մենձ հրաշքներ ըրեր էր , հիմա ալ կը խնդրէր որ հրաշքով պահէ զինքը բռնաւորին ձեռքէն . եղած հրաշքներուն մէջը յիշեց ան ալ որ , ինչպէս՝ Աբուգողոնոսորը անասնոյ կերպարանք փոխել տուեր էր Աճ , ինչպէս Շուշանը ազատեր էր . դու նոյն տէրն ես , կ'ըսէր , կրնաս հիմա զիս ալ ազատել , որպէս զի սրբութեամբ մեռնիմ քու անուանդ համար :

Ըստ ըստ ընդհանրի՝ մէյմըն ալ Տրդատ ներս մտաւ . դուրսը եղողները ամմէնն ալ հարսնիքի երգ սկսան երգել, ուրախութիւն ընել . Ըստուած որ Հռիփսիմեայ աղօթքին նայեցաւ ընդունեց, անանկ մէկ զօրութիւն մը տուաւ իրեն որ չի թողուց Տրդատայ իրեն մօտիկնալ . իրեք ժամէն սկսեալ ինչուան տասը ժամ կռուելով զզուելով վերջապէս Տրդատ չի կրցաւ անոր ուժ հասցընել, ան Տրդատն՝ որուն ուժը աշխարհք զարմացուցեր էր :

Տրդատ յոգնելով կատողելով Վայիանէն հոն կանչել տուաւ որ Հռիփսիմէն խրատէ և իրեն կամքը կատարել տայ : Վայց Վայիանէն ներհակ խրատ տուաւ . լսողները բարկանալով բերանը անչափ զարկին քարերով որ ակռաները թափեցան, անիկայ մտիկ չընելով նորէն խրատ կու տար կը յորդորէր որ ամուր կենայ, յիշեցընելով իրեն ինչպէս Վրիստոսի էր հարս եղած, Ըստուածաճնայ յանձնուած . քիչ մը համբերէ, կ'ըսէր, որդեակ իմ, հիմա կը տեսնես Վրիստոս որուն անչափ կը փափագէիր . ան քեզի զօրութիւն կու տայ, ինչպէս որ այսօր քու կին անկըճովդ լսեցիր :

Վայիանէն աս խօսքերը խցին դռնէն կ'ըսէր երբոր Տրդատ նորէն կը կռուէր Հռիփսիմեայ հետ՝ իրիկուան տասը ժամէն սկսեալ ինչուան գիշերը : Ըսանկ սաստիկ կռուելէն յոգնեցաւ թագաւորը, վրայի կապան պատրուտեցաւ, գլխի դրած թագը

մէկդի գլորեցաւ . իսկ սրբուհին Տիփսի
մէ Տոգւոյն սրբոյ զօրութեամբը յալթող
ըլլալով խցին դուռը բացաւ , ժողովուրդը
ճղքելով քաղքէն դուրս ելաւ , իր ընկեր-
ներուն քովն եկաւ . ծունկ չոքելով շնորհա-
կալութիւն ըրաւ Մատուծոյ , նորէն շնորհք
ու զօրութիւն խնդրեց :

Տիփսիմէ իր ընկերներով ասանկ ա-
ղօթք ընելնինի՝ գիշերանց դահիճներ ե-
կան , տանջանք չի մնաց որ չի տան իրեն . ա-
ռաջ ձեռուրներն ետևը կապելով լեզուն
կտրեցին , որ ինքիրմէ բացաւ բերանը . ետ-
քը ձեռուրները ոտուրները չորս ցիցերու
կապելով , երել սկսան մարմինը . փորուն վը-
րայ սուր քարեր լեցընելով՝ դուրս թափել
տուին , աչուրները փորեցին , չորս դին կը-
տըրտեցին : Այլ որ թագաւորին հրամանը
ոտքի տակ կ'առնէ , ասանկ կը կորսուի , կ'ը-
սէին : Չիյտէին որ ճշմարիտ քրիստոնեայ
մը Քրիստոսի սիրովը վառեալ՝ ինչպէս էր
աս երանելիս՝ որչափ աւելի չարչարուի ի-
րեն մարմինը՝ այնչափ աւելի կ'ուրախանայ
իր սիրտը , մեծ շնորհք կը սեպէ իրեն :
Անացած կուսանքն ու իրեն ընկերտիքը
լալով վրան եկան , ուզեցին երանելոյն
մարմինը թաղել . բայց դահիճները անոնց
ալ հոն տեղը թրով գլխընին զարկին որ
երսունուերկու հոգի էին . մէջերնէն մէկը
միայն չէր եկած հոն , հիւանդ ըլլալով ի-
րենց առջի տեղը պառկած մնացեր էր . ան
ալ իր տեղը գլխատեցին : Տրդատ աս-

չափ անմեղ արիւն թափելէն չէր ցաւեր , այլ հօիփսիմեայ մահը լսելով՝ անոր համար միայն կը ցաւէր կու լար , թէ ինչպէս քրիստոնեաները պատճառ եղան որ՝ անանկ գեղեցկու թիւնը կորսնցընել տուին :

Կանք որ սրբուհին Վայիանէ իր երկու ընկերներովը պալատին մէջը գոցեր պահեր էին բանտի տեղ . վաղուան օրը դահճապետը հրաման ուզեց անոնք ալ մեռցընելու : Տրդատ կարծելով որ հօիփսիմեայ համար կը զուրցէ , անանկ է նէ ողջ է եղեր , ըսաւ . ով որ միտքը փոխել տայ , մեծ իշխանու թեան կը հասցընեմ : Կայց ետքը իրաւը հասկընալով , նորէն գետնի վրայ նստած անանկ կու լար . շուտ մը տանջանքով մեռցընել կը հրամայէր Վայիանէն , վրէժ առնել ուզելով իրմէ . ան եղաւ պատճառ որ , կ'ըսէր , իրեն գէշ խրատներովը կորսնցընել տուաւ անանկ աղուորու թիւնը :

Կանկ հրաման առնելով դահճիճները , իրէքն ալ չորս դիացէն չորս ցիցերու վրայ կապեցին . կաշինին քերթեցին , լեզունին ետևի դիացէն դուրս հանեցին , ու փորերնուն վրայ սուր քարեր ձգելով դուրս թափել տուին . տեսան որ ողջ մնացեր են՝ թրով գլխրնին կտրեցին յամին 301 : Արոնց արիւնը ծծելով կուսպաշտու թեան մէջ մնացած գետնին հողը՝ գիտես թէ մէկ նոր զօրու թիւն մը առաւ . Կտուծոյ գու թը շարժել տուաւ մեր աշխրքին վրայ , որ վերէն տեսնելով ասչափ անմեղ կուսանաց արիւ-

նովը պլշտրկուած և ասանկ սրբոց մարմին
ներուն գերեզման եղած՝ ողորմեցաւ դուրս
հանել տուաւ լուսաւորիչը խոր վիրապէն՝
որ ասոնց արիւնը թափուելէն ետե սկսաւ
պտուղ ընել։ Անոր համար մեր եկեղեցին
յատուկ ջերմեռանդութեամբ մը կը տօնէ
աս սուրբ կուսանաց յիշատակը։



Յ Ո Ւ Յ Ա Կ



Աբբայ Մարկոս	359
Ագրիանոս	52
Աթանաս	238
Անատոլա	52
Անտոն աբբայ	220
Բարսեղ	215
Գայիանէ	391
Գէորգ	108
Գրիգոր աստուածաբան, որ և նազիանզացի	310
Գրիգոր լուսաւորիչ	376
Գրիգոր նիւսացի	317
Գրիգոր սքանչելագործ	319
Դիոմիդէս բժիշկ	342
Եպիփան կիպրացի	334
Երմոլէս	284
Եւգինէ	34
Եւստաքէոս	5
Եւպրասէ	202
Եւփիմէ	232
Եօթն մանկունք Եփեսոսի	21
Թեկղ	167
Թէոգորոս Տիււոս	189
Թէոգորոս սորատելատ	196

Իգնատիոս	305
Կատարինէ	273
Կիւրեղ աղեքսանդրացի	355
Կիւրեղ երուսաղէմացի	277
Կղեմէս Հռոմայ հայրապետ	121
Հովսիսիմէ	391
Մարիանէ , որ և Մարգարիտա	297
Յակոբ Մծբնայ հայրապետ	177
Յոհաննէս կամաւոր աղքատ	148
Յոհան օսկերեբան	123
Յուլիանէ	347
Նէքտառինէ . տես Կատարինէ	
Նիկողայոս	160
Շուշան	87
Ոնոփրիոս	291
Պանդալէոն	284
Պեղեգիա	373
Սանդուխտ	71
Սարգիս	251
Սիմէոն սիւնակեաց	261
Վառվառէ	139
Տիւռոս . տես Թէոդորոս	
Փեբրոնէ	88
Քրիստինէ	327

